ԵՐՐՈՐԴԱՆ Ե Ամ ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1905

ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաթ. փող. № 15.

1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

Եր.

1. ԹԱՂ (պատկերներ գիւղից), Վ. Փափազեանի 5
2. ԻՄ ՍԷՐԸ, Պետեօֆլիից, թարգմ. Ալ. Ծատուրեանի 20
3. ԴՈՒ ԿԸ ՀԱՆԳՑՆԵՍ ԻՍԿ ԵՍ ԿԸ ՎԱՌԵՄ, Իւանի Աշօ-ի թարգմ. տիկին Մ. Մ.—Բ. 21
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՋԵՐԸ, Բ. Իշխանեանի 24
5. Ո՞ՎՔԵՐ ԵՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ Ո՞ՎՔԵՐԻՑ ԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ, Հիսէյն-Զաղէի, թարգմ. Տ. Զաւէն . 40
6. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, ... 55
7. ՀԻԱՆԴ ՄԱՐԴԸ, Շտերնի, թարգմ. Լ. Բաբայեանի 59
8. ՉՊԱՏՄՈՒԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ, Փարհատի, . . . 76
9. ԱՆՅԵԱԼԻ ՀԱՐՑԵՐԻՑ, Լէօի 83
10. ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԵՐԻՑ, ... 100
11. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ, Պորրիտ, ... 117
12. ՕԲԵՐԼԷՆԵՐԸ, Վէպ Բրնէ Բազէնի 122
13. ԲՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) M. A. Миропіевъ «О положеніи русскихъ инородцевъ». Լ. Ս.-ի. —2) Կարա Յեակին՝ «Կինը եւ նրա տնտեսական դրութիւնը», Տ.Ց.-ի.—3) Մ. Տէր-Սարգսեան՝ «Իմ արկածները» Տ.Ց.-ի.—4) Պրոֆ. Վ. Երներ Զոմբարտ՝ «Թէ ինչու մեր օրերում ամենին հետաքրքրում են տնտեսական եւ սոցիալ-բարոյական հարցերը», Տ. Ց.-ի—5) Յարութիւն Նասյեան՝ «Միհենոյն դպրոցում», Տ. Ց.-ի.—6) Փառնակէս՝ «Զուտոդի մայր ուտոդին հալալ ա» կամ «Ճարպիկ փաստաբան» Տ. Ց.-ի 151
14. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ 157
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Վրացիների վերաբերմունքը ղեպի մեղՁուրք-հայկական ընդհարումների ժամանակ.—Ազգային եւ դասակարգային երեւոյթներ.—Նացիոնալ եւ նացիոնալիստական զգացմունք.—Հայ «կոմիտեաների» մասին.—Պանիսլամիզմը եւ պանթիւրքիզմը.—Ընդհանուր բիֆորմներ, անդրկովկասեան ներկայացուցչական

Նոր շրջան V տարի Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1905



ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մաղաք. փող., 15.
1905

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան Ա՚1 տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան և Պարսկաստան տարեկան	10 ր.		Արտասահման՝ 12 ր.		(32 ֆ.)
կէս տարին	6 »		»	7 »	(18 ֆ.)
1 ամսուան	1 »		»	1 » 20 կ.	(3 1/2 ֆ.)

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. ըստ կը զրում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ՝ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 ռուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 ռուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՒՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձէան փողոց, տ. № 12)

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

«Մուրճ»-ի գործակալները.

Աստրխան—Դ. ք. Մկրտումեան։
Բագու.—բժ. Դ. Սարգսեան, (Б. Морская. д. № 26) և պ. Յ. Բոչարեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տ.-Դանիէլեան։
Երեւան—«Արարատ» դրախանութ։
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկուա—պ. Ստ. Թումեան։
Սոչի—Աբրամ Յակոբեան (Սևծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Թիֆլիզ—«Գուտենբերգ» և «Կենտրոնական» դրավաճառ.
Թաւրիզ—պ. Յ. Տէր-Ստեփանեան։
Եգիպտոս—դոկտոր Կ. Փաշայեան-Խան։
Էնզելի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան։
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ. պ. Ալեքսան Թունեանց և Լ. Բարայեան։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ընդունուում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են,—1 երես բնող յայտարարութեան 15 ր., 1/2 եր.—8 ր., 1/4 եր.—4 ր., տողատեղ (կորպ.)—40 կ.։

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 9-го октября.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

Էջ.

1. ԽԱՂ (պատկերներ գիւղից), Վ. Փափազեանի 5
2. ԻՄ ՍԷՐԸ, Պետեօֆիից, թարգմ. Ալ. Ծատուրեանի 20
3. ԴՈՒ ԿԸ ՀԱՆԳՑՆԵՍ ԻՍԿ ԵՍ ԿԸ ՎԱՌԵՄ, Ուհանի Ահօ-ի թարգմ. տիկին Մ. Մ.—Բ. 21
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՖԱԶԵՐԸ, Բ. Իշխանեանի 24
5. Ո՞ՎՔԵՐ ԵՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ Ո՞ՎՔԵՐԻՑ ԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ, Հիւսէյն-Զադէի, թարգմ. Տ. Զաւէն . 40
6. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, ... 55
7. ՀԻԱՆԴ ՄԱՐԴԸ, Շտերնի, թարգմ. Լ. Բաբայեանի 59
8. ՁՊԱՏՄՈՒԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ, Փահրատի, . . . 76
9. ԱՆՑԵԱԼԻ ՀԱՐՑԵՐԻՑ, Լէօի 83
10. ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԵՐԻՑ, ... 100
11. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ, Պորրիտ, ... 117
12. ՕԲԵՐԼԷՆԵՐԸ, վէպ Ըրնէ Բազէնի 122
13. ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) M. A. Миропіевъ «О положеніи русскихъ-инородцевъ». Ա. Ս.-ի. —2) Կլարա Յետկին՝ «Կինը եւ նրա տնտեսական դրութիւնը», Տ.Ճ.-ի.—3) Մ. Տէր-Սարգսեան՝ «Իմ արկածները» Տ.Ճ.-ի.—4) Պրոֆ. Վ. Երներ Զոմբարտ՝ «Թէ ինչու մեր օրերում ամենքին հետաքրքրում են տնտեսական եւ սոցիալ-քաղաքական հարցեր», Տ. Ճ.-ի—5) Յարութիւն Եսայեան՝ «Միւնոյն դաղաղում», Տ. Ճ.-ի.—6) Փառնակէս՝ «Զուտողի մալը ուտողին հալալ ա» կամ «Ճարպիկ փաստաբան» Տ. Ճ.-ի 151
14. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ 157
15. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Վրացիների վերաբերմունքը դէպի մեզ Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ.— Ազգային եւ դասակարգային երեւոյթներ.—Նացիոնալ եւ նացիոնալիստական զգացմունք.—Հայ «կոմիտետների» մասին.—Պանիսլամիզմը եւ սանթիւրքիզմը.—Ընդհանուր բեֆորմներ, անդրկովկասեան ներկայացուցչական

Երէ.

ժողով եւ հայա-վրացա-Թուրքական համագումարի անհրաժեշտութիւն—† Իշխ. Ս. Ն. Տրուբեցկոյ.—Բաղուի արդիւնագործների ներկայացուցիչները Պետերբուրգում.—Բաղուի բանուորների զեկուցագիրը . . . 159

16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— . . . . . .

17 . ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . .

18. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

19. ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մ'որիէր՝ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի. . . . . 129—143

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մանուանդ թուերը, յատուկ անունները ու օտար բառերը, եւ թերի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադրութեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ։ Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը։

2. Ընդունուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնւում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը։ Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնւում։

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը։ Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի։

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը։

5. «Մուրճի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը։

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ։ Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով։ Նոր հասցէի հետ պէտք է յայտնել նաև հին հասցէն։

ԽԱՂ.

(Պատկերներ գիւղից)

I

Գիւղի այդ ծայրում, վերջին տներից և ծառաստաններից յետոյ, խճուղու եզրիցն սկսած, գոգաձև բարձրանում է մի ծործոր, որ օրուայ մեծ մասը գրեթէ ստուերի մէջ է թէ եռևի և թէ երկու կողերի բլուրների շնորհիւ։

Ստուեր ձգող այդ շրթունքների առապարներից ցած, ամբողջ տարածութիւնը բռնել է մի ծաղկալից մարգագետին, որ մշտապէս օրօրւում է փչող սիւքից և գնալով աւելի դալարագեղ դառնում վտակների ափերին։

Բծաւորուած սպիտակ վարդենիների և հեռուից խոշոր, մենաւորիկ ժայռերի նմանող *մամուխի* թուփերով —հասնում էր նա մինչև փրփրոտ գետակը, ոստնում վրայից և մխրճուելու գնում հօրիզոնի վրայ ճապաղուած անտառի կուրծքը։

Այդ տեսակ ծործորներով է շերտաւորուած գիւղի ամբողջ թիկունքը՝ Սարշէնից սկսած մինչև գիւղաքաղաք։

Ամենալաւ արօտատեղիներ լինելով, լեռնալանջի այդ կողերի վրայ միշտ կարելի է տեսնել արածող ցանուցրիւ նախիրներ, այլև խոտերի մէջ վազվզող կամ միացած ու թիկն տուած խօսակցելիս՝ գիւղացի մանուկներ, որոնք տաւարը հսկելու են գալիս և ստուերալից կողերի վրայ հաւաքւում։

Յուլիսի այդ օրերին, Դուղանի լեռնադաշտի նման ծաղկալից անկիւն դժուար է երևակայել։—

Հարիւրաւոր գոյնզգոյն շերտեր բծաւորում են անծայր հարթավայրը։ Այստեղ՝ պուտն է մի ամբողջ տարածութիւն արեան պէս նեկերկել, այնտեղ՝ նուրբ ու քնքոյշ սպիտակ ինձորածաղիկը արշալոյսի կարմրորակ լոյսով կարծես ողողել բլուրների կուրծքը, քիչ հեռու ինչ որ ծաղիկների խումբ, լուրջ գոյնով երկնքի մի կտոր հանդչեցրել արտի վրայ, նրա մօտը, մանիշակագոյն քմահաճ ոլորտուն երիզներ գծել խիարուկը, դաղջ փոսիկներին ու կանաչ ակօսների նմանող խորութիւններին թաւշեայ օձիք են կազմել ընդաածաղիկները և գաճաճ վիշապուկների միջից գլուխ դուրս պարզել՝ ցնցւում են դեղնորակ խոշոր ծաղիկներով շուշանները, այլ և թասաձև և խոշոր պսակներով ընխաածաղիկները...

Սիրում էի ամեն առաւօտ լուսածագին գնալ այդ կողմերը, մտնել նախ Սարշէն, որ միայն մի վերստ հեռու էր մեր դիւղից, յետոյ զբօսանքի քայլերով վերադառնում էի և յաճախ, լեռնալանջի կողերից մէկի վրայ ընկողմանած, կամ նրանց փոսուութեան դալարների մէջ մեկնուած՝ մնում էի երազկոտ ժամեր անցկացնելու, ակնարկս դիմացի ցցուն գագաթներին և լոյծ մանիշակագոյն մշուշի մէջ թաղուած անտառներին։

Այդ օր սակայն—մի արևալից և լաւ օր—շատ հեռու չը գնացի։ Խճուղուց վեր ելայ, մինչև ծնկներս խոտերի մէջ՝ առաջ քայլեցի և մտածեցի դիմացս երևցող առաջին թփիկի տակ նստել։

Մամուխի մացառ էր այդ, բաւական խոշոր, տարածուած և ծաղկած։ Շրջապատում խոտերը կոխոտուած —ջարդուած էին. աջ կողմում նոյն իսկ լայծուն էր դարձել դէպի կչկչացող, երկու թգաչափ վտակն իջնող՝ գառիվայրը։

Թփին չհասած, նկատեցի սաղերի երամներ, որոնք օրօրուն, սպիտակ ամպերի շարժուն քուլաների նման՝ սահում էին խոտերի մէջ։

Յետոյ աչքիս խփեցին մի քանի սև, թաւոտ գլուխներ և բանից դուրս եկաւ, որ տաւարաբաժնների մի փոքրիկ խումբ, ինձնից առաջ գրաւել էր թէ թուփը և թէ նրա շրջապատը։

Կարմիր ու դեղին հագուստներով փոքրիկ աղջիկներ էլ երևացին. միմեանց մօտ շարքին կանգնած՝ երկար ճիպոտներ ձեռքերին։

Մօտենալով, համրեցի. 7—8 տղայ էին, 4—5 աղջիկ։ Ըստ երևոյթին, ամբողջ լեռնականի վրայ դանուողներն էին, որ տաւարներին թողել հասնելու մինչև բլուրների ծայրերը, իրենք միմեանց ձայն էին տուել և մամուխի թփի մօտ, սագարած աղջիկների շուրջը ժողովուել։

Այդպէս էլ էր. աղջիկները ինձ տեսնելիս՝ կանգնել էին, իսկ տղաներից մէկը երեսի վրայ փռուել, միւսը կկզած, մի քանիսն էլ մամխի ետևը կանգնած՝ դիտում էին գնալս։ Երկուսն էլ քարակոյտեր կազմել, աթոռ էին դարձրել ու վրան հեծել։

—Բարև, տղայք, կանչեցի հեռուից։

Մէկը, որ ամենից առաջ էր նստել, դարձաւ միւսներին ու ձայնեց.

—Գ. Երուանդն ա ըլել, ուշ... ես էլ ասի թէ էս քաղքացին ո՞վ ա, որ գալիս ա դէսը...

—Եկել ես մեզ գալու. հարցրեց քարակոյտի վրայ նստողներից մէկը։

—Համեցէք. արեց մի երրորդը—ըսէնց լաւ տեղ սկի՛ չես դտնիլ...

—Իսկ դո՞ւք ինչու էք հաւաքուել այստեղ. հարցրի ես մօտ դնալով։

—Հրէն ա՛յ... արեց մէկը և ձեռքի փայտը դէպի վեր պարզեց—էն տաւարները մերն ա... արածացնում ենք։

—Հաղրը ասես սինձ ենք ուտում. ծիծաղեց պառկողը և առաջը կիտուած խոտերի փնջերիցը պոկեց ու սկսեց ծամել։

Մօտեցել էի բոլորովին։ Ամենքը ժպտուն ինձ նայեցին և «տեղ տուին»։

Ծիծաղելի տեսք ունէին բոլորն էլ։ Հագել էին պատառոտուն, տասը տեղից կարկտաններով լեցուն, ամէն կողմից ծուէններ կախուած արխալուղ. վարտիկի փոխարէն՝ ինչ որ աղտոտ կարճ կտաւ մինչև ծկները, ոտերնին տղմուտ, բոբիկ. գլխնին կարտուզ էր կամ փափախ, սակայն որպիսի՜ կարտուզ և ինչ օրի ընկած փափախ... Իւղոտ, ճմրտկուած, ճաթրտած ու կոտրտած, կէսը ընկած, միւս կէսը ցնցոտի դարձած կարտուզ, բուրդը գզգզուած, կէսիցը կարծես տապարած և աղտի մէջ թաթախած փափախ, որոնք ով գիտէ ինչ աղպանոցից էին գտել—հանել...

Ձնայելով հագուստներին, ձեռք-երեսի, ոտների և բաց կուրծքերի աղտին, ամենքն էլ ժպտուն ու զուարթ՝ իսկոյն՝ զանազան դիրքեր բռնեցին շուրջս։

Մէկը կկզեց և մուրթը դրաւ ծնկների վրայ. երկրորդը փռուեց երեսի վրայ՝ դէմքը դէպի ինձ, երրորդը մամխի թփի մէջ մտաւ և ամքուեց այնտեղ, չորրորդը կողքի վրայ ընկողմանեց... ու ամէնքն էլ շարունակեցին ծամել ու ծամծմոտել սինձը, որոնցից փունջ—փունջ ունէին ձեռքներին կամ թևերի տակ՝ կոխած։

Ատամները սևացել բոյսից, շրթունքները սպիտակել, դէմքերը արևակէզ, մազերնին թափթփած, աստ ու թաւ, աչքերնին պսպղուն, մնդիկի պէս շարժուն չաբաճճիները, երբ ես էլ նստել էի, միմեանց նայեցին, քթթեցին, լուռ ծիծաղեցին, յետոյ թփի մէջ կծկուածը կանչեց յանկարծ.

—Աղա՛, բա ամօթ չի. ընչի՞ պ. Երուանդին էլ սինձ չէք թաւաղա (1) անում... Համեցէք, սինձ կեր...

—Համեցէք... արին ամէնքը և առջևս նետեցին մի մի փունջ։

---

1) Մատուցանել

—Էս որտեղից էք քաղել, շատ կայ այս կողմերում։

—Շատ... արեց քարակոյտի վրայ նստողը—հրէն ողջը սինձ չի՞... ամա ծաղկել ա համի... դլխի կողմիցը որ ուտես, հլա դալմը ա...

—Էս աղջիկներն ինչ գործ ունին ըստեղ. հարցրի ես նստելով—սրանք էլ են տաւար արածացնում։

—Չէ. խօսեց նորից նոյն մանուկը—սրանք դաղեր (2) են բերել... դէ, մենք էլ ասինք՝ գանք քիչ հետները խօսանք... ըսէնց չի՞, ա խալիբը...

Ու այնպէս ծաղրածու կերպարանք ստացաւ և աչքը քթթեց, որ բոլորն էլ ծիծաղեցին։

—Համ էլ, վրայ տուաւ նա հեղնական ակնարկներ անելով սրան-նրան—մեր նշանածներն են սրանք... Այ, էն Թադուշը իմ նշանածն ա...

—Վույ, սատկես դու հա... չանչեց (3) դէպի նա աղջիկներից մէկը—սուտ ընչի՞ ես ասում...

Այնքան տարօրինակ մանուկ էր խօսող տղան, որ առանձնապէս գնեցի նրան, մինչ խօսում էր և ծամածռութիւններ անում։

Գրէթէ կիսամերկ էր, կարմիր կտաւէ հին ու կարտուած շապիկ, նոյնքան կտրտուած ու մինչև ծընկները հասնող վարդիկի հետ։ Գլխին մի կարտուղ ունէր, որ կասես շան բերանը տուած ու ծամած լինէր. ծուռ կոխել մինչև ականջները, սնձից սեացած ատամները բաց, դէմքը արևից կիզուած ու թեփոտած, մազերն էլ շէկ։

Խօսելիս մէկ ինձ էր դառնում, մէկ էլ ծաղրածու կերպով սրան-նրան ակնարկներ անում և քրքիջների առիթ տուող ծամածռութիւններ կազմում այլանդակ դէմքի վրայ։

—Անունդ ինչ է. հարցրի միջահասելով նրան։

---

2) Սագեր.

3) Ձեռքը տափակ՝ դէպի ուրիշը ցցել իրը նախատինք.

—Տելօ ա.

—Դա ի՞նչ տեսակ անուն է որ...

—Տելամաք ա. մէջ մտաւ երեսի վրայ փռուածը—մենք Տելօ ենք ասում։

—Ադա ուր ես մէջ ընկնում, լպստած, կանչեց նրա վրայ Տելօն—քեզ ա խօսացնում, թէ ինձ... ընչի՞, ես գիդամ ոչ, որ տէրտէրը ինձ Տելեմաք ա կնքել։

—Տելեմաք, արի՞ ես—ուրտեղից է գտել հայրդ այդ անունը։

—Հէ՞րս ընչի. լայն ծիծաղեց Տելօն և ատամները ցցեց—տէրտէրն ա գտել. մէկ դաֆթար ունի, ընդի կարդում ա ու երեխեքանցը անուն դնում... Ա՛յ, էս գորտի անունը (ցոյց տուաւ առջևս փռուածին) Արտաշէս ա դրել, մենք Արտօ ենք կանչում։

—Նրա անունն էլ Ասքանազ ա—մէջ մտաւ մի երրորդ մանուկ և թփի մէջ սմքուածին ցոյց տուաւ—ամա մենք Քանազ ենք ասում։

—Ադա էլի՞ մէջ մտաք. ճչաց նրա վրայ Տելօն—տօ սա ձեզ ա խօսացնում, եա՞ ինձ... Ուզում ես վեր կենամ ու ջնջիմ... ի՞նչ ըէհայա (1) խալխ էք, տօ... Հա՛ (դարձաւ նա դէպի ինձ) այ, էն—մէկէլի անունը Արտազ ա դրել, մենք Տազի ենք կանչում... Ադա, Տազի՛, ըռեխդ ցոյց տու մէկ, ուր ես տաւարի պէս գլուխը խոտերի միջին խրել։

Մինչ այդ, աղջիկները նստեցին և իրար կպած ու լուռ՝ ինձ էին դնում, միմեանց հետ երբեմն էլ փսփսում, ամաչելով ծիծաղում։

Զորս էին, թէ հինգ. տասնից՝ տասներկու տարեկան կը լինէին. սև, աղտոտ, ոտաբոբիկ և աղեղ։ Մէկն էր միայն քիչ սիրուն, կապոյտ դղրդող աչքերով և անմեղ մանկական ժպիտ միշտ դէմքին։ Նա էլ այնքան սինձ էր ծամել, որ ամբողջ բերանը սևացել էր, ինքն էլ ձեռք ու ոտքով ցեխաթաթախ ու մրոտ դարձել։

---

1) Անաժոթ.

Պարզ և հնամաշ կտաւէ շրջազգեստներ ունէին. գլուխնին ինչ որ չթի նմանող թաշկինակի մէջ էր փաթաթած, սակայն բոլորի մազերն փոշոտ թէ ցեխից՝ բրդի նման կոշտացել-միմեանց էին կպել։ Ամէնքի ձեռքը մի մի ճիպոտ կար, թևերի տակն էլ ուտելու բանջարեղէն—սխնձ, շուշան, թրթնջուկ կամ քնդ։

Տաղին, որին Տելօն այնքան կոշտութեամբ հրաւիրել էր մուրթն ինձ ցոյց տալու, կամաց բարձրացրեց գլուխը, նայեց մեր կողմը, յետոյ փութկացրեց և նորից մտաւ խոտերի մէջ։

—Սա խօ մեր Բաղրամի որդին է. ճանաչեցի նրան։

—Հա, քիւրդ-Բաղրամի տղան ա. ասաց Տելօն ծաղրալից շեշտով—հէնց հօրը պէս էլ ընէ՛նց ճչում ա, որ կասես աքլոր ըլի... կու-կու-րի կուռռ... ինչ՞ ա ըլել, ա՛յ Տաղի... Սկի՛, եա կանչում ա թէ՝ եկէք, սնձի տեղ եմ դտել, եա թէ չէ՝ մի հատ շուշան ա քաղել... Ա՛յ ոչ-փուչ ըլես դու, Տաղի՛, էլա մէկ խօսա...

—Աղա դէ հերիք ա է է... ճչաց Տաղին գլուխը բարձրացնելով—դու ինչ ես, դու... խողի պէս՝ խըմ-խըմ-խը՛մ... թէ ինչ՞ ա, քիթն ա վեր քաշում սառշինի պէս... փուհ...

—Զասի՞, չասի՞, ա խալխը. բարձր ու հնչեղ քրքջաց Տելօն—տեսաք, տեսաք ոնց հօրը նման աքլորի պէս ճըչում ա...

Ապա վիզը ցցեց դէպի զայրացած Տաղին, ձեռքի սխնձը ցած թողեց, թևերը թափահարեց, ազդրերին խփեց ու աքաղաղի ձայնով ճչաց.

—Կու-կու-լի-կուռ ռա...

Բոլորը քրքջացին. յիրաւի շատ ծիծաղելի էր այդ միջոցին Տելօի դէմքը, որ երկարացել, ծաղրաշարժ գծեր էր կազմել։

—Խնքոտ, խնքոտ... աղաղակեց դէպի նա Տաղին։

—Փուռ... արեց Արտօն—բա ամօթ չի, տօ ինչ էք փիս շների պէս իրար դդդում։

—Դու ինչ ես, դու. դարձաւ դէպի նա Տելոն— ողնի, քոլի ողնի...

—Ողնի էլ ես, հլա խոզ էլ հետը...

Մտածեցի միջամտել, սակայն Քանազը դարձաւ դէպի աղջիկներն ու կանչեց.

—Ադա Թագուշ, աղչի բա չէք տեսնում, դազերը ձորն են թափւում է է...

Աղջիկները ցնցուեցին, ոտքի թռան ու փայտերը բարձրացրած՝ վազեցին դէպի սագերը, որոնք կչկչալով ու խմբովին, գլուխներն ցցած՝ դիմում էին դէպի ձորակը։

—Ա՛ դազը, էդ ո՞ւր էք գնում. ճչում էր մի աղջիկ —տո ձեզ չեմ ասում... ա դազը, դա՛զը...

—Ծարաւ են հալբաթ. դիտեց Տելոն։

Եւ բոլոր մանուկները դարձան դէպի վազող աղջիկներն ու լուռ՝ հետևում էին նրանց հետապնդումներին։

Մի քանի բոպէ սարալանջի վրայ միմիայն սագերի կչկչոցն ու թևերի թափահարումներ լսուեցին, յետոյ աղջիկների կանչերը, որոնք իջնում էին դէպի ձորը՝ փախչող թռչունների հետ...

II

Այդ միջոցին էր, որ խճուղու վրայ երևաց փոշու մի թեթև պատյտ, մղուած Սարշէնի կողմի քամուց։ Յետոյ, միմեանց ետևից յայտնուեցին 4-5 արագավազ ձիաւորներ։

Առաջին արշաւողը աջ ձեռքով փայտը ծնկների վրայ ցցած, չերքեզկայով երկարահասակ անձ էր։ Ծանօթ դէմք էր թւում, բայց հեռու լինելով՝ ճանաչել չկարողացայ։ Կողքիցը քայլում էր սև չերքեզկայ հագած, կլիսափափախով մի նիհար ձիաւոր, որ մարակն էր շարժում անընդհատ և խօսակցում առաջինի հետ։ Նրանց ետևից գնում էր կուզ, կարտուզով ու լիքը դէմքով անձ, իսկ ամենից յետոյ էլ երկու ուրիշները, որոնցից

մէկը շրջանական ոստիկան զինուոր էր երևում՝ հրացանը մէջքին, նշանազգեստով և երկար սուրը կողքից։

—Հլա, հլա... կանչեց Տելոն—ընդի մտիկ տուէք, տղերք, ստարշինան, սուդիա Մուկուչը, էն մէկն էլ պիսերն ա... հլա ստրաժնիկ (1) էլ հեռները... էն ուր են գնում ըտէնց քշելէն։

—Ստրաժնիկի հետէնն ով ա, տո... ասեց Քանաղը չոգած— կասես քչքչան-Նիկոլն ըլի։

—Նա ա որ կայ. պնդեց Արտոն ու թփի միջից դուվը դուրս պարզեց—Այ տղայ, տենաս էտ ինչ ա ըլել։

—Ի՞նչ պիտի ըլի. ձայնեց պառկած մանուկներից մէկը—գընում են դեղը վառէն...

—Էրէկ իրիգուն Մելիքենց տան առաջ քեօխվէն, դղերը, Մելիքն ու Ռաքէլը կուչտորում էին... բեալքի ընդի են գնում։

—Չէ. արեց Տելոն—ընդի չի ըլի. էն կռիւը Ջաղացի քարի վրայ էր. համ էլ բարբշեցին՝ պրծան։

—Բեալքի քչքչան Նիկոլն ա տանում դրանց... էն օր քաղքըցին ու Նիկոլը քիչ մնաց իրար ծեծէին. խօսեց Տազին—ես տեսայ. քաղքցու կնիկը ջուր էր շուռ տուել Նիկոլի օջախի մէջն ու կրակը հանգցրել. Նիկոլի ճղճղան կնիկն էլ մէկ ուշունց էր տալիս, մէկ ուշունց... քաղքցին էլ՝ասա որ կասես. շիլ Գայուշին ցեխը կոխեց ու հանեց...

Տազիի պատմածը իմ ծերունի ընկերոջ կռիւն էր, որ տեղի էր ունեցել երկու օր առաջ, մեծ չափեր էր ընդունել և քչքչան Նիկոլի գնչուական ճիչերը ամբողջ օր զուարճացրել էր գիւղին։

—Կըլի որ էդ ըլի. նկատեց Արտոն—քչքչան Նիկոլը կռուի ա հէնց բանդ. կնիկ՞ն էլ, ույ, ույ, ույ... մէկ դարաչին ա, մէկ ուշունցի հասրաթ... Որ աչքը,

---

1) Պահակ զինուոր.

էն շիլ աչքը չի՞ ծռում ու բերանը փրփրոտացնում— կասես ջադու ըլի։

—Դուք սկի՛ բան չէք հասկանում, տո՛, ձայնեց Տելօն— ըհը, կը տենաք. էդ Աստծու պատիժները գեղը՝ն են գնում ուրիշ բանի համար։ Տենաս էլի ի՞նչ գուլում են մտածել գեղը կրակ տալու... ԵասաՈւլը ուր են տանում բաս... Հլա պիսերը, սուդիան... փո՛ւ ես քու կաշի կտրած տրեխ երեսիդ ինչ ասեմ, սո՛ւդիա Մուկուչ. էս դիփ-քո՛ բանները կըլի... կը տենաք. նա՛ ա, որ օձի պէս ըստի-ընդի բան ա սարքում, որ ինչ ա՝ ոսկոր հանի միջից... Տղերք, հլա մէկ իմ տաւարին աչքը ածէք՝ ես գնամ գեղը տենամ ի՞նչ կայ...

—Տօ մի՛ գնա մի՛... արեց Տաղին—հէրդ մէկ ընէն՛ց գլխիդ կը տայ, որ կարտուզը էսհէդ մինչև բերանդ կը մտնի...

Տելօն, որ պատրաստւում էր գիւղն իջնելու, կանգ առաւ և սկսեց ծոծրակը քորել։ Ըստ երևոյթին, Տաղիի խօսքերի դառն ճշմարտութիւնը կասեցրեց նրան։

Քանաղը ժպտելով նրան նայեց ու յանկարծ ձայնեց.

—Եանի էլ ո՞ւր ես գնում, չե՞ս իմանում թէ ալան —թալանը ոնց ա ըլում. ինքդ եանի քի՞չ ես քեօխվա ըլել...

—Հա՛ տո, արեց Արտօն—եկէք խաղանք էլի...

Մանուկները զուարթ ծիծաղով միմեանց նայեցին. պառկողները ելան—նստեցին, Արտօն մամուխի թփից դուրս եկաւ և մինչ աղջիկները սադերին ետ դարձրած՝ մօտենում էին, սարալանջի վրայ սկսեց կազմուել մանկական մի հետաքրքիր խաղ։

Անմիջապէս Տելօն մոռացաւ գիւղը, ուղղուեց ու կանչեց.

—Ես սատրշինա...

—Ընչի՞, տո՛, գոչեց Քանաղը—հէնց ամեն վախտ

դու ես ստարշինա ըլելու... Ձենք ուզում, դու փիս ես ծեծում... ընէնց չի՞, տղերք...

—Հա. էսհէդ թող ես ըլեմ ստարշինա. ասաց Տաղին։

—Ադա դէ ձէններդ կտրէք է է... ճչաց Տելոն—ես ձեր քեօխվան չեմ ըլել մինչի օրս, հ՞ը...

—Հա, յեռոյ։

—Յեռոյ էլ էն, որ էսօր էլ քեօխվուԹէնից ստարշինա եմ ըլում... կուզենամ, հլա պրիստաւ էլ կ'ըլեմ. իմ ձեռքին չի՞։

—Փիէ... արեց Արտոն—ստարշինան եանի քի՞չ ա ծեծում, որ հմի էլ ուզում ես պրիստաւ (1) կտրես գլխներիս... չէ, ախպէր, որ ըսէնց ա՝ ես չեմ խաղում։

—Ա՛ խալխը, ձայնեց յանկարծ Տելոն ու սպառնալից՝ ոտնեց կանգնեց, խլեց գետնի վրայից իր ճիպոտը, կարտուզը պինդ կոխեց գլխին ու սրան-նրան նայեց—ինձ պրիստաւ չէք ուզում, ա՛ խալխը,..

Մի անգամ՝ն սարսափելի էր փոքրիկ բռնաւորը իր դուրս ցցած կրծքով, կաստաղի հայեացքովն ու բերնի երկու շարք սևացած, գազանային ակռաներովը։

Երևի բոլորն էլ վախեցան։ Աղջիկները, որ մօտեցել էին, միմեանց կպան։

—Վ՛ույ... արեց մէկը—կասես դեռ ըլի։

—Տօ գէլ էլ եմ ու արջ էլ. գոռաց Տելոն—բա ընչացու՞ քեօխվա եմ, ստարշինա, եա պրիստաւ... Ձեր հէրը կանիծեմ, թէ ինձ նաչալնիկ (2) չէք արել... ընէնց օյին գնեմ գլխներիդ ո՞ր... կը թողամ սկի որ խաղաք...

Քանդն ու Տաղին ինձ նայեցին, կարծես օգնություն խնդրելով։

—Դա՞ ինչ է, Տելո, միջամտեցի ես—դու բռնաւոր

---

1) Ոստիկանապետ գաւառամասի.

2) Գաւառապետ.

խօ չեմ։ Թող ընտրեն, էլի. թէ քեզ ընտրեցին՝ կուզես թագաւոր եղիր։

—Ընչի՞ թագաւոր. ճչաց Տելօն—ես ամէն վախտ էն ա քեօխվա եա ստարշինա եմ ըլել, ծեծոտել եմ, ուշունց տուել, ոսկոռ կերել, սրան պատժել, նրան հուպտուել... ուզում ես որ համի մէկ ուրի՞շը ինձ ըտէնց անի... Չէ. թէ պրիստաւ ա՝ ես եմ, թէ նաչալնիկ՝ էլի՛ ես եմ... ուրիշի թողալ չեմ... ուրուն կը հանեմ...

—Հանդարտուիր, յորդորեցի ես—արի, արի նստիր կողքիս. դուցէ էլի քեզ ընտրեն։

—Զեն ընտրիլ. շատ եմ ես դաղել դրանց... Ա՛յ, տենում ես, էդ աքլաբ Տաղին, էդ քիւրդի տղայ Տաղին, համ էլ էդ դորտ Քանաղը... Իրանք են ուզում համ քեօխվա, համ ստարշինա...

Տեսայ որ խաղը պիտի խանգարուէր, դարձեալ միջամտեցի, յորդորեցի և վերջ իվերջոյ համոզեցի որ վերջին անգամն էլ Տելօն ստարշինա դառնար, Քանաղը՝ քեօխվա, իսկ Տաղին՝ դղիր։

Սակայն հազիւ համոզել էի ամենքին և Տելօն յաղթական՝ ստամներն էր ցցում դէպի աղջիկները—որ սրանք ապստամբուեցին։

—Մենք չենք խաղում. ասաց Թաղուշը—մենք կը գնանք։

—Ընչի՞, ա՛յ աղջի. ասաց Տելօն—որ մեծանամ, եանի քո ստարշինան ես չեմ ըլելու... Ամա, ջհաննամի դեօռը, որ չես խաղում... պաշօլ (1), գնա։

—Ո՛ւ, հոգեմ գլուխդ, գիժ Տելօ, չանչեց դէպի նա մի աղջիկ—գել ես, գէլ...

—Գել եմ, բաս... ծիծաղեց տղան—ստարշինան որ կայ, պտի գէլ ըլի... չես հաւանում ինձ, հրէն ա՛յ, շոսէն. պաշօ՛ղ դու էլ...

—Կա՛ց, բռնեցի ես նրա թեւից—ուշունց մի՛ տալ աղ-

---

1) Կորիր.

ջիվներին... Եկէք, աղջիկներ, մօտս նստէք, ես չեմ թողնիլ որ ձեզ նեղացնի։

Աղջիկներն անշուշտ շատ էին ուզում խաչին մասնակցել կամ գոնէ ներկայ լինել։ Իսկոյն եկան մօտս և ուրախ՝ պաշտպանութեանս տակը մտան։

—Ընչի՞, դարձաւ ինձ Տելօն քիչ վախեցած, որ իր իշխանութիւնը սահմանափակւում էր—մագամ [2]) դու նաչալնիկ ես...

—Ո՛չ, կատակեցի ես—նաչալնիկից էլ մեծ. զուբերնա՛տոր[3])...

—Փէ՛է... արեց Քանազը.—եանի նաչալնիկից էլ մեծը կայ։

—Կայ. զուբերնատորը։

—Ընդրանից մեծը։

—Լաւ, թողէք այդ. ասացի ես—ձեր խաղն սկսէք։ Ես միայն կը նայեմ, ոչինչ չեմ լինի։

—Հա՛, էդ լաւ ա. արեց Տելօն միամտուած—բաս որ ըտէնց ա, ըստի մեծը խօ ես եմ...

Յետոյ մէկէն դարձաւ դէպի Տազին ու կանչեց.

—Ադա Տազի, մեր հրամանն ա, որ էս սնաթիս վեր կենաս ու վազես սարի էն կողի վրիցը ձէն տաս, հրէն ա՛յ, չիմանլրմը նստոտած Սրապին ու մէկ էլ տղերանցը... Թող շատ ըլեն, որ խաղը լագաթ տայ... ըտէնց չի՞, պ. Երուանդ։

—Դէ էսքանս էլ հերիք ենք. առարկեց Տազին—էլ ուր ես սաղ գեղը գլխիդ թափում։

Տելօն ամբողջ մարմնով շուռ եկաւ դէպի նա, աչքերը ոլորեց ու վայտը այնպէս սպառնալից բարձրացրեց, որ Տազին վախիցը ետ ոստնեց։

—Ա, շան տղայ. գոռաց նրա վրայ Տելօն—դու ընչացու ես որ հրամաններիս ջուղաբ տաս. դու զգի՞ր ես, թէ պրլստաւ.,. ուզում ես, էս սնաթիս կաշիդ քե-

---

2) Մի թէ

3) Նահանգապետ։

Թեմ... ըստի քեզ զղիր են դրել, որ ստարշինի դէմը գոռաս, հալուես...

—Ո՜ւյ... արջն ա, խաչը, մէջի արջը... մամռաց աղջիկներից մէկը կծկուելով ու կպնելով ընկերուհուն։

—Էն ով ա որ ստարշինին արջ ա ասում. որոտաց Տելօն—կը ընջխեմ.,.

—Այդ չ'եղաւ. Տելօ. դարձեալ մէջ մտայ ես—շատ վատ սկսեցիր. որ այդքան գոռաս, էլ ձէն չի մնայ վրադ... Համ էլ աղջիկներին հանգիստ թող։

Տելօն նայեց ինձ, ժպտեց, յետոյ նորից դայլայլն դէմք ստանալով՝ քայլեց դէպի Տաղին ու կանչեց.

—Հլա կանգնիլ ես...

—Ո՜ւ ո՜ւ, ես քու... արեց Տաղին ու գնաց դէպի բլուրը։

—Որ շատ ըլենք, զորթ ա, լաւ կըլի. ասաց Քանաղը—թող ես էլ գնամ կանչեմ...

Ապա ելաւ մի քարակոյտի վրայ, դէմքը դարձրեց դէպի միւս սարալանջն ու սկսեց ձայնել խուլ, կարծես փորիցը դուրս եկող ձայնով.

—Է՜ է՜յ... է՜յ Սրապիօն. Սրապիօն, Սրապիօն է՜ է՜յ... Գրիգոր, ա՛յ Գրիգոր, էյ Գրիգոոոր...

Լեռնային կոչի այդ ձևը, որ լաւ իւրացրել էր Քանաղը, մօտից թէև հնչեղ չէր, բայց այնքան յաջող ելևէջներ (intonation) ունէր, որ գնալով աճում էր, ալիքների մղման նման զօրեղ ցնցումներ զոյացնում, թրբթրում էր օդի մէջ ու միմեանց բաղխելով՝ մեծանում էր հեռուներում։

Անշուշտ լսեցին այնտեղ. մանաւանդ որ Տաղին էլ մագլցել էր ամենաբարձր կէտի վրայ և ելևէջների ուրիշ տեսակ կոչ էր իջեցնում դէպի սարալանջը։ Այդ կոչն ևս իր ինքնատիպ ձևն ունէր։ Սկսում էր խորին բամբով, խաղերը հատ հատ՝ մղում էին միմեանց, գոգաձև մասում բաղխւում, կուտակւում և զօրեղ ալիքներով հասնում նպատակակէտին։

Մինչ այդ, Տելօն թողել էր գահը, գլխարկի տա-

կից ինչ որ խոշոր դանակ էր հանել և նրանով մամուխի թփից կտրում էր բաւական խոշոր ճիւղ։

Ձեռքերի ոյժն էր աւելի կտրողը։ Ոլորեց ու կեղևը պոկ տալով՝ յաջողուեց ունենալ դալար ճիպոտ։ Մաքրեց փշերից, կոշտերից, մի քանի անգամ նրանով օդը ծեծեց ու ասաց.

—Լաւ ա...

—Ի՞նչ պիտի անես. հարցրի ես։

—Ղամչի ա։ Ստարշինան առանց ղամչու՝ ո՞նց որ էշը առանց փալանի...

—Է՛յ, կանչեց մանուկներից մէկը—սես, որ պինդ ես խփել, կը դնքսենք քեզ հաա... էլ հերիք ա. ընենց վրայ ես տալի, կասես դոլթանց հէնց ստարշինա ըլես։

Տելօն բարկացած նրա կողմը դարձաւ։

—Ադա սատկած Կարօ, ձայնեց նա—որ չխօսաս, չի՞ ըլիլ. չես ուզում խաղալ—հիմիկանց պոշօլ... հրէն էնքան տղերք դան, որ սկի լայեղ էլ չեմ անի ղամչիս ծէրը քեզ կպցնի...

Ստուերն սկսում էր կարճանալ. ամենքս քիչ աւելի վեր քաշուեցինք ու տեղաւորուեցինք խոտերի մէջ։

Մանուկները կանգնել՝ սպասում էին միւսներին։ Ջազին ու Ռանտը վերադառնում էին։

(Վերջը յաջորդ համարում)

Վ. Փափազեան

ԻՄ ՍԷՐԸ

(Պետեֆիից)

Սիրում եմ այնպէս, որպէս չէ սիրած
Դեռ ոչ սի էակ արար—աշխարհում.
Այդ սէրն է միայն, որ սրտիս տիրած՝
Անշէջ վառւում է իմ ջերմ երգերում։

Բայց ես իմ սիրով չեմ երգում ներբող
Երկրային պարգև՝ սին գեղեցկութեան.
Պաշտում եմ մի սուրբ պատկեր լուսաշող—
Նա է իմ կուռքը երկրպագութեան։

Ո՜հ, դու ես իմ սէրն, սուրբ ազատութիւն,
Ես քեզ եմ միայն սիրում խելագար.
Քեզ եմ նուիրում իմ խանդ, իմ աւիւն,
Իմ կեանք, իմ արև զոհում քեզ համար։

Ո՛վ ազատութիւն, անմարմին ոգի,
Թովիչ երազում ինձ երևեցար.
Եւ իմ վառ սրտի, իմ վառ ցընորքի
Դու միակ իշխող տիրուհին դարձար։

Ես զմայլում էի քո լոյս-պատկերով,
Քո հետ համբուրւում ազատ, անվտանգ.
Բայց յանկարծ դահիճն արնաներկ սրրով
Խզեց իմ սիրոյ մաքուր թոթովանք...

Ես քեզ կամեցայ, ո՛վ լոյս-հրրեշտակ,
Պարգևել սիրոյս վարդը նորաբաց.
Այժըմ ա՛ռ դիակս, վարդի փոխանակ,
Արնանե՛ր դիակ՝ քո սիրոյն զոհուած...

Ալ. Ծատուրեան

ԴՈՒ ԿԸ ՀԱՆԳՑՆԵՍ, ԻՍԿ ԵՍ ԿԸ ՎԱՌԵՄ

Ուհանի Ասո-ի

(Շվէդերէնից)

Մութ էր։ Զմեռնային գիշերը տիրում էր երկրի վրայ։ Արևը վաղուց անհետացել էլ, և ցածրիկ խրճիթներում արդէն լամպաներն արձակում էին իրանց սպիտակ լոյսը։ Մարդիկ ուրախ էին, որ ունեն այդ լոյսը մինչև որ արշալոյսը կը ծագի։

Բայց խաւար ցրող այդ լոյսը մթութեան չար ոգին չէր սիրում, որովհետև սա զօրութիւն էր ձեռք բերել մութ աշխարհում։

Հէնց որ մթութեան չար ոգին նկատում էր որ խրճիթների պատուհաններից լոյս է երևում, նա իսկոյն բացում էր դուռը և ներս վազում.

—Փուհ, անում էր նա և առանց բացատրութեան հանգցնում լամպան։

Եւ ոչ ոք քաջութիւն չունէր լամպան նորից վառելու՝ չար ոգու հանգցնելուց յետոյ։

—Ի՞նչ պէտք է անել հիմա,—հարցնում էին միմեանցից ցածրիկ խրճիթների խաւարում նստած բնակիչները։

Հաղիւ մթութեան չար ոգին հեռացել էր, երբ լոյսի հանճարը թռաւ և դռնից ներս մտաւ։

—Դու կը հանգցնես, իսկ ես կը վառեմ,—ասաց նա և վառեց սեղանի վրայ դրած մոմը։

Եւ այսպէս վարուելուց յետոյ, նա շտապեց չար ոգու յետևից, որ ուրիշ խրճիթների մոմերը նոյնպէս հանգցնում էր և մարդկանց խաւար մթութեան մէջ թողնում։ Բայց լոյսի բարի հանճարը դնում էր նրա հետքերով և վառում մոմը։

Երբ չար ոգին իր շուրջը նայեց, տեսաւ որ խրճիթներում դարձեալ լոյս կայ, նորից վազեց առաջին խրճիթը։

—Փուհ, փուհ, արեց նա ու հանգցրեց լոյսը, և ոչ ոք քաջութիւն չունէր լոյսը վառելու։

—Հիմա նա մոմն էլ հանգցրեց, ինչ պէտք է անել,—հարցրին միմեանցից մթութեան մէջ նստած մարդիկ։

Բայց հաղիւ էր մթութեան ոգին շէմքից դուրս եկել, երբ լոյսի հանճարը շտապեց մտնել բաց դռնից և շշնչալով հարցրեց, արդեօք տանը ծղաններ (pärtor, лучина) կա՞ն։

Այո, ծղաններ շատ կային. մեծ պապիկը փայտ էր ծղանել և նրանցից մեծ պաշար պատրաստել։

—Դու կը հանգցնես, իսկ ես դարձեալ կը վառեմ,—ասաց լոյսի հանճարը, վերցրեց ծղաններից մէկը և օջաղի կրակից կպցրեց։

Եւ ամէն տեղ, ուր մտնում էր լոյսի հանճարը, այնտեղ վառուեցան ծղանները։

Չար ոգին դարձեալ պեսաւ, որ ամենուրեք, ուր նա հանգցրել էր, լոյս կար։ Այժմ երրորդ անգամ շտապով մտաւ նա խրճիթի դռնից.

—Փուհ, արեց նա. իսկ ծղանը չէր ուզում հանգչել։

—Փուհ, փուհ, և միայն երբ նա փչեց երրորդ անգամ, փայտից արձակուող լոյսը հանգչեց։

Հիմա էլ ոչ ոք քաջութիւն չունէր վառելու լոյսը, որ մթութեան չար ոգին բարկութեամբ հանգցրել էր։

—Ի՞նչ անենք այժմ,—հարցրին միմեանցից մթութեան մէջ նստած մարդիկը, երբ լոյսի հանճարը մտաւ դռնից։

—Օջաղը վառէք, կանչեց նա, և իսկոյն բոլոր խրճիթներում մեծ լոյս երևաց։ Բարի հանճարի աչքերը փայլատակում էին այդ լոյսի առաջ, երբ նա բացագանչեց.

—Դու կը հանգցնես, իսկ ես կը վառեմ։

Եւ ամէն տեղ, ուր մթութեան չար ոգին հանգցրել էր ծղանները և մարդկանց մեծ վիշտ պատճառել, լոյսի հանճարը վառում էր օջաղի մէջ ուրախաբեր կրակ, որից ճանապարհները լուսաւորուում էին և եղևնիների գագաթները կարմրում։

Մթութեան չար ոգու բարկութեանը չափ չկար. աչքերը չոած, թշերը սաստիկ փքած՝ նա քամու արագութեամբ ներս մտաւ սենեակը։

—Փուհ, փուհ, փուհ,—փչում էր նա,—փուհ, փուհ, փուհ,—տնքում և հևում էր նա. բայց որքան շատ էր նա փչում, այնքան աւելի պայծառ էր բորբոքուում կրակը օջաղում, և այժմ լոյսը ընկնում էր ոչ միայն ճանապարհների վրայ և ոչ միայն եղևնիների գագաթներն էին կարմրում լոյսից, այլ նա բարձրանում էր ծխնելոյզով դէպի երկինքը և հեռու գիւղերից նոյնիսկ օտար երկրներից նկատուում էին այդ լոյսը։

Չար ոգին շատ աշխատեց, գործ դրեց իր բոլոր ոյժերը...

բայց մինչև նա փչում էր, մինչև նա չարչարում էր առանց որևէ յաջողութեան, գիշերն արդէն անցել էր, արևը ծագել, այլևս արհեստական լոյսի կարիք չկար և մթութեան չար ոգին իզուր էր աշխատել։

Այսպէս՝ օրով չար ոգին անզօր է, իսկ գիշերը լոյսի հանճարը արթուն է և պաշտպանում է երկիրը։

Տիկին. Մ. Մ.—Բ.

---

*
* *

Լազուրը երկնքով ամպեր են անցնում,
Ու ոսկի ուռին կուլայ գետափին.
Ամպերի շուքը դաշտերն է ծածկում.
Սիրտս կրծում է կսկիծը խորին...

Վառ արևն հանգաւ սարերի յետքում,
Մութը թևերը փռեց ամեն դին.
Անգիւման դարդը սիրտս է մաշում,
Ա՜խ, ծաղիկ Թոռմար, ընկեր իմ անգին...

Ո՞ւր ես, հոգի ջան, չը կմս դու հիմա.—
Հողերուն հաւասար ու անգերեզման.
Ա՜խ, քամին հիմա վերադ կը սգայ.—
Դու չե՞ս իմանում, ազիզ ընկեր ջան...

Ա. Խահակեան։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ [1]

II

Տնային փակ տնտեսութիւն.

Տնային փակ տնտեսութեան բնոյթը։—Հողը տնտեսական զարդացման առաջին ֆազում։—Արդիւնաբերութիւն սեփական կարիքների համար։—Աշխատանքի բաժանումը ընտանիքի մէջ։—Մարկութեան կլասիք դարեշրջանը։—Ցունական և հռովմէական տնտեսութիւնը։—Մարկատիրոջ իրաւունքը։—Կոչումները տնային տնտեսութեան մէջ։—Գետութեան տնտեսութիւնը։—Հարուստներ և աղքատներ, ազատներ և տրուկներ։—Բոմանական և գերմանական ցեղերի տնտեսութիւնը միջին դարերի սկզբներում։—Ճորտային տնտեսութիւն։—Ֆեոդալներ և ճորտեր։—Փոխանակութեան երևոյթը տնտեսութեան առաջին ֆազի մէջ։

1.

Տնային փակ տնտեսութեան պատմական ֆազը բնորոշւում է նրանով, որ այնտեղ արդիւնաբերութեան և սպառման տնտեսութիւնը ամբողջովին ամփոփուած է տնային փակ շրջանակի մէջ։ Իւրաքանչիւր տան մէջ արդիւնաբերութեան չափը ու եղանակը որոշւում է ընտանիքի անդամների կարիքներով։ Իւրաքանչիւր տնտեսական իր կամ բարիք՝ հում նիւթից ընկած մինչև պատրաստի արդիւնք դարձնելը, արտադրւում ու սպառւումէ միևնոյն նեղ շրջանակի մէջ, առանց որևէ միջնորդական ձեռքի։ Այդ երկու տարբեր գործողութիւնները՝ արտադրութիւն և սպառում, կազմում են մի անընդհատ, սերտ միացած, միուրոյն պրոցես։

Մի այդ կարգի ինքնամփոփ ու աւտոնոմ տնտեսութիւն, ինչ ասել կուզէ, ուրա շաղկապուած է հողի հետ։ Եղաւ տընտեսող սուբիեկտը որսորդ թէ ձկնորս, որոնք իւրացնում էին բնութեան առաջարկած առատ բերքը, եղաւ նա թափառական խաշնարած, որ չւում է իր հօտով և տուն ու գոյքով այս ու

---

1) *Տես «Մուրճ», № 9.*

այն տեղ, եղաւ նա հողագործ և այլն, այդ միևնոյն է—բոլոր դէպքերում տնտեսողի աշխատանքը որոշւում է այն կտոր հողով, որի վրայ նա կարգաւորում է։ Եւ որքան նա յառաջադիմում է իր ըմբռնողութեամբ և տեխնիկական ճարպիկութեամբ, որքան ծրագրուած և բաղմակողմանի կերպով է կազմաւորւում նրա կարիքների բաւարարութիւնը, այնքան մեծ է նրա կախումը հողից, այնքան նա արագէ տիրապետում հողին և նրան հետզհետէ ինտենզիւ շահեցնում։

Տնային փակ տնտեսութեան շրջանում ընտանիքի անդամները ոչ միայն քաղում էին բնութեան բերքերը, այլև նրանք պէտք է իրանց սեփական աշխատանքով պատրաստէին, կարևոր գործիք ու կարասիք, պէտք է հում նիւթերին կազմ ու ձև տային և գործածական իրեր շինէին։ Եւ որովհետև անհատական ոյժերը բաւական չէին աշխատանքի այդ բոլոր ճիւղերում գործելու, այդ պատճառով աշխատանքի ֆունկցիաները բաժանւում էին տան անդամների վրայ—ըստ սեռի, տարիքի, անհատական ոյժի ու ճարպիկութեան։ Դժուար ու բարդ աշխատանքը միացնում է մի քանիսի ոյժերը իրար հետ։ Այդպիսով, տնտեսութեան այդ շրջանում արդէն հետզհետէ զարգանում է աշխատանքի բաժանումը և աշխատանքի խմբակցութիւնը, որոնց սկզբնական արմատները գտնում ենք դեռ վայրենի ցեղերի մէջ, նախապատմական շրջանում։

Սակայն ընտանիքը չէր կարող աշխատանքի այդ երկու տարբեր ձևերը իր մէջ ամփոփել ու գործածել, եթէ նա այսօրուայ ընտանիքի կազմն ունենար—ծնողներ, որդիք և երբեմն ծառայ կամ աղախին։ Հին նահապետական ընտանիքը ներկայացնում էր մի քանի սերունդներ ու արիւնակիցներ ամփոփող բազմանդամ *գերդաստան* (Sippe) [1]) որի անդամները՝ սկզբում կազմակերպուած մայրական, իսկ յետոյ հայրական իրաւունքով, համայնաբար տիրում էին հողի ու գոյքի, միասին վարում էին տնտեսութիւնը, ներկայացնում էին մի սերտ շաղկապուած իրաւական միութիւն։ Մարդ անհատը *գերդաստանից դուրս* ազատ թռչուն է, նա չունի ոչ մի իրաւական, տնտ-

---

1) E. Grosse, «Die Formen der Familie und die Formen der Wirtschaft» VIII գլուխը։

2) Աֆրիկայում կարելի է գտնել դեռ այդ տեսակ պատկեր։ «Նեգրերի իրաւական գաղափարների մէջ—ասում է Բուխներ—գլխաւոր մոմենտ է համարւում այն հանգամանքը, որ իրաւական անհատ համարւումէ ոչ թէ անձը, այլ համայնքը, ընտանիքը։ Իրաւունքներն ու պարտականութիւնները վայելում է ինքը համայնքը անհատների կերպով։ Նա պատասխանատու է իր անդամների բոլոր արարածների համար»։ M. Buchner, «Kamerun», եր. 118.

տեսական ապահով գոյութիւն, կարիքի մէջ չունի որևէ օգնող, ծեծուելու դէպքում չունի վրէժխնդիր լինող, ժահուան դէպքում չունի իրան թաղող և այլն [2]): Նահապետական բազմանդամ ընտանիքներ կարելի է գտնել դեռ այժմ իսկ հարաւային սլաւոնների, ռուսների, կովկասեան ցեղերի, հինդուսների ժամ։

Այդ կարգի մեծ ընտանեկան խմբակցութիւնների մէջ հնարաւոր էր լինում աշխատանքի բաժանումը բաւական ընդարձակ չափով գործադրել։ Տղամարդիկ ու կանայք, մայրեր ու մանուկներ, հայրեր ու պապեր—իւրաքանչիւրը ունէր իր որոշ դերը իրերի արդիւնաբերութեան և տնարարութեան մէջ։ Արիւնակցութեան կապերով, հնազանդութեամբ և փոխադարձ յարգանքներով կազմում էին նրանք ներդաշնակ միութիւն։ Սակայն երբ ժամանակի ընթացքում կազմալուծւում է բազմանդամ ընտանիքների, այդ դէպքում ընտանիքը տնտեսական անհրաժեշտութիւն է զգում ընդունելու իր մէջ օտար (ոչ արիւնակից) տարրեր. այդ տնտեսական երևոյթից ծագում է ստրկութեան ինստիտուցիան։ Դրանով արդէն հնարաւորութիւն է ձեռք բերւում անխախտ պահելու տնային տնտեսութիւնը և միևնոյն ժամանակ ընդարձակելու կարիքների բաւարարութեան շրջանը։ Տան աշխատանքի բաժանումը կամ խմբակցութիւնը դառնում է աւելի բազմաճիւղանի, որքան աւելի է շատանում տան տիրոջ տրամադրութեան տակ գտնուած ստրուկների թիւը։ Աշխատանքի զանազան ֆունկցիաները՝ հողագործութիւն, հացահատիկներ աղալ, հաց թխել, մանել, գործել, գործիքներ պատրաստել անասուններ խնամել և այլն, հետզհետէ դառնում են տնային մասնաւոր կոչումներ՝ բարձրաց անազատ աշխատաւորի շլինքին։ Եւ որքան հարուստ է տան տէրը, մեծ նրա տնտեսութիւնը, այնքան էլ բազմակողմանի և փարթամ կերպով կարող է կատարելագործուել նիւթեր կուտել կուտելու և ազնուացնելու տեխնիկան։

2.

Այդպիսի ընոյթ ունէր յոյների, կարթագենցիների և հռովմէացիների տնտեսութիւնը։ Բոտրերտուսը անուանում է դա տնտեսութիւն (oikenwirtschaft), յունական oikos—տուն—բառից։ որ նշանակումէ տնտեսական միութիւն, կազմակերպութիւն։ Օյկոսը ամփոփում է իր մէջ ոչ միայն բնակարանը, այլև դրա հետ միասին տնտեսող մարդկանց խումբը, որի անդամներին յոյնը oiketai է անուանում. մի խօսք, որ իր պատմական հասկացողութեամբ սահմանափակում էր միայն տնտեսական ըստ-

բուկների վրայ, որոնք կրում էին այն ժամանակ տան ամբողջ աշխատանքը։ Միևնոյն միտքն ունի հռովմէական familia խոսքը. famuli նշանակում է տան ստրուկները, իսկ pater familias —ընտանիքի ստրուկների տէրը, որի ձեռքն էր կենտրոնանում ամբողջ տնտեսութեան արդիւնքը։ Տան ոչ մի անդամ չէր վաստակում իր համար, այլ pater familias-ի համար. նրան էր վերապահուած իւրաքանչիւրի կեանքի ու մահուան իրաւունքը։

Եւ տան հօր այդ տիրական իրաւունքի շրջանում, որ տարածւում էր տան բոլոր արիւնակիցների և օտարների վրայ, տնային փակ տնտեսութիւնը աւելի էր ամրակազմ միութիւն ստանում և արդիւնաւէտ դառնում, քան հին նահապետական գերդաստան մէջ, որ զուտ արիւնակիցների խմբակցութիւն էր կազմում։ Ստրկատիրոջ այդ անսահման իրաւունքներով չքացել էր սնհատական գոյութիւնը. պետութիւնն ու իրաւունքը ճանաչում էին միայն ընտանիքներ, մարդկանց խմբակցութիւններ. նրանց համար փոյթ չէր, թէ ինչ էր կատարւում ընտանեկան հարկի տակ. նրանք կանոնաւորում էին յարաբերութիւնները ոչ թէ մարդ անհատների, այլ տների մէջ։

Կլասիք դարերջանում ստրկատէր հարուստ տան աշխատանքը ունէր բազմաթիւ ֆունկցիաներ։ Դեռ 17-րդ դարում հոլանդացի Տ. Պոմպա անունով մի հեղինակ թւում է մօտ 146 զանազան աշխատանքի ֆունկցիաներ, որ ունէին հռովմէական հարուստ տների ստրուկները։ Այսօր նոր հետազօտութիւնը աւելի է ցոյց տալիս։ Հռովմէական իւրաքանչիւր հարուստ տան ստրուկ բանւորութիւնը բաժանւում էր երկու մասի։ Առաջինը կոչւում էր familia rustica, այսինքն արդիւնաբերական նպատակների ծառայողներ։ Այդ կաթեգորիայի մէջ են մտնում բոլոր արհեստային կոչումները, որ վարում էին ստրուկները, այն է՝ երկրագործութիւն, խաշնարածութիւն և անասնապահութիւն, մանուածագործութիւն, ոստայնանկութիւն, դերձակութիւն, դարբնութիւն և այլն։ Երկրորդ մասը կոչւում է familia urbana, այսինքն վարչական նպատակների ծառայողներ։ Ստրուկ բանւորութեան այդ կաթեգորիայի մէջ ամփոփուած էր այն ստուար պերսոնալը, որ ծառայում էր տան տիրոջ ու տիրուհուն։ Այսպէս օրինակ տիրոջ գոյքի և կարողութեան կառավարիչը՝ իր գանձապահով, հաշուապահներով, վարձու տուած տների կառավարիչներով։ Ապա գալիս են՝ տան վերակացուն, գոնապահը, սենեակների, դահլիճների, կահ-կարասիքի վրայ հսկողները, տակառապետը, մառանապետը, ահագին քանակով խոհանոցային ծառայողներ. ապա սպասաւորներ,

որոնք պատրաստ են դալիս իրանց տիրոջ շուրջը՝ լուացուելու, ճաշի, ընթրիքի, քնելու ժամանակ, հիւրեր ընդունելու, զանազան զուարճութիւնների և խրախճանքի, դուրսը զբօսնելու բոլէներին և այլն և այլն։ Դա մարդկանց մասսայական կուտակումներ էին—խոնարհ ու հնազանդ, կամազուրկ ու անգիտակից ստրուկներ—ենթակայ կոմֆորտների մէջ յղփացող փոքրիկ արիստոկրատիայի։ Ֆրիդրիխ Էնգելսը տալիս է մեզ վիճակագրական տեղեկութիւններ Աթէնքի և Կորնթոսի ստրուկների քանակի մասին։ Աթէնքը ունէր իր ամենածաղկած շրջանում 90,000 ազատ քաղաքացիներ՝ կանայք ու մանուկներ միասին հաշուած, մինչդեռ երկու սեռի ստրուկները կազմում էին 365,000 հոգի, իսկ օտարների և ազատուածների թիւը՝ 45,000 էր։ Կորնթոսում ստրուկները կազմում էին 460,000 հոգի՝ տասը անգամ աւելի ազատ քաղաքացիներից [1])։

Այլ կերպ չէր տնտեսում անգամ ինքը՝ պետութիւնը։ Ստորին բոլոր պաշտօնեաներն ու ծառաները ստրուկներ էին։ Ստրուկները կառուցանում էին ճանապարհներ, փողոցներ, տներ, մշակում, ցանում էին հողը, աշխատում հանքերում և այլն։ Ոստիկանները, դատաւորները, բանտապահները, պետական գանձապահները, գրագիրները, մագիստրատում, տաճարներում ծառայողները և այլն և այլն—բոլորն էլ ստրուկներ էին։ Իւրաքանչիւր զօրապետ կամ նահանգական բարձր պաշտօնեայ իր պաշտօնատեղին գնալու ժամանակ ուղեկցւում են բազմաթիւ պետական ստրուկներով։ Այդ ստուար պերսոնալի ապրուստը հոգալու համար եկամտի աղբիւրներ էին կազմում պետական հողերը և գաւառներից ստացած տուրքերը։

Այսպիսի տնտեսական պատկեր ունէր կլասիք դարեշրջանը, որ տնտեսական զարգացման տեսակէտից մենք անուանեցինք տնային փակ տնտեսութեան շրջան։ Ստրկատէր տան այդ տնտեսական աւտոնոմիայից բացատրւում է հին Հռովմի գրեթէ ամբողջ սոցիալական ու քաղաքական պատմութիւնը։ Այնտեղ գոյութիւն չունէին արդիւնաբեր կոչումաւոր դասակարգեր, երկրագործներ, արհեստաւորներ—միմիանց հանդէպ և միմիաց կողքին, որպէս ինքնուրոյն սոցիալական խաւեր։ Կային միայն հարուստներ և աղքատներ։ Եթէ հարուստը դուրս էր մղում աղքատին հողային տիրապետութիւնից, ապա դրանով դարձնում էր նրան պրոլետար։ Իսկ հողազուրկը զուրկ է և՛ վաստակելու հնարաւորութիւնից, որովհետև այն ժամանակ

1) Fr. Engels, «Der Ursprung der Familie, des Privateigenthums und des staates», եր. 117 և 175,

չկար արդիւնաբերական կապիտալ, որ վարձով գնէր աշխատանքը. տան փակ սահմաններից դուրս գոյութիւն չունէր ինդուստրիա։ Այդպէս առաջանում է այն խոշոր կալուածատիրութիւնն ու անթիւ ստրուկների շարանը, որոնք կենտրոնացել էին սակաւաթիւ ձեռքերի մէջ։ Տէրեր և ստրուկներ—այդ դասակարգերն էին կազմում կլասիք դարեշրջանի հասարակական կազմի հակադիր բևեռները։ «Հարուստների և աղքատների, ազատների և ստրուկների խոշոր տարբերութեամբ—ասում է Էնգելսը—հասարակական կազմը բաժանւում է երկու անհաշտ դասակարգերի» [1]։

Ստրուկ դասակարգը, բանուորն (Banausos) էր աշխատանքի տնտեսական կեանքի բարգաւաճման ղեկավարն ու դրշակակիրը։ Ամենայետին, կեղտոտ զբաղմունքներից սկսած մինչև վերին կատարելագործուած և այսօր ամենաազնիւ գործերի շարքն անցած արուեստը, իբրև արտօնեալ քաղաքացուց արհամարհուած ձեռնարկութիւն, վարում էին ստրուկները։ Ազատ քաղաքացին աշխատանքի արտադրութիւնից լիանում, նրանով հիանում և իր կեանքի պահանջներին առատ բաւարարութիւն էր տալիս, իսկ նոյն աշխատանքի գաղափարը նա ատում, ոտնահարում էր, իբրև ստորին զբաղմունք։ «Բանուորը բոլորովին զրկուած էր ազատ ժամանակից—ասում է Պլատոնը—ձեռք բերելու անհրաժեշտ կրթութիւնն ու զարգացումը. նա դատապարտուած էր աշխատանքի և բարձրին ձգտելու ոյժ չունէր. նրանք ստրուկներ են և չգիտեն թէ ո՞րն է գեղեցիկ, լաւ և արդար»։ Իսկ ճարտասան Դեմոսթենեսը բացայայտ շեշտում է՝ «բանուորից, որ միայն ստորինն է ղեկավարում, անկարելի է որևէ մեծահոգութիւն սպասել»։ Արիստոտելը խօսելով ձեռնարհեստների և արուեստագործների մասին, աւելացնում է. «Արտօնեալ քաղաքացին չի կարող ձեռնարհեստով զբաղուել, որովհետև դա նրա հոգին ու մարմինը կը կոշտացնէ»։ Լուկիանոսը կրքոտ շեշտերով արտայայտում է ժամանակակից նախատական վերաբերմունքն ու տեսակէտը արուեստագէտների նկատմամբ. «որպէս քանդակագործ, դու մի հասարակ ձեռնարհեստաւոր ես, ամենաստորին նշանակութեամբ ուրիշ ոչինչ, եթէ նոյնիսկ Ֆիդիասի կրակը վառուէ քո մէջ»։ Իսկ Անտիթենեսը ասում է Իսմէնիայի մասին. «նա ստորին ծագումից է, ապա թէ ոչ այնպէս գեղեցիկ սրինգ չէր նուագիլ»։ Այս բոլոր վկայութիւնները կենդանի ապացոյցներ են, հաստատելու համար, թէ այն ժամանակ, որ աստիճան ընկած

1) Ibid էջ. 170.

էր աշխատանքը իր վարիչներով հպնդերձ։ Հռովմում ստրուկ դասակարգը աւելի էր նախատուած, արհամարհուած, ենթակայ սոսկալի պատիժների և մահադիմ տանջանքների, որոնց մանրամասն ցուցակը թուում է Մենեկան, քան Յունասատանում։ Եւ Հռովմում ստրկատէրը աւելի անսանձ դեսպոտ էր, աւելի էր չարչարում և որպէս հանարակ իր վաճառքի հանում, քան Յունասատանում։ Կատօն Երէցի համար ասում են, որ նա ահագին քանակութեամբ ստրուկներ էր վաճառքի հանում։

Այսպէս ահա, անտիկ աշխարհի տնտեսական տանձնայատուկ պայմանները անհրաժեշտօրէն առաջ են կոչել սոցիալական կեանքի առանձնայատուկ ստրուկտուրա, տուն տուել դասակարգային սպեցիֆիկ յարաբերութիւնների։ Սար ու ձորի անջրպետով բաժանուած երկու դասակարգեր, երկու ծայրայեղ հակադիր բևեռներ. մէկը՝ աղքատ, ստրուկ, սոսկալի զրկանքների ենթակայ, բայց միևնոյն ժամանակ քրտնաթոր արտադրող, աշխատանքի լուծը իր վրայ կրող, հարստութիւններ գիզող—դրանք ստրուկ բանուորներն էին։ Միւսը՝ երջանկութեան կատարին հասած՝ վայելող, փառաւորուող, զուարճութեան և խրախճանքի գիրկը մատնուած պարազիտներ—դրանք ստրկատէրերը, հարուստներն էին։ Աշխատանք և դատարկապորտութիւն, քրտնաթոր արտադրութիւն և յղփացում—սրանք այնպիսի անհաշտ, ոխերիմ կոնտրաստներ են, որ տեսական կ'ուզենք ունենալ չէին կարող. սրանք այնպիսի հակընդէմ մոմենտներ են մարդկային յառաջադէմ կեանքի, երբ սոցիալական-քաղաքական հարցերը եփուելու, եռալու վիճակ են ընդունում։

3.

Բռնանական և դերմանական ցեղերի տնտեսութիւնը՝ միջին դարերի սկզբներում, ունէր գրեթէ տնային փակ տնտեսութեան նոյն հիմնական գծերը։ Այնտեղ ևս տնտեսական յառաջադիմութեան կարիքը առաջնորդում է դէպի տնային փակ տնտեսութեան լայն կազմաւորումը։ Այնտեղ տնտեսական ամենաուշագրաւ երևոյթը կազմում էր այն արքունական խոշոր տնտեսութիւնը, որ սփռուում էր թագաւորի, ապա ազնուականի և եկեղեցու ընդարձակ կալուածների վրայ։ Ստրկական տնտեսութեան՝ օրգանական զարգացումով երևում է ճորտական տնտեսութիւնը (Fronhofswirtschaft)։ Այդ երկու տնտեսական ինստիտուցիաները մի շատ կարևոր կէտի մէջ տարբերուում էին իրարից։ Հռովմում խոշոր կալուածատէրը կլանում

էր փոքրին, դարձնում նրան հողազուրկ և այդպիսով գիւղացուն փոխարինում էր ստրուկը։ ստրկական անտեսութիւնը կատարւում էր գիւղական դասակարգի կատարեալ պրոլետարացման գնով։ Իսկ ճորտական անտեսութեան մէջ, իրաւ, թէև մանր հողատերը կախման վիճակի մէջ էր գտնւում ֆեոդալից այնուամենայնիւ դուրս չէր մղւում իր հողից։ ստրկի համեմատութեամբ ճորտը ունէր փոքր ինչ անձնական և անտեսական ինքնուրոյնութիւն։ Ո՞րտեղից առաջացաւ այդ երևոյթը։ Հին Իտալիայում մանր գիւղացին կործանւում, ընկնում էր ստրկութեան գիրկը, որովհետև նա չէր կարողանում տանել ծանր տուրքերը։ Սովը մղում էր նրան դէպի թշուառութիւնն ու անկումը, մինչդեռ բռնանական-դերմանական միջին դարերում գիւղացին ու նրա հողը գտնւում էին խոշոր կալուածատիրոջ հովանաւորութեան տակ, կարիքի դէպքերում վերջինս պաշտպանում էր իր ճորտին։

Այստեղ հանդիպում ենք արդէն անտեսական առանձնայատուկ երևոյթների։ Մինչդեռ կլասիք դարերում մարդկանց խոշոր մասսա, որպէս սովորական իր կամ ապրանք սեփականութիւն էր կազմում փոքրաթիւ արիստոկրատների ձեռքին՝ հետևապէս անային անտեսութիւնը լիամիտ էր և միւորոյն, բռնանական-դերմանական շրջանում աշխատող ու վայելող տարրերը—ճորտն ու ֆեոդալը—փոքր ինչ անջատուած էին միմեանցից։ Սակայն դրանով չեն խախտւում տնային փակ անտեսութեան սիստեմի հիմնական գծերը, այլ աւելի է ընդլայնւում նրա շրջանակը։ Ճորտային անտեսութեան բոլոր բարիքները կենտրոնանում էին խոշոր կալուածատիրոջ ձեռքում։ Այստեղ ևս բացակայում են՝ աշխատանքի վարձը, գինը, կապիտալի շահը (պրոֆիտ), հետևապէս չկային նաև՝ ձեռնարկող կապիտալիստ և վարձու բանուոր։

4.

Տնային փակ տնտեսութեան սկզբնական ժամանակներում բոլորովին անծանօթ երևոյթ էր փոխանակութիւնը։ Հնադարեան ընտանիքը ոչ միայն անտեսական արհրաժեշտութիւն չէր զգում արդիւնքներ փոխանակելու,—որովհետև նրա սահմանափակ կարիքները հոգացւում էին սեփական ջանքերով,—այլև նա ունէր մի առանձին հակակրական ինստինկտ դէպի փոխանակութիւնը։ Հին հասկացողութեամբ փոխանակել և խարուել (Tauschen und Täuschen) գրեթէ միևնոյն իմաստն ունէին։

Սակայն շնորհիւ այն հանգամանքի, որ բոլոր երկրամա-

սերում բնական բերքերը գոյութիւն չունին նոյն առատութեամբ, որ բոլոր ցեղերի մէջ տեխնիկան չէ զարգանում նոյն արագութեամբ և ուղղութեամբ, հետևապէս չէ արտադրում հաւասար քանակով արդիւնքներ, որ հետզհետէ բազմանում և բարգանում են կարիքները, մինչդեռ ընտանիքի վաստակաւոր ձեռքերը չեն կարողանում այդ բոլորին գոհացում տալ,—շնորհիւ այդ հանգամանքի, ասում ենք, աստիճանաբար երևան է գալիս և զարգանում ցեղերի մէջ տնտեսական փոխանակութիւնն ու յարաբերութիւնը։ Շատ պարզ է եղել փոխանակութեան պրիմիտիւ աստիճանը։ Դա աւելի ճիշտ փոխ տալ է եղել, քան փոխանակութիւն։ Օրինակ՝ եթէ մի գիւղացի վատ հունձ էր ունենում, վերցնում էր իր հարևանից որոշ քանակութեամբ հացահատիկ ու դարման, յաջորդ տարին վերադարձնելու պայմանով։ Եթէ մէկի լծկան կենդանին ժանտախտի զոհ էր գնում, ուրիշները տալիս էին նրան որոշ ժամանակով իրանց եզը, իմանալով, որ իրանք ևս նոյն վիճակի մէջ կը ստանան նոյն կարգի օգնութիւն և այլն։

Ժամանակի ընթացքում երևան են գալիս իսկական փոխանակութեան սիմպտոմները զուտ բնական իրերի տնտեսութեան (Naturalwirtschaft) շրջանում։ Օրինակ փոխանակւում էին՝ հացահատիկը գինու հետ, ձին՝ ցորենի հետ, մի կաւոր կտաւը որոշ քանակով աղի հետ և այլն։ Երբեմն նաև ստրկատէրը որոշ ժամանակով տալիս է ստրուկը մի ուրիշին աշխատելու և դրա փոխարէն ստանում գինի, փայտ կամ այլ իրեր։ Հետզհետէ հրապարակ է գալիս իրերի մի հանրարժէք մասշտաբ՝ փողը, վաճառանոցները և կրեդիտային հաստատութեան սկզբնական սաղմային ձևերը։ Դեռ այդ շրջանում փողը ստանում է մի քանի ֆունկցիաներ, այն է՝ որպէս փոխանակութեան միջոց, արժէքի չափ, վճարման միջոց և արժէքի պահպանութեան (գանձելու, Wertaufbewahrung) միջոց, մանաւանդ ազնիւ մետաղից։ Սկզբներում փողի փոխատուութիւնը սերտ կապուած չէր շահաւէտութեան գաղափարի հետ։ Ինչպէս յայտնի է յունական և հռովմէական պատմութիւնից, անբնական էր համարւում, երբ փոխ տուած փողի համար տոկոս էր պահանջւում, որովհետև դա կործանում էր պարտապանին։ Այդ պատճառով միջին դարերում կանոնական արգելքը՝ տոկոս վերցնելու դէմ, ծագեց ոչ թէ բարոյական-աստուածաբանական մղումներից, այլ զուտ տնտեսական անհրաժեշտութիւնից։

Տնտեսական զարգացման առաջին փազի մէջ հանդէս չեն գալիս առևտրի բոլոր ֆունկցիաները։ Ամենակենսական պիտոյքները դեռ ենթակայ չէին կանոնաւոր և մշտական փոխա-

նակութեան։ Միայն հազուագիւտ բնական բերքեր և արհեստային արտադրութիւններն էին, որոնք առևտրի նիւթ էին կազմում։ Պրոֆեսոր Լամպրեխտը իր միջին դարերի տնտեսական հետազօտութիւնների մէջ ասում է, որ ֆրանսիացիք 11-րդ դարում միայն հազուագիւտ կարիքների դէպքերումն էին գնում ու վաճառում [1]։ «Առաջին սկզբնական երևոյթը—ասում է Բիւխերը—չէ խախտում տնային փակ տնտեսութեան հիմնական բնոյթը, որովհետև նա շօշափում է դեռ ևս տնտեսութեան սիստեմի մակերևոյթային մասը» [2]։

III

Քաղաքային տնտեսութիւն

Քաղաքային տնտեսութեան բնոյթը։—Միջնադարեան քաղաքը։—Քաղաքային աւտոնոմ տնտեսութիւնը։—Քաղաքի և գիւղի տնտեսական յարաբերութիւնը։—Արդիւնաբերութեան պրոցեսի բաժանումը։—Վաճառականոցային հաստատութիւնը՝ իր տեղական բնաւորութեամբ։—Նստակեաց առևտուրը։—Մանր ու մեծ առևտուրը։—Վաճառականի և վաշխառուի կապիտալը։—Ֆեոդալ, վաճառական, վաշխառու՝ մի կողմից, և արհեստաւոր քաղաքացի ու ճորտ գիւղացի միւս կողմից։

1.

Տնտեսական զարգացման յաջորդ ֆազը տնուանեցինք *քաղաքային տնտեսութիւն*։ Այդ ֆազը ժամանակագրապէս սկսւում է, ըստ Շմոլերի, 10-րդ դարու վերջերից և տևում մինչև վերածնութեան մուտքը, ընդգրկելով միջին և արևմտեան Եւրոպայի առաջնակարգ երկրների տնտեսական կեանքը։ Այն ընդհանուր երևոյթը, որի շնորհիւ եւրոպական ազգերի միջնադարեան տնտեսութիւնը քաղաքային է կոչւում, համարւում է ամենից առաջ քաղաքային կեանքի կատարեալ տիրապետութիւնը գիւղականի վրայ, մանաւանդ Իտալիայում։ Միջնադարեան քաղաքը մի աւտոնոմ կենտրոնավայր էր այն բոլոր տնտեսական շարժումների և յարաբերութիւնների համար, որոնք տեղի էին ունենում նրա մէջ և նրա շուրջը։ Նա իր շրջապատ գիւղերով ներկայացնում էր մի տնտեսական ինքնամփոփ ամբող-

1) Lamprecht, «Eranzösisches Wirtschaftsleben» եր. 132.
2) Buche, «Die Entstehung drr Volkswirtschaft» եր. 129

ղութիւն, որի մէջ տնտեսական կեանքի ողջ շրջանառութիւնը ընթանում էր ինքնակախ, ըստ սեփական նորմաների։ Իւրաքանչիւր քաղաքային տնտեսական միութիւն ունէր իր՝ սեփական դրաժը, չափն ու կշիռը։

Այն կեանքի հաղորդակցութիւնը, որ գոյութիւն ունէր քաղաքի և իր շրջակայ գիւղերի մէջ, տեղի չէր ունենում մէկ ու միւս քաղաքի մէջ։ Վաճառականոցային իրաւունքը կարգաւորող քաղաքային մաղիստրատը արգելում էր իրերի արտահանութիւնը դէպի որևէ այլ քաղաք. այդ կատարւում էր միայն այն ժամանակ, երբ տեղական բնակիչները լի չափերով բաւարարութիւն են տալիս իրանց կարիքներին և իրերի յաւելումը կուտակուած է մնացել շուկայում։ Կամ թէ չէ քաղաքային մաղիստրատը թոյլ էր տալիս օտար քաղաքներից իրեր ներմուծելու միայն այն ժամանակ, երբ այդ իրերն արտադրող արհեստի ճիւղը բացակայում էր սեփական քաղաքում, կամ թէ կայ, բայց անբաւարար է տեղական պահանջների համար։

Այն ընորոշ կրիտերիումը, որ պարզ ցոյց է տալիս քաղաքային տնտեսութեան տարբերութիւնը նախկին ֆազից, կազմում է վաճառորդների արդիւնաբերութիւնը, (Kundenproduktion) այսինքն արդիւնաբերութիւն ոչ թէ սեփական կարիքների համար, այլ անմիջական կամ ուղղակի փոխանակութեան համար։ Տնտեսութեան այդ սիստեմը, որի սկզբնաւորութիւնը մենք տեսանք դեռ առաջին ֆազի մէջ, քաղաքային տնտեսութեան մէջ ստանում է իր տիպիկական արտայայտութիւնը։ Որքան տնտեսական զարգացման ընթացքում տանձին կոչումների մէջ յառաջադիմում է աշխատանքի բաժանումը և մասնաւոր սեփականութիւնը աճում է ծաւալով և նշանակութեամբ, այնքան ընդհանրապէս դանդաղում է ինքնագործածութեան համար եղած արդիւնաբերութիւնը և արագ զարգանում է փոխանակութիւնը։ Ապրանքների փոխանակութիւնը միշտ նախադրում է երկու պայման. առաջին, որ տնտեսութեան բոլոր արդիւնաբերական ճիւղերը միևնոյնը չեն արտադրում, որովհետև հասարակութեան մէջ մուտք է գործել աշխատանքի բաժանումը, և երկրորդ, որ փոխանակողները ազատ կարգաւորում են այն արդիւնքների վրայ, որոնց նրանք փոխանակում են։

Քաղաքային տնտեսութեան շրջանում արդիւնաբերութեան պրոցեսը անդամահատում և սոցիալական խաւերի է բաժանում ազգաբնակութեան նախկին միապաղաղ կազմը իր տնտեսական ֆունկցիաներով։ Հնադարեան ընտանիքը մի կողմից հաւաքում, կարգաւորում էր հողից ստացած բնական բերքերը, իսկ միւս կողմից կուռ կոփում էր իր պրիմիտիւ գոր-

ծիքները։ Երկրագործութիւնն ու արհեստը միմեանց հետ սերտ շաղկապուած էին։ Միջնադարեան մարդը անկարող էր այլևս սեփական ջանքերով բաւարարութիւն տալ իր հետզհետէ բարդացող պահանջներին. նա այլևս հնարաւորութիւն չունէր միաժամանակ հողագործ և արհեստաւոր լինելու. նա պէտք է կամ հողագործ և կամ արհեստաւոր լինէր, այդ էր պահանջում աշխատանքի բաժանման բնական պրոցեսը։ Այդպիսով տնտեսական զարգացման երկրորդ ֆազի մէջ տնտեսութեան ամբողջ պրոցեսը բաժանւում է երկու մասի, առաջ բերելով սոցիալական տարբեր խաւեր. մի տեղ հողատէր գիւղացին մշակում է հողը, հայթհայթում է հում նիւթեր, իսկ միւս տեղ արհեստաւոր քաղաքացին հում նիւթերից արտադրում է գործածական կարևոր նիւթեր։

Արդիւնաբերութեան պրոցեսի այդ բաժանումը տեսական և հաստատուն գոյութեան նեցուկներ շնորհեց վաճառականոցային հաստատութեան։ Վաճառանոցը (Markt) համարւում է բազմաթիւ գնողների եւ վաճառողների, ապառողների եւ արտադրողների համախմբումը՝ որոշ տեղում եւ որոշ ժամանակին։ Գնական անհրաժեշտութիւն էր զգացւում, որ սոցիալական կոչումաւոր խաւերը ժողովուին մի ընդհանուր տեղ և փոխանակէին իրանց արտադրած իրերը։ Միջնադարեան վաճառանոցը ունէր սովորաբար տեղական բնաւորութիւն։ Քաղաքը (եկեղեցու մօտ, լայն հրապարակի վրայ, քաղաքի դարպասի առաջ և այլն) կամ նրա մօտ շրջապատն էր կազմում արդիւնաբերողների և սպառողների համախմբման տեղը։ Նրանք անմիջական յարաբերութիւն, շփում ունէին միմեանց հետ. իւրաքանչիւրը տէր էր իր ապրանքի և պատասխանատու իրար հանդէպ։ Գիւղացին քաղաք է բերում իր երկրագործական բերքերի յաւելումը՝ կենսական պիտոյքներ թէ հում նիւթեր, վաճառում տեղական բնակիչների վրայ և դնում արհեստաւորից ինդուստրիական արդիւնքներ։ Քաղաքացին ու գիւղացին ունէին վաճառորդային յարաբերութիւն։ Սովորաբար ինչ որ մէկը արտադրում էր, դրան կարիք ունէր միւսը և ընդհակառակը։ Փոխանակութեան ակտը շատ յաճախ կատարւում էր առանց փողային միջոցների կամ թէ չէ փողը գործ էր ածւում միայն իրերի արժէքների հաւասարեցման համար։ Վաճառանոցային յարաբերութեան, որպէս մշտական երևոյթի, սկզբնական շրջանում, երբ արտադրող ու սպառող անմիջապէս հանդիպում էին իրար, ամենևին կարիք չէր զգացւում միջնորդ պերսոնալ առևտրական դասի։ Վաճառականութիւնը, որպէս տնտեսական մասնայական երևոյթ, և վաճառականները, որպէս մի սոցիա-

լական կոչումաւոր խաւ, հանդէս են եկել աւելի ուշ, քան վաճառականոցը։ Արտադրողների և սպառողների վաճառականոցային անմիջական յարաբերութիւնը, փոխանակութիւնը ըստինքեան բացասում է միջնորդ պերսոնալի գոյութիւնը։

2.

Տնտեսական պահանջների բարդացումը և աշխատանքի բաժանման զարգացումը հետզհետէ հանում են այն աստիճանին, որ գնելն ու վաճառելը ևս դառնում է մի առանձին գործ, որին նուիրւում է մի հասարակական խաւ։ Հետզհետէ արմատ է բռնում միջնադարեան քաղաքներում նստակեաց առեւտուրը, սկզբում իհարկէ փոքր ծաւալով։ Միայն ունևոր բնակիչներն էին, որոնք կարողանում էին շաբաթական և տարեկան վաճառականոցներում (Wochen—und Jahrmarkt) ոչ միայն անմիջապէս հոգալ իրանց հարկադրող կարիքները, այլև իրանց ապահովել կենսական միջոցներով մինչև յաջորդ վաճառականոցը։ Ազգաբնակութեան աղքատ խաւերը, սակայն, չէին կարողանում երկար ժամանակով իրանց ապահովել։ Ուստի կարիք չկար իրերի մի մշտական պաշարի, որից նրանք մաս-մաս գնէին և բաւարարութիւն տային իրանց ընթացիկ պահանջներին։ Այդ պաշարը պահելու, խնամելու և մաս-մաս վաճառելու կոչումը ստանձնեց ինքը՝ մանր առեւտրականը։ Ամբողջ առեւտրական ձեռնարկութիւնը, որպէս հաստատաբնակ, նստակեաց կոչում, գոյութիւն չունէր մինչև վերջին դարերի վերջերը։ Դա բացառապէս թափառական, տօնավաճառի առևտուր էր։ Մեծ առևտուրը հոգում էր միայն հազուագիւտ ապրանքների ներմուծումն ու արտահանումը, որոնք ամենուրեք չէին արդիւնաբերւում։ Օրինակ մեծ առևտրականը հոգում էր հետևեալ իրերի առևտուրը. 1. Հարաւային երկրներից մրգեղէններ, քաղցր ու անուշահոտ իրեր։ 2. Զորացած և աղով արած ձուկ, որ այն ժամանակ ժողովրդական ընդհանուր մնունդի նիւթ էր համարւում։ 3. Մորթի, կաշի։ 4. Ագնիւ տեսակի մահուդեղէն։ 5. Դինի, մանաւանդ գերմանական հիւսիսային քաղաքների համար։

Հետզհետէ ծլող-ծաղկող վաճառականի, առևտրական ձեռնարկութեան և առևտրական կապիտալի կողքին երևան է գալիս վաշխառու և վաշխառուի կապիտալը (Wucherkapital), բուրժուական վայելուչ արտայայտութեամբ՝ փոխառութեան կապիտալը (Leihkapital)։ Առևտրական կապիտալը գրեթէ նոյնքան հին է, որքան և վաշխառուի կապիտալը։ Երկուսն էլ կազմում են կապիտալի հին ձևերը, երկուսն էլ համարւում են ա-

պագայ տնտեսութեան կապիտալիստական զարգացման անհրաժեշտ նախապայմանները։ Քաղաքային տնտեսութեան շրջանում գոյութիւն ունէին միայն կապիտալի այդ երկու տեսակը։ Ինդուստրիական կապիտալը դեռ բացակայում էր։

Ո՞րտեղից են քաղում իրանց եկամուտը այդ անարդիւնաւէտ սոցիալական խաւերը—առևտրականն ու վաշխառուն։ Ի՞նչ ապրիւրից է շահւում, աճում և լճանում նրանց կապիտալը։

Եթէ վաճառականը ուզում է գնած ապրանքը վաճառելու ժամանակ մի օգուտ կամ շահ ունենալ, ապա նա կարող է այդ անել սովորաբար այն ժամանակ, երբ նա իր ապրանքը գնէ մի այնպիսի ժամանակ, ուր նա արժան է և վաճառէ մի այնպիսի տեղ կամ այնպիսի ժամանակ, ուր նա թանդ է։ Այսինքն գնել արժան և վաճառել թանդ, և իւրացնել այդ տարբեր պրոցեսների ժամանակ վաստակած օգուտը։ Մինչդեռ հողագործ գիւղացու և ձեռնարհեստաւոր քաղաքացու եկամուտը կախուած է ամենից առաջ իր կամ իր ընտանիքի անձնաւորութիւնից, աշխատասիրութիւնից և ճարպիկութիւնից, վաճառականի շահի քանակը, ընդհակառակը, այնքան աւելի մեծ է, որքան նա աւելի շատ դրամ ունի ապրանք գնելու և վաճառքի հանելու համար։

Որակով նմանօրինակ աղբիւր ունի և՛ անարդիւնաւէտ վաշխառու կապիտալիստը։ Վաշխառուի կապիտալը ըստինքեան նախադրում է չքաւորութեան գոյութիւնը։ Ով ունի այն, ինչ չի նա կարիք ունի, պարզ է, որ որևէ բան մէկից փոխ չի վերցնի։ Վաշխառուի կապիտալը մի միջոց է, որ շահագործելով կարօտեալների չքաւոր վիճակը, բազմացնում է նրանց թիւը։ Վաշխառուն քամում, ծծում է իր պարտապանին, իսկ նրա անկման մէջ չունի նա որևէ ինտերես։

Ուրեմն յանձինս վաճառականի և վաշխառուի, գտնում ենք քաղաքային տնտեսութեան շրջանում երկու սոցիալական խաւեր, որոնք ոչ մի նոր արժէք չեն աւելացնում արտադրած ապրանքի վրայ, և որոնք, այնուամենայնիւ, շնորհիւ ընդհանուր տնտեսական պայմանների դասաւորութեան և տնտեսական գործոնների զարգացման աղդեցութեան—մասնաւոր սեփականութեան սիստեմի ներքոյ—առաջացել և անընդհատ աճում են։ Մէկը՝ վաճառականը, որոնում է գնելու ոյժ ու միջոցներ ունեցող հասարակութիւն, ասել է շատ ու շատ ապառող, եթէ ուզում էք՝ շռայլող հասարակութիւն, որպէսզի առևտրական նուաճումները յաջող ընթանան, իսկ միւսը՝ վաշխառուն, որոնում է փողի ծարաւ, կարօտող հասարակութիւն,

որպէսզի լաւ ու արագ սլանայ անդուլ շահագործութեան պրոցեսը։

Սակայն տնտեսական զարգացման երկրորդ ֆազի ամբողջ ընթացքում—սկսած առաջին ֆազի վերջին շրջանից—մենք հանդիպում ենք այլ դասակարգի, որ ոչ միայն տնտեսական կուտակուած բարիքներ է անաշխատ վայելում, այլև տիրապետող դիրք ունի հասարակական և քաղաքական կեանքում։ Դա խստապարանոց, պարազիտ ֆեոդալներն են (այստեղ առիթ չունենք կղերականութեան մասին խօսելու, որովհետև մենք գործ ունենք միայն այն խաւերի հետ, որոնք անմիջապէս թէ միջնորդապէս շաղկապուած են արդիւնաբերութեան պրոցեսի և տնտեսական ձևերի հետ)։ Միջնադարեան քաղաքային տնտեսութիւնը ուրիշ խօսքով կոչւում է ֆեոդալական տնտեսութիւն. այսինքն միջնադարեան տնտեսութեան տիրապետող ձևը եղել է ազրիկուլտուրային, որի տէրն ու տիրականը, արդիւնքներ վայելողը եղել է ֆեոդալը։

Բայց միջնադարեան տնտեսութիւնը ունի և՝ դրա հակառակ, սակայն դրանով պայմանաւորուած անուն, այն է՝ ճորտային տնտեսութիւն։ Դա կը նշանակէ, որ միջնադարեան արդիւնաբեր, վաստակող հասարակութեան մեծագոյն մասը (գիւղացիութիւնը) ունեցել է իր տնտեսական ֆունկցիաների մէջ ճորտային յարաբերութիւն դէպի խոշոր կալուածատէրը՝ ֆեոդալը։ Ֆեոդալիզմը այնպէս է պայմանաւորուած ճորտային տնտեսութեամբ, ինչպէս կլասիկ դարեշրջանի ազատ ու անաշխատ արիստոկրատիան՝ ստրկական տնտեսութեամբ կամ արդի կապիտալիստական տնտեսութեան սիստեմը՝ պրոլետարեատի զոյութեամբ։

Հէնց այդ ճորտային տնտեսութեան մէջ էին խարսխուած ֆեոդալական եկամտի անբաւ հարստութեան աղբիւրները. հարստութիւն՝ բնական բերքերից և բարիքներից (Naturaegüter), եկամուտ՝ փողային ծանր տուրքերից, որ այնքան զարհուրելի էքսպլոատացիայի (անսեփականացում) ենթարկեց արևմտեան Եւրոպայի գիւղացիութեան։ Ճորտի քաղցածութիւնը՝ ֆեոդալի շռայլումն ու յղփացումն էր, ճորտի չքաւորութիւնը՝ ֆեոդալի չաղ եկամուտն էր, նրա հարստութեան դիզումը։

Ճորտացած գիւղացիների հաժեմատութեամբ, քաղաքացի արհեստաւորն ունէր տնտեսական անկախութիւն և սոցիալական աւելի բարձր վիճակ։ Արհեստաւոր դասակարգը ցածր խաւերից բաղկացած մի շերտ էր, որ սկզբում փափագում էր տիրանալ այն ազատութեան և հաւասարազօր իրաւունքներին, որ վայելում էին ազնուականներն ու պատրիկները։ Սակայն

խափանուեցին նրանց երազած ձգտումները և նրանք մնացին դուս արհեստաւորներ։ Նրանք ունէին իրանց ընդհանուր համքարական կազմակերպութիւնը (Zunft, цехъ) բաղկացած վարպետներից, քարգեարներից (Geselle) և շակերտներից։ Վարպետները համեմատաբար քիչ էին և վայելում էին աւագի դիրք։ Քարգեարների աշխատանքի վարձատրութիւնը տրուում է արդէն նորմայի տակ։ Քաղաքային արհեստաւոր դասակարգը վիճակակից է հողագործ գիւղացիութեան հետ այն տեսակէտից, որ երկուսն էլ արդիւնաբերող տարրեր են. մէկը արհեստային ինդուստրիայի մէջ, միւսը գիւղատնտեսութեան մէջ։ Երկուսի եկամուտը, տպրուսաի միջոցները վաստակւում են սեփական քրտինքով։ Եւ վերջապէս, որ երկուսն էլ շահագործուող տարրերն են (թէև ոչ հաւասար չափով)։ Մի կողմից քրտնավաստակ գիւղացին վերջին ծայր հարստահարւում, քամւում, մըզւում էր տպրուկ ֆեոդալից, իսկ միւս կողմից քաղաքացի արհեստաւորը ճնշւում էր քաղաքներում կուտակուող առևտրական և վաշխառուի կապիտալի ծանրութեան տակ։

Այսպէս, ֆեոդալ, վաճառական, վաշխառու մի կողմից, որպէս արդիւնքներ վայելող դասակարգեր, և արհեստաւոր ու գիւղացի միւս կողմից, որպէս քրտնավաստակ արդիւնաբեր դասակարգեր։ Մինչնաղարեան մտաւորականութիւնը ունէր սոցիալական խաւերի այդ կոմբինացիան, երբ նա դիմաւորեց նոր դարու վերածնութեան արշալոյսին։

Բ. Իշխանեան

(Վերջը յաջորդ համարում)

Ո՞ՎՔԵՐ ԵՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ Ո՞ՎՔԵՐԻՑ ԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ *)

(Հիւսէյն-Զադէի)

IV

Այժմ որոշենք թուրք լեզուի տեղը, լեզուական ընտանիքում, որովհետև մեր քննութեան ենթարկած հարցի հետ մեծ առնչութիւն ունի։ Լեզուաբանները մի շարք լեզուների հնչման, տառերի, բառերի, ածանցումների, քերականութեան և համաձայնութեան մէջ մի քանի կարևոր ընդհանուր նմանութիւններ, կապեր գտնելով՝ և դրանց վրայ յենուելով լեզուական մի խմբի «ալտայական» կամ «ուրալո-ալտայական» և կամ «տուրանական» անունը տուել են։ Շատ հաւանական է, որ այդ լեզուները սերուած են մի տուրանական արմատ լեզուից, որ շատ հին է և դրա համար էլ մինչև այժմ այդ արմատ լեզուի խկութիւնը չէ որոշուած ինչպէս որ պէտք է։

Ըստ լեզուաբանների, տուրանական լեզուները՝ իրանց տարբերութեան համեմատ հետևեալ վեց ճիւղերին են բաժանւում։

1) «Ֆին և ուգր» լեզուներ, որոնց մէջ են մտնում Ֆինլանդիայի զանազան բարբառները, մաջարական (ունգարական) լեզուն։

2) Սիբիրիայի և Սառուցեալ Ովկիանոսի հիւսիսային մասերում խօսուող այլևայլ «սամօէդ» բարբառները. Ֆին և ուգրը լեզուների և այս լեզուների միջև գտնուող առանձին նըմանութեան պատճառով՝ կան լեզուագէտներ, որ երկու ճիւղերը մի են նկատում։

3) Թուրք բարբառները սրանք յետոյ մի առ մի պիտի թուենք։

4) Մոնղոլական բարբառները, որ խօսւում են Չինաստանի հիւսիսային արևելակողմում, ինչպէս և Սիբիրիայի և Ռուսաստանի արևմտեան մի քանի տեղերում։ Բայկալի ափե-

---

*) Տես «Մուրճ» № 9։

բում բնակուող մոնղոլների, բուրեաթների, կալմիկների և ուրիշների բարբառները այս խմբի մէջ են մտնում. Զինգիզի բանակում ծառայող թաթար հրամանատարների բարբառն ևս այս բարբառներից մէկն էր։

5) Մանջուրիացիների լեզուն, այն մանջուրիացիների՝ որոնք «տունղուզ» կոչուող ցեղին են պատկանում։ Ինչպէս որ «ֆին և ուգր» լեզուների և «սամօէդ» լեզուի միջև մի աղգակցական կապի գոյութիւնը ակնյայտ է, այնպէս էլ թուրք, մոնղոլ և մանջուրական լեզուների մի արմատից ճիւղաւորուած լինելը անուրանալի է։

6) Ճապոնական լեզուն ևս Էվալդ, Շոտ, Վինկլէր և այլ նշանաւոր տուրանական լեզուաբանների կարծիքի և հաստատումի համաձայն «ուրալ— ալտայական» լեզուների խմբից են։ Ցաժենայն դէպս բոլոր (?!) գիտնականները միահամուռ այն կարծիքին են, որ ճապոնական լեզուն իր հնչեղութեան կանոններով կատարելապէս տուրանական է։ Աժենից աւելի Վինկլերն է, որ պնդում է թէ ճապոներէնը տուրանական խմբին է պատկանում։

Տուրանական ժողովուրդների և լեզուների մասին հրատարակած բազմաթիւ օգտակար դործերով հռչակ հանած յիշեալ դիտունը՝ այս հարցի վերաբերմամբ՝ Բուդապէշտ քաղաքում լոյս տեսնող «Revue orientale pour les études ouralo-altaïques» անուն հանդիսում, (1900 թուի համարներում) Die Ural-altaischen Sprachen—Ուրալ-ալտայական բարբառները—վերնագրի տակ շատ կարևոր յօդուածներ գրած է։

Մի քանի գիտնականների կարծիքի համեմատ, տուրանական լեզուախմբի մէջ պէտք է մացնել, բացի վերև յիշուած բարբառներից՝ «ադադի» կամ «սումրի» կոչուող հին լեզուն, որը յայտնի է բեռադրերից։

Տուրանական լեզուները միմեանցից զանազանող առանձնայատկութիւնների մասին չենք ուզում խօսել, որովհետև դա մեր գրութեան սահմաններից դուրս է. բայց անօգուտ չէր լինի այստեղ համառօտակի յիշատակել թուրքերէնի՝ տուրանական բոլոր լեզուների հետ ունեցած ընդհանուր յատկութիւններն ու առաւելութիւնները։

Ահա սրանք են այն ընդհանուր գծերն ու նշանները, որոնք լեզուական աշխարհում, բարբառների մի մասը բաժանում են միւսներից և տալիս են նրանց «տուրանական» կամ «ուրալ-ալտայական» կոչումը։

Ա.) Բառերի բարդութեան կամ ածանցման ժամանակ այդ բառերը իրանց արմատում բնաւ փոփոխութեան չեն ենթար-

կուի։ Օրինակ, արաբական զովլ (խօսք) արմատ բառը բարդութեան ժամանակ զիլ, զալ ձևերն է ընդունում։ Իսկ ընդհակառակը Թուրքերէն ղեմէք (ասել) բայի ղն բայարմատը՝ ոչ մի ժամանակ փոփոխութիւն չի կրում բարդութեան ժամանակ։ Իսկ այս՝ մի լեզուի պարզութեան, դիւրութեան տեսակէտից, իհարկէ շատ մեծ առաւելութիւն է։

(Հիւսէյն Զադէն՝ Թուրք լեզուն բնորոշ բացի այս առաջին գծից, մէջ է բերում և չորս ուրիշներ, որոնք՝ իրանց զուտ մասնագիտական բնաւորութեան պատճառով դանց ենք առնում։

Այդ բնորոշ գծերը Թուելուց յետոյ նա շարունակում է այսպէս։)

Արդ, Թուրք լեզուի այլևայլ բարբառներից որն է ամենից աւելի Թուրքը. այս հարցը լուսաբանելու համար նախ պէտք է որոշել, թէ նրանցից որը իր վրայ ամենից աւելի կրում է տուրանական լեզուի առանձնայատուկ գծերի, քերականութեան հիմնական կանոնների դրոշմը. թէ նա որ չափով ընկնել սեմական և արիական լեզուների ազդեցութեան տակ։ Երկրորդ՝ պատմական, աշխարհագրական և այլ ցուցմունքների, ինչպէս և լեզուաբանութեան միջոցով որոշելուց յետոյ, թէ որքան են ամենահին և ամենահարազատ Թուրքերը, պէտք է սրանց բառամթերքը, քերականութեան և համաձայնութեանն կանոնները լաւ ուսումնասիրել. և յետոյ այժմեան Թուրք բարբառները այդ վաղեմի ու հարազատ լեզուի հետ բաղդադրելով տեսնել, թէ առաջինները հեռացե՞լ են երկրորդից. և եթէ այո, որ չափով, որ աստիճանով։ Բացի այդ՝ պէտք չէ մոռանալ և համասեռ հարևան տուրանական այլ լեզուների ազդեցութիւնը նրանց վրայ։ Կասկած չկայ, որ Թուրք բարբառները՝ ոչ միայն յիշեալ տիպար լեզուից զանազան պատճառներով հեռացած լինելու են, այլ և ենթարկուած լինելու են օտար լեզուների ազդեցութեան։ Այդ զանազան պատճառների գլխաւորներն են միջավայրի, կլիմայական և բնութենական պայմանները, աշխարհագրական դիրքի հետևանքով՝ դրացնական յարաբերութիւնները, այլևայլ դարերի ընթացքում Թուրքերի ընդունած զանազան կրօնքներն ու դաւանութիւնները և այդ կրօնքների և դաւանութիւնների լեզուն, գրերն ու դրքերը, վերջապէս ազգերն ու ժողովուրդներն իրար խառնող պատմական դէպքերը։ Առանց այդ պատճառների մեկնաբանութեան վրայ կանգ առնելու, ջանանք մի քանի տեղեկութիւններ տալ Թուրքերի՝ այլևայլ դարերի ընթացքում ընդունած կրօնքների մասին։

V

Օրխունի [1]) ափերի շրջակայքում, վերջին ժամանակներումը երևան հանուած հնութիւններից յայտնի եղաւ, որ թուրքերի կրօնն ու դաւանութիւնը բաղկանում էր «Շաման» կոչուող մի տեսակ հաւատալիքից։ Մինչև այժմ էլ այդ հաւատալիքն են դաւանում չին և մոնղոլ ժողովուրդներից ոմանք և Սիբիրիայի կողմերում բնակութիւն հաստատած մի քանի աշիրէթներ և ցեղեր։ Հին ժամանակից իվեր բնութեան և բնութեան այժերի պաշտամունքին նուիրուած այս կրօնը, մի տեսակ կոպիտ կռապաշտութիւն է, որ յարատևում է շնորհիւ շամանականների շարլատանութեան։ Թուրք ցեղերի միջից ամենից առաջ քաղաքակրթութեան դիմող նախապէս «Թու—քու—եէ», ապա «օղուր» կոչուող թուրքերի և որանցից յետոյ պատմութեան ասպարէզ իջնող «ույղուր»-ների մեծ մասը յիշեալ կռապաշտութեան մէջ չյարատևելով ժամանակի ընթացքում սկսեցին այլևայլ կրօններ դաւանել։ Բուդա կամ Սակիամունի անուն մի յարգելի անձի հիմնած կրօնը՝—Բրիստոսական թուականներից առաջ, Հնդկաստանում երևան եկած՝ և տարածուած նաև թուրքերի և մոնղոլների մէջ Բրիստոսից և Հիջրէթից 1) էլ յետոյ—«շաման» կռապաշտութիւնը պարտութեան մատնեց։ Մարդկութեան մեծագոյն մասի, դեղին ցեղի այդ կրօնը՝ այսօր, Չինաստանի մոնղոլների, Ռուսաստանի կալմուկ և բուրեաթների ինչպէս և մոնղոլացած թուրքերի մի մասի մէջ տարածուած է և «լամայականութեան» ձևի տակ մրցում է միւս կրօնների հետ։ «Դեղին կրօն» կոչուող լամայականութեան հիմնադիրը Զոնկավա անունով մի կրօնաւոր է և լամայականութիւնը ինքը՝ ուրիշ ոչ այլ ինչ է, եթէ ոչ բուդդայականութեան մի ճիւղը։ Այդ կրօնքը դաւանող մոնղոլների և մոնղոլացած թուրքերի հոգևոր կենտրոնավայրը Թիբէտի Լըհասսա քաղաքն է համարուում և Լըհասսայից յետոյ հարաւային Մոնղոլիայում գտնուող Օրդա քաղաքը։ Պանթէիզմի (համատուածութիւն) և մետամպսիխոզի (հոգեփոխութիւն) գաղափարներից բաղկացած այս կրօնքը երկար բացատրել մեր նպատակից դուրս է։ Մեր միտքն է միայն ցոյց տալ, որ մի ժամանակ

---

1) Օրխունը մի գետ է, որ Բայկալ լիճի մէջ թափուող Սելենգա գետին է խառնուում։

1) Հիջրէթ, (դաղթում) Մուհամմէդի դաղթը Մէկկէից Մեդինէ. իսլամական դարեթիւը առնւ այս թուականից է սկսւում։ Ծ. Թ.

թուրքերը այդ կրօնն ևս դաւանել են և հետևաբար, հաւանական է, որ մեր լեզուի, մեր բարքերի և սովորութիւնների մէջ այդ ժամանակուայ հետքերը գտնուեն։

Բուդդայականութիւնից յետոյ, կամ միևնոյն ժամանակ, քրիստոնէութիւնը երևան գալով՝ թուրքերի և մոնղոլների մէջ սկսեց «Նեստորականութիւնը» տարածուել։ Նեստորականութիւնը քրիստոնէութեան մի ճիւղն է։ Ինչպէս յայտնի է, քրիստոնէական այժմեան դաւանանքի համաձայն՝ Խաչը կեանքի և փրկութեան նշան է. քրիստոնեաների կրօնքի համեմատ առաուածային երրորդութեան մի հիմնաքարը համարուող Քրիստոսը՝ մարդկութեան մեղքերի քաւութեան համար խաչի վրայ տանջուած է. ինչ որ մեր դաւանութեան հակառակ է, որովհետև մեր սուրբ գրքանը ասում է, թէ նա չէ որ խաչուեց, այլ նրա տեղ, նրան նմանուող մի այլ անձ։

Թրքական մի քանի հին յիշատակարաններում, ինչպէս և այսօր թուրք մի քանի բարբառների մէջ Աստուծոյ համար գործ ածուող «չէլը» կամ «չալապ» խօսքը պէտք է այդ դարեշրջանից մնացած ենթադրել։ Որովհետև «չէլը»-ը պարսկերէն «չելեբա» կամ արաբերէն սելիբ (կախուած) բառից աղաւաղուելով «խաչ» է եղել։

Օսմանեան թրքերէնի «էֆէնդի, աղա» իմաստը ունեցող և նոյնիսկ Սուլթան Մէհմէդ Ա-ի և նրա Ղոնիայի տեղակալին տրուած և այժմ էլ առհասարակ գործածուող «չէլէբի» յորջորջումը «չէլը»-ից է ծագում։

Իսլամութիւնը երևան գալով քրիստոնէութիւնը թուրքերի մէջ ծաւալ չգտաւ։ Այսօր թէև գոյութիւն ունեն քրիստոնեայ թուրքեր (Անատոլիում—Փոքր-Ասիա [1])—Կազանի կողմերում և Սիբիրիայի մի քանի մասերում) բայց իրանց սակաւաթուութեան պատճառով՝ միւս քրիստոնեայ ժողովուրդների հետ խառնուելով՝ կրօնի շնորհիւ իրանց ազգութիւնը կորցնելու վրայ են։

Բացի, վերոյիշեալ կրօններից մի ժամանակ թուրքերի մի մասի մէջ «զրադաշտականութիւնն» ու «մանիքէականութիւնը» ևս տարածուել է։ Այժմ ևս Հնդկաստանի մի քանի մասերում տարածուած զրադաշտականութիւնը այնպէս է ընդունում, որ տիեզերքը երկու միմիանց հակառակ ոյժերի տիրապետութեան տակ է գտնուում. խաւարի և չարի աղբիւր «Ահրիման»-ի և լոյսի և բարիի աղբիւր «Որմիզդ»-ի։ Լոյսը՝ Որմիզ-

---

1) Փոքր Ասիայի մի քանի եկեղեցիներում թրքերէն ծիսակատարութիւն տեղի է ունենում. այս տեսակ մի եկեղեցի էլ Կազան քաղաքում կայ։

ղի խորհրդանշանն է. լուսապաշտութիւնը իբր թէ որմիզդապաշտութիւն է. դրա համար էլ զրադաշտականութեան հետեւողները, աւելի յետոյ, փոխուեցին կոպիտ կրակապաշտների: Կրակապաշտութիւնը արդէն վերևում յիշուած շամանականութեան մաս էր կազմում: Մեր շատ սովորութիւնները այդ դարաշրջանից են մնացել. օրինակ կրակ վառելով վրայից թռնել և այլ սովորութիւններ:

Այսօր, Թուրքերի մեծամասնութիւնը՝ վառք Աստուծոյ, վաղուց իվեր իսլամական կրօնով փառաւորուած է:

Թուրքերի մէջ մտած զանազան կրօններն ու դաւանութիւնները՝ միմիանց վանելով՝ իրանց հետ կրօնական և պաշտօնական գրութիւնների մէջ գործ ածուած գրերի և այբուբենի ձևերն ևս փոփոխութեան էին ենթարկում:

Այսօր, ինչպէս երևում է, Թուրքերի ամենահին գիրն ու այբուբենը «րուն» կոչուող մի տեսակ տառ է, որը ինչպէս կարծում են հնարուած է իրանց՝ Թուրքերի կողմից: Թրքական ամենահին գիրը համարուող «ույղուր» տառերը՝ «րուն» գրից միայն 5—10 տարի յետոյ երևան գալով նրա տեղը բռնեցին: Կարծում են, որ այդ «ույղուր» տառերն էլ նեստորականների կողմից են մտցրուած Թուրքերի մէջ: Իսլամական կրօնի՝ Թուրքերի մէջ տարածուելուց յետոյ, ույղուր և մոնղոլ գրերի փոխարէն ամեն կողմ սկսուեց գործածութեան դրուել արաբական այբուբենը, պարսիկների կողմից որոշ չափով կանոնաւորուած արաբական այբուբենը:

Այստեղ ուշադրութեան արժանի մի շատ կարևոր կէտ կայ:

Իսլամական կրօնքի հետ արաբական գիրն ու լեզուն՝ Թուրք ժողովրդի լեզուն, գրականութիւնը բարքերն ու սովորութիւնները թէև շատ մեծ փոփոխութիւնների ենթարկել են, բայց Թուրքերը կարողացել են իրանց ազգութիւնը, լեզուն ու գրականութիւնը պահել, պահպանել միայն իսլամական շրջանակի մէջ:

Թուրքերը առհասարակ ուրիշ կրօնների հակում և ընդունակութիւն չեն ցոյց տուել: Շատ քիչ Թուրքեր իրանց ազգութիւնը կորցրել են երբեմն չինացիների, մոնղոլների և հնդիկների, երբեմն էլ քրիստոնեայ ժողովուրդների հետ խառնուելով: Ընդհակառակը նրանց ստուար մեծամասնութիւնը մահմեդականութեան յարելով՝ դարձել են Իսլամի հիմնաքարերից ու յենարաններից մէկը և շնորհիւ այդ աստուածայայտ կրօնի՝ իրանց սեփական ազգութիւնն ու տոհմը պահելով՝ ի-

բանց ապագան ապահովել են. ահա այս կէտը արժանի է ուշադրութեան։

Բայց հետաքրքիր է իմանալ, թէ ի՞նչ պատճառների շնորհիւ, Թուրքերը ընդունելով հանդերձ իսլամական կրօնը և արաբական քաղաքակրթութիւնը, ընաւ չեն արաբացել, մնացել են Թուրքի զաւակ Թուրք։

Այդ պատճառները բազմաթիւ են։ Իմ կարծիքով, մի կողմից իսլամական կրօնի սեփական գեղեցկութիւնների ու առաւելութիւնների, նրա ճշմարտութիւնների բացարձակ պարզութեան, յստակութեան, աղացոյցների և հաստատութեան կարօտ չլինելու և միւս կողմից էլ Թուրքերի ցեղական առանձնայատուկ նկարագրի, ընաւորութեան, ճաշակի, առաքինի բարքերի, և բարոյական ձիրքերի մէջ պէտք է որոնել այդ պատճառները։

Օդի և ջուրի, կլիմայական պայմանների, աշխարհագրական և բնական դիրքի տեսակէտից, ինչպէս և իր ընդարձակ դաշտերով և աւազուտ անապատներով Թուրքեստանը որոշ չափով նմանութիւն է ցոյց տալիս Արաբիայի հետ. չի կարելի ուրանալ նոյնպէս, որ Թուրքի և արաբի մէջ մի շարք նման և մտերիկ գծեր կան. ինչպէս ուղտի, ձիու գործածութիւնը, մերդութիւնը, քաջութիւնը, ճանապարհորդութեան սէրն ու քէօշելու սովորութիւնը, իր հայրենիքում ազատ անձնիշխան լինելը։ Բացի այդ, իսլամութիւնից առաջ այդ երկու ժողովուրդների հաւատալիքների և պատմական անցքերի միջև էլ որոշ աստիճանի հանգիստութիւն կայ. «բուն» գրի շրջանում, Թուրքերը դաւանում էին շամանականութիւնը, իսկ արաբները՝ իսլամութիւնից առաջ, կռապաշտութիւն։

Ահա այս առաջ բերուած և այլ պատճառներից դրդուած՝ Թուրքերը արաբական քաղաքակրթութեան մեծ հակում ցոյց տուին և նրան շատ հեշտութեամբ ընդգրկեցին։ Նոյն պատճառների հետևանքով է որ, մինչդեռ արիական ժողովուրդները՝ մահմեդական կրօնը ընդունելուց յետոյ մի բոպէ հանգիստ չմնալով շարունակ ձգտած են այդ կրօնքի մէջ մասնակի և հիմնական փոփոխութիւններ մտցնել, Թուրքերը ընդհակառակը իսլամականութիւնը ընդունել են այնպէս, ինչպէս որ կար և միշտ էլ աշխատել են և աշխատում են իրանց կրօնը անաղարտ և անփոփոխ պահել։

Այնուհանդերձ Թուրքերը ընաւ չարաբացան։ Արաբները, ամբողջ հարաւային Աֆրիկէն, Սուրիան և Միջագէտքը, ինչպէս և մեր Դաղստանի ժողովուրդներից ոմանք, օրինակ լէզգիները և ուրիշները արաբացնելով հանդերձ, Թուրքերին անկարող են եղել արաբացնել։ Ի՞նչ է արդեօք պատճառը. այն որ Թուրքերը

փոքրիկ ժողովուրդ չէին, այլ արաբների նման մի ծայրից միւս ծայրը ձգուող մի մեծ ազգ. բացի այդ՝ Թուրքերի կենտրոնավայրը՝ Միջին Ասիան՝ Արաբիայից մեծ տարածութիւններով բաժանուած էր։

Բայց սրանից աւելի կարևոր դեր էր խաղացել այն՝ որ Թուրք լեզուն լինելով տուրանական, գլխովին հակառակ էր արաբերէնին, որը սեմական լեզուների ընտանիքից է։ Արաբները, աւելի իրանց լեզուի քան իսլամական կրօնի միջոցով յաջողել են արաբացնել օտար ժողովուրդները։ Արաբացող ժողովուրդները՝ կամ Արաբիստանի հարևան փոքրիկ ժողովուրդներ էին, կամ հարաւային Աֆրիկէի ժողովուրդների նման արդէն իսկ սեմական ծագում ունէին և մի փայլուն քաղաքակրթութեան ազդեցութեան տակ արաբանալու ձգտում ցոյց էին տալիս։

Եթէ իսլամական կրօնը ոչ թէ արաբների, այլ մոնղոլների մէջ երևան եկած լինէր, այն ժամանակ այս վերջինները դուցէ յաջողէին Թուրքերին մոնղոլացնել։ Որովհետև տուրանական ընտանիքի պատկանող այս երկու լեզուների մէջ այն աստիճանի առնչութիւն կայ, որ կարող են միմեանց իւրացնել։ Ցայտնի է, որ մինչդեռ ամեն լեզու բաղկացած է բառերից և քերականական կանոններից, Թուրքերէնը գլխաւորապէս բաղկացած է կանոններից [1]։ Կարծում եմ, որ այս միտքը ամենից առաջ յայտնել է օսմանցի հռչակաւոր գրագէտ՝ Ահմէդ Միդհատ էֆէնդին։ Այսպէս, օրինակ, Թուրք լեզուն բառերին կաբնորութիւն չի տալիս. իր հաւանած բառը առնում է ամեն լեզուներից և որպէս իր սեփական ստացուածքը, գործ է ածում իր քերականութեան և համաձայնութեան կանոնների համեմատ. օրինակ, Թուրք լեզուի մէջ յոգնակի շինող մասնիկներն են լէր կամ լար. Թուրքերէնը՝ յունարէնից «ֆիլոսոֆ», «իստորիա», կամ լատիներէնից «դոկտոր», «պրոֆէսսոր» բառերը առնելով հեշտութեամբ «ֆիլոսոֆլէր», «պրոֆէսորլար» և այլն կարող է անել. մինչդեռ արաբը «ֆիլոսոֆ»-ը յոգնակի

---

1) Յօդուածագիրն ուզում է ակնարկել այն, որ Թուրքերէն լեզուն անխիտ գործ է ածում և՛ արաբերէն, և՛ պարսկերէն, և՛ Թուրքերէն բառեր. Թուրք լեզուի ընորոշ գիծը կայանում է օտար լեզուի բառերը Թուրք քերականութեան կանոններին ենթարկելով գործ ածելու մէջ. արաբերէնը, պարսկերէնը Թուրքերէնը միմեանցից զանազանւում են քերականական և համաձայնական ինքնուրոյն օրէնքներով. ահա նրանց տարբերութիւնը. պէտք է ասել որ այժմ Թուրք լեզուի մէջ նկատւում է որքան կարելի է բուն Թուրքերէն բառեր գործածելու ձգտում։

Ծ. Թ.

դարձնելու համար պէտք է ասէ «Ֆէլասէֆէ», «իստորիա»-ն «էսատիր», իսկ շատ բառերի (ուզում է ասել օտար բառերի) յոգնակին անկարող է շինել։

Թուրք լեզուի կանոնները այն աստիճան պարզ, այն աստիճան գեղեցիկ և տրամաբանութեան մօտ են, որ նրա հետ ծանօթ եղողը ոչ մի ժամանակ չի կարող նրա կանոնները թողնելով արաբերէնը ընդունել։ Ահա այս պատճառներով՝ Թուրքերը՝ իսլամական կրօնը իրանց բուն հոգուց բղխած կրօնի նման սիրայօժար ընդգրկելով և նրա զօրեղ պաշտպանը հանդիսանալով հանդերձ, երբէք չարաբացան և իրանց ազգուական ծագումով իրանց տոհմը անաղարտ պահպանեցին. իսկ այժմ սկըսում են այդ ուղղութեամբ առաջադիմել։

VI

Այժմ մի ակնարկ գցենք Թուրքերի պատմութեան վրայ և տեսնենք, թէ հինգ-տասը տարիներից ի վեր այդ մասին ի՞նչ հետազօտութիւններ են տեղի ունեցել։

Ամենավաղեմի Թուրքերի պատմութիւնը խառնուած է դիւցազներգական առասպելներով։

Սուլթան Մահմուդ Ղազնէվիի նման նորասէր մի Թուրքի խելացի քաջալերութեան և պաշտպանութեան շնորհիւ առաջ եկած Ֆիրդուսիի, Իրանի, գուցէ և ամբողջ աշխարհի ամենամեծ բանաստեղծի՝ գրած «Շահնամէն», եթէ ծայրէ ի ծայր կարդանք, կը տեսնենք որ այդ անմման գործում, միմեանց հետ մշտական մրցութեան մէջ գտնուող երկու հերոսներից, միմեանց հետ պայքարող երկու դիւցազներից մէկի անունն է «Իրան» իսկ միւսինը՝ «Թուրան»։

Եւրոպայի համարեա կէս մեծութիւնն ունեցող Թուրանն կամ Թիւրքեստանը՝ Ջիհուն, Ամուդերեա, Օգուս անուններով յայտնի մեծ գետի յետևի մասում գտնուող ընդարձակ երկիրն է [1]։ Ֆերդուսիի համաձայն, այս երկրի բնակիչները վաղուց ի վեր, նոյնիսկ աշխարհի ստեղծագործութիւնից իվեր, Թուրքերից բաղկացած էին։

Սրանց առաջին թագաւորներից մէկը Աֆրասեաբն [2]) էր, որ ժամանակակից էր Կիքաուսի։

Շահնամէի ամենարանաստեղծական և միևնոյն ժամանակ

---

1) Այս երկրի մի մասը կոչւում է նաև Թրանսօքսանեա։

2) Թիւրքեստանում այս անունը կրող մի մեծ քաղաքի աւերակները երևան են հանւում այժմ։

ամենայուղիչ մասն է կազմում Սիավուշի վերաբերող գրուագը։

Սիավուշ Թուրքերի դէմ մղած մի պատերազմից յետոյ, իր հօր Կիքաուսի հետ գժտելով՝ նրա հակառակորդի, Աֆրասեաբի մօտ ապաստան գտաւ. այս անցքերը շատ գրաւիչ կերպով պատմուած են Շահնամէի մէջ։ Աֆրասեաբ իր աղջիկը՝ Ֆարնէքիսը Սիավուշի հետ ամուսնացնելով, այս վերջինը երկրի մի մասին իշխան կարգեց։ Բանաստեղծի պատմութեան նայելով՝ Սեավուշի իշխանութեան տակ գտնուող երկիրը այն աստիճան բարգաւաճեցաւ, շէնացաւ, որ նոյնիսկ Աֆրասեաբի պալատում նախանձ ծնուեց դէպի Սեավուշը։ Ահա, ամենահին ժամանակներում, դիւցազներգական առասպելների շրջանում, Թիւրքեստանի կողմերը՝ Ֆիրդուսիից ենթադրուած և ընդունուած «աշխարհաշէնութեան, բարգաւաճման» այս հարցը շատ կարևոր մի հարց է։

Այժմ այլևայլ յիշատակարաններ և ուրիշ տպագրեալներ հաստատելու վրայ են, որ բանաստեղծի խօսքերը լոկ երևակայութեան ծնունդ, դատարկ խօսքեր չէին։ Կասկած չկայ որ Ֆիրդուսին՝ իր բանաստեղծական երկի ստեղծագործութեան համար դիմել է մի քանի հին՝ այժմ կորուստի մատնուած՝ պարսիկ, փէհլէվ, զէնդ, արաբ, թուրք և այլ լեզուներով գրուած աղբիւրների։ Միայն թէ Ֆիրդուսին այդ աղբիւրների վրայ նայել է ոչ թէ գիտնական պատմագրի աչքով, այլ պերճախօս բանաստեղծի, մանաւանդ պարսիկ հայրենասէրի զգացմունքներով տոգորուած, Իրանցի մի կրակոտ բանաստեղծի աչքերով։

Թուրք պատմագրի գործը պէտք է լինի, գիտական և քննական ուսումնասիրութիւններից յետոյ երևան հանել պարսիկ բանաստեղծի երկասիրութիւնից այն՝ ինչ վերաբերում է ճշմարիտ պատմութեան։ Բացի այդ, հին Թուրքերի և նրանց դաղաքակրթութեան մասին շատ թանկագին ճշմարտութիւններ կարելի է գտնել չինական 3) տարեգրութիւնների մէջ, մանաւորաբար այդ տարեգրութիւնների այն մասում, որ վերաբերում է քրիստոնէութեան չորրորդ դարեշրջանին։ Այդ ճշմարտութիւնները կարող կը լինենք պարզաբանել չինական լեզուների հետ ծանօթանալով միայն։

Թուրքերը՝ քրիստոնէական VI-րդ դարում միայն ծանօ-

---

3) Կարծում եմ, օգտակարութիւնից զուրկ չի կարող լինել այդ տեսակէտից ուսումնասիրել նոյնպէս «Կորաների» և «Գորաների» (պանտավա) կուռից ճառող Մահաբարատան, չինական նախկին շահնամէն։

թացել են արաբ պատմագրի «ի միջի այլոց՝ յոյները» 4) գործի հետ։ Այդ պատմագրի համաձայն, քրիստոսական 560 թուին բուն Ալտայի կողմերից եկող Սինջիրու (յունարէն Սիլզիբուլ) թագաւորը Նուշիրուան արքայի հետ մի դաշնագրութիւն կընքելով՝ աշխարհակալել են Չինուանի ափերը։ Այդ թուականից սկսած՝ թուրքերը այլևս Մոնղոլիստանի և Թիւրքեստանի սահմաններում չեն ամփոփուում, և սկսում են այլևայլ քաղաքներ նուաճելու դուրս գալ։ Գալիս են մինչև Վոլգա գետի եզերքը այսօրուայ Ռուսաստանի արևելեան կողմերը։ Ժամանակի ընթացքում աշխարհակալական և դաղթականական հոսանքը շարունակւում է. դրանցից ամենակարևորը քրիստոսական XI դարում պատահած լինելուն, ահա այդ ժամանակից սկսած թուրքերի պատմութիւնը դառնում է բացարձակապէս հաստատ և ստոյգ։ Իսկ մինչև այդ, թուրք պատմութիւնը անորոշութեան քողով է ծածկուած։

Սակայն վերջին տարիները՝ VI և XI-րդ դարերի միջև ամիսփոփուած ժամանակամիջոցի վերաբերեալ՝ չափազանց կարևոր յայտնութիւններ են եղել, հետեւաբար անհրաժեշտ է որ այս մասին մի քանի տեղեկութիւններ տանք։ «Օրխոն» գետի շրջակայքում նոր գտնուած «Կարա-Կուրում» քաղաքի աւերակներից բացի, վերջերս նորից, «Կարա-Կուրում» անուն աւելի վաղեմի մի այլ մեծ քաղաքի աւերակները գտնուեցին, որը շինուել է ույղուր թուրքերի և սրանցից աւելի վաղեմի, չինարէն «թուքու-եէ» կոչուող «օղուզ» թուրքերի կողմից։ Թուրք ժողովուրդների շարքում, ղըրղըզների հետ, յիշեալ երկու ժողովուրդներն է ահա, որ առաջին անգամ իրանց անունը արձանագրել տուել են պատմութեան էջերում։ «Թու-քու-եէ» (կամ թուրք-օղուզ), ույղուր, ղրղըզ—ահա թուրք ժողովուրդի առաջամարտիկները... ահա սրանք են ամենահին և ամենահարազատ թուրքերը։ Բացի սրանցից, օրինակ, բաշկուրդների [1]), քաղաքակրթական պատմութիւնը առաջինների չափ վաղեմի չէ։ Ույղուրները «թուքու-եէ»-ների պատժական ժառանգը լինելով՝ ղրղըզները սրանց մրցակիցը հանդիսացած են։

Ղրղըզների մասին առանձնապէս պիտի խօսենք։

---

4) Շատ հաւանական է, որ յունական դիցարանութեան մէջ էլ թուրքերի մասին ակնարկներ գտնուեն։ Մի քանի օսմանցի գրագէտներ ասում են, որ կէս-մարդու, կէս-ձիու ձեով երևակայուած առասպելական արարածը, «Կինոտաւր—մարդաձին» թուրք հեծելազօրքին է ակնարկում։

1) Ոմանք կարծում են, որ «բաշկուրդ» կոչումը աղաւաղուած է «բաշկայ եուրտ»—ուրիշ երկրից—խօսքից. որովհետև դրանց հայրենիքը «Ուրալ» լեռներն են, և ոչ թէ «Ալտայ»։

Ույղուրների պատմական դրութիւնը՝ օղուզ Թուրքերի, այսինքն «Թու-քու-եէ»-ների դրութիւնից աւելի առաջ յայտնի էր. որովհետև ույղուրների լեզուն՝ «ույղուր տառեր» կոչուող և հին ասորական գրերի մի տեսակ փոփոխութեամբ կազմուած մի առանձին տառ ու այբուբեն է, որը վաղուց իվեր ընթեռնելի էր։ Ունգարական հռչակաւոր գիտուններից Վամբերիի գտած «Կուդաթկոբիլիք» անուն գիրքը այս լեզուով և տառերով գրուած լինելով՝ մինչև այս վերջին տաս-տասն և հինգ տարուայ ընթացքում կատարուած նոր յայտնութիւնները, նը-կատուում էր ույղուր և հետևաբար Թուրք գրական առաջին գործը։ Հիջրէթի հինգերորդ դարում, Կաշգարում գրուած այս գրքում բացատրուում է, թէ երկրի իշխանը, վեզիրները, հրամանատարները և ուրիշ վարիչները ինչպէս պէտք է կառավարեն, ինչ պարտականութիւններ ունեն դէպի երկիրը, կրօնը, ընտանիքը։ Այս գրքում յայտնուում են և փիլիսոփայական մտքեր։

Ույղուրներից շատ աւելի հին եղող «Թու-քու-եէ»-ների պատմական դրութիւնը այս վերջին 15—20 տարիների ընթացքում միայն սկսուեց յայտնի դառնալ։

Չինգիզական խոշոր դէպքերից յետոյ, օսմանեան սուլթանների նախնիքներից Օրթողրուլ Ռազիի հօրը՝ Սիւլէյման խանի հրամանատարութեան տակ Խորասանից դէպի արևմուտք շարժուող «օղուզ» Թուրքերի անուան, և չինացիների կողմից «Թու-քու-եէ» յորջորջուած շատ հին «օղուզ» Թուրքերի անուան միջև գոյութիւն ունեցող նմանութիւնը ուշադրաւ է. բայց պէտք է ասել, որ սրանց վերաբերեալ մինչև վերջին ժամանակները ոչ մի տեղեկութիւն չունէինք։

Այսօր, նոր, կարևոր յայտնութիւններից յետոյ էլ հին «օղուզ» Թուրքերի և Սիւլէյման խանի օղուզների միջև մի քանի դարերի պատմութիւնն բաց է մնում...

Այժմ տեսնենք թէ ինչ են ասում օղուզների մասին պատմական նոր յայտնութիւնները։

Երկու հարիւր տարուց իվեր, Եէնիսէ գետի կողմերում, *ռուն* (Run) կոչուող անընթեռնելի տառերով բազմաթիւ արձանագրութիւններ երևան հանուեցան, և նոյնիսկ սրանցից հաւաքածուներ կազմուելով մի քանի թանգարաններում դեսեղուեցին և հռչակուեցին։

Սակայն այդ «ռուն» տառերը մինչև սրանից 10—15 տարի առաջ ոչ ոք կարող եղաւ կարդալու։ Վերջերս այդ կարգի հնութիւններն ուսումնասիրելու ցանկութիւնը սաստկացաւ և ուսումնասիրողները շատացան։

1889 Ֆբ. թուին, «Արևելեան սիբիրական աշխարհագրական» ընկերութիւնը, 1890-ին Հելսինգֆորսի «Ֆին և ուգր» ընկերութիւնը, և 1891-ին Պետերբուրգի Դիտութեան Ակադեմիան յատուկ մարմիններ ուղարկեցին Բայկալ լիճը թափուող՝ Սելենգա գետի հիւղերից Օրխոն գետի հովտում գտնուող հին և նոր «Կարա-Կուրում» քաղաքների աւերակներում հնագիտական խուզարկութիւններ կատարելու համար։ Առաջին խմբին նախագահում էր Եագրինցեվ ռուս գրագէտը, երկրորդին՝ ուսուցիչ Հէկել և երրորդին՝ Ակադեմիայի անդամներից յայտնի գիտուն Բադլով։ Ցիշեալ անձերի և մարմինների ջանքերի շնորհիւ գտնուած քաղաքի բեկորները, նրանում գոյութիւն ունեցող մեծ պալատի աւերակները, ինչպէս մարմարեայ և այլ քարերից շինուած գեղեցիկ արձանները, ոսկեղանի, առիւծի և ուրիշ կենդանիները ձևերը, «ռուն» տառերով արձանագրութիւններ կրող թանկագին կոթողները և այս կարգի բազմաթիւ հնութիւնները ցոյց էին տալիս որ այդտեղ ծաղկել էր մի հին քաղաքակրթութիւն։ Միայն թէ յիշեալ ռուն [1]) արձանագրութիւնները անընթեռնելի մնալուն՝ չէր հասկացուում, թէ այդ վառուող քաղաքակրթութիւնը որ ժողովուրդին էր պատկանում։ Հանելուկի լուծման մեծապէս օգնեցին այն մի քանի կոթողները, որ Եագրինցեվ և Հեկել դտան Արտնեղու կոչուող լամայական մենաստանի շրջակայքում. այդ կոթողների վրայ երեք լեզուով արձանագրութիւններ կային. ույղուրերէն, չինարէն և ռուներէն, և ոմանց վրայ էլ մի չորրորդ լեզուով՝ մոնղոլերէն։ Հեկելի գտած կոթողը, որի վրայ վերոյիշեալ երեք լեզուներով արձանագրութիւններ կային, քառակուսի մի սիւն էր և դագաթին կրում էր առիւծի մի մեծ արձան։ Ահա այս երեք լեզուով արձանագրութիւնների երկուսի՝ չինարէնի և ույղուրերէնի օգնութեամբ կոպէնհագցի յայտնի գիտուն Վիլհելմ Տոմսըն Ֆրիստ. 1893 թուին, Շամպոլիոնների յատուկ ճարտարութեամբ հին թուրքերի այբուբենը գտաւ և «ռուն» տառերը կարդալով պարունակութիւնը իմացաւ։

Այդ ռոպէից սկսած՝ թուրք վաղեմի քաղաքակրթութեան վրայից քօղը պատռուեց և օրէցօր թրքաբանութիւնը սկսեց

---

1) Նախկին գերմաներէնում «ռուն» նշանակում է գաղտնիք. կարծւում է որ գերման սկանդինաւ «ռուն» տառերը լատինական այբուբենից բաղադրուած են. բայց օրխոնների «ռուն» տառերը դրանց հետ առնչութիւն չունեն. շատ շատ կարող են գուցէ «արամական» կոչուող այբուբենի հետ նըմանութիւններ ունենալ։

նոր զարկ ընդունել և գիտնականների փառք ու պատիւ վաստակելու ընդարձակ ասպարէզ դառնալ։

Թուրքերին մատուցած մեծապէս օգտակար ծառայութիւնների համար մեր երախտագիտութեան արժանացող Տոմսընը՝ իրանից դարեր առաջ անլուծելի հանելուկ մնացած Թուրքերի «runen» գրերի ընթերցման նպաստող ուղղուր և չին արձանագրութիւններից օգտուեց մի շարք ուրիշ հարցեր պարզաբանելու համար։

Յիշեալ գիտունը բուն հարցի մէջ չմտած, նախապէս ենթադրութիւն է արել, որ «runen» արձանագրութիւնները Թուրքերէն են։ Եւ այդ ենթադրութիւնը հաստատել է հետեւեալ կերպով։ Գտնուել է մի արձան, որը կանգնուած է եղել մի խանի ի պատիւ. այդ արձանի վրայ, խանի անուան կողքին տեսնուել են թ, ր, ք, բունական բաղաձայն տառերը։ Տոմսընը հիմնուելով՝ բոլոր տուրանական լեզուների մէջ ձայնաւոր տառերի տեղ գործածուած «ձայնաւոր եղանակաւորումների [1])» կանոնի վրայ, այդ երեք բաղաձայն տառերը՝ թ, ր, ք՝ կարդացել է «թուրք»։

Վիլհելմ Տոմսընն այս մասին դրել է մի գործ, որը կրում է «Déchiffrement des inscriptions del' Orkhon et de l'Ienissei»— Օրխունի և Եէնիսէի արձանագրութիւնների ընթերցումը—տիտղոսը և հրատարակուած է 1894-ին Դանիայի մայրաքաղաք Կոպէնհագում։ Դրանից յետոյ, Թուրք օղուզ (Թու-ռու-էէ) ժողովուրդին պատկանող ուրիշ պատմական արձանագրութիւնները կանոնաւորապէս թարգմանուելով եւրոպական և ռուսական մամուլի միջոցով տպեց հրատարակուել։ Իրա՝ Տոմսընի թարգմանութիւններից մի քանիսը՝ «Mémoires de la Société Finno—ougrienne»-ֆիննո-ուգրական ընկերութեան արձանագրութիւնները—անուն ֆինլանդական հանդէսի այլևայլ համարներում լոյս են տեսել։ Տոմսընից յետոյ այս ուղղութեամբ ամենից շատ աշխատել է Պետերբուրգի Գիտութիւնների Ակադեմիայի անդամներից յարգելի Բաղլոֆ։ Այդ ակադեմիայի կողմից Օրխունի եղերքները ուղարկուած գիտական արշաւախումբի հետազօտութիւնների և ուսումնասիրութիւնների արդիւնքը՝ բաղմա-

---

1) Թուրք լեզուի մէջ ձայնաւոր տառերի տեղ գործեն ածում հետեւեալ երեք նշանագրերը. իւսթիւն (՝), էարէ (,) և էօբրիւ (,) սրանց առաջինը դրւում է բաղաձայն տառի վերևի կողում և հնչւում է ա կամ է. երկրորդը՝ տառի ներքևում և արտասանւում է ի. իսկ երրորդը՝ տառի նոյնպէս վերևում և կարդացւում է, նայած՝ բառի մաքին օ, ու, և ի։ Ծ. Թ.

թիւ քարտէզներով և նկարներով՝ մի ժողովածուի մէջ ամփոփուած է, որը գլխաւորապէս չորս մասերից բաղկացած է։

1) Նախ քան պատմութիւնը՝ Օրխոնի եզերքներում գտնուող հնութիւնները։

2) «Թու-քու-եէ» ցեղի (օղուզ թուրքերի) դարաշրջանին պատկանող գործերը։

3) Ույղուր ցեղի դարաշրջանին պատկանող գործերը։

4) Մոնղոլական դարաշրջանին պատկանող գործերը։

Այս բոլոր հետազօտութիւնների վերջում ամփոփուած են Վամբերիի գտած «Կուդաթկոբլիկ» գործից առնուազն երեք հարիւր տարի առաջ գոյութիւն ունեցող ույղուր լեզուի երկու ձևերով, այսինքն «ույղուր» և «ռուն» տառերով՝ գրուած գործերը և դրանից էլ աւելի հին օղուզ թուրքերի՝ (թու-քու-եէ-ների) միայն «ռուն» տառերով եղած գրութիւնները։ «Ռուն» տառերով արձանագրութիւնները Եէնիսէ գետից մինչև Օրխոնի եզերքները ցրուած լինելով՝ բռնում են աւելի քան 1000 կիլոմետր տարածութիւն։ «Կոշու—ղայդամ» կոչուող վայրում, Բրիստ. 732 կամ 735 թուերին, թուրք-օղուզ ժողովուրդի իշխողներից Կիւլ Թկին և Բիլկէ խաների անունը յիշատակող բարերի վրայ գտնուած արձանագրութիւնները «ռուն» տառերով են։ Այդ տեսակ արձանագրութիւնները շատ ճոխ և բանաստեղծական կերպով պատմում են թուրք ժողովուրդի պատմական դէպքերը, խաների հրամանները և դարու այլևայլ անցքերը, առասպելական կոչուող ժամանակներից սկսած մինչև Բիլկէ խանի մահը։ Ուշադրութեան արժանի է նոյնպէս, այս արձանագրութիւնների շարքում, Բիլկէ խանի իր սեփական ազգին, այսինքն թուրքերին ուղղած մի քանի խրատներն ու յայտարարութիւնները պարունակող արձանագրութիւնը...

Թարգմ. Տ. Ղաւէն

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

Ամենասիրելի եղբայր Գէորգ.

Այս նամակս քեզ կը հասցնէ մայրս, որ եկաւ Մոսկով ընդ առաջ հօրս, որն 2—3 օրից նմանապէս այդտեղ պիտի լինի։ Վերջինը այժմ ազատ է իւր աքսորանքէն։ Եթէ պատահի, որ դու կամենաս տեսութիւն անելու հօրս հետ (այդ ես քեզ խորհուրդ կու տայի և եթէ դու կատարէիր՝ չէիր փոշմանիլ) խնդրում եմ քեզ մինչև ինքը չի պատմէ իւր գլխու անցքը կամ ինքը խօսք չի բանայ նրա մասին՝ մի՛ ցոյց տալ հետաքրքրութիւն. բայց չկարծեմ որ նա ճանաչելով քեզ իմ բարեկամը և ընտիր բարեկամը—զանց առնէր այդ մասին։ Բայց աւելորդ չեմ համարում այստեղ քեզ թախանձանօք խնդրելու, որ նորա դու ցոյց տայիր այնպիսի յարգութիւն, որին նա արժանի է շատ և շատ պատճառով. գլխու ալիքը մինչև արծաթանալը նա անցուցել է ազգին խնդրելով, բարոյապէս օգուտ բերելով. եթէ միայն լոկ ընթերցանութեամբ անցնիլ մէկ ամբողջ տարի բաւական չէր նրա գրուածքը կարդալու. նորերումս նա 8 բանաստեղծութիւն գրեց, շատ ազգային խնդիրներ թարգմանեց Վերեռի և Գուռբէի պատմութիւններն. այս ամենը ընտիր աշխարհաբար. այժմ տալուում է նրա Հայոց ազգի պատմութիւնը, տպուած է միջնավէպքը։ Իհարկէ, «Հիւսիսի» մէջ շուտով կը կարդաս նրա գրուածքը։ Ուրեմն, եղբայր սիրական, ես մեծ յոյս ունեմ որ նա, ինչպէս և ես, քու բարի յիշատակը պիտի տպաւորէ իւր սրտի մէջ՝ իժտոյ ճանաչելով քեզ։ Ես կամենում էի, որ նա ես սիրէր իմ սիրածներին։ Բայց քու անկեղծ կարծիքը անհամբերութեամբ սպասում եմ նորա մասին։

Մնամ սիրելութեանդ խ. ծառայ և բարեկամ
Ռափայէլ Պատկանեան

Յուլիսի 8, 1863.
Ս. Պ. Բ.

---

*) Տես «Մուրճ» № 9։

Ամենասիրելի բարեկամ Գէորգ.

Զարմէ դուրս ցաւում եմ, որ այս գիրս՝ 1 ½ ամիս առաջ պիտի գրէի քեզ, այժմ եմ գրում։ Յուսամ որ՝ ներողամիտ կը լինես, և ճանաչելով իմ ժրութիւնը թղթակցութեան մէջ, հաւատամ եմ որ՝ կ'ասես «հալրաթ մի անհրաժեշտ պատճառ ունէր, որ երբեմն արի Ռափայէլը այժմ այսպէս զանգաղ է դարձել»։ Եթէ այս խօսքերով կը ներես ինձ, եղբայր սիրական, հաւատացնում եմ քեզ, որ չես սխալիլ. ինչու որ՝ լրագրիս խմբագրութիւնը և արքունի պաշտօնիս կատարումը այնպիսի ծանրակշիռ և ժամանակ կուլ տուող զրաղմունք են, որ ամէն մինը ոցանից բաւական էր մի մարդու բոլոր գործունէութիւնը մէջ քաշելու. ուր մնաց, երբ երկուսն էլ ծանրացած են մի մարդու տկար ուսերի վրայ... բայց ի՞նչ ասեմ այն արտաքին ստորերկրեայ բարեկամների մեքենայութիւնքը... որոնք ոչ սակաւ բարոյական ուժէն հանում են մարդուս... եղբայր, փըշոտ է կեանք ասած բանը։ Առ այս աւելցուր այն հազար ու մէկ մանր մունր հոգսերը, որոնք կից են նորան, որ արդէն աշխարհ է մտել և կամենում է (կամ հանգամանքը ստիպում են) ընկերութեան անդամ լինելու։ Առ այս դարձեալ աւելցուր երեք տարի քիչ առաջ քեզ յայտնած խորհրդիս կատարուելը— այնպէս չէ՞ որ ես մի բոլէ ազատ ժամանակ ունենալու չէի։ —Ո՛չ, եղբայր, դու դիտես, որ ես քեզպէս բարեկամներ տասնեակներով չեմ հաժարում բարեացակամներիս ցուցակի մէջ. և այս պատճառով քեզ հետ թղթակցութիւն յարատևելը ինձ համար ոչ շռայլութիւն, այլ հանուագազորդեայ կարիք կը համարէի, եթէ առաջուայ պէս դու բերկրանք զանէիր ինձ հետ բարեկամական յարաբերութիւն ունենալու. բայց ես սատիկ կոյր պիտի լինէի, եթէ չի նկատէի, որ միջին ժամանակներս քու սրտէն առաւել պարագայիդ յարմար մարդոց ընկերակցութիւնը խլաւ դուրս է հանել իմ յիշատակը։ Այս խօսքերս դանգատի տեղ մի՛ ընդունիլ, խնդրեմ. ես գիտեմ առածը, որ ասում է «բռնի սիրելի լինել չէ կարելի»։

Եղբայրս և հարսս շատ դոհ էին քեզանից և շատ բաներ պատմեցին, և այն, ինչ որ ես քեզ անձամբ պիտի պատմէի, նմանապէս յայտնել են քեզ, որով, իհարկէ, եղել են ինձանից մի ասիթ քեզ ցոյց տալու եմ բարեկամական սրտաբացութիւնս և քեզ հաղորդելու այն ցնծութիւնը, որով այս բոլէիս լցուած է հոգիս։ Եղբայր սիրական, ես այժմ այնքան գոհունակ եմ

վիճակէս, որ դառնութեամբ լցուած անցեալս երևում է ինձ իբրև օտարի պատմած երազ,—այդքան չնչին է երևում երբեմն կրած տարաբաղդութիւնս համեմատելով այժմուայ բերկրանքիս հետ։ Եւ կարող էր այլազգ լինել։ Աստուած ինձ տուաւ մի տարած, որ ասես թէ նորա ձեռագործների մէջ անզուգական մարգարիտ է։ Եթէ ոչինչ բանի տեղ չի դնէի Օլդային ի վերուստ տուած շնորհքը, իւր աշխատանքով ստացած դիտութիւնքը, կանացի սեռի գեղեցիկ որակները—գեղեցկութիւնը և պարկեշտութիւնը, եթէ ասեմ քեզ, որ նա այնպէս անձնազոհ սիրում է իւր ազգը, գուցէ ոչ մի կինարժան Հայաստանի որդոցէն, այդքանն ևս բաւական էր, որ իմ կեանքը լցնէր անմեկնելի ուրախութիւնով։ Խօսքս կարճ կարեմ. եղբայր, ես քեզ ուրիշ բաղդ չեմ ցանկանում, բայց եթէ հայ հարսնացու՝ զգայուն սրտով, անմեղ հոգւով, անաստղական ճաշակով։

Մնամ քեզ միշտ սիրող և յարգող
Ռաֆայէլ

9 Նոյ. 1863, Ս. Պ.-Բուրգ։

Ամենասիրելի եղբայր Գէորգ.

Իմ գրի պատասխանը ուշացաւ. երևի գործերդ շատ են։ Ես քեզ կը մեղադրէի, եթէ այդ արդարութիւնով ինքս էլ մեծարած չլինէի շատերին։ Թէև մերոնք ասել էին, որ դու շուտով գալու ես մեր կողմերը՝ բայց ես գիտեմ տեղաշարժութեան ամեն անյարմարութիւնը, ուրեմն գիտեմ այն՝ թէ որքան հեշտ է տան անդամ ասելը և գրելը «կու դամ» և որքան դժուար է մի անդամ գալը։ Բայց ես ճշմարիտ որ ստիպուած եմ մէկ անգլին ճանապարհորդութիւն անելու—դէպի Էջմիածին. սրբազան կաթողիկոսը յամառել է և չէ կամենում պատկիս վճիռը տալու, թէև տաւել մերձաւոր արենակիցներուն ամուսնացնելու թոյլտուութիւն տրել է նա այս մօտ ժամանակներումս։ Եւ իրաւ որ՝ եթէ մինչև ամսուս 20-ը հրաման չի ստանամ՝ 21-ին սպասէ ինձ այդտեղ։

Խնդրեմ տեսնուես պր. Նազարեանցի հետ և իմ քանի մի չի տպուած հատուածներս առնուս նորանից. երկուսը լաւ միտքս է Ռէֆորմացիա և ազգութիւն. ուրիշները մոռացել եմ։ Այս ապսպրանքը ես քեզ չէի անիլ, եթէ հաւատի չլինէի, որ նրա հետ տեսնուելու համար դու դժուարութիւն քաշելու չես։

Խնդրեմ շատ ու շատ աշխատես Հիւսիսի համար մնաս-ւանդ՝ գրէ ինձ բարեկամաբար նորա պակասութիւնը և քու կարծիքը։

Մնամ միշտ յարգող քեզ Ռափայէլ

Դեկտ. 4 1863. Ս. Պ.-Բուրգ.

Աժենասիրելի եղբայր Գէորգ,

Անցեալները ես քեզ մի նամակ էի գրել (պէտք է ասել, որ՝ նորերումս նամակ շատ եմ գրել քեզ զանազան ժամանակ և դիպուածի), բայց պատասխանը չի ստացայ։ Այնտեղ ինչ ասես բան էի խնդրել, յուսամ, որ անտես արած չես լինիլ։ Այժմ ես գրում եմ այն փոքրիկ առիթով, որ շուտով կ'ստանաս Հայոց ազգի պատմութիւն, տպած իմ ապարանումս. եթէ կարող ես՝ տարածէ քանի մի օրինակ. ասելն աւելորդ է, որ այս գիրքը շատ օգտաւէտ է, հէնց այն հասկանալի պատճառով որ՝ իր ազգումը միակէ, ինչու համար որ նա ուրքան ներեցին նիւթերը—ազգի պատմութիւն դարձուցինք՝ թագաւորաց պատմութեան աղրիւրներէն. կարդա, ինքդ էլ կը տեսնես այդ։ Հա. գիրքը փոքրիկ է, երեսները սակաւաթիւ, բայց մի նախապաշարուիր դորանով. խնդիրը շատ կայ մէջը, որ եթէ առիթ լինի որոճալու և վիճելու ահա արդէն հեղինակը իւր նպատակին հասաւ...։ Ասում են «Հիւսիսափայլ» նորոգուելու է. այդ «Հիւսիսի» Ջիզբաշէնն է. վայ այն գործին, որի պատճառը բղխում է ոչ կարիքից, այլ ջիղերից... պատուական կոթող հայերի հոգեկան ուղղութեան. բայց ինչևիցէ, Աստուած օրհնէ ամեն ազնիւ ձեռնարկութեան։ Լսէ և դարմացիր. Իզմիրովը յայտնի պատերազմում է իմ ձեռնարկութեան դէմ. ահա քեզ դաւը գայլ դարձած... Բայց զարմանք բան. քանի որ արդելք և խութք շատանում են առջևս՝ այնքան սաստկանում է մէջս կամակոր արիութիւնը. երևի իմ կորուստը մօտ է. երանի՜ թէ լինէր այդ ֆիզիքական և ոչ բարոյական։ Բայց ես այսքան ժամանակ չեմ կարողացել հասկանալու՝ սովորական արգելքի՞ հետ է, որ ես պատերազմում եմ ի մահ, թէ՞ ջրի ընթացքի դէմ լողալով ի զուր կորցնում եմ թանգագին ոյժս... Ինչ և իցէ. բաժակիս մէջ դառնութեան գինին քիչ է մնացել. էն էլ կը խմեմ ու մաղս պատին կը կախեմ...

Մնամ բազմավիշտ բարեկամ քո
Ռափայէլ

1864 Յունուարի 3

ՀԻԱՆԴ ՄԱՐԴԸ*)

(Ռ. Ֆեներնի)

Գ.

Ռոմանտիական-անատոլիական աւազակային ռոմանտիկա։

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անապահովութիւն մայրաքաղաքում։ Լեղուանի անգլիացին։ Գրպանի գողեր։ Դալաթիայի անառականոցները։ Պերայի շանտանները և Քեաղիմ փաշայի թաղը։ Եալովայի աւազակները և առևանդուածի պամութիւնը։ Մեհմէդ փեհլիւանը մի անգամ էլ։ Ալբանիայում, Մակեդոնիայում և Անատոլիայում։ Աւազակային մի պատմութիւն կամ աւազակից մինչև ոստիկանութեան մինիստրի անձնական ծառան։

Բալկանեան թերակղզին միշտ աւազակների Դորադոն է եղել։ Նա այժմ էլ նոյնէ, ինչպէս որ ամբողջ Թիւրքիան Եւրոպայի և Ասիայի վերաբերմամբ։

Մայրաքաղաքում շատ բան, իհարկէ, դեռ դէպի լաւն է փոխուել։ Այնտեղ կարելի է թէ ցերեկը և թէ գիշերը գլխաւոր փողոցներով անցնել, առանց մի բոպէ կեանքի ապահովութեան մասին կասկածելու։

Բայց շատ անհաճելի բան է, երբ մարդս փողոցներով անցնելու ժամանակ պատահում է գիշերապահներին և նրանց հետ ընդհարուում։ Ճիշտ այդպիսի մի դէպք պատահեց ինձ, երբ ես մի անգամ երեկոյեան ժամը 11-ին մի տիկնոջ հետ դուրս եկայ ընակարանիցս գնալու դիմացի մի տուն, բարեկամ ընտանիքներիս մէկին այցելելու, երբ 6 մարդուց բաղկացած գիշերապահների խումբը ինձ ուղեկցող տիկնոջ անպատուեց։ Այդպիսի դէպք պատահած ժամանակ խաղաղ վարմունքը ամենագովելի յատկութիւն է։ Իմ միակ զէնքս ձեռնափայտս էր։ Դա բարձրացնելուց յետոյ 6 զինուորները իսկոյն յետ քաշու-

---

*) Տես «Մուրճ» № 9.

եցին։ Դուք արդէն գիտէք, որ այդպիսի դէպքեր պատահելիս դեսպանները կատակ չեն հասկանում և պէտք է ասել, որ նրանք այդպիսի մի քանի չարագործների պատժելով, բաւական լաւ խրատ են տուել նրանց պէս մարդկանց։

Հեռու ընկած թաղերում գիշեր ժամանակ զբօսնելը, իհարկէ, բոլորովին ձեռնտու չէ։

Ոչ պակաս աղմուկ հանեց նորերս մի երիտասարդի հետ պատահած մի դէպք, երբ նրան ոստիկանները կողոպտեցին և բանտարկեցին ոստիկանատանը։ Չորս օրից յետոյ միայն քննեցին այդ դէպքը, բայց դժբաղդաբար մեռաւ երիտասարդը, որովհետև նրա հետ շատ անգութ կերպով էին վարուել։ Եւ որովհետև նա Պերայի մի հարուստ և յայտնի ընտանիքի զաւակ էր, դրա համար էլ ոստիկանական աւազակները պատժուեցան։

Բայց քանի քանի այդպիսի դէպքեր էլ են պատահել, որոնք բոլորովին անյայտ են մնացել։

Մամուլը նոյն իսկ իրաւունք չունի այդպիսի դէպքերի վրայ մատնացոյց անելու։ Ոչ ոստիկանատունը և ոչ էլ մի ուրիշ պաշտօնական տեղ կայ, որտեղ բնիկները կամ դրսեցիները կարողանային հաղորդել այդպիսի դէպքեր պատահելիս. դրա համար էլ մենակ մարդկանց յանկարծակի անյայտանալը երբէք չի նկատուում։

Կ. Պոլսի բնակիչների կենցաղավարական կանոններից մէկն էլ այն է, որ նրանք գիշեր ժամանակ անցնելիս վառած ծխախոտ չունեն։ Խարդախ մարդկանցից շատերը սովոր են դալ կրակ խնդրել և յանկարծակի թալանել իրանց խնդիրը տերալիր կերպով կատարող մարդուն։ Շատ քչերին միայն յաջողւում է խոհոյն և եթ հանաչել այդպիսի աւազակներին։

Կ. Պոլսում դրպանի գողերի մասին շատ չի լսւում։

Այդպիսի արուեստով մեծ մասամբ պարապում են հայերը և հայուհիները, որոնք թիւրք կանանց զդեստ հագած Պերայի մեծ խանութների առաջ Կարաքիոյի նաւամատոյցի վրայ կանգնած և խոնուած եւրոպացի կանանց գրպանները հն կտրում։

Գերմանական ազդեցութիւնը Արևելքում զօրանալու օրից ի վեր շատ գերմանացիներ էլ, որոնց համար իրանց հայրենիքը շատ նեղ է եղել, իբրև մուրացկաններ և թափարաշրջիկներ, եկել են Ստամբոլ և այնտեղի բնակիչների համար իսկական պատուհաս դարձել։

Այդ թշուառները կարծում են, որովհետև թիւրքերը գերմանական օգնութեամբ են յաղթել յոյներին, հետևապէս իրանք

էլ իրաւունք ունեն Թիւրքիայի երախտագիտութիւնից օգտուելու, դրա համար էլ գլխաւորապէս մօտենում են թիւրքական ապրանքներին։

Հայկական և յունական թաղերում մարդասպանութիւնները բաւական յաճախ են պատահում։

Հայը ընդհանրապէս վախենում է հարուածներից, բայց երբ նրան փողի հարցում մի քիչ խաբում են, նա այն ժամանակ դիմում է դանակի, նոյն իսկ ամենաչնչին բաների համար։

Թիւրքիայի յոյնը մէկի հետ գործ ունեցած դէպքում սիրում է իր վիճաբանութիւնը դաշոյնի օգնութեամբ համեմել։

Օտարականը ապահով ուղեկցութեամբ Գալաթայի փողոցներով անցնում է, նկատում է մի շարք հետաքրքիր տեսարաններ, որոնք մեծ մասամբ գիշեր ժամանակն են տեղի ունենում։

Այդ փողոցները անառակութեան և ոճրագործութեան ամենամութ խորշերն են ներկայանում։ Այդտեղ են գտնուում ամենախայտառակ հիւրանոցները և սրճարանները, որոնց անունները կուրացուցիչ են։

Անցորդը ամենից առաջ նկատում է «Անտիլոպէ» կաֆէ շանտանը։ Սրճարանի գոյնզգոյն լապտերների վրայ ջութակների և երաժշտական ուրիշ գործիքներ նկարուած։

Նրա հանդէպ գտնուում է «Աֆրիկա» մեծ և կեղտոտ սրճարանը։ Այնտեղ 30 աղջիկ և՝ ծառայում և պարում և՝ երգում են։ Սրճարանի գլխաւոր բաժանմունքի կողքին գտնուում է chambre separé-ն։ Մուտքի վճար չեն վերցնում, սակայն սուրճը 10 կամ 20 փարա սովորական դնի փոխարէն արժէ 2 պիաստր. բացի սրճից այդտեղ կարելի է ստանալ լիմոնադ, թէյ, իսկ ողելից խմիչքներից միայն մաստիկը։

Երևակայեցէք, ընթերցող, հետևեալ պատկերը։ Սպիտակ վարդիկ և սև վերնազգեստը հագած մի յոյն տղայ, որ իր գըտակը ծուռ է դրել, ծխում և պարում է մի գունատ, ամենաշատը 12 տարեկան հայուհու հետ, որի մազերը անկանոն կերպով թափթփուած են ուսերի և մէջքի վրայ։ Աղջիկն էլ պարելու ժամանակ ծխում է։ Վերջապէս տեղի է ունենում պաուզա։ Նա երկար պարելուց յետոյ շատ յոգնում և բոլորովին գունատ երեսը դնում է երիտասարդի ուսի վրայ և յետոյ... Վերջի վերջոյ թշուառ աղջկան առաջարկում են chambre separé-ն և բաղդախնդիր մարդիկ իրանց մատնում են խայտառակութեան։

Երրորդ դժոխքն ներկայանում է «Օդեսսա» սրճարանը, որ իր հիւրերի համար մի ամբողջ հիւրանոց էլ ունի։

«Jnternational» սրճարանում կարելի է լսել աշխարհիս բոլոր լեզուները, որտեղ Պարիզի պարող կանանց հետ մրցում են և հայուհիները, իրանց անբարոյական հիւրերի կեղտոտ կրքերին բաւականութիւն տալու։ Դրանց հաճոյանալու համար հանդիսականներից ոմանք էլ միմեանց դէմ են մրցում և յաճախ դաշոյնի հարուածներն են որոշում, թէ միմեաց հետ մրցող հանդիսականներից որը պէտք է գերազանցութիւն ստանայ...

Փողոցի ծայրում կան երկու ուրիշ տեղեր էլ. դրանցից մէկը «Մոսկուա» թէյարանն է, որ զարդարուած է թուրքական և ռուսական դրօշակներով։ Այդտեղ նուագում է մեքենայական օրկեստրը։ Ըստ երևոյթին ներսում ամէն ինչ է։ Երկրորդ տեղը մի թատրոն է, որի մուտքը առաջին կարգի համար արժէ մի ֆրանկ, իսկ երկրորդ կարգը կէս ֆրանկ։ Թատրոնի սանդուղքի պատերը զարդարուած են Վեզուվի և զանազան երկրների բոյսերի նկարներով։ Դահլիճը ունի 80 աթոռ և 19 օթեակ։ Այդտեղի երաժշտութիւնը բաղկացած է. մի ջութակից, մէկ կլարնետից, մէկ շեփորից և մէկ թմբուկից։ Ներկայացնում են մի պանտոմիմա աւազակների կեանքից։ Հետաքրքիր է, ընթերցող, այնպէս չէ՞. իւրաքանչիւր քառորդ ժամից յետոյ այդ կատրը կրկնում են։

Ինչ որ Գալան է ներկայացնում այդ տեսակէտից, միևնոյն բանը աւելի շքեղ կերպով կարելի է գտնել Պերայի "Palais Crystal„ և "Concordia„ հիւրանոցներում, որոնք թուղթ խաղալու բաժանմունքներ էլ ունեն։

Պերայի փողոցներով անցնող օտարականը գիշեր ժամանակ յաճախ պատահում է հայերի, որոնք իբր թէ մուրացկաններ են։ Բայց ոչ, սրանք մեծ մասամբ փողոցներում կանգնում և օտարականներին առաջարկում են իրանց հետևել դէպի այնպիսի տներ, որտեղ իսկական թիւրքուհիներ իրանց սէրն են վաճառում։ Այդ թիւրքուհիների փոխարէն սովորաբար հայուհիներ են լինում, միայն թիւրք կնոջ տարազով։ Սակայն Ստամբոլում կան և բազմաթիւ տներ էլ, որտեղ անբարոյական բնակչուհիները իսկական թիւրքուհիներ են։ Բայց այդտեղ մտնել կարող են միմիայն մուսուլմանները։ Վայը տարել է այն եւրոպացուն, որին այդ տներից որևէ մէկում յանկարծ բռնեցին. այդպիսի դէպքում նրան նոյն իսկ իր դեսպանն է հրաժարուում պաշտպանելու։

Կ. Պոլսի ամենավատահամբաւ թաղը Քասիմ փաշայի թաղն է։

Այդ թաղը, որ շրջապատուած է նոճիներով և գերեզմանատներով, հեռուից իդիլիական տպաւորութիւն է թողնում։ Բայց երբ անցորդը այդ թաղին աւելի է մօտենում, նկատում է թշուառ տներ և մի շարք նեղ ու կեղտոտ փողոցներ։ Այդ թաղի միջով հոսում է մի շատ կեղտոտ առուակ, որ կոչւում է Սոխակների գետ...

Այդ թաղումն է ապրում մայրաքաղաքի կղկղանքը։ Տները նման են ճիւղերի, որոնք միմեանց մօտ են, որ կարծես իրար վրայ են շինուած։ Նրա փողոցներում նոյնպէս ոստիկանների դրութիւը վատնգաւոր է՝ այդ թաղի բնակիչները իրանց նեղ փողոցներում կարող են ամեն կերպ վրէժխնդիր լինել։ Այդտեղ է կազմում ամեն տեսակ աւազակութիւնների իսկական բոյնը. աւազակութիւններ, որոնցից մեծ մասը անյայտ են մնում և ծածկւում։

Իսկ ինչ խօսք այն աւազակութիւնների մասին, որոնք աւելի մեծ չափով կատարւում են մայրաքաղաքից դուրս, Թիւրքիայի ներքին գաւառներում։ Այնտեղ աւազակութիւնները լայն և ընդարձակ ասպարէզ ունեն։

Կարծեմ շատերին ծանօթ կը լինի այն դէպքը, երբ աւազակների մի խումբ Աֆթանաս անունով առաջնորդի ղեկավարութեամբ Չերքեզիայում յարձակուեց Orient Express գնացքի վրայ և Եւրոպան իր ժամանակին այդ դէպքի վրայ ուշադրութիւն դարձրեց, միմիայն նրա համար, որովհետև Orient Express գնացքն էր։ Բայց էլ որքան աւազակութիւններ են պատահում, որքան արտաքին աշխարհին անյայտ են մնում։

Առանձին ուշադրութեան արժանի է այն երկու կանանց առևանգումն, որ տեղի ունեցաւ 1896 թ. յունիսին։

Չննդեամբ ֆրանսիացի մադամ Բրանզօն, որ Սուլթանի պալատի ժանկաբարձուհին էր և 18 տարեկան ու գեղեցիկ հայուհի օրիորդ Պարաղեմինեանը, որ այն ժամանակուայ սերբիական դեսպանատան դրագման Թէրհանի քենին էր, Եալովայում զբօսնելու ժամանակ օր ու ցերեկով առևանգուեցան աւազակների մի խմբից։ Եալովան Կ. Պոլսի նշանաւոր հանքային ջուր ունեցող ամարանոցն է, որտեղ գնում է մեծ մասամբ Պերայի լաւ հասարակութիւնը։ Կարևոր եմ համարում աւելացնել և այն որ յափշտակուածներին ուղեկցում էին մի կառապան, մի ծառայ և երկու ժանդարմներ։

Տիկին Բրանզօն 12 օր բանտարկուելուց յետոյ, երբ նա հայուհու հետ վերադարձաւ Պերա, ինձ պատմեց իր հետ պատահած արկածները թուրք աւազակների շնորհիւ։

«Վեց տարի է արդէն, այդպէս սկսեց տիկինը իր պատմութիւնը, որ ես ամառային մի քանի ամիսները Եալովայումն էի անցկացնում։ Միանգամ ես տիկին Պարապեմեանի և նրա աղջկայ հետ զբօսնում էի Եալովայի շրջակայքում։ Զբօսանքի ժամանակ մեզ ուղեկցում էին մեր կառապանը, ծառան, և բացի դրանից երկու ժանդարմներ։ Ցանկարծ մենք նկատեցինք, որ տարի ստորոտից դէպի մեզ են վազում 11 հոգուց բաղկացած աւազակների մի խումբ։ Դրանք բոլորն էլ ալբանական տարազով վիթխարի մարդիկ էին, որոնք անմիջապէս շրջապատեցին մեզ։ Մեզ ուղեկցող ժանդարմները անօգուտ համարելով նրանց հետ կռիւ սկսելը, իսկոյն և եթ փախան։ Մեր ծառան ընդհակառակն աշխատեց մեզ պաշտպանել, բայց այնպիսի հարուածներ ստացաւ աւազակներից, որ հաղիւ էր կարողանում տեղից շարժուել։ Աւազակները մեզ կալանաւորուած հրատարակեցին։ Սարսափը տիրել էր մեզ. նամանաւանդ տիկին Պարապեմինեանին, որ առանց այն էլ հիւանդոտ դրութեան մէջ էր գտնուում։ Այդ ժամանակ աւազակային խմբի առաջնորդը, որին միւսները կապիտան Գեօրգի էին անուանում, պատուիրեց տիկին Պարապեմինեանին մեր ծառայի հետ միասին վերադառնալ քաղաք և պատահած դէպքի մասին պատմել։ Սկզբում աւազակները ցանկանում էին և տիկին Պարապեմինեանին էլ պահել, սակայն երբ աւազակների առաջնորդը տիկնոջը խիստ քննեց, դարձաւ իր ստորադրեալներին և ասաց. «տիկինը թէ պառաւ և թէ հիւանդ է, չեմ կարծում որ նրա համար մեզ փող վճարեն, այլ կարող է պատահել, որ նրան վերջի վերջոյ մեզ թողնեն...» Այդ խօսքերից յետոյ տիկինը մեզանից հեռացաւ և աւելի շուտ մեռած, քան կենդանի հասաւ քաղաք, այն ինչ մեզ, շրջապատած աւազակները փախցրին դէպի հարեւան լեռները, ուշադրութիւն չդարձնելով մեր աղաչանքներին և լաց ու կոծին։ Այնտեղ կապիտան Գեօրգին մօտեցաւ մեզ, ներողութիւն խնդրեց, որ մեզ առևանգել են և սիրիթարեց հետևեալ խօսքերով։

«Զվախենաք, խնդրեմ, որ ձեզ հետ որև է վատ բան կպատահի։ Մենք ձեզ ոչ մի անհաճելի բան չենք անիլ, թէ մեզ չհալածեն։ Մենք գանկանում ենք ձեզ համար միայն փրկանքի փող ստանալ, որից յետոյ ձեզ բոլորովին ազատութիւն կշնորհենք։ Մինչև այդ ժամանակ դուք ձեզ կարող էք մեր քոյրերը համարել»։

Մեզ շարունակ շտապեցնում էին դէպի սարի անտառը գնալու։

Զնայելով, որ նրանք երկու ձի էլ դրել էին մեր տրամադրութեան տակ, բայց անանցանելի ճանապարհների պատ-

ճառով գրեթէ անհնարին էր հեծնելը։ Առաւօտեան դէմ մեզ պատուիրեցին կանգ առնել, ամբողջ ցերեկը հանգստանալ և գիշերը ճանապարհը կրկին շարունակել։ Կարծեմ Եալովայից մենք 30 ժամուայ ճանապարհ հեռաւորութեան վրայ էինք գտնուում։

Կապիտանը մի նամակ ուղղեց մեր ազգականներին և ինձ համար, իբրև պառաւի 10,000, իսկ երիտասարդ ուղեկցուհուս համար 15,000 ֆունտ փրկանքի փող պահանջեց։ Նամակը յանձնել էին աւազակներից մէկին տանելու և համոզուած էին, որ նա ապահով կերպով կըվերադառնայ, որովհետև նրանք սպառնացել էին, որ եթէ իրանց նամակաբերին որև է վնաս հասցնեն կամ ճանապարհին նրան հալածեն, դրա փոխարէն մեզ կը ժորթեն։ Նամակատարը ինձանից էլ նամակներ տարաւ և երկու օրից յետոյ մեր ժարդկանց պատասխանը բերաւ. մենք պէտք է աշխատէինք չյուսահատուել...

Եւ մենք օրէցօր սպասում էինք.

Աւազակները անտառի հետ լաւ ծանօթ էին երևում։ Նրանք իրանց բնակութեան համար որոշ տեղ չունէին։ Մենք մեր նստած տեղը երեք անգամ փոխեցինք։ Այնտեղ ոչ տուն կար և ոչ էլ վրան էր զարկուած։ Աւազակները բացի զէնքերից իրանց հետ ոչինչ չէին վերցրել, նոյն իսկ պաշար։ Մենք կերակրւում էինք թուրքական չոր հացով և այդպէս տեւեց մօտ 12 օր։ Սարսափելի է չէ՞։ Եւ եթէ մեր դրութիւնը դեռ երկար ժամանակ անորոշ մնար, գուցէ այդ չոր հացին էլ կարօտ մնայինք...

Մենք բաղդաւոր էինք, որ երկու հոգի միասին չէինք։ Ի դէպ կապիտանը մի անգամ ասաց ինձ որ ինքը չէ սիրում առանձել մի կնոջ, այլ երկուսը միասին, որպէսզի կանանց անունը խնայուի։

Աւազակների քաղաքավարութեան համար մենք չէինք կարող գանգատուել։ Ոչ ոք չէր յանդգնում մեզ վիրաւորելու։ Ընդհակառակը նրանք նոյնիսկ մեզ շատ լաւ խնամում էին, որ երբեմն ծիծաղ էր պատճառում։ Օրինակ, մի անգամ երբ ես ձեռնոցներս կորցրել էի, այն ժամանակ աւազակները երկու աղլուխ բերին, որպէսզի ձեռքերս փաթաթեմ, որ նրանք չկեղտոտուեն...

Մեզ հետ սովորաբար խօսում էր կապիտանը, երբեմն յունարէն, երբեմն էլ թիւրքերէն։ Միւս աւազակները մեզ ծառայում էին միայն այն ժամանակ, երբ կապիտանը նրանց մեզ մօտ էր ուղարկում։ Մնացած ժամանակը նրանք մեզանից պատուաբեր հեռաւորութեան վրայ էին գտնւում...

Ընդհանրապէս մենք խնասելի սարսափի մէջ էինք։ Մենք աղօթում և լալիս էինք օր ու գիշեր։ Տասնեերկու օրուայ ընթացքում մենք միայն մի բանի ժամ էինք քնել։ Գիշերը մեծ մասամբ քնում էինք և եթէ հանգստանում էինք, չէինք համարձակւում աչքերներս խփելու։ Մենք սեղմուած նստում էինք իրար կողքի, աչքերս երկիւղից բացած և դողում էինք, երբ հեռուից որև է ձայն էր գալիս։ Ցերեկը երբեմն քնում էինք, բայց ոչ երկուսս միասին, այլ մէկը միշտ պէտք է հսկէր միւսի վրայ։

Տասնեերկու օրուայ ընթացքում մենք մնացինք միեւնոյն հաղուստի, միեւնոյն սպիտակեղէնի, կօշիկների և գուլպաների մէջ։ Մեր ոտքերը այնպէս էին կեղտոտուել կարծես թէ դրանք ածխի փոշու մէջ թաթախուած լինէին։ Կարիքից ստիպուած էինք ձեռքներս լուանալ, այն ինչ մեր երեսը միշտ անլուայ էր մնում, իսկ մաղերը ոչ սանրուած։ Մենք կտրել էինք մեր ամբողջ յոյսը և կարծում էինք, որ անտառում կը մեռնենք երկիւղից, սովածութիւնից կամ թէ չէ աւազակների ձեռքով։

Մի անգամ մեզ սաստիկ վախեցրեց այն երկիւղը, իբր թէ զօրքերը մեզ հալածում են։ Եթէ այդ լուրը ճշտուէր, այն ժամանակ աւազակները մեզ կը սպանէին, թէև նրանք ընդհանրապէս արիւնածարաւ մարդկանց տգաւորութիւն չէին թողնում։

Կապիտան Գեօրգին պատկառելի կերպարանքով, գեղեցիկ դէմքով, բարձրահասակ և երկար միրուքով մի մարդ էր։ Նրա կրակոտ աչքերը արտայայտում էին քաջութիւն, եռանդ և մի որոշ բարութիւն։ Նա իր հաւատարիմներին ճարպիկութեամբ պատուէրներ էր տալիս և նրանց մէջ տիրում էր մի տեսակ օրինակելի կարգապահութիւն։ Նրա իւրաքանչիւր խօսքը ասուածային պատուէրի տեղ էին ընդունում և որ իսկոյն և եթ կատարւում էր։ Աւազակներն էլ արժանի էին մի այդպիսի առաջնորդի։ Նրանք էլ վիթխարի կերպարանք ունէին և 30—50 տարեկան տղամարդիկ էին...

Հետաքրքիրը այն էր, որ աւազակները իրանց հետ ունէին մի ամբողջ դեղատուն. կապիտանը միեւնոյն ժամանակ և խմբի բժիշկն էր։ Նա երբեմն սրան և երբեմն էլ նրան տալիս էր կամ փոշիներ կամ կաթիլներ։ Ինքն էլ երբեմն դեղ էր ընդունում։ Որովհետեւ երեք օր շարունակ անձրեւ էր եկել, դրա համար կապիտանը պատուէրից դեղերի արկղը բաց անել, որպէսզի արեւի ճառագայթները նրա մէջ մտնեն և նրանց խոնաւութիւնը ծծեն։ Արկղը բաց անելուց յետոյ միայն մենք տեսանք, որ նրա մէջ դեղերի մի մեծ ժողովածու էր ամփոփուած,

ի միջի այլոց և մորֆիում, Դարմշտադի մի դեղավաճառանոցի էտիկէտով...

Զմոռանամ աւելացնելու, որ այդքան երկար ժամանակի ընթացքում մենք մեր իրերից ոչինչ չկորցրինք։ Մի օր ես կորցրի ձեռքի պայուսակս, որի մէջ ամփոփուած էին փողամանս և մի զարդ. աւազակներից մէկը դուռ և բերաւ ինձ յանձնեց պայուսակը, որից մի պիաստր անգամ չէր կորել...

Վերջապէս հասաւ մեր ազատութեան ժամը։ Եկար բանակցութիւններից յետոյ աւազակները մեր փրկանքի 25,000 ֆունտը 10,000-ի էին իջեցրել. սուլթանը վճարեց այդ գումարը մեզ փրկելու։ Գումարը յանձնեց իմ հաւատարմատարս աւազակներից մէկին, մի առանձնացած տեղ, 24 ժամից յետոյ աւազակը վերադարձաւ այդ գումարով մեզ մօտ։

Կապիտանը իսկոյն և եթ զբաղուեց գումարը իր ընկերներին բաժնելով։ Գումարի 1/4 մասը կամ 2,500 ֆունտը ինքը վերցրեց, իսկ մնացածը հաւասարապէս բաժանեց իր ընկերներին, այնպէս որ նրանցից ամեն մէկը ստացաւ 750 ֆունտ։ Դրանից յետոյ կապիտանը մօտեցաւ մեզ, ներողութիւն խնդրեց, որ մեզ այդքան անհաճելի դրութեան մէջ դրեց, շնորհակալութիւն յայտնեց մեր համբերութեան համար և վերջապէս վերին ատիճանի քաղաքավարութեամբ համբուրեց մեր ձեռքը։ Նրա օրինակին հետեւեցին և միւս աւազակները, որոնք նոյնպէս շնորհակալութիւն արին և համբուրեցին մեր ձեռքերը։

Դրանից յետոյ կապիտանը յայտնեց, որ մենք կրկին ազատ ենք, հրաժեշտ տուեց մեզ և իր մարդկանցից հինգ հոգի վերցնելով մեզանից բաժանուեցաւ։

Միւս հինգ հոգին կապիտանի պատուէրի համաձայն մեզ պէտք է մինչև տուն ուղեկցէին։

Մենք սկսեցինք վերադառնալ։

Երեկոյ էր։ Սկզբում չորս ժամ ձիով գնացինք, յետոյ իջանք ձիերից և 14 ժամ շարունակ ոտով գնացինք։ Աւազակները իրանց հագուստները մեզ էին տուել հագնելու մեր հագուստների վրայով, այնպէս որ կասկածոտ աչքերն անգամ չէին կարող նկատել, որ մենք կանայք ենք. այնքան էինք փոխուել մենք։ Եթէ մէկը ճանապարհին պատահէր, նրա մրուքով ոչ մի բան չէր կարող անցնել...

Մեր խումբը հետզհետէ փոքրանում էր, որքան մենք մեր նպատակին աւելի էինք մօտենում։ Սկզբում մեզ ուղեկցում էին հինգ հոգի։ Մի քանի ժամից յետոյ նրանցից մէկը հրաժեշտ տուեց մեզ և ձիաների հետ յետ դարձաւ, որից յետոյ մեզ հետ միայն չորս հոգի մնացին։ Դիշերուայ ընթացքում նրանցից

երկուսն էլ անյայտացան, իսկ լուսադէմին էլ մէկը։ Կարճ ժամանակից յետոյ մեզ հրաժեշտ տուեց և վերջին աւազակը ասելով։

«Ահա ձեզ Եալովա տանող ճանապարհը։»

Այս ասելուց յետոյ մեզանից հեռացաւ միակ աւազակը։ Մենք մենակ շարունակեցինք մեր ճանապարհը և շուտով հասանք տուն...

Աւելացնեմ և այս, որ վերջին աւազակը մեզանից ազատուելով, իջաւ ժօտիկայ հովիտը այնտեղից ոչխար գողանալու։ Բարեբաղդաբար նրան բռնեցին և նրա ժօտ գտան իր բաժին փրկանքի 750 ֆունտը։

Թիւրքիական ոստիկանութիւնը շատ աշխատեց միւս աւազակներին էլ բռնելու։ Նշանակեցին մի խումբ զօրք աւազակների յետևից ընկնելու և նրանց բռնելու։ Նոյնիսկ նաւապետ Մուսթաֆ բէյի ղեկավարութեամբ Մարմարա ծովում մի քանի նաւեր պատրաստեցին աւազակներին հետևելու։ Գրեթէ ամեն օր մայրաքաղաքի թերթերը ամեն տեսակ լուրեր էին հրատարակում նորանոր աւազակների ձերբակալման մասին։ Մենք գիտենք, որ 11 աւազակներից միայն մէկին էին կարողացել բռնել։ Պաշտօնապէս ձերբակալուած աւազակների թիւը հասնում էր 30-40-ի։ Իսկապէս թերթերի այդ հաղորդած լուրերը մեծ մասամբ ստայօդ էին, ոչ մի աւազակ էլ բացի մէկից չձերբակալուեցաւ և, հաւանական է, որ մինչեւ այժմ էլ կապիտան Գեօրգին որեւէ տեղ ազատ կերպով վայլում է իր ոճրագործութեան պտուղները։

Այստեղ հարկաւոր է մի հետաքրքիր բան էլ յիշել, որ բոլորովին ամբողջացնում է Գեօրգիի գործունէութեան բոմանտիքական գոյնը։ Տիկին Բրանդոյի և օրիորդ Պարաղեմինեանին առեւանգելուց մի քանի օր առաջ, կապիտան Գեօրգին փախցրել էր Էալովայում ապրող վառարանների գործարանատիրոջ որդուն։ Այդ երիտասարդի համար կապիտան Գեօրգին պահանջեց 1000 ֆունտ փրկանք։ Բայց նրա խեղճ հայրը ընդամենը 500 ֆունտ կարողութիւն ունէր։ Մեր աւազակապետը բաւականացաւ այդ գումարով և երիտասարդին ուղարկեց տուն։ Բայց երբ Գեօրգին արդէն երկու տիկիններից փրկանքի մեծ գումարը ստացել էր, Եալովայի վառարանների գործարանատիրոջ յետ ուղարկեց 500 ֆունտը հետեւեալ նամակի հետ միասին։

«Այժմ ես կարող եմ ձեր ինձ տուած 500 ֆ. պարտքը վերադարձնել։ Գեօրգի։»

Ալբանիայում և Մակեդոնիայում աւազակները երկրի իսկական տէրերն են։ Բնակիչները աւելի շուտ նրանց հետ են

բանակցութիւն սկսում, քան թէ Թիւրքական թոյլ և կամազուրկ պաշտօնեաների պաշտպանութեանը դիմում։ Ոստիկանութիւնը վերոյիշեալ երկրներում աւելի վտանգաւոր է, քան թէ Թիւրքիայում։ Այնտեղ ոստիկանութեան մարդիկ մեծ մասամբ նախկին աւազակներից են բաղկացած, որոնք աշխատում են լաւ յարաբերութիւն պահպանել իրանց յաջորդ արհեստակիցների հետ, և նոյնիսկ այդ ոստիկաններից շատերը նրանց հետ շատ անգամ պայմանաւորուած են լինում. իսկ եթէ այդ ոստիկանները և ժանդարմները կառավարութեան պատուէրով ստիպուած են լինում աւազակներին հետեւելու, այն ժամանակ նրանք առաջուց գաղտնի կերպով տեղեկութիւն են տալիս նրանց զգուշանալու։ Չէ՞ որ սովորաբար յայտնի են խմբերի աւազակապետները, նրանց ստորադրեալները, բնակութեան տեղերը, և նոյնիսկ նրանց գործակալները զանազան քաղաքներում։ Այդ աւազակները տէրութեան մէջ մի փոքրիկ տէրութիւն են կազմում, ունեն իրանց ամրոցք և կանոնաւոր վարչութիւնը և նոյնիսկ իրանց պաշտօնական ներկայացուցիչները Թիւրքական պաշտօնեաների մօտ։

Իբրեւ մի պատկեր Թիւրքիայի աւազակների կեանքին նուիրուած գլխին, ուզում եմ հետեւեալ անամօթ լուրերն էլ աւելացնել, որոնք Թիւրքական կառավարութիւնը գրեթէ ամեն օր Թիւրքական լրագրների պաշտօնական լուրերի շարքում հաղորդում է։

«Մոնաստիրից մեզ հաղորդում են որ Մեղշիկուլում Սերֆիտշէ սանջակում մեծ ընդհարում է տեղի ունեցել ժանդարմների և աւազակների մէջ։ Չնայելով որ վերջիններս թուով քիչ էին, սակայն միայն երկարատև կռուից յետոյ ժանդարմներին յաջողուեց աւազակապետ Ալէքսիսին սպանելու. միւս աւազակները կորցրին 3 մարդ»։

«Տարիներից ի վեր Եանինայում և Մոնաստիրում տիրապետող աւազակապետ Թուխան Պրունուբարայի խաներից մէկում քնած ժամանակ ժատնուեցաւ և ընկաւ ժանդարմների ձեռքը։ Վերջիններս կարողացան նրան կենդանի բռնել։ Աւազակապետին սպանեցին և նրա գլուխը բերին Դիւրիւշէ».

«Կոսսովօ գաւառի Պրիսրինդ գիւղաքաղաքում ժողովրդի մէջ մեծ իրարանցում է ձգել աւազակային մի խումբ։ Այն խմբերը, որոնք ուղարկուել էին այդ խմբերն բռնելու, չկարողացան իրանց նպատակին հասնել, թէև նրանց հետքը արդէն գտել են»։

Նորագոյն ժամանակներս գրգռիչ դէպքեր պատահեցին Թիւրքիայի մի քանի տեղերում։ Զմիւռնիայի շրջակայքում ա-

ւազակները փախցրին Մէյ անունով ֆրանսիացուն, որին արձակեցին 5000 ֆունտ փրկանք առնելուց յետոյ։ Մակեդոնական աւազակները Սալոնիկէի պարիսպների տակ առևանդեցին ամերիկական միսսիոնարուհի միս Էլլէն Ստոնին և նրա համար պահանջեցին 25,000 ֆունտ փրկանքի փող, կամ քաղաքական ներումն Սալոնիկէում յեղափոխական գործերի պատճառով տէրութիւնից դատապարտուած մակեդոնացիների համար.....

Այդ օրինակ դէպքեր Փոքր-Ասիայում էլ շատ են պատահում։ Լսենք դրանց մասին էլ կրկին թիւրքական տեղեկութիւնները։

«Թոկատում երևացել է աւազակային մի խումբ։ Ոստիկանութիւնը ընդհարուեց այդ խմբի հետ և սպանեց երկու աւազակներ։ Միւսները կարողացան փախչել և աղմուկներ բարձրացնել քաղաքի շրջակայքի միւս մասերում։ Սըվազի և Կոնիայի վալիները պայմանաւորուել են միմեանց հետ և մեծ խմբեր են ուղարկել աւազակներին հալածելու և ոչնչացնելու»։

«Կ. Պոլսի մօտ Իզմիտում աւազակների մի փոքրիկ խումբ է երևացել։ Քաղաքի պարիսպների մօտ հինգ աւազակներ յափշտակեցին քաղաքացուն Էմին Էֆենտիի երկու որդիներին, եղբօրը և 68 ոսկէ լիրա և պահանջեցին մեծ փրկանք։ Եւ որովհետև նրանք ստրերը փախցրած մարդկանց սպառնում էին սպանելու, դրա համար էլ փրկանքը իսկոյն և եթ վճարուեց նրանց»։

«Աւազակների մի խումբ իշխում է Կարաժուսսալում, որ նոյնպէս Իզմիտի գաւառումն է գտնուում, ամեն տեսակ ջանք է գործ դրուում այդ աւազակներին ոչնչացնելու։ Հինգ հոգուց բաղկացած աւազակների մի խումբ բացարձակ կերպով տիրում է Սինոպի և Գարասուի մէջ ընկնող ճանապարհի վրայ։ Այդ խումբը արդէն բազմաթիւ ճանապարհորդների կողոպտել է։ Երբ այդ աւազակներին չեն դիմադրում, նրանք բաւականանում են միմիայն փրկանքի փողով։ Հակառակ դէպքում նրանք նոյնիսկ սպանութիւններից չեն խուսափում ճանապարհորդների իրեղէններին տիրանալու։ Օրինակի համար նորերս մի երիտասարդ վաճառական Եազիտջի օղլի Ստավրի անունով աւազակներին իր ցոյց տուած դիմադրութեան համար կորցրեց ոչ միայն իր իրերը, փողը այլ և կեանքը։ Ներկայումս Սինոպի նահանգապետը Բեքիր-փաշան զօրք է ուղարկել այդ աւազակներին ոչնչացնելու համար»։

Աւազակներին արժատախիլ անել առ այժմ անհնարին է, որովհետև դրանք ունեն բազմաթիւ ընկեր, որտեղ նրանք վտանգաւոր բոպէներին կարողանում են ճարպիկութեամբ թաքնուել։ Այդ ընկերից նրանք երբեմն առ երբեմն դուրս են գալիս և աշ-

խարհս զարմացնում իրանց յանդուգն գործերով։ Դա 5 կամ 10 հոգուց բաղկացած մի խումբ է, որ տասնեակ հազարաւոր բնակիչ ունեցող քաղաքներին սարսափի մէջ է ձգել։

Կ. Պոլսի և Սալոնիկէի մէջ գտնուող երկաթուղու կայարաններից մէկում օր ու ցերեկով Պրեվօ աղգանունով Ֆրանսիացի ինժենները աւազակներից կողոպտուեց և 50,000 ֆրանկ փրկանքի փող վճարելուց յետոյ միայն ազատուեցաւ։ Այնուհետև աւազակները հանգիստ կերպով յետ քաշուեցան։

Ադաբազարի երկաթուղու կայարանում 12 հոգուց բաղկացած աւազակների մի խումբ գիշեր ժամանակ յարձակուեցաւ զինուորների վրայ և փախցրեց նրանց սպային և որովհետև կառավարութիւնը նրան որոշ ժամանակի ընթացքում չկարողացաւ ազատել, դրա համար աւազակները սպանեցին նրան։

Աւազակներից ոչ ոք չբռնուեց։

Անատոլիական երկաթուղու մի ուրիշ կայարանում՝ Այ Բայիայում, մի քանի ժամանակ սրանից, առաջ, օր ու ցերեկով աւազակային մի ուրիշ խումբ յայտնուեցաւ։ Այդ խումբը քարուքանդ արեց կայարանի շինութիւնը, ոչնչացրեց նրա զանազան բաժանմունքները և երկաթուղու գծերը և յետոյ կայարանի գանձարանը կողոպտեց։ Մինչև աւազակներից շղթայուած պաշտօնեաների օգնութիւն ստանալը, չարագործները փախան դէպի լեռները, որոնք աւազակներին հետևող մարդկանց համար անյաղթելի արգելքներ էին ներկայացնում։ Էսկիշէհիրի դայմագամ կամ նահանգապետ Հայիրի—Բէյը չնայելով այդ արգելքներին իր զինուորների խմբով շրջապատեց աւազակներին, բայց վերջիններիս կրկին յաջողուեց նրանցից ազատուելու։

Տէրութեան պաշտօնեաները մի սլատահմունքի շնորհիւ միայն կարողացան աւազակների հետքը գտնել։

Էսկիշէհիրի բազարում մի անդամ մի հովիւ դէս ու դէն էր գնում վառօդ գնդակ գնելու։ Այդ հովուին կասկածելով ձերբակալեցին և նրան սաստիկ նեղայնելուց յետոյ վերջապէս յայտնի եղաւ, որ նա այդ վառօդն ու գնդակը հալածուած աւազակների համար էր ցանկանում գնել։ Վերջիններիս մատնելուց յետոյ, երբ հովիւը տեսաւ որ իրան էլ սպառնում է մահ, ստիպուած եղաւ ոստիկանութեան նոյնիսկ աւազակների տեղը ցոյց տալու։ Հովիւը թիւրքիական զինուորներին ամենասարսափելի ճանապարհներով տարաւ մինչև աւազակների որջերը։

Քիչ ժամանակից յետոյ հալածուած աւազակները կանգնած էին իրանց հալածող զինուորների դէմ առ դէմ։ Աւազակ-

ների թիւը անհամեմատ աւելի քիչ լինելով՝ չկարողացան զինուորներին ցանկալի դիմադրութիւնը ցոյց տալ։ Դրանց մեծ մասը փախաւ, իսկ երեք աւազակներ ծանր կերպով վիրաւորուելով վերջապէս անձնատուր եղան զինուորներին։ Այդ երեքը Անատոլիայի ամենայայտնի և վատահամբաւ գողերը, մարդասպաններն և աւազակներն էին, այն է Հարունը, Սորունքոր և Մեհմեդ փեհլիվանը։ Վերջինս, ինչպէս ինքը հպարտութեամբ խոստովանում էր, բացի իր սովորական աւազակութիւններից մօտ 300 մարդ էլ էր սպանել։

Եւ գիտէ՞ք ինչ արին վերոյիշեալ երեք աւազակներին։

Դրանցից առաջին երկուսը երկաթուղու գծի վրայ պահապաններ նշանակուեցան.... Իսկ Մեհմեդ փեհլիվանը դառաւ ոստիկանական բարձր պաշտօնեայ, աւելի ճիշտը ոստիկանութեան նախարար Նազիմ փաշայի առաջին խորհրդականը։ Վերջինիս մօտ ես յաճախ եմ տեսել Մեհմեդ փեհլիվանին իր անցեալ քաջագործութիւնների մասին պատմելիս։ Նազիմ փաշայի անկումից յետոյ, ինչպէս որ ես արդէն. պատմեցի դրքիս «Կ. Պոլսի բանտերը» վերնագրով գլխում, Մեհմեդ փեհլիվանը նշանակուեց Պերայի նահանգապետ Էնվեր-բէյի գլխաւոր խորհրդականը.....

Նոյն մի պատահմունքի շնորհիւ բռնուեցան այն աւազակները, որոնք չորս տարուց ի վեր 50,000 բնակիչ ունեցող Բուրթահիա քաղաքը իր շրջակայքով անապահով գրութեան մէջ էին դրել։ Այդ աւազակները գրեթէ ամեն օր վերոյիշեալ քաղաքի պարիսպների մօտ ոստիկանութեան պաշտօնեաների քթի տակ բաւականաչափ մարդ էին սպանում։

Ոստիկանների մի խումբ դարանակալած լրտեսում էր նրանց։ Շուտով այդ բանը իմացան աւազակները, որոնք յանկարծակի յարձակուելով ոստիկանների վրայ նրանց ահ ու սարսափի մէջ ձգեցին։ Ոստիկաններից երկուսը փախան, բայց մի քանի րոպէից յետոյ աւազակները բռնեցին նրանցից հինգ հոգու և շղթայակապ արին։ Ցուսօ և Զաքարիա աւազակները զրաղուած էին իրանց սիրելի ոստիկանների գրպանները դատարկելով, իսկ մնացածները աշխատում էին բռնել փախչող ոստիկաններին։ Այդ ժամանակ մի երկձի կառքի մէջ նստած մօտենում էր Կոնիայի ոստիկանապետ Իբրահիմ բէյը, որին միայն մէկ ժանդարմ էր ուղեկցում։ Ոստիկանների գրպանները դատարկող աւազակները այնպէս էին խորասուզուել իրանց հաճելի աշխատութեան մէջ, որ չնկատեցին իրանց մօտեցող Իբրահիմ բէյին։ Վերջինս և իրան ուղեկցող ժանդարմը իսկոյն հանեցին իրանց երկար ատրճանակները և մի քանի

բոպէից յետոյ գետին դլորեցին Ցուսոյին և Զաքարիային.....

Մի տարուց իվեր Թիւրքիայում ժողնուելիք մեծ բեֆորմը՝ բոլոր ցեղերի և կրօնների հաւասարութիւնը, առ այժմ իրականացել է միայն աւազակութեան մէջ։

Աւազակութեամբ պարապում են և մահմեդականները, և յոյները, և քրդերը, և հայերը։ Այդ արհեստով նրանք բոլորն էլ միաբան գործում են։

Անատոլիական ամենանշանաւոր վիլայէթներից մէկում՝ Սըվազում՝ աւելի քան տասը տարուց իվեր տիրում էր մահմեդականացած քրդերից բաղկացած աւազակային մի խումբ, որի նշանաւոր առաջնորդը Սիմէօն Թերզիօղլի անունով հայն էր։ Վերջինս ոչ միայն բաւականանում էր խորամանկութեամբ աւազակութիւններ անելով, այլ և յաճախ իր 12 հոգուց բաղկացած խմբով օր ու ցերեկով յարձակւում, յափշտակում, սպանում, այրում էր մեծ քաղաքներից և աւաններից շատերը։

Շատ զարմանալի է դրութիւնը Եմէնում։

Թացի սանջակի մի հին ամրոցի աւերակներում բուն էին դրել մօտ 60 աւազակներ։ Այդտեղից նրանք բոլորովին համարձակ ու յանդուգն կերպով յարձակումներ էին գործում շրջակայքի վրայ և այնտեղի ազգաբնակութեանը այնպիսի սարսափի ու սէ ու դողի մէջ էին ձգել, որ վերջինս աւազակներին ձևական տուրք էր վճարում։ Թիւրքաց կառավարութիւնը ամրողջ վաշտեր ուղարկեց այդ աւազակներին բռնելու։ Յետոյ ամեն ինչ խաղաղուեցաւ։ Եթէ թիւրքական վաշտերին յաջողուէր աւազակներին յաղթելու, այն ժամանակ պաշտօնական լուրերը այդ բանը անպատճառ կը հաղորդէին։ Ուրեմն պէտք է ընդունել, որ աւազակների վերոյիշեալ տիրապետութիւնը մինչև այժմ էլ դեռ իր դոյութիւնը շարունակում է։

Ռոմանտիկան Թիւրքիայում դեռ աւելի ընդարձակ առպարէզ ունի։

Զաթալչա—դաւառի Զաքիրբիօ փոքրիկ քաղաքում, որ Կ. Պոլսից երկաթուղով երեք ժամ հեռաւորութեան վրայ է գտնւում, ապրում է Դեսպինա անունով մի այրի կին։ Սրանից 9 տարի առաջ անյայտացաւ նրա 11-ամեայ միակ որդի Ստաւրօն՝ նրա միակ ուրախութիւնը։ Դժբաղդ այրին ամեն միջոցների դիմեց իր կորած որդուն վերկելու։ Դիշեր ու ցերեկ նա հանգստութիւն չունէր, բայց Ստաւրօյի՝ նրա սիրած որդու հետքն անդամ չէր երևում։ Անմխիթար մայրը ստիպուած էր իր ճակատագրին ենթարկուել ու մենակ ապրել...

Անցան տարիներ միմեանց յետևից, մինչև որ Ստաւրօյի անյայտանալու 9 տարին լրացաւ։

Մի երեկոյ դժբաղդ մայրը նստած էր տխուր, ինչպէս միշտ և դէպի հեռուն էր նայում։

Ամեն ինչ խաղաղ էր նրա շուրջը։ Տան մէջ չէր լսւում նոյնիսկ ճանճի ղղոցը։ Ամեն ինչ հաճելի և խաղաղ էր այրու համար։ Փողի կարիք նա չէր զգում, որովհետև ինքը մենակ էր, իսկ նա աւելի ունէր, քան թէ կարիք կար, Բայց միթէ դրանք կարող էին բաւականութիւն պատճառել որդեկորոյս մօրը։ Ի՞նչքան հրաշալի և գեղեցիկ բան կը լինէր, եթէ Ստաւրօն իր մօր կեանքի վերջին տարիներում նրա մօտ լինէր։

Մի անգամ նա ակատում է որ ճանապարհով երկու մարդ են գալիս, մէկ ծեր, իսկ միւսը երիտասարդ. երիտասարդը մնում է դրսում կանգնած, իսկ ծերունին ներս է մտնում այրի կնոջ մօտ։

«Ո՞վ ես դու, հարցնում է այրին»։

—Ես մի աւազակ եմ, այսպէս է սկսում իր պատմութիւնը հիւրը։ Ինձը տարի սրանից առաջ՝ ես գողացի միակ որդուդ՝ Ստաւրօյին։ Եթէ փրկանք վճարես, կարող ես նրան կրկին ստանալ։

Այրին դողդոջուն ձեռքերով վճարեց փրկանքը, որից յետոյ աւազակը հեռացաւ, իսկ Ստաւրօն վերադարձաւ։

Մեր Ստաւրօն իր ընտանիքինոր կեանք է տալիս։ Այժմ այրու տունը ուրախ և ցնծում է, այն ինչ առաջ միայն տրխրութիւն և սուգ էր ներկայացնում։ Ստաւրօն զանազան առիթներից օգուտ քաղելով իր մօրից նորանոր փողեր է խնդրում։ Այրի մայրն էլ առանց մերժելու միշտ կատարում է իր որդու խնդիրը։ Եւ միթէ մօր մտքով կ'անցնէ՞ր իր միակ որդու խնդիրը մերժելու...

Այդպէս նրանք ապրում են շաբաթներ և ամիսներ...

Յանկարծ, մի օր, Ստաւրօն խոստովանւում է, որ ինքը աւազակային խմբի հետ դեռ ևս յարաբերութեան մէջ է գտնւում, և բացի դրանից, որ իր բոլոր ընկերները և հիւրերը աւազակներ են։ Միայն փողի շնորհիւ նա կարող էր իր վտանգաւոր ընկերներից ազատուել։ Մայրը տալիս է որդուն իր վերջին փողը և այդպիսով տանը միաժամանակ խաղաղութիւն և հանգստութիւն է տիրում։

Մի անգամ էլ Ստաւրօն յանկարծ կանգնում է իր մօր առաջ և ասում է. «Փող տուր, եթէ ոչ կը սպանեմ քեզ»։

—Ես այլ ևս փող չունիմ, գանգատւում է դժբաղդ մայրը։

«Իսկ ես կամ պէտք է փող ունենամ, կամ թէ չէ կը սպանեմ քեզ։ Ծախիր տունդ և դրա փողը տուր ինձ։ Ես պէտք է վերադառնամ աւազակների մօտ»։ Ստաւրօն քանի գնում, այնքան էլ աւելի էր սպառնում մօրը։

—Դժբաղդ որդիս, եկ ինձ հետ գնանք մայրաքաղաք, այնտեղ էլ ես փող ունեմ, պատասխանում է վերջապէս մայրը։

Եւ նրանք միասին ճանապարհւում են Կ. Պոլիս։

Բայց Ստամբոլում յուսահատուած մայրը իր թշուառ որդուն փոխանակ բանկիրի մօտ՝ տանում է ոստիկանութեան նախարարի մօտ։

Ոստիկանութեան նախարարի մօտ ես Ստաւրոյին տեսայ իբրև փաշայի թիկնապահ ծառայ...

Թարգմ. գերմ. Լ. Բաբայեան

(Վերջը յաջորդ համարում)

---

*
* *

Թռչում է ոգիս՝ ազատ ու անվախ՝
Վեհ բարձրունքները խրոխտ լեռների.
Եւ գլխիս վերև լսում եմ յաճախ
Շառաչումները արծուի թեւերի։

Լսում եմ զօրանջն տիեզերական.—
Ոգիս բացւում է անծիր թեւերով.
Անծիր թեւերս գրկում են համայն
Աշխարհ է՝ աշխարհ և ծովեր է՝ ծով։

—Բացէք դարպասներն ձեր պալատների.
Ոգու յարութեան լոյսն եմ ձեզ բերում.
Ես փոթորիկն եմ անապատների
Եւ օձ-կայծակը մռայլ ամպերում...

Եւ մարգարէի հուրն է իմ կրծքում,
Սուրը իմ ձեռքում, բարբառս ազատ.
Եւ ինձ յաւիտեան անմահ եմ զգում.
Եւ երկրի վերայ քայլերս հաստատ...

Ա. Դանիելեան։

ՉՊԱՏՄՈՒԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1894-ի անցքերէն

Վերջապէս Սուլթան Համիդ յաջողած էր հիւսիսէն հարաւէն համախոհներ գտնել, որոնք սիրոյօժար թելադրեցին իրեն օր ցերեկով հայերը կոտորել տալ ամեն տեղ։

Այս նպատակաւ Դ-րդ բանակի հրամանատար՝ ազգաւ Մահաւ, անուամբ տաճիկ Զէքի փաշային հրամայուեցաւ հեռագրաւ թողուլ Երիզան և երթալ Սասուն հայերը ջարդելու։ Սա պայմանաւ յօժարուեցաւ Զէքին. «Այպպիսի ահեղ հրամանի մը գործադրութիւնը կը ստանձնեմ միմիայն կայսերական մասնաւոր հրամանագրով», ապադայ մեծ պատասխանատուութենէ մը ազատ մնալու կանխահոգութեամբ։

Ի՞նչ կայ դիւրին քան մարդասպանութեան վճիռ արձակելն և կամ հրամանագիր ստորագրելն Սուլթան Համիդի համար. կանչեց իւր անձնական քարտուղար Սիւրէյա փաշան, հրամայեց գրել հայերը կոտորելու հրամանագիրը։

Սիւրէյա փաշա չհասկանալ կը ձևացնէ, տիրոջը մտադրութիւնը պահ մը շեղել տալու համար, վարանումէն և յուզումէն անկապ հարցումներ կ'ուղղէ.

—Վեհ. Տէր, ո՞ր հայուն համար պիտի գրուի. անունը, մականունը և այլն յիշե՞նք.

—Ի՞նչ մէկ հայ, և ի՞նչ մականուն, ջարդել անխնայ ամեն հայ անունը կրողին։ Եւ հետզհետէ ալ ջարդել պիտի տամ թէ ես և թէ համախոհներս ամեն տեղ ուր հայ որ կան։

Սիւրէյա փաշա հլու հնազանդութեամբ մը ակամայիս կը գրէ այդ դաղանական որոշմնագիրը և մեծ մարդասպանը իւր ձեռամբ ստորագրելով կը դրկուի Կարին՝ Շէքի փաշային հասցէին...

*
* *

Գրեթէ դիշերուան ժամը 11 էր։ Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան ետևի դրան առջև կանգնեցաւ գոյ կառք մը. և

դուրս սպրդեցաւ մէջէն պատկառելի Ճէնդրլմէն մը և մտաւ դեսպանատուն։

Սըր Ֆիլիպ Բըրրի իւր առանձնարանի մէջ անակնկալ մը կը համարուի տարաղէպ ժամու բարեկամի մը այցելութեան զոր այդ պահուն ծառայն իրեն կը մատուցանէր։

Դեսպանը և ճէնդրլմէնը շատ երկար խօսակցութենէ վերջ, մօտաւորապէս սա խմաստով Կարնոյ անգլիական հիւպատոսին հեռագրեցին շիֆրայով. «Ամեն միջոց ի գործ դիր Տրապիզոնի վոստան զարնել տալու. Զէքի փաշային հասցէին նամակ մը կայ, պիտի գտնուի և ձեզ բերեն. դուք ալ մասնաւոր խնամով պիտի ղրկէք Թէֆլիզ մեր հիւպատոսին որ նա ալ ղրկէ Լոնդոն»։

Թերևս այդ գիշերը առաջին և վերջին եղաւ դոկտր. Տիգրան փաշայ Փէշտիմալճեանի համար. դի սրտի զեղուն դոհունակութիւն մը կը վայելէր իւր ազգին օգտակար լինելու քաղցը պատրանքէն արբշիռ։ Աւաղ, իւր պատուական կեանքն ալ վրայ տուաւ ու չյաջողեց։

Ոչ նուազ չէր Սըր Ֆիլիպ Բըրրի ալ հրճուանքը այդ գիշեր, դի հայերուն և իւր սիրած մեծ դոկտորին ծառայութիւն մը կը մատուցանէր գրեթէ անփոխարինելի։

Բանիցս աւաղ, անհերևոյթ Զարք այլ կերպ տնօրինեցին. Զէքին ստացաւ երկրորդ հրամանագիր մը և ջարդեց Սասունը այդ օրէն շուրջ երկու ամիս վերջը։

*
* *

«Կորիճք առան զէնքերն իջան սարն ի վար...»։

Խօսքը խմբապետինն է.

—Եղբայրներ, մտնենք մեր թագստանոցները, թղթատարը պիտի սուրայ այս ճամբով. նշան տրուելուն պէս գոռալու են մեր հրաղէնները, ջանանք որ զուր չանցնեն մեր գնդակները. սպանելու ենք զապթիաները, թղթատարները և ձիանքը։ Զենէ շատերը՝ պիտի մնաք ձեր տեղերը իբր դէտ, և երբ նշան կը տրուի կու գաք կը միանանք կ'երթանք, և մի քանի ուրիշ կարևոր հրահանգներ տրուեց և ցրուեցան։

Մի ժամ վերջ թղթատարի խուժը երևաց. մեր կորիճներու գնդակները անվրէպ իրենց նպատակին ծառայած էին։ Խմբապետը մէկ երկու ընկերներով պայուսակները բացած կ'որոնէին Զէքի փաշայի հասցէին ղրկուած նամակ մը։

—Փնաք Աստուծոյ, գտանք ըսաւ Ապահ։

—Է՞հ ուրեմն երթանք, հրամայեց խմբապետը։

—Պատռենք միւս նամակները, և վերցնենք դրամական ծրարները, զի ինչպէս դիտցուած և լսուած բան է. թղթատարը կը զարնին լոկ կողոպուտի համար. և մենք այս պարագային այսպէս վարուելու ենք։

—Ո՛չ չըլլար ըսաւ խմբապետը, այդ բանը նէմմէրտութիւն է, մենք մեր նպատակին հասանք, այլևս ուրիշին ինչու ձեռնենք։

—Թերևս հեռի չէ այն օրը որ մենք դառնութեամբ պիտի զղջանք մեր այս մէրտութեանը վրայ. կ'ըսէր Ապահ անբերեկրութանալով լեռներու մէջ։

*
* *

Թիֆլիզի անգլիական հիւպատոսը ստացած էր Կարնոյ անգլիական հիւպատոսի միջոցաւ Զէքի փաշայի հասցէին ղրկուած նամակը և ղրկած Լոնտրա։

Լորտերու ժողովին մէջ բացուեցաւ հայերուն ջարդի հրամանագիրը և տեսան գաղան Սուլթանի ստորագրութիւնը. այդ պահուն մեծ ծերունին Կլատսթոն բարկութեամբ մը կը գոչէր «Մեծ Մարդասպան»...

Պահուեցաւ այդ հրամանագիր արքունի դիւանատան մէջ իբր յաւէտ խօսուն կոթող գաղան Սուլթան Համիդի վայրագութեան, և երբ Սասունի կոտորածէն վերջ Կլատսթոն ի դիտութիւն բովանդակ աշխարհի կարմիր Սուլթանի երեսին կը նետէր «Մեծ Մարդասպան» ստորոգելին, գաղան Սուլթանը կատաղութենէն ատամները կը կրճատցնէր և պատիւ կը պահանջէր, բայց ականջը քաշելով հասկցուցին թէ, Զէքի փաշային գրած հրամանագիրդ մեր դիւանատան մէջ դայդ կը հաստատէ։

Զար սուլթանը կասեցաւ ու դադրեց պատիւ պահանջելէ...

*
* *

Գեղանի թրքուհին պառկած ճոխ սենեակի մը արդ ու զարդի մը մէջ կը աքար ու կը հիւծէր թոքատապէ. դարմանող բժիշկն էր Ցիկրան փաշա Փէշտիմալճեան, կարող, փորձառու և դիտուն մարդը։ Հիւանդին կրած առօրին փոփոխութեանը համեմատ օրը մի քանի անգամ կ'այցելէր և ժամերով մնարին վերին կանգնած կը հսկէր իբր բարի հրեշտակ մը։

—Էհ, փառք Աստուծոյ, այլևս վտանգը անցած կ'երևի, ըսաւ հայ էսքիւլապը հիւանդի մօրը, Է անհամբեր էր Սիւրէյա փաշայի գալստեանը, որ աւետէր աղջկանը դէպի լաւ դարձը,

որնոր այնքան մեծ մտահոգութիւն կը պատճառէր տան բոլոր անդամներուն։

Այսօր փաշան իւր սովորական զուարթութիւնը կորսընցուցած կ'երևէր Ելտըզէն վերադարձին, և առանց աղջկանը այցելելու քաշուեցաւ իւր սենեակը։ Դոկտոր Փէշտիմալճեան որ արդէն անհամբեր էր, շտապեց աւետել փաշային հիւանդին բարելաւ վիճակը։

—Շատ լաւ, շնորհակալ եմ, Տիգրան, ձեր հոգածութենէն... ըսաւ փաշան հեղձամղձուկ յուզեալ եղանակաւ մը։

Դոկտոր Փէշտիմալճեան փաշային այս յուզեալ վիճակը վերագրեց պալատական ինչ ինչ էնթրիկներու, որոնց թերևս անմեղ զոհն է եղած. ուստի աւելի մտերմական շեշտով մը հարցնել սկսաւ.

—Տէր իմ, ի՞նչ ունիք, չեմ կարող արդի՞օք իմ ծառայութիւններովս ձեր հոգսերը փարատել։

—Ո՛չ, սիրելի դոկտոր, ո՛չ, այս ըսելով փաշան փակեց դրան նիպը, և հեծկլտալով արտասուել ըսկսաւ.

Դոկտորը ենթադրեց, թէ գուցէ փադիշահը դինքը պաշտօնէն վտարած լինի, և ըսաւ, տէր, չկայ հարկ այդ չափ յուզուելու և լալու. փառք Աստուծոյ, Ալլահը քեզ վերադարձուց սիրելի աղջիկդ. և անկէ աւելի ի՞նչ կայ թանկագին, ուրախանալու ենք փոխանակ տրտմելու։

—Կեցիր դոկտոր, կեցիր, այո՛ ուրախ եմ թէև որ աղջիկս ձեր ջանքերով փրկուեցաւ, բայց ի՞նչ արժէ այդ ուրախութիւնը, երբ վայելողը չկայ. երբ ես կատարեալ մարդ մը լինելէ զադրած եմ ու ամենահասարակ ողոմ գործիք մը եղած Համիդ ըսուած չար Սուլթանին ձեռքը։ Զի այսօր իրրև Սուլթան Համիդի անձնական բարուդարը, ներքին ուրախութիւնը չէ, որ զիս կը սնուցանէ, այլ ներքին վիշտն է որ զիս կը կրծէ. ինչ արժէ անդին հիւանդ պառկած մէկ աղջիկ, որուն չորս կողմը շրջապատուած են դեղ, դարման, բժիշկ, ծնողական խնամք ու գուրգուրանք որ չունենի, այնպէ՞ս չէ. մինչդեռ այսօր այս ջարդուելիք մատները սեպագրեցին բիւրաւոր անմեղներու հրով ու թրով ջարդելու և կոտորելու հրամանագիրը զոր ուզած էր Զէքի փաշան. և Սուլթանն ալ ստորագրելով դրկուեցաւ յիշեալին. վախ. անմեղնե՞ր, վախ. ըսաւ ու սկսաւ նորէն հեծկլտալ։

Դոկտոր. Փէշտիմալճեանը ի լուր այս բոթին բոլորովին այլայլած ակամայից կեղծուպատիր բառեր կ'որոնէր իւր փոթորկեալ դանգին մէջ. բայց հաղիւ հաղ կրցաւ ըսել։

—Փաշա էֆէնտիս, մի տանջէք զձեզ այդ չափ. մեր թա-

գաւորը բարի է. գուցէ բարկութեանը մէկ պահուն ձեզ այդպէս գրել տուաւ. բայց վաղը հեռագրաւ զայն ետ կ'առնու։

—Սիրելի Տիգրանս, անցան մեր երանելի օրերը, Համիդ մարդ մը չէ, այլ սոսկալի վամպիր մը. իւր որոշումն ու վճիռն անդառնալի են. և իւր ատելութիւնը հայոց նկատմամբ խիստ խորը...

Ուշ ատեն Տիգրան փաշայ խիստ յուզեալ և բոլորովին զունաթափ կը հեռանար Սիւրէյա փաշայի ապարանքէն։

*
* *

Տրապիզոնէն ստացուած հեռագիրը մեծ իրարանցում պատճառած էին Ելտըզի պալատան մէջ, որոնք հետևեալները կը հաղորդէին յաջորդաբար։

«Քոսի լեռան մօտերը զարնուած է երեք օր առաջ Կարին մեկնող թղթատարը»։

«Թղթատարական բոլոր մարմինը և ձիերը սպանուած են. պայուսակները պատռուած, բայց նամակատան վարչութեան ուղղած բոլոր դրամական ծրարներն և յարակից պաշտօնաթղթերն, ինչպէս նաև վաճառականաց նամակներն ոևէ բռնաբարում կրած չեն, կ'երևի աւազակները ժամանակ չգտնելով փախած են»։

Իսկ Կարինէն Զէքի փաշան իրեն եղած հարցման մը կը պատասխանէր այսպէս։

«Ձեր ակնարկած հրամանագիրը չստացայ, կ'երևի աւազակները միայն այդ թուղթը ձեռք անցնելու համար զարկած են թղթատարական մարմինը, որով հասկանալի է թէ, ազգնը հայ յեղափոխականներ եղած լինելու են և ոչ թէ աւազակներ, ձեզ կը մնայ ուրեմն մնացեալը անօրինել»։

Զէքի փաշայի հեռագիրը գրգռած և ցունց հանած էր Սուլթանի բոլոր ջիղերը, այնպէս որ փատիշահը կատաղած միսը կուտէր ու քիչ կը մնար, որ բարկութենէն ճայթէր։

«Դուն ալ Սիւրէյա, դիս կը լրտեսես եղեր, ու հայերը կը սիրես. և իմ վճիռս բեկանել կը ջանաս. ուստի դուն ալ գնա այդ կեավուրներուն քով ըսաւ և դիւային ժպիտով մը ակռաները կրճտել սկսաւ»։

Առաւօտեան ժամը 10 կար, անակնկալ պալատական կառք մը եկաւ կանգնեցաւ Սիւրէյա փաշայի ապարանքին առջև և մէջէն հանեցին փաշան կիսամեռ՝ ամենաթունդ կերպով թունաւորուած էր։

*
* *

Մի քանի օրէ իվեր փաշայի ապարանքին մէջ նախկին յոյզերը չկային, զի իրենց սիրելի աղջիկը վտանգը անցուցած էր. և ամենքն ալ սկսած էին ալ աւելի յարգանք մը տածել յանձին դոկտորին, որ իւր յաճախակի այցելութեամբն ալ գրեթէ իրենց տան մի սիրելի անդամն կը նկատէին. ինքն ալ գրեթէ նոյնչափ ազնիւ կը գտնուէր անոնց հանդէպ։

Երեկոյին երբ փաշային որդին ու փեսան իրենց ապարանքին սրահը մտան, տեսնելով դոկտորը վրայի շորերը մէկդի շպրտած, լոկ շապիկով մը թեւերն ալ սոթտած, սաստիկ յուզեալ դրութեան մը տակ դեղեր կը պատրաստէ «հիւանդնուս վիճակը ծանրացած է» ըսելով, աղաչաւոր եղանակաւ մը դոկտորին կը հարցնէին. դոկտորը բարկութեամբ մը կը մարդարէանար.

—Ալ այսուհետև կարգը ինձ եկաւ թունաւորուելու։ Ձեռքովը փաշային սենեակը ցոյց կուտար։

Սիւրէյա փաշան վայրկեան առ վայրկեան իւր օրհասին կը մօտենար, թէև դոկտորը բոլոր ճիգերը կը թափէր զայն ետ խլելու մահուան ճիրաններէն. բայց աւաղ ուշ մնացած էր, զի պալատան մէջ թունաւորուելէ վերջ բաւական ատեն վար դրած էին մինչև դեղի ներդործումն։

Փաշային որդին և փեսան առանց երբէք կարենալ խորհելու թէ փադիշահը թունաւորած կրնայ լինել իրանց հայրը, այլ ենթադրելով թէ ուրիշներն թունաւորած կը լինեն առ նախանձու, փաշան իւր օրհասի մէջ թողով շտապեցին Ելոզ «հայրախնամ» փադիշահին իմացնել թէ անձնական քարտուղարդ թունաւորած են...

*
* *

Երէկի կազդուրեալ կինը, այսօր արշալոյսի դէմ գրեթէ դիակնացած իւր անկողնոյ մէջ կը զառանցէր. զի գիշերն ի բուն մօրը հետ այնքան լացեր էին ոչ միայն փաշային մահուանը վրայ, այլ նաև մայրը իւր որդւոյն, աղջիկը իւր երկանը չվերադառնալնուն համար։

—Փաշայ, հայրիկս գնաց երկինք, ես ալ պիտի ընկերանամ իրեն, սիրելի եղբայրս և սիրելի ամուսինս—մ՝ նչ, դուք ալ երկինք գնացիք առանց մեզ մնաք բարով ըսելու...

Դեռ այս բառերը ամբողջովին չարտասանած դարձեալ

Իլդզի պալատական կառքը երկու ոշնչացեալ դիակներ ներս կը նետէր Սիւրէյա փաշայի աղարանքէն։

Փաշային տղան ու փեսան ալ թունդ կերպով թունաւորուած և տուն զրկուած էին գորովագութ փատիշահ Համիդէն։

Մէկ օրուան մէջ թաղեցին խիստ անշուք հանդէսով մը Սիւրէյա փաշան, որդին և փեսան, իսկ յաջորդ օրն ալ՝ խղճ աղջիկը. կնոջը համար կ'ըսէին թէ խենթացած էր։

*
* *

Անդրանիկ փաշա Կրճիկեան անընդհատ կը դիտէր հիւանդին դէմքին վայրկեան առ վայրկեան կրած փոփոխութիւնները և գրեթէ հինգ վայրկեանը մի անգամ մի նոր դեղթափ կու տար, բայց ամեն մի անգամին աւելի սարսռազդեցիկ ջղաձգութիւն մը կ'ունենար ու կը գունատիսկէր։

—Ի՞նչ հարցուցին ձեզ պալատան մէջ։

Հիւանդը գլուխը շարժելով մը սա չափ միայն ըսաւ.

«Դուն էիր, այնպէս չէ՞ Սիւրէյային դարմանողը», և ալ հկարողացաւ շարունակել, խոխոջ մը ելաւ և վեց ժամ վերջը կնքեց իւր մահկանացուն։

Եւ յաջորդ օրը Կ. Պոլսոյ հայ թերթերը կը ծանուցանէին թէ «Տիգրան փաշա Փեշտմալճեան կաթուածահար եղած է»։ Եւ մի օր վերջն ալ դարձեալ «Անդրանիկ փաշա Կրճիկեան կաթուածահար եղած է»։ Դոկտոր Փեշտիմալճեան դարմանած լինելուն համար այս մեծ բժիշկին ալ Ելդզի պալատան մէջ կանչած թունաւորած էին, և մեր այս երկու մեծ դէմքերն ալ անհետացան իբր առաջին մարտիրոսներ Սասունի, առանց երբէք մեր մէջն արձագանք տուած լինելու...

Փանրատ

ԱՆՑԵԱԼԻ ՀԱՐՑԵՐԻՑ

Շիրակի արձանագրութիւնները

Մենք ունենք երկու տասնեակ և աւել պատմագիրներ, ունենք Զամչեանի երեք ստուար հատորները, բայց և այնպէս՝ այսօր զգում ենք որ չունենք հայոց պատմութիւն։

Ինչից է այս ահագին պակասութիւնը։ Ինչու չէ գրւում մի այնպիսի հայոց պատմութիւն, որ գոհացնէր մեզ։

Շատերը հեշտ են պատասխանում այս հարցերին։—Զամչեանի պէս մարդիկ չունենք, ասում են նրանք։ Բայց կարող ենք ունենալ Զամչեանի պէս աշխատողներ։

Պատմական գիտութիւնը հսկայական առաջադիմութիւն է արել Զամչեանի գրած պատմութիւնից յետոյ։ Զամչեանի ժամանակների կուռքերը վաղուց խորտակուել են. XVIII դարում կարելի էր լինել վանական մարդ վանական հասկացողութիւններով և գրել պատմութիւն։ XIX դարը դուրս մղեց վանականութիւնը գիտութեան ասպարէզից, ահագին յեղափոխութեան ենթարկեց հասկացողութիւններն ու աշխարհայեացքները ընդարձակ ուսումնասիրութիւնների, անխնայ վերլուծումների ու քննադատութեան, զարմանալի արդիւնքներ տուած հնագիտական խուզարկութիւնների միջոցով։

Զամչեանի պատմութիւնը մնաց այդ լայն և լուսաւոր հոսանքի այն կողմում, հնութեան և միամտութեան, անտեղեակութեան կողմում։ Նրա հետ նոյն տեղում մնացին և մեր Խորենացիները, Ասողիկները, Չամչեանները։ Ժամանակը իր լուսաւոր ոգով, իր արագ ու պարզ ձգտումներով հեռացրեց, բաժանեց նրանց բոլորին մեղանից։ Այդ բոլոր գրքերը մնացին լոկ իբրև հուշ նիւթեր, որոնց պէտք էր մշակել, որոնց պէտք էր տալ մի տեսակ օժանդակ աղբիւրների նշանակութիւն։

Եւ մենք մնացինք առանց պատմութեան՝ այս բառի իսկական, ժամանակակից հասկացողութեամբ։ Մեր պատմութիւնը նոր պէտք էր գրել։ Բայց ի՞նչպէս գրել։ Պատմութիւնը

վէպ չէ, որ կարելի լինի հնարել երևակայութեան օգնութեամբ։ Իրրև գիտութիւն, նա պիտի հիմնուած լինի ղրական փաստերի, լաւ կշռուած, զտուած ու վերստուգուած նիւթերի վրայ։ Եթէ մի ազգի մէջ կայ այդպիսի աշխատանք, այդպիսի ուսումնասիրութիւնների մի քուրա, այդ ազգը կ'ունենայ և իր պատմութիւնը։ Եւ մենք տեսնում ենք ուրիշ ազգերի մէջ ուսումնասիրութիւնների լայնածաւալ կազմակերպութիւն։ Հարիւրաւորները աշխատում են մասնաւոր, մանր-մունը հարցերի վրայ, իսկ նրանց այդ գործից օգտւում են մի կամ մի քանի անհատներ՝ պատմութիւն գրելու համար։

Եւ այսպէս՝ կարող ենք Զամչեաններ ունենալ։ XVIII դարի մի Զամչեան, եթէ դուրս դար մեր օրերում, չէր գոհացնի ոչ ոքին։ Իսկ այսօրուայ պահանջներին համապատասխանող Զամչեան չէ կարող երևան գալ, մինչև որ հող չպատրաստուի նրա համար։ Նախ նիւթեր, ուսումնասիրութիւններ, ապա միայն պատմագրութիւն։

Այս անհրաժեշտութիւնը մեզանում վաղուց է հասկացուել։ Պատմական ուսումնասիրութիւններ տասնեակ տարիներից ի վեր շատ են կատարուել և այժմ էլ կատարւում են։ Ունենք մի պատկառելի գրականութիւն, ձեռք ենք բերել շատ պատմական ճշմարտութիւններ, որ առաջ չունէինք։

Սակայն չէ կարելի չարձանագրել, որ այդ ուսումնասիրութիւնները այնքան էլ բաղմակողմանի և ընդարձակ չեն։ Գլխաւորապէս մատենագրական ուսումնասիրութիւններ են գրանք, այն էլ ամենամեծ մասով պատում են մեր պատմութեան յայտնի ժամանակամիջոցների շուրջը։ Ուսումնասիրողների համար հետաքրքրութիւն ներկայացնում է կարծէք միայն մեր հին պատմութիւնը, այն ինչ ամփոփուած է Խորենացու պատմութեան մէջ։ Մնացած շրջանները կարծէք մոռացուած են։ Եւ սակայն չէ՞ որ մենք պատմական կեանք ունեցել ենք և միջին ու նոր դարերում։

Որքան էլ որ ամենքիս համար յարգելի լինեն մատենագրական-բանասիրական ուսումնասիրութիւնները, բայց յայտնի է, որ պատմութեան աղբիւրները միայն գրքերը չեն։ Պատմական յիշատակներ թաղուած են և հողի տակ, պէտք է դուրս հանել նրանց այնտեղից։ Պեղումների գործը մեզանում նոր է սկսուած և դեռ խանձարուրքի մէջ է գտնւում։ Որքան շատ զարդանայ նա, այնքան առատ լոյս կը սփռուի մեր պատմական անցեալի վրայ։

Հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել և մեզ շրջապատող, մեզ վրայ քաղաքական և կուլտուրական ազդեցութիւն

ունեցած ազգերի պատմութեան և գրականութեան վրայ։ Այս էլ համարեա բոլորովին մոռացուած մի կարևոր ճիւղ է, մինչև այժմ այս ուղղութեամբ չափազանց քիչ, ուղղակի աննշան բան է արուած մեզանում։

Բայց դրանից աւելի մոռացուած է մի նոյնպէս շատ կարևոր բան—մեր հին շինութիւնները։ Դրանք կենդանի վիճակներ են, ընութիւնից և բնութիւններից խնայուած մեզ են հասել՝ մեր նախահայրերի, մեր հին մարդու գործերն ու հոգսերը շօշափելի կերպով պատկերացնելու համար։ Բերդ, պարսպ, դահլիճ, եկեղեցի, վանք, բաղնիս, թոնրատուն—սրանք կապեր են մեր երևակայածի և անցեալի իրականութեան մէջ։ Բայց ամենը աւերակ են այսօր, սրանք հալւում մաշւում են, անհետանում և մենք ոչինչ չենք անում նրանց պահպանութեան համար։ Թանկագին է մանաւանդ այն հանգամանքը, որ այդ շինութիւններից շատերը խօսուն են, ունեն արձանագրութիւններ, որոնց մէջ թաղնուած են մեր անցեալ կեանքը պատկերացնող շատ պերճախօս փաստեր։ Դրանք պիտի մատակարարեն ուսումնասիրութեան առատ նիւթեր։ Բայց օգտուել ենք մինչև այժմ այդ նիւթերից։

Օգտուելու համար նախ պէտք էր ճիշտ, անսխալ արտագրութիւններ ունենալ, ուրիշ խօսքով՝ արձանագրութիւնների դիտնական մի հրատարակութիւն, պատշաճաւոր ուսումնասիրութիւններով և լուսաբանութիւններով։ Այդպիսի հրատարակութիւն չկայ։ Պատահական այցելուներ, սիրող ճամբորդներ, յաճախ առանց որևէ պատրաստութեան, շտապով կարդացել են արձանագրութիւնները ինչպէս կարողացել են, հրատարակել են դարձեալ ինչպէս կարողացել են։ Ես այստեղ կարող էի մի շարք ծիծաղելի օրինակներ բերել թէ ինչպիսի կուրեօղներ են առաջացրել վայրիվերոյ արտագրուած արձանագրութիւնները, ինչ սխալների մէջ են դցել ուսումնասիրել կամեցողներին։ Չը կայ վստահութիւն թէ որքան ճիշտ են այդ հրատարակութիւնները. ինչպէս, ուրեմն, կարող են այդ պատմական վաւերագրերը լուրջ ուսումնասիրութեան առարկայ դառնալ։ Այս պակասութիւնն էլ հասկացուել է մեզանում և մի երեք տարի առաջ պրոֆէսոր Մառի ինիցիատիվով Թիֆլիզում կազմուեց մի յանձնաժողով՝ հայ և վրացական արձանագրութիւնները ժողովելու և հետզհետէ հրատարակելու։ Բարի ձգտումներ մեզ տուած են, բայց գործ կատարել մենք չենք կարողանում։ Ժողովներ կայացան, խօսք ու զրոյց շատ եղաւ, բայց ձեռնարկութիւնը դեռ չծնուած էլ մահացաւ։ Իսկ այնտեղ, երկրի զանազան անկիւններում, հայրենի աւերակները օրէցօր ոչնչանում

են, ոչնչացնելով իրանց հետ բազմաթիւ պերճախօս վաւերագրեր։

Ահա ինչքան քիչ բան է արուած մեզանում մեր պատմութիւնը նոր գիտական մեթոդով լուսաբանելու, մշակելու համար։ Իսկ մենք, անօգնական ու անփոյթ, սպասում ենք թէ երբ կը ծնուի մի նոր Զամչեան։ Զգում ենք մեծ անհրաժեշտութիւնը, բայց ծոյլ ու անկարող ենք։ Եթէ հասկանայինք որ նոր Զամչեանին պէտք է պատրաստել, կը բազմապատկէինք մեր եռանդը, միջոցներ չէինք խնայի նիւթեր և ուսումնասիրութիւններ ամբարելու համար...

—

Իմ ներկայ ուսումնասիրութեան նիւթ եմ դարձնում արձանագրութիւնները և յատկապէս Շիրակի արձանագրութիւնները։

Շիրակը իր բազմաթիւ հնութիւններով ուղղակի մի գանձարան է մեր միջնադարեան պատմութեան համար։ Նրա բերդերը, նրա շինութիւնները ինչեր ունեն ասելու հնախոյզին, հին կեանք ուսումնասիրողին։ Թէ ինչ գանձեր կան թողուած Շիրակի հողի մէջ, —այդ ցոյց կը տայ ապագան, երբ այժմ դեռ միայն սկզբնաւորութեան շրջանում գտնուող պեղումները կը զարգանան, լայն չափեր կը ստանան։ Բայց այն էլ, ինչ մնացել է հողի վրայ, ինչ այժմ մատչելի է ուսումնասիրողին, դարձեալ անսպառ նիւթեր է պարունակում իր մէջ։ Այդպիսի մի հարուստ ու հետաքրքրական անկիւն չկայ ամբողջ Հայաստանում։ Արձանագրութիւնների կողմից էլ նա առաջին տեղն է առնում։

Զարմանալի հանգամանք։ Այժմեան Ասիական Թուրքիան պարունակում է իր մէջ Հին Հայաստանի մի նշանաւոր, հռչակուած մասը, բայց այնտեղ մնացած հին շինութիւնների վրայ համարեա չկան արձանագրութիւններ։ Գոնէ Հ. Ներսէս Սարգսեանի պէս մի բարեխիղճ, հմուտ ուսումնասիրող իր «Տեղագրութիւն ի Փոքր և Մեծ Հայս» աշխատութեան մէջ շատ քիչ արձանագրութիւններ է դրել, թէև հետազօտել է Վասպուրականի, Տարօնի նման պատմական երկիրներ։ Արձանագրութիւններ չեն բերում և ուրիշ հետազօտողները։ Հետևաբար, նրանք չկան։ Կիլիկեան, ուր անկախութեան դարաւոր շրջան է ունեցել հայը, նոյնպէս չափազանց աղքատ է արձանագրութիւնների կողմից։

Արևելեան Հայաստանը—Այրարատ, Սիւնիք, Արցախ, Գուգարք նահանգները—ահա ուր է արձանագրութիւնների ամբողջ հարստութիւնը։ Եւ այդ հարստութեան թագն ու պսակը

Շիրակն է, ոչ միայն արձանագրութիւնների քանակութեան, այլ մանաւանդ բովանդակութեան կողմից։

Իւրաքանչիւր երևոյթ մարդկային կեանքում նախ և առաջ արտայայտութիւն է միջավայրի ազդեցութեան։ Արձանագրութիւնները կեանքի վաւերագրեր են։ Իսկ Շիրակի պատմութեան մէջ մենք ունենք երկու շատ նշանաւոր շրջան (Բագրատունիների ժամանակ, IX—XI դար և Զաքարեանների ժամանակ, XIII—XIV դար), երբ կեանքը այդ զարմանալի լեռնադաշտում զարգացաւ մեծ ու լայն չափերով։ Անին այդ պատմութեան մեծագոյն հրաշալիքն է։ Նա ապացոյց է որ քաղաքացիական կեանքը հասել էր Շիրակում բարգաւաճման բարձր աստիճանների։ Երբ կեանքը այդքան զարգանում է, նրա պահանջներն էլ բարդանում են, կուլտուրական և քաղաքակրթական ազդակները ստեղծում են մարդկանց մէջ բազմատեսակ յարաբերութիւններ։

Ահա այդ տեսակ կեանքի ուժեղ արձագանքները մնացել են Շիրակի արձանագրութիւնների մէջ։ Խորասուզուելով նրանց ուսումնասիրութեան մէջ, մենք տեսնում ենք թէ անցած գնացածը ինչ իրականութիւն ունէր առօրեայ կեանքի մէջ։ Այդտեղ քաղաքական պատմութիւն չենք գտնում, բայց այդտեղ ժողովուրդն է իր իրաւաբանական հասկացողութիւններով, ժողովուրդը իրրև կալուածատէր, իրրև աշխատող, իրրև հարկատու հպատակ։ Իսկ այսպիսի տեղեկութիւններ մեր հին գրականութիւնը չէ թողել։

Արձանագրութիւնները կարելի է երկու գլխաւոր տեսակների բաժանել. 1) մասնաւոր դաշնակցութիւններ բարեգործ անձանց և եկեղեցու մէջ և 2) հասարակական ակտեր, որոնց մէջ զանազան ժամանակ յիշատակւում է թէ ինչ հարկերից է ազատուել ժողովուրդը։ Առաջին տեսակի արձանագրութիւնները մեզ շատ նիւթեր են տալիս կալուածական գրութեան մի քանի հանգամանքները ըմբռնելու համար. ժառանգական և անձամբ ձեռք բերած սեփականութիւն, առ ու ծախս, կտակ, կանանց ստացած բաժինք, շինական հողատիրութիւն, ջրաշխութիւն, առևտրական շինութիւններ, մի քանի անձանց սեփականութիւնը մի անշարժ կալուածքի վրայ, հասարակական շինութիւններ և այլն։ Այդտեղ էլ մենք գտնում ենք բազմաթիւ տեղագրական ցուցմունքներ, կարողանում ենք իմանալ թէ որտեղ ինչ տեսակ գիւղական տնտեսութիւն էր զարգացած, վերջապէս իմանում ենք թէ ինչ փոդոցներ է ունեցել Անին, ինչ

տեսակ արհեստներ են ծաղկել մայրաքաղաքի մէջ [1]։ Իսկ երկրորդ տեսակի արձանագրութիւնները դնում են մեր առջև հարկաւորութեան մի ամբողջ սիստեմ. հարկերի մի անհագին ցուցակ, որոնցից շատերը այժմ արդէն անհասկանալի են, բայց և շատերը պարզ կարելի է հասկանալ բառերի կազմութիւնից։

Վերջապէս պէտք է յիշատակել և այն, որ արձանագրութիւնների մէջ կուտակուած է և հարուստ բառամթերք։ Շատ ու շատ են այնպիսի բառեր, որոնք գործածական են եղել ժամանակին ժողովրդի մէջ, բայց չեն մտել մեր գրականութեան մէջ, քաղաքացիութիւն չեն ստացել այնտեղ։ Այս դանձն էլ սպասում է լեզուագէտ ուսումնասիրողի։

Այս ամառ ես առիթ ունեցայ ուսումնասիրելու Շիրակի արձանագրութիւնները և դուրս բերի մի քանի եզրակացութիւններ, որոնք, կարծում եմ, անհետաքրքրական չպիտի լինեն մեզ համար։ Այդ եզրակացութիւնների հետ ես հետզհետէ կը ծանօթացնեմ «Մուրճ»-ի ընթերցողներին։

I

Ճորտութիւն

Եղե՞լ է Հայաստանում ճորտատիրական դրութիւն։

Մեր հին գրականութեան մէջ կայ մի շատ նշանաւոր, իր տեսակով եզակի մի գործ—միակ իրաւաբանական դրուածքը, որ ունեցել ենք մեր ամբողջ անցեալում։ Դա Մխիթար Գօշի (XII դար) «Դատաստանագիրքն» է։ Մենք ունենք այդ գրքի մի շատ գեղեցիկ հրատարակութիւնը, որ կատարել է հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեանցը, Էջմիածնի միաբանութեան գիտնական անդամներից մէկը [2]։

Իր «Դատաստանագրքի» երկրորդ մասում Մխիթարը երկար ու մանրամասն խօսում է թագաւորների և իշխանների մասին՝ թէ ինչ իրաւունքներ ունեն նրանք, ինչպէս պիտի կառավարեն։ Ապա անցնում է այն հարկերին, որ թագաւորները և իշխանները պիտի առնեն իրանց հպատակներից։ Երկրագործութիւնից և անասնապահութիւնից ստացուող տուրքերի հետ Մխիթարը ցոյց է տալիս և այն պարտաւորութիւնները, որ

---

1) Հ. Ալիշանը իր «Շիրակի» մէջ գեղեցիկ կերպով օգտուել է արձանագրութիւններից՝ Անիի ներսը նկարագրելու համար։ Առաջին անգամ նա է ուսումնասիրութեան ենթարկել այդ հում նիւթը, դրել է և հարկերի ցուցակը, հանած նոյն արձանագրութիւններից։

2) Տպուած է Էջմիածնում, 1880 թ.։

ունեն գիւղացիները դէպի իրանց տէրերը։ Այստեղ զգացւում է ճորտատիրական դրութիւնը։ Այդ զգացել է և Վահան վարդապետ Բաստամեանը, բայց փոխանակ ուշադրութիւն դարձնելու այդ կարևոր հանգամանքի վրայ, կանխակալութեան, նախապաշարմունքի զոհ է դարձել։ Ահա ինչ է գրում գիտնականը իր ծանօթութեան մէջ։

«Բոլոր վերոյիշեալ հարկերը և տուրքերը, որ որոշում է մեր օրէնսդիրը, յատուկ են ստրուկներին, այսինքն՝ ճորտերին Բայց յայտնի է որ Հայաստանում երբէք չկային ճորտեր ոչ ընիկներից և ոչ պատերազմում գերի բռնուածներից այն դրութեամբ, որպիսի դրութեամբ կային ճորտեր հեթանոսութեան ժամանակ գրեթէ բոլոր երկրներում, իսկ քրիստոնէութեան ժամանակ շատ երկրներում։ Ռուսաստանի մէջ ճորտութիւնը վերջացաւ միայն 1860 թուին իսկ Հայաստանին դրացի Վրաստանում—միայն 1865 թուին» 1)։

Նախ և առաջ մեզ զարմացնում է այն կարուկ ձևը, որով գիտնական վարդապետը ժխտում է ճորտութիւնը Հայաստանում։ Երբէք, ասում է նա, զոյութիւն չէ ունեցել ճորտութիւնը։ Ինչից գիտենք։ Արդեօք այնքան լաւ յայտնի են հին հայկական կեանքի բոլոր ներքին պայմանները։ Բաստամեանցը նոյնիսկ գիտէ, որ ճորտատիրական դրութեան բացակայութիւնը վէճ չվերցնող մի ճշմարտութիւն է, որ նա յայտնի է ամենքին։ Այդպիսի համոզմունք, ճիշտ է, այսօր էլ ընդհանուր է մեր մէջ, բայց հարցն այն է թէ որքան ճշմարտութիւն կայ այդ համոզմունքի մէջ։

Վերոյիշեալ ծանօթութիւնը կարդացողին թւում է և այն, որ Բաստամեանցը գուցէ խառնել է երկու հասկացողութիւն. ստրկութեան նախնական ձևը, (այսինքն այն, երբ մարդը, գլխաւորապէս պատերազմում գերի ընկածը, վաճառւում էր իբրև անասուն) և այդ ձևին հետևած զարգացումը, այսինքն հողին կպած, հողի վրայ ամրացրած գիւղացին։ Թէև այս դէպքում էլ Բաստամեանցը իրաւունք չունէր ասելու թէ ստրկութիւն զոյութիւն չունէր Հայաստանում, քանի որ մենք հաստատ գիտենք ունէր զոյութիւն թէ ոչ,—բայց նկատի առնելով որ նա ցոյց է տալիս թէ երբ վերացաւ ճորտութիւնը Ռուսաստանում և Վրաստանում, պիտի գանք այն եզրակացութեան, որ հանդուցեալ գիտնականը, եթէ խառնած էլ լինի ճորտութեան երկու հասկացողութիւնները, այնուամենայնիւ մերժում է և հողային ճորտութիւնը Հայաստանում։

---

1) «Դատաստանագիրք», եր, 316։

Մի բոպէ դէն դնենք Մխիթար Գոշի պէս հեղինակութիւնը, որ անշուշտ մտցրել է իր դատաստանագրքի մէջ իր ժամանակ գոյութիւն ունեցող սովորութիւններն ու կարգերը։ Եթէ չլինէր էլ այդ դրաւոր աղբիւրը, մենք պիտի հարց տայինք. ինչո՞ւ չպիտի գոյութիւն ունենար Հայաստանում ճորտութիւնը բանի որ նա կար Բիւզանդիայում։ Չէ՞ որ Հայաստանի մի մասը բիւզանդական իշխանութեան տակ էր գտնւում, չէ՞ որ Յուստինիանոսը Հայաստանի այդ մասը կարգաւորելու, բարբարոս երկիրներին յատուկ դրութիւնից հանելու համար բաժանեց վարչական մասերի, մտցրեց նրանց մէջ իր օրէնքները, որոնցից յականէ յանուանէ յայտնի է այն յատուկ օրէնքը, որով վերացւում էր Հայաստանում գոյութիւն ունեցող մի շատ հին սովորութիւն. դա այն էր, որ կինը իրաւունք չունէր կայք ժառանգելու։ Նոյն այդ Յուստինիանոսն էր, որ օրէնքներ հրատարակեց ճորտութեան մասին։ Ասել թէ ճորտատիրական իրաւունքից ազատ մնաց Հայաստանը—անկարելի է, քանի որ մենք գիտենք որ բիւզանդացիները ճորտութիւն մտցրին Հայաստանի հարաւն Սիրիայում, ուր նա մնաց երկար և շարունակւում էր նոյնիսկ մահմեդական տիրապետութեան ժամանակ։ Ինչի՞ վրայ հիմնուելով կարող ենք ասել թէ Հայաստանը բացառութիւն կազմեց, երբ Վրաստանը բացառութիւն կազմել չկարողացաւ և նոյնպէս ընդունեց ճորտատիրական դրութիւնը։

Բաստամեանցը, մերժելով ճորտութիւնը, կարծում է թէ Հայաստանում հողատիրական մի բոլորովին այլ դրութիւն կար։ Եւ ասում է.

«Բայց որովհետև Հայաստանում գրեթէ ամենայն տեղ հողը պատկանում էր նախարարներին, իշխաններին կամ մասնաւոր կալուածատէրերին, գիւղացի ժողովուրդը նստելով նոցա հողերի վրայ՝ պարտաւոր էին զանազան ծառայութիւններ մատուցանել նոցա և հարկեր տալ, զօր. երկրի բերքերից տալ վեցից մէկը, կոր ու բեկար հանել և այլն»։

Բայց այս բոլոր նշաններով դեռ չէ կարելի հաստատել ճորտութեան բացակայութիւնը։ Ճորտութեան ամենագլխաւոր էական հանգամանքն այն է թէ գիւղացին կապուած է հողի հետ, ուրիշ խօսքերով՝ կարո՞ղ է իր ազատ կամքով տեղափոխուել գնալ ուր ուզում է։ Մխիթար Գոշի օրէնքների մէջ կայ մէկը, որ պատասխանում է այս հարցին։ Նրա վրայ ուշադրութիւն չէ դարձրել Բաստամեանցը։ Ահա ինչ է ասում այդ օրէնքը [1]։

Ազատ յԱրարչէն եղաւ մարդկայինս բնութիւն, այլ ծա-

---

1) Եր. 320—«Յաղագս դատաստանաց շինականաց»։

ապել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ։ Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան—զի թողեալ զտէրունական աղատ է ուր և կամեսցի կալ։ Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանցն և բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն աղատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ։

Ի՞նչ ենք հասկանում այս յօդուածից։ Եթէ տէրը թողնում է, գիւղացին կարող է գնալ ուր որ ուզում է։ Իսկ թէ տէրը չէ թոյլ տալիս, հարկադրում է գնացածին վերադառնալ։ Հօր մահից յետոյ աղատ են միայն այն որդիները, որոնք ուրիշ տեղ են ծնուել։

Ահա իսկական ճորտութիւն։ Գիւղացին կապուած է հողին, աղատ կամքով չէ կարող հեռանալ, կալուածատէրի իրաւունքն է բռնութեամբ դնել նրան իր նախկին հողի վրայ։ Գիւղացու որդիներն էլ ճորտեր են։

XII դարում, ուրեմն, կար ճորտութիւն։ Կարող են ասել թէ գուցէ Մխիթարը այդ օրէնքը գրել է այն հայերի համար, որոնք ապրում էին Վրաստանի սահմաններում։ Ահա այստեղ Շիրակի արձանագրութիւնները գալիս են ապացուցանելու, որ այդ առարկութիւնը անհիմն է։ Ճորտութիւնը գոյութիւն ունէր Մխիթար Գոշից էլ առաջ, Բագրատունեաց թագաւորութեան ժամանակ անգամ։

*
* *

Մրենի եկեղեցու վրայ կայ այսպիսի մի արձանագրութիւն Բրիստոսի 991 թուականից։

«Ես Դաւիթ Վարդա որդի էտու զիմ այգին զայն որ ի գետեզրն իմ ձեռաց արկել ի սուրբ Կաթուղիկէ ի ձեռն Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Սահակայ և պարտիս եմ ընդեցեալ մինչ ի միւս անգամ գալուստն զբարեկենդանին ուրբաթ օրն պատարագն յամենայն եկեղեցիս յիմ անուն մատուցանե և որ ոք ստե կամ յապիշտակել, իմ մեղացս և իմ ազգի մեղաց պարտական եղիցի առաջի Աստուծոյ և յԱստուծոյ դատապարտ եղիցի և մասն և բաժին ընդ խաչահանս կրեցէ, իսկ կատարիչ գլոյս աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց»։

Ըստ երևոյթին մի ազատ մարդու, ազատ սեփականատիրոջ կարգադրութիւն։ Բայց ահա ինչ արձանագրութիւն է հետևում դրան.

«Եւ ես Սոփի դուստր մեծին Աշոտոյ Շահնշահի հայոց և

վրայ թագուհի տվեալ եմ և հաստատեալ զԴաւթի զայգին ի սուրբ կաթուղիկէ և ի Տէր Սահակ և ի նորին աթոռակալս, զոր ինքն անդարձ էր արարեալ, վասն Դաւթի հոգոյն և վասըն իմ և վասն Դագկայ Շահանշահի արևշատութեան։ Եւ որ ոք յապըշտակել ջանայ, յԱստուծոյ բանէն... եալ եղիցին, իսկ հրամանակատարքն աւրհնեալ եղիցին յԱստուծոյ»։

Ի՞նչ են ասում մեզ այս երկու արձանագրութիւնները։ Վարդայ որդի Դաւիթը իր ձեռքով այգի է տնկել գետի ափին և նուիրում է նրան Մրենի եկեղեցուն իր հոգու փրկութեան համար։ Բայց նա Սոփի թագուհու (Դագիկ Ի-ի դուստրը) ճորտն է, առանց նրա համաձայնութեան չէ կարող կալուածքի վերաբերմամբ կարգադրութիւն անել, չէ կարող ոչ միայն ծախել, այլև կտակով (անդարձ) նուիրել մէկին [1]։ Եւ ահա նրա տէրը, Սոփի թագուհին գրում է. «Տուեալ եմ և հաստատեալ»։ Տալիս է նա իր ճորտի տնկած այգին և հաստատում է նրա անդարձը (կտակը)։ Այդ բարեհաճութիւնը կալուածատէր տիկինը ձրի չէ անում։ Դաւիթը իր հոգու համար էր նուէր տուել, Սոփի թագուհին ասում է՝ թող նուէրը լինի Դաւթի հոգու համար, բայց լինի նաև իմ և իմ հօր արևշատութեան, երկարակեցութեան համար [2]։

Տարաբաղտաբար, Շիրակի թագաւորութեան ժամանակից այս մի հատ արձանագրութիւնն է, որի մէջ մնացել են ճորտատիրական դրութեան պարզ հետքեր։ Այնուհետև գալիս է Զաքարէ սպասալարի և նրա յաջորդների ժամանակը (XIII դար)։ Այստեղ ճորտութեան ապացոյցները աւելի առատանում են։ Նախընթաց արձանագրութեան մէջ մենք թէև տեսանք ճորտային դրութիւնը, բայց չտեսանք այն տերմինները, որոնցով որոշւում էին կալուածատէրը և նրա հողի վրայ ամբարյը-ռած գիւղացին։ Իսկ Զաքարէի ժամանակ արդէն ձևակերպուած են այդ անունները—պարոն կամ պատրոն և ճորտ։ Ղուշավանքի արձանագրութիւններից մէկն ասում է.

Ես Հեճուլ Դրիզոր և Սմբատ և Իշխանս հաստատեցաք

---

1) Արևմտեան Եւրոպայում այս ճորտային դրութիւնը անուանւում էր main mortables (մեռած ձեռք)։ Մեռած ձեռք էր այդ ճորտը յատկապէս այն պատճառով, որ չէր կարող կտակ գրել (Ф. Летурно—«Эволюція рабства» М. 1898, եր. 327)։

2) Ինչպէս երևում է արձանագրութիւններից, հասարակ մարդիկ միայն իրանց հոգու փրկութեան համար իրաւունք ունէին նուէրներ անելու. արևշատութեան համար նուէր տալ կարող էին միայն իշխանները։

ի մեր սեփական ուխտս որ ոչ պատրոն և ոչ ճորտ ի վանքս աղունձ աղան։

Ճորտը իր պարոնի հաճութեամբ նուէր է տալիս եկեղեցուն։ Խծկոնքի արձանագրութիւն (1240).

Ես Բոնաւորս ծառայ Քրիստոսի և ժառանգաւորս իմ Տղոյ տիկին ողորմութեամբ Աստուածասէր պարոնի իմոյ Գրիգորոյ միաբանեցաք սուրբ ուխտիս Խծկաւանեց և ընծայեցաք ի սմա զմեր դանձագին այգին, որ ի Մրեն է...

Արձանագրութիւնների մէջ նկատւում է այն ընդհանուր կարգը, որ պարոնների հաճութեամբ, «ողորմութեամբ» նուիրուած կալուածները բացառապէս գիւղական են։ Այդպէս էլ, իհարկէ, պիտի լինէր, որովհետև ճորտատիրական դրութիւնը միայն գիւղական աշխարհում գոյութիւն ունէր. քաղաքացին ազատ էր պարոնների իշխանութիւնից։

Ճորտութեան մի էական յատկութիւնն էլ այն է, որ կալուածատէրը իրաւունք ունի իր ճորտերին հողի հետ ծախել, նուիրել։ Այդ առուծախի, նուէրի փաստերն էլ ունենք արձանագրութիւնների մէջ։

Ահա Ղոզլիջայի (Բգներ) արձանագրութիւնների մէջ շատ հետաքրքրականը։ Խաւուազ անունով մէկը, ինչպէս երևում է մի ուրիշ արձանագրութիւնից, տեղացի իշխաններից, զնում է Աշնակ գիւղը, և նրա մի մասը և ի յիշատակ իր անդրանիկ որդի Սասնայի (որ մեռել էր կէս տարեկան հասակում) նուիրում է Բգնեի վանքին։ Գնած գիւղի այդ մասի հետնուիրում են վանքին և գնած գիւղացիներից երկուսը, որոնց անուններն էլ պահել է արձանագրութիւնը—Մեհրեան և Դալասի փեսայ Խաչատուր։ Սրանք միակն են իբրև անուանագիր յիշատակուած հայ գիւղացի ճորտեր։ Դնում ենք այստեղ այդ նշանաւոր արձանագրութիւնը ամբողջովին։

ՉԺԱ (=1262 թ. Ք.) Կամաւն Աստուածոյ ես Խաւուազ մեծ Խաւուազիս թոռն Սասնիս որդիս. իմ անդրանիկ որդին Սասնայն որ կէս տարեկան ի Քրիստոս փոխեցաւ յիմ դանձագին հէրէնեցն յԱշնակա որ իմ պապն գնել էր ու սիկելով յիս տվել, ինչ իմ պապն մնաւ, ես Խաւուազ իմ կնոջն զբաժինքն ակն ու մարգարիտ իմ պարոնին տվի Շահնշահի [1]) ու կրկին

---

1) Զաքարէ սպասալարի որդին։ Շիրակը Անիի հետ Զաքարէին էր տուած. հետևաբար Զաքարեան տոհմն էր Շիրակի բուն տէրը և տեղական մանր իշխանները հպատակում էին նրան։ Այստեղից Շահնշահը—պարոն՝ Խաւուազ իշխանի համար։ Ինչպէս երևում է, բաւական չէր, որ Աշ-

զԱշնակ գնեցի ու զիմ որդոյն բաժինն զՍանին ի Բգներ տվի յԱստուածածինս զվերի էգին իւր ընձանոզն, երկու շինական զՄեհրևան ու զԽաչատուր Դուլուսին փեսայն իւրեանց հողոզն ու ջրոզն. ի Բգնիս զՋաղացն, յիմ խոտահարն ՃՃ (հարիւր) բարդ խոտի տեղ որ վանքս ընձէ... սկի արծաթի։ Ես Խաւռաղ զայս ընձա տվի սուրբ Աստուածածնիս. ով այս գրելոցս հակառակի, Աստուածամայրս լինի իւրն դատախազ։ Եւ Տէր Սարգիս և հայր Աբրահամ, Յուսէփ փակակալ և այլ միաբանքս հաստատեցին ի տարին ԺՃ. աւր պատարագ, Ե. Սանին, Ե. Խաւռաղա։

Վանքերին նուիրուած շինականներ մենք տեսնում ենք և ուրիշ տեղ արձանագրութիւնների մէջ։

Խծկոնքի վրայ.

Կամաւն Աստուծոյ ի ՈԿ (1211) թուականութեանս հացես Զաքարէ Ամիր Սպասալար հաց և վրաց, որդի Սարգսի, աղատեցի զսուրբ ուխտս զայս խմով արեամբս ի յայլազգեաց և ետու ի սուրբ Սարգիս զվասկափոդ... և այգի մի ի Բագրան եւ շինական մին ի գիւղս...

Ղօշվանք (1274 թ.)

Ես Ուքան Քարիմատին... տվաք նվէրք... այգին և թալին բոլոր աղատ յամենայն հարկէ և շինական մի։

*
* *

Կամ ճորտութիւն և Շիրակից դուրս, Հայաստանի ուրիշ կողմերում։ Այս հարցին դրականապէս պատասխանել առ այժմ անկարելի է. պէտք է ուսումնասիրութիւններ կատարել, պէտք է խուզարկել պատմական յիշատակները։ Յայտնի է միայն այն, որ ճորտական դրութիւնը ընդունուած էր և Ռուբինեան Կիլիկիայում, ինչպէս պարզ կարելի է տեսնել «Անսիզք Անտիոքայ» օրէնսդրքից, որ գործադրւում էր Միջերկրական Ծովի ափին գտնուող այդ հայկական գաղթականութեան մէջ։

Հաստատելով ճորտութեան գոյութիւնը Շիրակում, մենք միայն մի քայլ ենք անում մեր հին կեանքի հանգամանքները հասկանալու գործում։ Այնուհետև գալիս է այն հարցը թէ ինչ կերպարանք ունէր ճորտատիրութիւնը, ինչ իրաւական սիստեմի էր նա ենթարկւում։

նակ գիւղը իրրև ժառանգութիւն մնացել էր Խաւռաղին. այդ գիւղը, մի ուրիշին նուիրելու համար Խաւռաղը հարկադրուած էր նորից գնել երկրի տիրոջից։—Վրաստանում ազնուականութիւնը լաւգացած էր ազնաուրներից և թաւադներից։ Ազնաուրները հպատակւում էին թաւադներին։

Եղած պատմական յիշատակարանները գոհացուցիչ նիւթեր չեն տալիս մեզ այդ հարցը պարզաբանելու համար։ Բայց մեզ թւում է որ կարելի է հայկական ճորտութեան կերպարանքը պարզել, ուսումնասիրելով բիւզանդական և վրացական ճորտութեան հանգամանքները։ Որ թէ Վրաստանի և թէ Հայաստանի համար օրինակ եղել է Բիւզանդիան, այդ կարելի է ապացուցանել մի քանի փաստերով։

XVIII դարում վրաց Վախթանգ թագաւորը հրատարակեց օրէնքների մի ժողովածու [1])։ Այդտեղ միայն բուն վրացական օրէնքներ չեն դրուած. կան և ընդարձակ թարգմանութիւններ —«Յունաց օրէնքներ» և «Հայոց օրէնքներ»։ Հայոց օրէնքի ընկզբում կան մի շարք յօդուածներ, որոնք խօսում են ճորտերի, նրանց վաճառման և ազատութեան, նրանց կալուածների մասին [2])։ Ցայտնի է որ «Հայոց օրէնքները» վրացական թարգմանութեամբ վերցրուած են նոյն Մխիթար Գօշի «Դատաստանագրքից»։ Բայց հետաքրքրական հանգամանքն այն է, որ Մխիթար Գօշի հայերէն ընագրի մէջ չկան այդ յօդուածները, որոնք խօսում են յատկապէս ճորտութեան մասին։ Ի՞նչպէս են այդ յօդուածները «Հայոց օրէնքներ» անուանուել վրացական թարգմանութեան մէջ։

Վահան վարդապետ Բաստամեանցը իր հետազօտութիւնների մէջ [3]) գրում է. «Վախթանգ թագաւորի վրացերէն Դատաստանագրքի մէջ թէպէտ կան բաւական շատ յօդուածներ, որք բառ առ բառ նման են յունական օրէնքների քաղուածքներին և դրած են Մխիթարի Դատաստանագրքի վրացերէն թարգմանութեան սկզբում, բայց դորանից երևում է միայն որ՝ էջմիածինը ուղարկել է Վախթանգին Դատաստանագրքի մի այնպիսի օրինակ՝ որոյ մէջ եղել են նաև այդ քաղուածքները և Վախթանգը թարգմանել է տուել նոցա հայերէնից Մխիթարի յօդուածների հետ միասին»։

Հանգուցեալ գիտնական վարդապետի թէ այս խօսքերից և թէ նոյն հետազօտութեան ուրիշ կէտերից հաստատ երևում է որ անկախ Մխիթար Գօշի «Դատաստանագրքից» հայերի մէջ գործածուել են և հայերէն թարգմանուած յունարէն օրէնքներ։ Ուրեմն յունարէնից թարգմանուած էին և ճորտութեան վերաբերուած այն յօդուածները, որոնք դրուած են վրա-

---

1) Ռուսերէն թարգմանութիւնը տ. «Сборникъ законовъ грузинскаго царя Вахтанга VI, изданіе А. С. Френкеля, подъ редакціею Д. З. Бакрадзе, Тифлисъ» 1887։ 2) Յօդուածներ 17, 18, 19, 20, 21, 22, 27, 28 30 (եր. 237—239 ժողովածուի մէջ)։ 3) «Դատաստանագիրք», առաջարան, եր. 121։

ցերէն թարգմանուած «Դատաստանագրքի» սկզբում։ Եւ որովհետև յունական օրէնքները կարող էին թարգմանուել միայն գործադրուելու համար, ուստի պէտք է ենթադրել, որ ճորտութիւնը Հայաստանում նոյնն էր, ինչ Բիւզանդիայում։ Այս ճշմարտութիւնը ապացուցանում են և Շիրակի վերև յիշած արձանագրութիւնները։ Մենք տեսնում ենք, որ ճորտ գիւղացին իրաւունք ունի հողեր գնել, բայց սեփականութեան իրաւունքը դարձեալ պատկանում էր նրա տիրոջը, որի համաձայնութեամբ էլ նա կարող էր կարդադրութիւններ անել այդ հողերի վերաբերութեամբ։ Ճորտին պատկանում էր միայն օգտուելու իրաւունքը, այն էլ, ի հարկէ, յայտնի պայմաններով։ Այդպէս էր դրութիւնը և Բիւզանդիայում [1])։

Եւ ահա յունական այդ օրէնքները, որոնք հայերէն թարգմանութեամբ գործադրուել են Հայաստանում և հայերէնի միջոցով մտել են վրաց օրէնսգրքի մէջ, մեզ տալիս են ճորտութեան բաւական որոշ պատկերը։ Որպէսզի ընթերցողի համար պարզ լինի այդ պատկերը մենք կը բերենք այդ օրէնքների բովանդակութիւնը։

Ճորտերի վաճառքը

Յօդ. 21. Եթէ մէկը գնում է գիւղացի այն պայմանով, թէ այդ գիւղացին հակում չունի թափառաշրջիկ լինելու, լաւ վարքի տէր է, ծախողը պիտի տայ վեց ամիս ժամանակ ծախուած մարդուն փորձելու համար և եթէ այդ ժամանակի ընթացքում նկատուած կը լինի նրա մէջ որևէ արատ, նա կարող է, ինչպէս արդար է, վերադարձնել նրան ծախողին և յետ ստանալ իր վճարած գինը։ Իսկ եթէ վեց ամսուայ ընթացքում գնուած մարդը կը հեռանայ գնողից, այս վերջինը պարտաւոր է գտնել նրան, տալ նախկին տիրոջը և յետ ստանալ իր փողը։

Յօդ. 22։ Պայմանաժամով ծախած գիւղացուն, ժամանակը անցնելուց յետոյ, գնողը իրաւունք չունի վերադարձնել տիրոջը. բայց եթէ բանից դուրս կը գայ թէ ծախուածը ընկնաւոր հիւանդութիւն ունի, այն ժամանակ այսպիսի գիւղացու տէրը պարտաւոր է յետ ընդունել նրան գնողից։

Յօդ. 35։ Եթէ մէկը գնում է գիւղացի վեց ամսուայ ժամանակի պայմանով, ինչպէս սահմանուած է վերևում, և այդ ժամանակի ընթացքում յայտնի կը դառնայ որ ծախուածը հի-

---

1) Ф. Гердбергъ—«Исторія Византіи», изд. Безобразова, М. 1897, էջ. 645—647։

ւանդոտ է կամ ընկնաւոր է, օրէնքը այդպիսի գնողին թոյլ է տալիս վերադարձնել այդ գիւղացուն գնողին, յետ ստանալով նրա համար տուած կանխավճարը. բայց եթէ վեց ամիս անցնելուց յետոյ մի բան նկատուի գիւղացու մէջ, գնողը այլևս իրաւունք չունի վերադարձնել նրան ծախողին։

Յօդ. 36։ Եթէ մէկը, ծախելով իր գիւղացիներին, արական թէ իգական սեռի, սկզբից և եթ կը յայտնէ նրանց բոլոր թէ լաւ և թէ վատ յատկութիւնները, իսկ յետոյ երևան կը գան նրանց մէջ միայն վերջինները (այսինքն վատ յատկութիւնները), գնողը այլևս իրաւունք չունի վերադարձնել նրանց ծախողին. եթէ այդ ծախողը վկաների ներկայութեամբ կը յուսադրէ գնողին թէ իր ծախած մարդը գող չէ և ուրիշ արատ չունի, բայց յետոյ գնողը կը նկատէ նրա մէջ գողութիւն կամ մի ուրիշ յատկութիւն, այդ դէպքում իրաւունք ունի վերադարձնել նրան և եթէ նա մի բան գողացել է, առնել այդ բանը ծախողից, ստանալով և գինը. բայց եթէ գիւղացին լաւ վարքի տէր է եղել ծախողի մօտ և փչացել է գնողի մօտ, նրան այլևս չէ կարելի վերադարձնել։

Ձորտերի արձակումը

Յօդ. 17։ Ով ազատութիւն է տալիս գիւղացուն, նա այն բանը պիտի անէ տեղական եպիսկոպոսի և քահանայի մօտ, ինչպէս հրամայել է Կոստանդին Մեծը։

Յօդ. 18։ Ով արձակում է գիւղացուն կայքի հետ միասին, նա պարտաւոր է արձակման թղթի մէջ անուանապէս նշանակել այդ կայքը. հակառակ դէպքում, արձակողի որդին կարող է տիրել գիւղացու այդ կայքին։

Յօդ. 19։ Գիւղացուն արձակածը կարող է ոչնչացնել արձակման թուղթը և նորից նրան իր տիրապետութեան տակ առնել, մանաւանդ երբ վկաներով կ'ապացուցանէ դատաւորների առաջ թէ արձակուած գիւղացին իր մասին չարախօսել է կամ իրան հայհոյել է։

Յօդ. 20։ Իր գիւղացուն ազատողը կարող է նրան թողնել կամ խլել նրանից իր տուած կալուածը. բայց օրէնքը պահանջում է տալ կալուածքը, եթէ գիւղացին արժանի է դրան։

Յօդ. 30։ Եթէ մէկը ազատութիւն է տալիս իր մարդուն, նշանակելով թէ նա այսքան ժամանակի ընթացքում ազատ է, այդպիսին պիտի նախազգուշացնէ այդ մասին իր որդուն կամ իր ուրիշ ժառանգներին, և այդ մարդը այդպիսով նշանակուած ժամանակի լրանալուց յետոյ օրէնքով պիտի բոլորովին ազատ լինի։

Յօդ. 37։ Եթէ արձակուած գիւղացին իր յօժար կամքով մնալով իր նախկին տիրոջ մօտ, ամուսնանում է նրան պատկանող ճորտ աղջկայ հետ, որից և որդիներ է ունենում, այս որդիները դառնում են այդ տիրոջ որդիների սեփականութիւն։

Յօդ. 38։ Ով արձակում է իր գիւղացուն ի յարգանս նրա մատուցած ծառայութիւնների, նա պիտի յայտնէ այդ մասին քաղաքում քարոզիչներին և եպիսկոպոսներին, իսկ գիւղում, քահանաներին և եօթը վկաների, որոնք իրանց ստորագրութեամբ պիտի վաւերացնեն արձակման թուղթը, հակառակ դէպքում, այդ թուղթը անվաւեր է և տէրը կարող է նորից այդ գիւղացուն հնթարկել իր տիրապետութեան,

Կամաւոր ճորտութիւն

Յօդ. 32։ Եթէ քսան տարեկան հասակին հասած ազատ մարդը մէկի գիւղացին է դառնում և այդ մասին յայտնում է մարդկանց առաջ, նա արդէն կորցնում է իր ազատութիւնը, որը չէ կարող տալ նրան և օրէնքը, մանաւանդ երբ նա դրա համար ստացել է որևէ վարձ կամ թոշակ (այսինքն՝ եթէ փողով վաճառել է իրան). նա մնում է գիւղացի այն մարդու, որին նա այս կերպով տուել է իրան։

Յօդ. 33։ Եթէ 20 տարեկան հասակին հասած ազատ կինը ինքն իրան աղախնութեան է տալիս մէկին, իսկ այս մէկը նրան բաժինի պէս տալիս է մի ուրիշին, օրէնքը այլ ևս չէ կարող ազատել նրան, ինչպէս իր ազատ կամքով իր ազատութիւնը կորցրածին, և նա պարտաւոր է մնալ այն մարդու մօտ, որին հասել է իբրև բաժինք, բայց եթէ կինը դեռ 20 տարեկան չէ, օրէնքով պիտի ազատ համարուի։

Ճորտերը ի՞նչպէս կարող են գնել

Յօդ. 27։ Եթէ գիւղացին և ծառան կամենան մի բան գնել, կարող են իրանց տիրոջ թոյլտուութեամբ։

Ճորտերի կեանքը

Յօդ. 28։ Օրէնքով—ոչ ոք իրաւունք չունի կեանքից զրկել իր գիւղացուն կամ ծառային. բայց եթէ դրանք քրէական յանցանքների մէջ ընկնեն, պէտք է ներկայացնել թագաւորին, որ ինքը հնթարկէ նրանց արժանի պատժի։

*
* *

Ահա ինչ տեսակ օրէնքներ են թարգմանել վրացիները հայերէնից։ Գործադրուո՞ւմ են այդ օրէնքները Հայաստանում։ Շիրակի արձանագրութիւնները գործադրութեան ապացոյցներ են։ Հաւանական է որ ճորտատիրական օրէնքները թարգմանուած լինեն Բագրատունի թագաւորների օրով. մենք տեսանք ճորտութեան հետքեր այդ թագաւորների ժամանակից։

Հայաստանի հողն էլ ուրեմն, ազատ չէ եղել ստրուկ, անասունի պէս վաճառուող հողագործի հեծեծանքներից, արիւնքրտինքից։—Իզուր էինք կարծում թէ մեր պապերը ոչ ճորտ են եղել, ոչ ճորտատէր...

Լէո

---

*
* *

Է՞յ, դու Ջահիլ, հպարտ հասակ,
Անցար ոսկի ամպի պէս.
Հեսդ տարար երգեր ու սէր,
Տարար գարունն իմ սրտէս։

Քար կը սղմեմ սրտիս հիմա.
Կելնիմ սարերը լալու.—
—Ա՜խ, կուզես լաց, կուզես խնդա,
Անցածն էլ յետ չի գալու...

Ալ. Դաւթակեան

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԵՐԻՑ

I

Թուրքերի յարձակումը Դարալագեազի հայերի վրայ

—

Մայիսի 15 ին Զուլ, Զրախլու, Դամրչիլար, Մարաթուղ, Թերփ, Քոչբեկ, Լէյլիկաչան, Գիւմուշխանայ, Աղբեանդ և Իսոիսու գիւղերի Թուրքերը յարձակուեցին Գնդեվազ գիւղի վրայ։ Այդ ժամանակ Գնդեվազու հասարակութեան տանուտէր Ալի Սաֆարալի օղլին մի կողմից խմաց է տալիս Գիւմուշխանայ գիւղի Թուրքերին (որոնք իր ազգականներն են), թէ Զուլի գիւղերի Թուրքերը յարձակւում են Գնդեվազի վրայ, դուք էլ եկէք, մասնակցեցէք, միւս կողմից էր բարեկամ ձևանալով Գնդեվազցիներին հաւար է բերում թէ Թուրքերը ձեր տաւար ու ոչխարը քշեցին տարան։ Գնդեվազցի հայերը դուրս ելնելով գիւղից, հանդիպում են գիւմուշխանեցիներին, տանուտէրի առաջնորդութեամբ։ Այդ ժամանակ տանուտէրը Ալին ասում է գնդեվազցիներին. «Որովհետև ձեր գիւղի ներքևից, հարաւային կողմից, միացեալ Թուրքերը գալիսեն ձեզ կողոպտելու, այս պատճառով ես գիւմուշխանեցիներին բերում եմ որ ձեզ օգնեն»։

Հաւատալով սրան, գնդեվազցի հայերը խառնուելով գիւմուշխանեցիների հետ գիրք են մտնում միասին շինական կառավարութեան մօտ ու սկսում են կռուել ներքևից յարձակուող Թուրք խուժանի հետ։ Կէս ժամ կռուելուց յետոյ Գնդեվազի հայերը սպանում են գնդակով Թերփեցի Բայրամալի Բէկլար օղլուն ու վիրաւորում են մի Թարփեցու և մի Զուլեցու։ Գիւմուշխանեցիները, տեսնելով որ հայերը յաղթողն հանդիսանում, յարձակւում են նրանց վրայ, որոնց օգնութիւն էին ցոյց տալիս երկու սարաժնիկներ. Ալեքսանը (հայ) և Սիմոնը (ռուս)։ Այդ ժամանակ գիւմուշխանեցի Ամրահ Մամադ ալի օղլին, տանուտէր Ալիի եղբօր որդին, և լէյլիկանլանցի Ղասմ Մօլլայ Շահ Յուսէն օղլին պինդ բռնում են սարաժնիկ Սիմոնին,

որպէսզի հրացանը խլեն ձեռքից, միւս սարաժնիկ Ալեքսանը, երեք անգամ հրամայում է նրանց բաց թողնել իր ընկեր կազակին և երբ նրանք չեն լսում, գնդակահար անելով սպանում է Սիմոնին բռնողներից մէկին, Ամրահ Մամադալի օղլուն։ Այդ ժամանակ բոլոր գիւմուշխանեցիները շրջապատում են սարաժնիկներին որ սպանեն, բայց վրջիններս փախչում են ուրիշ դիրք մտնում, որի ժամանակ գնդեվազցի Ամրասլան Շուքուր օղլին գնդակով վիրաւորում է սարաժնիկ Ալեքսանին, իսկ գիւմուշխանեցի Ալիլ Ռահիմ օղլին սպանում է Ալեքսանի ձին։ Սարաժնիկ Սիմոնը իր վիրաւոր ընկերին փախցնում է Կուշչի հայաբնակ գիւղը փրկելով նրան մահից։ Այսպէս, շնորհիւ տանուտէր Ալիի խաբէութեան, մի կողմից գիւմուշխանեցի թուրքերը, միւս կողմից մնացող գիւղերի թուրքերը յաղթելով հայերին, քշում տանում են նրանց 1200 հատ ոչխարը, 600 տաւար, 80 ձի և ջորի և 100 էշ, որոնց բոլորն էլ հաւասար կերպով բաժանում են իրանց մէջ։ Զբաւականանալով սրանով, թուրքերը մտնում են գիւղը ու կողոպտում ինչ որ կայ գնդեվազցի հայերի տներում, ջարդելով դռները, սպանելով միևնոյն ժամանակ հարկ հաւաքող Մնացական Ալլահվերդեանին, տանում են նրա տանից 500 ր. արքանական հարկը և հասարական ծախքը։ Գնդեվազցի հայերը իրանց ընտանիքը ըցնում են եկեղեցին և այնտեղ ապաստանելով ութն օր, փրկում իրանց կեանքը մինչև գաւառապետ պ. Զերքեզովի դալը, սնդուկելով այդ ժամանակ գառան մսով, որոհետև թէ հացը և թէ միւս ուտելիքներ սրբել տարել էին թուրքերը։ Գնդեվազցի հայերն ունէին ութ հրացաններ, և եթէ չխարուէին տանուտէր Ալիից և գիւմուշխանեցիներին թոյլ չտային իրանց մէջ մտանելու, չէին թողնիլ որ ոչ սարաժնիկ Ալեքսանը վիրաւորուէր և ոչ էլ դիրքերը կը տային թուրքերին։ Թուրքերը կողոպտեցին նաև շինական կառավարութեան կամ կարասիքը, բոլոր գրքերը, ծակծկոտելով նոյնպէս կայսրի պատկերը։

Գնդեվազցիների կորուստը հասնում է 50,000 բուբլու։

Այդ երկու օրը Նախճաւանի գաւառի թուրքերը միանալով Դարալագեազի թուրքերի հետ, յարձակուեցին Մարտիրոս գիւղի հովիւների վրայ։ Գիւղի առջև սկսեց փոխադարձ հրացանաձգութիւնը, հայերը չկարողանալով դիմադրել թիւրքերի հարիւր անգամ աւելի բազմութեան, տեղի տուեցին նրանց, որոնք քշեցին տարան մարտիրոսցիների 1000 գլուխ ոչխարը և 200 տաւարը

17-ն Մայիսի. Այար գիւղից մէկ ու կէս վերստ հեռաւորութեան վրայ, «Գռաւի ձորում», Ղուրբանքեասլան, Ղուրդ-

ղուլաղ և Զէյթա - Զօփմա - Զօմախ գիւղի բնակիչները յարձակուեցին այարցիների ոչխարի հօտերի վրայ, սպանեցին երկու քուրդ հովիւներին և հօտերի վերայ հսկող պահակ Խաչատուր Յարութիւնեանին, տանելով հօտից 270 հատ ոչխարներ։ Այարցիները տեսնելով, որ չեն կարող դիմադրել այդ չորս գիւղին, սպանուածի դիակը յանձնելով հողին, տեղափոխուեցին Մալիշկեայ։ Միւս օրը, ամսի 18-ն, յիշուած թուրք գիւղի բնակիչները յարձակուեցին տեղափոխուող այարցիների վրայ ու սկսեցին հրացաններ արձակել նրանց վրայ։ Այդ ժամանակ վիրաւորեցին դաշոյնով այարցի Ղազար Գէորգեանին ու ձգեցին Արփաչայ գետը։ Զբաւականանալով սրանով գիշերը կողոպտեցին գիւղը և տարան այն բոլոր ապրանքը այարցիների, որ չկարողացան նրանք վերցնել հետները Այարից Մալիշկիա տեղափոխուելիս։ Թուրքերը կողոպտեցին այարցիների 10,000 բուբլու չափ կարողութիւնը, հաշուելով սրա հետ և կողոպտուած եկեղեցու իրերն ու սրբազան անօթները։

3-ն Յունիսի, առաւօտը շուտով պահակները դիրքերից հաւար կանչեցին թէ ահագին բազմութիւն թուրքերի գալիս է յարձակուելու Ելփին գիւղի վրայ. գիւղացի երիտասարդները իսկոյն ելան քաշուեցին դիրքերն։ Այդ ժամանակ հիւսիսային կողմից ելփինցիներին շրջապատեցին Աղբիւիսա, Գենալու, Ալմալու և Հօրս գիւղերի թուրքերը Այրիջայի քրդերի հետ, իսկ արևմտեան կողմից շրջապատեցին Արդաբաս, Քեօմուրլու և Զիվա գիւղի թուրքերը Դաշխարման և Քեալաֆա Աղալ գիւղերի քրդերը, միացած Երևանի դաւառի թուրքերի հետ։ Կռիւը տևեց մօտաւորապէս 8 ժամ։ Ելփինցիներին օգնում էին Արդիջլուի պոստի 4 կազակները, սակայն անկարող եղան դիմադրել այսքան ոյժի դեմ և, տեսնելով մօտալուտ վտանգը, Ղոչըղայու հասարակութեան տանուտէր Ղամբար Ղոչալի օղլին խորհուրդ տուեց ելֆինցիներին փախչել դէպի իրա բնակած Ղոչղայ թուրք գիւղը. հայերը կատարեցին ու մինչդեռ շարունակւում էր փախուստը, ելփինցի քաջ երիտասարդները յուսահատ կռիւ էին մղում թուրքերի դէմ իրանց բռնած դիրքերից։ Այդ ժամանակ ելփինցի Թոմաս տէր Անդրէասեանը, որ փամփուշտ էր տանում դիրքերի մէջ կռուող երիտասարդներին, այնտեղից վերադառնալիս սպանուեց գիւղի մէջ թուրքերի գնդակով. միևնոյն ժամանակ սպանուեց դիրքի մէջ Մնացական Եղիայեանը, փոխադարձ հրացանաձգութեան միջոցին ալմալուցի Սէյիդ Միր Մոստաֆա Սէյիդ Հասան օղլու ձեռքով։ Ամենից երկար և յուսահատ կռուում էր Յովհաննէս Եղիայեանը, որը պահպանում էր երկու ընկնող դիակներին և իր ծերունի հօրը

կայր Եղիային, որը մտած էր եկեղեցի իրան փրկելու մտքով։ Վերջապէս Թուրքերը խուժեցին գիւղը, սկսուեց անողորմ կողոպուտը. այդ ժամանակ ալմալուցի Սէյիդ Միր Հաշիմ Սէյիդ Ահմադ օղլին վիրաւորեց դաշոյնով Ելփինցի Աբրահամ Յարութիւնեանին, որը նոյնպէս վախճանուեց։ Թուրքերի կողմից սպանուեցին ութ հոգի և վիրաւորուեցին 10 հոգի։ Գիւղում կային միայն հինգ հատ բերդանի սիստեմի հրացաններ, որոնցով կռուում էին Եղիայեան Յովհաննէսը, Ենոք Աստուածատրեանը, Թէոս Տէր Անդրիասեանը, Արշակ Տէր Անդրէասեանը, Սերոբ Սարգսեանը և Զաքար Պողոսեանը. սարաժենիկներից երկուսը Թուրքեր էին, որոնք հրացան չէին ստանում իրանց ազգակցից Թուրքերի վերայ։ Թուրքերը կողոպտելով գիւղը չրաւականացան սրանով. նրանք անխնայ կողոպտեցին և եկեղեցին. գիւղից հեռանալիս էլ քշեցին տարան Ելփինցիների 2000 հատ ոչխար և եօթն հարիւր հատ տաւարը։ Ելփինցիները երեք օր իրանց ընտանիքով մնացին Ղոչբլղա գիւղում, մինչև որ եկաւ գաւառակիս պրիստաւը ու կրկին վերադարձրեց նրանց իրանց բնակութեան տեղը։

Խլած ոչխարի մեծ մասը երկար ժամանակ գտնուում էր հորսեցի Ղլբալի Հասան ալի օղլու և Բահլուլի մօտ։

Հէնց մի մեծ տանից, այն է՝ Օհանէս Եղիայեանի տանից, տարել են 400 հատ ոչխար, 30 հատ տաւար և չորս ձիեր։ Ընդհանուր գումարը վնասի որոշուած է 56,666 ր.

5-ն Յունիսի, Զուլ, Ախտա, Գիօմուղ, Դիարուղ և Դարաբեանդ գիւղերի Թուրքերը միանալով Նախճաւանի գաւառի Թուրքերի հետ, գիւղից մի վերստ հեռաւորութեան վերայ յարձակուելով Մարտիրոս գիւղի հովիւների վերայ սկսեցին խլել սպառնալիքներով նրանց հօտերը։ Այդ ժամանակ 50-60 հոգի մարտիրոսցի երիտասարդներ զինուելով ելան նրանց դէմ. սկսեց փոխադարձ հրացանաձգութիւնը երկու կողմերի մէջ։ Թուրքերի մի մասը սկսեց կռուել մարտիրոսցիների հետ, իսկ միւս մասը բշել նրանց տաւար ու ոչխարը։ Մարտիրոսցիները հետևեցին նրանց մինչև Եաղիւրտ, երեք վերստաչափ հեռաւորութեամբ։ Այստեղ Թուրքերը գնդակով խփեցին մարտիրոսցի Ստեփան Բարայեանին, որը իսկոյն մեռաւ, վիրաւորեցին նոյնպէս 18 տարեկան Գարեգին Ասլանեանին. սա էլ հասնելով տանը վախճանուեց. թեթև կերպով վիրաւորուեց գնդակով նոյն գիւղացի Գալուստ Գէորգեանը, որը բժշկուեց երկու ամսից յետոյ։ Սրանից յետոյ Թուրքերը քշեցին տարան մարտիրոսցիների 1000 հատ ոչխար և 235 տաւար։ Այդ ժամանակ Մարտիրոսում կազակներ չկային, կային միայն Նախ-

ճաւան գաւառի Սէս գիւղում. կազակները չկարողացան հասնել իր ժամանակին օգնութեան, նոյնպէս օգնութեան չկարողացան հասնել մօտիկ հայ գիւղերի բնակիչները։

Մ. Տ.—Ա.

II

Համաձայն խմբագրութեանդ պահանջին, տալիս եմ հետաքրքիր տեղեկութիւնները Զանգեզուրու հայ-թուրքական ընդհարումների վերաբերեալ։

Նախճաւանի այս տարուայ արիւնալի դէպքերին մասնակցում էին Զանգեզուրու տեղական և քոչուոր թուրքերը, որոնք աւարից վերադառնում էին իրանց տեղերը և հրէշաւոր գոյներով նկարագրում թուրքական բարբարոսութիւնները և ստացուած օգուտները։ Նախճաւանի ոահմանակից Սիսիան գաւառի հայերի ուժեղ լինելը փոքր ինչ զսպում էր տեղական թուրքերի վայրենի բնազդերը։ Քոչուոր թուրքերը, որոնք գալիս են Շուշու և Բաղուայ գաւառներից և ծածկում են Սիսիանի լեռները, Բաղարչայ մալականի գիւղի ուղղութեամբ մինչև Դարալագեազի սահմանը և այդտեղից ամբողջ Մաղաւուզը, Մենքեանդ գիւղի շրջակայքով մինչև Ալիղուլի, թուով ոչ պակաս քան 40,000, արդէն մասնակցած Նախճաւանի և Դարալագեազի հայ-թուրքական ընդհարումներին, միշտ հակուած էին առիթներ որոնելու Զանգեազուրում քոչի ճանապարհի ուղղութեամբ յարձակումներ գործելու հայերի վրայ։ Եւ ահա յունիսի 25—26-ին, Մուրթուզայի 15 հոգուց բաղկացած աւազակային խումբը յարձակւում է Շաղատի և Մաղրայի հովիւների վրայ, բշում 93 գոմէշ և 311 գառն։ Սկսւում է հրացանաձգութիւն. բոլոր քոչուորը միանում է աւազակային խմբին. Մաղրի հայերը, 3 կազակի և 10 հոգի հայ քաջերի աջակցութեամբ փառաւոր ջարդ են տալիս ահագին քանակութեամբ թուրքերին շատ թեթև վնասով։ Մաղրու այդ ջարդը բոլորովին սթափեցրեց թուրքերին և Սիսիանում մինչև վերջն էլ երկիւղ արին յարձակումներ կատարել. ընդհակառակն ըրանակոթցիք և այլ գիւղացիք համարձակ մտնում էին քոչի մէջ և Նախճաւանի հայերից խլած ապրանքները յետ խլում։ Օգոստոսի 16-ին Մուրթուզայի նոյն խումբը քոչը անցկացնելուց յետոյ Իւշ-Թափում, Մաղրու վրէժը հանելու դիտաւորութեամբ, սպանում են Սիսիանու 4 հայ յայտնի բէկերին։ Նոյն օրերը Գորիսի մօտ հայերը սպանում են յայտնի թուրք բէկերի. 18-19-ին Մենքեանդ գիւղի շրջակայ թիւրքերի մէջ երևում են

Շուշու կուիսներում մասնակցող վերադարձած տեղական բէկեր. օգտուելով քոչի չու ընկնելուց, գրգռում են Թուրքերին յաձակուել հեռու ընկած հայ գիւղերի վրայ, այն է Մինքեանդ և Ալիղուլի։ Այս երկու գիւղը ընկած են Գորիսից 6—7 ժամ հեռաւորութեան վրայ. Մինքեանդի հայերը 80 տուն են, Թուրքերը 160, Ալիղուլին 100 տուն հայ ունի, երկու գիւղն էլ շրջապատուած են միմիայն Թուրք գիւղերով, այնպէս որ նեղ դրութեան միջոցին ճանապարհների ընդհատման պատճառով հայ գիւղերից օգնութեան յոյս չէին կարող ունենալ։ Ահա օգոստոսի 20-ին քոչուոր Թուրքերը ոչ պակաս 10,000, յարձակւում են Մինքեանդի վրայ, ուր լինում է Թուրք Սատղ բէկ պրիստաւը 13 կազակ, ոտրաժնիկներով։ Նոյն օրը սկսւում է յարձակում Մինքեանդից քիչ հեռու Խոզնավար հայ գիւղի վրայ, նոյն միջոցին էլ քրդերից և այլ քոչուորից 150—200 գինուած խումբ երևում է Խնձորեսկի և Տեղի առաջին, սպառնալով դէրանց և Գորիսին, նոյն ժամանակ շրջակայ Թուրքերը յարձակւում են Հարաբ գիւղի վրայ, որ գտնւում է մեկուսի ընկած դէպի Շուշու գաւառը անցնող ճանապարհի վրայ։ Այսպիսով Թուրքերը մշակուած ծրագրով, սէիդական գրօշակներով, քարոզներով, օգոստոսի 20—21-ին սկսում են յարձակումներ այն հայ գիւղերի վրայ, որոնք բոլորովին առանձնակի են ընկած լինում։ Հայերի տեղական կամաւորները ուժեղ դիրքեր բռնեցին Գորիսի շրջակայքում, Խնձորեսկում, և ստիպել տուին քրդական հրոսակախմբերին ցրուել։ Մինքեանդի Թուրքերը 21-ին խաբելով հարևան հայերին քնեցնում են, միանում քոչուորի հետ և սպանում 17 հայ և Թալանում գիւղը պրիստաւի անհոգ ներկայութեամբ. նոյնը օրը հասնում են 52 կազակ Մինքեանդ. դրանց կապիտանը լսելով պրիստաւի առարկութիւնը թէ Խոզնավար պաշարուած է և Մինքեանդում այլևս ոչինչ չի լինի, վերցնում է բոլոր կազակներին պրիստաւի ազդեցութեամբ գնում Խոզնավար. Թուրքերը օգտուելով այդ հանգամանքից ժորթատում են Մինքեանդի խարուած հայերին։ 23-ին է լինում այդ։ 24-ին գաւառապետի հետ հասնում ենք Մինքեանդ և մեր առաջ բացւում է զարհուրելի տեսարան. երախայք, կանայք, ծերեր, ձորերում, լանջերում, փռուած, սրախողխող եղած որը փախչելիս, որը Թաղնուելիս։ Անցնում ենք Խոզնավար, ապա Ալիղուլի, և վերջինս ազատում երեք օրուայ պաշարումից, յետոյ Ջէյվա։ Գաւառապետը պրինց Նապոլէօնի խիստ հեռադրի հիման վրայ, ուժեղ միջոցներ ձեռք առաւ։ Այնպէս որ 26-ի խաղաղ էր։ Մինքեանդում սպանուած էին 240 հոգի և ողջ մնացած 456, որոնցից 30 վիրաւոր. ցուցակը յանձնուեց պրին-

ցին։ Թալանուած է բոլոր գիւղը, եկեղեցին, սպանուած ցաքատով և ապա դնդակով 90 տարեկան քահանան։ Խոզնավարում սպանուած են 10 հայ, թալանուած է գիւղի կէսը, այրուած են 10 տուն (բոլոր գիւղը 80 տուն հայ է, 20 տուն Թուրք), այրուած են Թուրքերի բոլոր տները, սպանուած և վիրաւորուած են շրջակայ Թուրքերից 100-ից աւելի։ Զէյվա 25 տուն է, սպանուած 3 հայ, տները աւերուած, իրերը հարևան Թուրքերի մօտ պահ են տրուած։ Զէյվու 100 տունը Թուրք է (այս Մղաւուզի Զէյվան է)։ Ալիղուլի 100 տնից աւելի է, սպանուած 10 հայ, այրուած 20 տուն. թալանուած գիւղի կէսը. Թուրքերից սպանուած վիրաւոր 100-ից աւելի, մեծ մասամբ կազակներից։

Հարաբ 135 տուն է, թալանուած հարևան գիւղերից։ Հրամայուեց խիստ կերպով՝ ա) առանց դատի՝ իրերը և անասունները յետ առնել. բ) էկզեկուցիա նշանակել մասնակցող բոլոր Թուրք գիւղերում. գ) զինուորական դատի ենթարկել մեղաւորներին. դ) բռնել գլխաւորներին, բանտարկել մինչև քննութիւնը (արդէն բռնուած են մօտ 60 հոգի). ե) հայ գիւղերից բերել Թուրքերի գիւղը, որ հայկական գծին միանայ և նրանց տեղը Թուրքեր բնակեցնել. զ) Մինքեանդի Թուրքերին դուրս անել գիւղից և ցրել։ Սեպտեմբերի 18-ն է, և առայժմ հանգիստ է. անհատական սպանութիւններ լինում են։

Տեսնենք խիստ հրամայուածները ինչքան արագ կը կատարուին։ Դափանում առ այժմ հանգիստ է։ Պրինց Նապոլէօնը այցելեց վնասուած Մինքեանդ, Խոզնավար, Ալիղուլի գիւղերը, եղաւ Նոյնպէս և Տաթևու վանքում։ Հարաբեցիք օգոստոսի 26-ից մինչև այսօր Թուրքերի մօտ են, ձեռք են առնուած միջոցներ յետ բնակեցնելու, մինչև գիւղերի համախմբումը ըստ ազգութեան։

Ներսէս վարդապետ.

Տաթև, Սեպտ. 18.

III

Նախճաւանի եւ Շարուր—Դարալագեազի սիանզամայն աւերուած և կողոպտուած գիւղերի Թիւն է 26։ Այդ գիւղերն են. 1) Թազաբեանդ 40 տուն, 2) Հաջիվար 57 տ. 3) Իւխարի ուղուն-օրա 73 տ., 4) Դիտավար 43 տ. 5) Նազարաբաղ 84 տ. 6) Զահրի 200 տ., 7) Մամարզա Դիզա 48 տ., 8) Խալիազ 83 տ., 9) Ալագեօզ-Մաղրա 68 տ., 10) Նորս 136 տ., 11) Ղարաբարա 34 տ., 12) Արինջ 59 տ., 13) Գժաձոր 83 տ., 14) Նորս-Մաղրա 53 տ.,

15) Գեաղջարաջուր 55 տ., 16) Նորաշէն 164 տ., 17) Սուլթանբէկ 89 տ., 18) Սեռ 51 տ., 19) Ալահի 46 տ., 20) Վարժաղեար 170 տ., 21) Ալահլու 120 տ., 22) Քէշտաղ 71 տ., 23) Դաշտրիս 32 տ., 24) Թաղագիւղ 33 տ., 25) Ուլիանորաշէն 220 տ., 26) Ելփի 88 տուն։ Ընդամենը 2200 տուն։ Տեղական հանգամանքներին քաջ ծանօթ պ. Ա.-Դօն հաշուում է որ այդ թշուառացած ընտանիքներին իսկոյն օգնելու համար անհրաժեշտ է 650,000 ռուբլի։ Երևանի գեներալ-նահանգապետ արքայազն Նարոլէօն, գիւղատնտես Սահակեանի զեկուցման վրայ հիմնուելով, խոստացել է գանձարանից բաց թողնել 34,000 ռ., ի հաշիւ Նախճաւանի և Շարուրի թուրք ժողովուրդի շտեմարանական դրամագլխի։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ *)

—

Ուսումնարանական Խորհուրդների քաղաքականութիւնը ղկալապէս տարբերւում է քաղաքային ինքնավարութեան քաղաքականութիւնից (պոլիտիկայից)։ Լիբերալիզմը և կոնսերվատիզմը նեղ իմաստով բոլորովին այն աստիճան չեն հանդէս գալիս ուսումնարանական Խորհուրդ ընտրելիս, ինչպէս քաղաքային խորհրդի ընտրութիւնների ժամանակ։ Թեկնածուներից ոմանց ընտրում են ի նկատի ունենալով նրանց բուռն համակրանքը դէպի ուսումնարանական օրէնքները և ձգտումը՝ տալ ուսումնարաններին ըստ կարելոյն աւելի ազատ և լայն բացատրութիւններ։ Ոմանց ընտրում են ինչպէս «յեսատդէնների» (ըէակցիոներ), ի նկատի ունենալով դրանց հակումը՝ տալ որքան կարելի է օրէնքներին նեղ մեկնութիւն։ Իսկ առաւելապէս թեկնածուները ընտրում են իբրև այս կամ այն դաւանութեան ներկայացուցիչներ կամ ընդհակառակը—ընտրում են որովհետև չեն պատկանում և ոչ մի կրօնական համայնքի։ Այդպիսով

---

*) Տես «Մուրճ» № 9.

ուսումնարանական Խորհուրդների քաղաքականութեան կամ ուղղութեան իրրև հիմք ծառայում են կամ կրօնական համազմունքները կամ կրօնական անտարբերութիւնը։ Կրօնական ընկերութիւններին պատկանող անդամները սովորաբար աշխատում են Խորհրդի գործունէութեան այնպիսի ուղղութիւն տալ, որ մասնաւոր (ուրեմն և իրանց այդ ընկերութիւնների) ուսումնարանների շահերը չվնասուեն, իսկ ոչ մի կրօնական ընկերութեան պատկանող անդամները նպաստում են առաջադէմ քաղաքականութեան և հակուած են խորհրդի լիազօրութիւններից ամենալայն չափերով օգտուել, բոլորովին ինկատի չունենալով կոնֆեսիօնալ կամ դաւանական ուսումնարանների շահերը։

Ուսումնարանական խորհրդի անդամը ոչ մի ռոճիկ չի ստանում. միայն Լոնդոնի խորհրդին, ուր գործերը առանձնապէս շատ ժամանակ են խլում անդամներից, օրէնքը թոյլատրում է ռոճիկ նշանակել իր նախագահին։ Սակայն այդ ռոճիկը դեռ ոչ մի անգամ չի տրուել. որովհետև մինչև այժմ այդ տեղը գրաւել են բաւականաչափ ապահով մարդիկ, որոնք հնարաւորութիւն ունեն առանց վարձատրութեան իրանց ժամանակը խորհրդի գործերին նուիրելու։ Քարտուղարը, գանձապահը և ուսումնարանական Խորհրդի բոլոր ծառայողները, գրքանց թուում և ուսուցիչները, իրանց պաշտօններում մնում են մինչև այն ժամանակ երբ այդ ցանկանում է Խորհուրդը, այսինքն ըստ էութեան նոյնպէս, ինչպէսև քաղաքային խորհուրդների ծառայողները—մնում են մինչև որ լաւ են կատարում իրանց պարտականութիւնները։ Քաղաքականութիւնը ոչ մի ազդեցութիւն չունի ծառայողին ընտրելիս։ Նշանակումները կատարուում են հրապարակային նիստում, որի մասին իւրաքանչիւր անդամին ուղարկուում է գրաւոր ծանուցում գէթ չորս օր առաջ. ընդունուած է մի քանի շաբաթ առաջ լրագրներում յայտարարել, որ այս ինչ պաշտօնի համար ընտրութիւն է կատարուելու։

Լոնդոնում միայն մի հատ ուսումնարանական Խորհուրդ գոյութիւն ունի։ Նա կառավարում է համարեա 600 ուսումնարաններ և իւրաքանչիւր տարի համարեա 2 միլլ. ֆունտ ստերլինգ (20 միլ. բուբլի) դումար է ծախսում սկզբնական ուսուցման վրայ։ 1870 թուականին, երբ սկզբնական ուսուցման մասին օրինագիծը օրէնք դառաւ, Լոնդոնը պարլամենտական ներկայացուցչութեան համար բաժանուած էր 11 շրջանների կամ քաղաքամասերի. յետոյ այդ մասերի թիւը՝ զգալի կերպով աւելացաւ, սակայն ուսումնարանական Խորհուրդը պահպանեց իր բաժանումը 11 շրջանների։ Լոնդոնի այդ նախկին

11 շրջաններից իւրաքանչիւրը ուղարկում է Խորհուրդին հինգ ներկայացուցիչ, այնպէս որ Խորհրդի անդամների ընդհանուր թիւն է 55։ Մի հատ ուսումնարանական Խորհրդի համար, անշուշտ, համարեա բոլորովին անկարելի է իր վրայ վերցնել Լոնդոնի բոլոր ուսումնարանների մանրամասն (դետալ) կառավարութիւնը։ Այդ պատճառով մտցրուեց՝ տեղական կառավարութեան սիստեմը, որ տուաւ հիանալի արդիւնքներ։ Նոյն սիստեմը գործադրուեց նաև Լիվերպուլի խորհուրդը։ Խորհուրդը իր լիազօրութիւնները յանձնում է տեղական հոգաբարձուների կոմիտէներին այն պայմաններով և սահմանափակումներով որ ինքը հարկաւոր կը դատի։

Իւրաքանչիւր տասն և մէկ շրջանների կողմից Խորհրդում եղած անդամները իրանց շրջանների մէջ կազմակերպում են տեղական հոգաբարձուների կոմիտեներ, իրար մէջ բաժանելով ուսումնարանների այս կամ այն խումբը։ Նոր ուսումնարանների հոգաբարձուները նշանակում են Խորհրդի կողմից առաջադրութեամբ շրջանային անդամների այն մեծամասնութեան, որ ներկայ է այն նիստում, որի ժամանակ կատարւում է նշանակումը։ Հոգաբարձուները ռոճիկ չեն ստանում։ Իւրաքանչիւր նոր հոգաբարձու պէտք է ստորագրութիւն տայ—կատարել իր վրայ դրած բոլոր պարտականութիւնները, դրանց թւում նաև ուսումնարաններ և հոգաբարձական ժողովներ յաճախելը։ Ուսումնարանական խորհրդի շրջանային անդամները պարտաւոր են հոգալ որ շրջանի հոգաբարձուների թւում, եթէ կարելի է, լինեն գոնէ երկու կին-հոգաբարձուներ։ Շրջանային անդամներին յանձնարարւում է նմանապէս հոգ տանել, որ հոգաբարձուների թւում գոնէ լինեն երկու հոգի որոնց զաւակները յաճախել են Խորհրդի ուսումնարանները։

Ուսումնարանական Խորհրդի գլխաւոր բիւրոյում միշտ գտնւում է այն անձանց ցուցակը, որոնք ցանկանում են հոգաբարձու լինել։ Երբ տեղական կոմիտեում տեղ է բացւում Խորհուրդը լրացնում է, նշանակելով հոգաբարձու—կամ շրջանային անդամների մեծամասնութեան ցուցմունքով կամ հոգաբարձուների ցուցմունքով, համաձայնութեամբ շրջանային անդամների այն մեծամասնութեան, որ ներկայ է այդ նշանակումը քննող նիստում։

Հոգաբարձուների կոմիտեները կառավարում են թէ առանձին վարժարաններ և թէ վարժարանների խմբեր։ Երբ տեղական կոմիտեը միայն մի վարժարան է կառավարում նրա անդամների թիւը պէտք է ութից պակաս չլինի և տասն և երկուսից աւելի։ Եթէ կոմիտեը կառավարում է վարժարանե-

րի ամբողջ խումբ—նրա անդամների թիւը պէտք է ութից պակաս չլինի և 20-ից աւելի։ Հոգաբարձական մի կոմիտեան կարող է կառավարել ոչ աւելի քան երեք վարժարան և միայն որևէ առանձնայատուկ տեղական պայմանների պատճառով նրան յանձնւում է երկուսից պակաս վարժարան։ Հոգաբարձութեան նիստերը կայացած է համարւում երեք անդամի ներկայութեամբ։ Ուսումնարանական Խորհրդի անդամները իրանց շրջանի տեղական կոմիտեաների և հոգաբարձական զանազան յանձնաժողովների անդամ են համարում։ Տեղական հոգաբարձուները իւրաքանչիւր տարի ընտրում են իրանց նախագահին և փոխ-նախագահին։

Հոգաբարձուների պարտականութիւններն են, բացի ուսման վարձի չափի որոշումը (ուր դեռ պահպանւում է ուսման վարձը)—վարժարանների տեսուչների նշանակումը, ինչպէս և ուսուցիչներ ընտրելու պատասխանատուութիւնը։ Նրանք պէտք է հոգան, որ վարժարանում բաւականաչափ թուով ուսուցիչներ լինեն, պէտք է հսկեն վարժարանի խոհանոցների և լուացանոցների վրայ, հոգ տանեն երեխաների ֆիզիկական զարգացման վրայ, ուշադրութեամբ հետևեն, որ զբաղմունքների ցուցակը ճշտութեամբ կատարուի, խորհրդից նշանակած պարգևներ և մեդալներ բաժանեն, ժամանակ-առ-ժամանակ աչքի անցնեն պատժամատեանը, վերաքննեն գրադարանները, և առհասարակ բոլոր ոյժերով և միջոցներով նպաստեն իրանց յանձնուած վարժարանների բարգաւաճման։ «Նրանք պէտք է վերահսկեն», ասուած է հոգաբարձութիւններին Ուսումնարանական Խորհրդից տուած հրահանգի մէջ, «որ ուսուցիչները չչեղուեն իրանց տուած հրահանգներից, պէտք է նեցուկ լինեն ուսուցիչներին մշտական համակրանքով և խրախուսանքով, ամբողջ սրտով ձգտեն աշակերտների մտաւոր, բարոյական և ֆիզիկական զարդացման, և հետևեն որ նրանց մէջ մշակուեն ճշտապահութեան սովորութիւնը, բարեկիրթ ձևեր և լեղու, մաքրասիրութիւն, նմանապէս պէտք է հոգան որ ուսուցիչները աշակերտներին ներշնչեն սիրայօժար կերպով կատարելու իրանց պարտականութիւնները, դէպի միւսները ուշադրութեամբ և յարգանքով վերաբերուել, լինել թէ խօսքով և թէ գործով շիտակ և ճշմարտասէր»։

Բոլոր թէ մասնաւոր և թէ Խորհրդի վարժարաններում հոգաբարձուները պարտաւոր են մատակարարել բոլոր անհրաժեշտ գրքերը և դպրոցական պարագաները և իրաւունք չունեն սիպելու ծնողներին այդ բոլորը գնելու։ Եթէ վարժարանների պահպանութեան համար պետական գանձարանից տուած

օժանդակութիւնները չեն բաւում, պակասը լրացնում է տեղական տուրքերով, համեմատ վճարողների կարողութեան։

Վարժարանի աւագ ուսուցչի ռոճիկը 460 ֆունտից (Լոնդոնում) տարեկան հասնում է մինչև 100 ֆունտի (գիւղերում). ուրեմն մեր դրամով՝ 4600-ից մինչև 1000 ռուբլի։ Աւագ ուսուցչուհու ռոճիկը 300 ֆունտից մինչև 800 ֆունտ։

Շատ ուսումնարանական խորհուրդներ ձմռուայ ամիսներին բանում են երեկոյեան դասարաններ, որոնց նոյնպէս տրրում է պետական գանձարանից նպաստ։ Այդ երեկոյեան դասարանների նպատակն է—տալ միջոց սկզբնական վարժարանների նախկին աշակերտներին շարունակել իրանց կրթութիւնը, երբ նրանք դուրս գալով վարժարանից սկսում են որևէ աշխատանքով պարապել՝ ապրուստ հայթհայթելու համար։ Այդ դասընթացների ծրագրները այնպէս են յարմարեցրուած, որ տինգերորդ կամ վեցերորդ դասարանից դուրս եկած տղան կարող է վերանորոգել իր դպրոցական զրաղմունքները այն կէտից, որի վրայ նա ընդհատեց սկզբնական վարժարանում։ Աւանդուող առարկաների մէջ կայ նաև՝ քաղաքացու պարտաւորութիւնների ուսուցումը։ Ժողովրդի լուսաւորութեան դեպարտամենտը 1893 թ.-ին կազմեց լրացուցիչ կանոններ, որոնք որոշում են թէ ինչ առարկաներ պէտք է դասաւանդեն այդ ընդհանուր վերնագրի տակ։

Այդ առարկաները բաժանուած են հինգ խմբի. 1) տեղական կառավարութիւն. 2) կենտրոնական կառավարութիւն. 3) քաղաքացու պարտականութիւնները տեղական և կենտրոնական կառավարութիւնների նկատմամբ. 4) կայսրութիւն. 5) արդիւնագործական և սոցիալական կեանք և պարտաւորութիւններ։

Այդ նոր կանոնների ղեկավար դաղափարը արտայայտուած է առաջին և վերջին պրակներում։ Առաջին պրակում ցոյց է տրւում թէ որչափ անհրաժեշտ է որ ապագայ քաղաքացիները հասկանան իրանց պարտքը այն տղամարդկանց և կանանց նկատմամբ, որոնք մեծահոգութեամբ և իմաստութեամբ ծառայել են ազգին նախկին ժամանակներում, հասկանան և սեփական պարտաւորութիւնները դէպի սեփական երկիրը ներկայումս»։ «Անձնական շահերը և դասակարգային շահերը պէտք է ենթարկուեն ընդհանուր ազգային շահերին»։ Վերջին պրակում յիշատակւում ի որ «հասարակութիւնը պարտաւոր է համակրել բանուորների իւրաքանչիւր ձգտման—իրանց դրութիւնը բարուոքելու, իրանց միտքը զարգացնելու»։

S.

ՕԲԵՐԼԷՆԵՐԸ*)

Վէպ

Ըստ Բազէճի

VII

Զատկի նախատօնակը

Եղանակն սկսել էր լաւանալ։ Ժան վերստին զտնում էր Ալզասի հովիտը գարնանային փթթումի մէջ։ Եւ սակայն նա՝ որ անչափ ցանկացել էր տեսնել այս տեսարանը միայն մի թոյլ ու անորոշ ուրախութիւն զգայ։ Ճանապարհորդութիւնից նա վերադարձել էր աւելի յուզուած, վրդովուած, քան իսկապէս ցոյց էր տալիս։ Այդ ճանապարհորդութիւնը նրան ապացուցել էր, որ երկու ժողովուրդները, այսինքն երկու ոգիները պայքարի մէջ են, որ հայրենիքի յիշողութիւնը դեռ ևս վառ է բազմաթիւ դժբաղդ անձանց սրտում, որ նրանք իրանց կարծիքների համար, նոյնիսկ խոհեմ, ծածուկ կարծիքների համար տպրելու գժուարութիւն էին կրում։ Նա այժմ աւելի լաւ էր զգում թէ որքան տաժանելի էր լինելու իր կատարելիք դերը ընտանիքում, գործարանում, գիւղում և Ալզասում։ Այն հաճոյքը որ զգաց, իր վերադարձի երկրորդ առաւօտը, երբ հայրը նրան շնորհաւորեց Օբերլէնների անտառների շահագործման մասին պատրաստած տեղեկագրի համար, այդ հաճոյքը մի չընչին, կարճատև սիրտանք էր միայն։ Ժան շատ աշխատեց ուրախ, բաղդաւոր երևալ, բայց կարող եղաւ խաբել միայն նրանց, որոնց խաբուելն ձեռնտու էր։

—Ժան, սիրելիս, ասաց մայրը, համբուրելով նրան այն ժամանակ, երբ գնում էր սեղանատուն նախաճաշելու համար, ինձ թւում է, որ երեսիդ գոյն է եկել, հրաշալի տեսք ունիս։ Ալշէյմի բաց օդը քեզ համար շատ օգտակար է եղել, ինչպէս նաև քո խեղճ մայրիկի ներկայութիւնը, այնպէս չէ՞։

---

*) Տես «Մուրճ» № 9։

—Ի՞նչ ես ասում, խօսեց Էլիսիէնը, իսկ ես գտնում էի նրան շատ միլամաղձոտ։

—Գործերից է, բացատրեց պ. Ժոզէֆ Օբերլէ, հակուելով պատուհանի կողմը ուր նստել էր որդին, գործերի պատճառած հոգսից։ Նա ինձ յանձնեց մի տեղեկագիր, որի համար ես պէտք է նրան հրապարակաւ շնորհաւորեմ. շատ լաւ էր կազմել, շատ յստակ, և որից երևում էր որ ծառերի փոխադրութեան գործում, առնուազն չորս տեղի վրայ, կարող եմ մեծ խնայողութիւններ կատարել։ Լսում ե՞ք, հայր։

Պապը գլխով հաստատման մի նշան արեց։ Բայց իր միտքն ամբողջացրեց քարեատախտակի վրայ ինչ որ գրելով և ցոյց տալով հարսին.

—Ի՞նչ, միթէ երկրի հեծեծանքն է լսել։

Տիկին Մօնիկ շտապ մատների ծայրով ջնջեց նախադասութիւնը։ Ներկայ եղողները նրան էին նայում։ Եւ բոլորը շփոթուել էին, կարծես նրանց մէջ տեղի էր ունեցել մի անախորժ բացատրութիւն։ Ժան վերստին զգաց ներքին ցաւը, որի դէմ ոչ մի դարման չկար։ Ճաշից յետոյ, բոլոր ժամանակ նա աշխատեց սղոցարանի գրասենեակում, բայց մտացիր և մտախոհ։ Նա մտածում էր, որ իհարկէ, մի օր Էլիսիէնը պիտի հեռանար տնից, բայց միթէ այդպիսով պիտի փոխուէր իրերի դրութիւնը. մեծ հայրը նոյնպէս կարող էր մի օր չքանալ, բայց և այնպէս պառակտումը կար ու պիտի մնար։ Այն բոլոր ծրագիրները, որ նա հեռուից կազմել էր, այն յոյսը՝ որ կարող էր տան մէջ խաղաղացման համաձայնութեան, միութեան կամ գոնէ առերևոյթ միութեան մի գործօն դառնալ—այդ բոլորը նրան թուաց շատ երեխայական։ Նա համոզուեց, որ Էլուսիէնը իրաւունք ունէր երբ ծաղրում էր իր պատրանքները։ Ո՛չ, չարիքը միայն իրանց տան մէջ չէ որ գոյութիւն ունէր, այլ ամբողջ Ալզասում։ Մինչև անգամ, եթէ Օբերլէններից ոչ ոք չապրէր Ալզէյմում, Ժան Օբերլէ, նորից պիտի պատահէր իր դրան մօտ, գիւղում, իր բանուորների, յաճախորդների, իր բարեկամների մէջ որոշ բոլէներում նոյն տագնապը, միշտ նոյն սպառնալից հարցը։ Ո՛չ իր կամքը, և ոչ էլ իր կամքի նման մի ուրիշ, չէր կարող վերկել իր ցեղը, ոչ այժմ և ոչ էլ յետոյ։ Այսպիսի տխրութեան բոլէներում բնական է որ Օդիլին տեսնելու և նրանից սիրուելու միաքը, ցանկութիւնը գար անխուսափելիօրէն տիրելու նրա հոգուն։ Բացի Օդիլից, ուրիշ ով կարող էր արդեօք հաճելի դարձնել կեանքն Ալզէյմում, վերադարձնել բոլոր հեռացած ու կասկածոտ բարեկամներին և վերահաստատել Օբէրլէնների բարի անունը հին Ալզասում։ Նա

այժմ Օդիլի մէջ տեսնում էր ոչ միայն սիրուն կինը, դէպի որը թռչում է իր երիտասարդ հոգու երգը այլ և նա տեսնում էր նրա մէջ խաղաղութիւնը, արժանապատուութիւնը և այն միակ կարելի ոյժը, նրան սպասող ապագայ դժուարութիւնների հանդէպ։ Նա այդ տան համար հարկաւոր եղող այն միակ արի ու հաւատարիմ արարածն էր։

Ի՞նչպէս ասել այս բոլորը Օդիլին։ Ո՞ւր գտնել առիթը՝ և նրա հետ խօսել աղատօրէն, առանց բռնուելու, և վրդովուելու այդ կարգապահ նախանձախնդիր ընտանիքը։ Անկասկած ոչ Ալշէյմում։ Բայց որտեղ նշանակել տեսակցութիւնը։ Եւ ի՞նչ կերպ նրան յայտնել այդ մասին։

Ամբողջ գիշեր Ժան այդ մասին խորհեց

Հետևալ առաւօտ, Աւագ հինգշաբթի էր. այդ օրը բոլոր կաթոլիկ եկեղեցիներում Քրիստոսի գերեզմանը զարդարում են ծաղիկներով, ծառերի ճիւղերով, կերպասեղէններով և աստիճանաբար դարսուած ջահերով, և հաւատացեալների բազմութիւնը շտապում է երկրպագել գերեզմանին։ Օդը շատ պարզ էր, եղանակի հետ համեմատած, նոյնիսկ չափից աւելի պարզ, ինչ որ ցոյց էր տալիս թէ մառախուղ կամ անձրև էր առաջանալու։ Պարոն Ֆելիպ Օբերլէի սենեակում, մօրը և Լիւսիէնի հետ բարեկամաբար խօսելուց յետոյ—և դա առաջին անգամ էր որ զգում էր ընտանեկան յարկի տակ գտնուելու տպաւորութիւնը—Ժան ուղղուեց դէպի այգիները, որոնք ձգւում են Ալշէյմի տների յետևի կողմը, և բռնեց այն ճանապարհը, որով անցել էր մի քանի շաբաթ առաջ, Բաստիանների այցելելիս։ Բայց Բամշպախէրի ագարակից մի քիչ դէնը, շուռ եկաւ արահետի հետ, որը մինչև այդ ժամանակ ուղղահայեաց իջնում էր ծառուղու վրայ, իսկ այժմ դառնում էր նրան զուգահեռական և յանգում էր, ինչպէս ծառուղին, աւտնի ճանապարհին։ Նա այժմ գտնւում էր մի արձակ հողի վրայ, որը ծառայում էր իբրև օթևան դաշտի ագարակատէրերից շատերի սայլակներին։ Հարևան դաշտերը ամայի էին։ Ճանապարհը գրեթէ ծածկուել էր մի հողապատնէշով, որի վրայ տնկուած էին ընկուզենիներ։ Ժան սկսեց յառաջանալ դալար ցանկապատի երկարութեամբ, որը եզերում էր Բաստիանների կալուածքը, մօտեցաւ գիւղի մուտքին ու նորից յետ դարձաւ։ Նա սպասում էր։ Յոյս ունէր որ շուտով Օդիլը կ'անցնի արահետով, ցանկապատի միւս կողմից, եկեղեցի գնալու և Քրիստոսի գերեզմանի առաջ աղօթելու համար։

Նա յիշեց իր հին հանդիպումները, միևնոյն տեղը, միևնոյն օրը, և աւելի արիացաւ։ Եւ որովհետև արդէն երրորդ

անգամն էր, որ վերբսկսում էր իր երթևեկը, տեսաւ այն՝ ինչ առաջ չէր նկատել։

—Ո՞րքան գրաւիչ է, մրմնջեց։ Ճանապարհը կարծես շինել են միայն նրա համար։

Ծառուղու ծայրին, երկու հարիւր մետր հեռաւորութեան վրայ, մի դիւթիչ շրջանակում, նշմարւում էին ցանկապատը, անտառի բարձր ծառերի գագաթները և Բաստիանների երկար կտուրի մի մասը։ Հինաւուրց կեռասենիները ծաղկել էին, բոլորը միաժամանակ, միևնոյն շաբաթուան ընթացքում նշենիների և տանձենիների հետ։ Տանձենիները ծաղկում են փնջաձև, նշենիները աստղաձև. իսկ դաշտում տնկուած անտառի կեռասենիները՝ սպիտակ աղեկատի (quenouilles) ձևով.

Հիւթով լցուած, ուռած ճիւղերի շուրջը՝ բիւրաւոր ձիւնաթոյր ծաղկեպսակներ դողդողում էին իրաց վտիտ ցօղունների վրայ, և նրանք այնքան իրար մօտ, այնքան խիտ էին, որ շատ տեղերում ճիւղը չէր երևում։ Իւրաքանչիւր ծառ երկարում էր ամեն կողմ իր ծաղկած ճիւղերը։ Ծառուղու մի եզերքից մինչև միւսը—այնքան հինաւուրց էին կեռասենիները—ծաղկափթիթ ճիւղերի ծայրերը միմեանց էին դիպչում, շաղապատւում։ Թրթռուն թևիկներով մեղուների մի ամբոխ շրջապատում էր նրանց։ Մեղրի մի նուրբ բուրմունք ծաւալւում, ծածանւում էր ծառուղու մէջ և դաշտի զեփիւռի հետ սաւառնում էր անդաստանների, գարնանային հագուստով հագիւ զարդարուած հողերի վրայ։ Մեծ, արձակ հովտում չկար մի ծառ որ կարողանար մրցել իր շքեղութեամբ այս դրախտային ճանապարհի հետ։ Միայն աջակողմում, և բոլորովին մօտիկ, Բաժշպախէրների չորս ընկուզենիները սկսում էին տերևներ արձակել, և իրանց վիթխարի զանգուածով՝ հեռուից կարծես կետուծանկարներ լինէին քանդակուած ագարակի պատերի վրայ։

Վարկեանները անցնում էին։ Վայրի կեռասիների կատարից ծաղիկների թերթիկները անձրևի նման թափւում էին։

Եւ ահա մի կին խոնարհուեց ցանկապատի դուռը բացանելու համար։ Նա է։ Ուղղւում է, առաջանում է յուշիկ յուշիկ ծառուղու միջով, երկու եզերքների խոտերի արանքով, որովհետև նայում է վերև։ Նայում է բացուած սպիտակ փընջիկները։ Նրա մտքով անցաւ նորապսակների թագերը, որոնք այնքան ընտանի են երիտասարդ աղջիկներին։ Օդիլ չժպտաց, այլ նրա ամբողջ դէմքը շողաց, դէպի առաջ կարկառող ձեռքերի մի ակամայ շարժում ունեցաւ, իր երիտասարդութեան կողմից իրը պատասխան և շնորհակալութիւն ցնծուն երկրի այդ բարևին։ Նա շարունակեց իջնել դէպի Ալշէյմ։ Իր մուշտակեայ գդակի,

վեր բարձրացրած այտերի և կապոյտ կերպասեայ շրջազգեստի վրայ վայրի կեռասենիները թափում են իրանց ծաղիկները։ Նա մտածկոտ է։ Ձախ ձեռքում ունի մի աղօթագիրք, որ կիսով ծածկել է իր շրջազգեստի ծալքերում։ Նա կարծում է որ մենակ է։ Առաջանում է ցերեկուայ շքեղութեան մէջ, որը խօսում է նրա հոգուն բայց նա կատարելապէս առոյգ է, արի։ Նա ստեղծուել է արի կեանքի համար։ Աչքերը, որ ծառերի գագաթներն են որոնում, մնում են կենդանի, իր մտածումների տէրը և չեն անձնատուր լինում երազանքին, որ հրապուրում է նրան։

Նա մօտենում էր, չէր կարծում, որ Ժան իրան սպասում է։ Ալշէյմ գիւղը՝ կէս օրուայ ճաշը վերջացրած լինելով, իր սովորական աղմուկն էր բարձրացնում, սայլերի թաւալումը, շների կաղկանձումը, մարդկանց և լաց եղող երեխաների ձայները. բայց այս բոլորը հեռաւորութեան պատճառով խեղդուկ, անսահման օդում ցրուած, հաժատարած փչող հողմի մէջ ընկըղմուած էին ինչպէս ժխորը մի հողակոյտի, որ փլչում է և թաւալում ծովի յատակը։

Երբ Օդիլ անցաւ, Ժան յայտնուեց և կանգնեց ցանկապատի միւս կողմը մի փոքր հեռու։ Եւ Օդիլ քայլում էր շարունակ ծաղկեայ երկու թումբերի միջով. թէպէտև նա նայում էր դէպի վեր, բայց մի բոպէ շուռ տուեց գլուխը, հայեացքը լցուած դեռ ևս իր առաջ պարզուող գարունով, որը յուզել էր նրան։

—Ինչպէ՞ս, այդ դուք է՞ք։

Եւ իսկոյն, խոտերի միջից անցնելով, ուր տնկուած էին կեռասենիները, մօտեցաւ ցանկապատի այն մասին՝ որտեղ կանգնել էր Ժան։

—Ես չեմ կարող այլևս, առաջուայ նման այցելութեան գալ ձեզ մօտ, ասաց Ժան։ Հետևաբար եկայ այստեղ, որ ձեզ սպասեմ... Ես պէտք է ձեզանից մի շնորհ խնդրեմ։

—Շնո՞ր։ Ի՞նչպէս լուրջ էք ասում այդ...

Օդիլ փորձեց ժպտալ։ Բայց իր շրթները մերժեցին ժըպտալ։ Նրանք երկուսով միասին գունատուեցին։

—Ես դիտաւորութիւն ունեմ, ասաց Ժան, որպէս թէ մի լուրջ վճիռ կայացնէր, ես դիտաւորութիւն ունեմ վաղը չէ միւս օր բարձրանալ Սէնտ—Օդիլ... Ես կը գնամ Զատիկը ծանուցանող զանգերը լսելու... Եթէ դուք էլ, ձեր կողմից թոյլատրութիւն ստանայիք այնտեղ գնալու...

—Ուրեմն դուք մի ուխտ ունէք կատարելու, ի՞նչ։ Ժան պատասխանեց.

—Համարեա թէ, Օդիլ, պէտք է, որ ես ձեզ խօսեմ, միայն ձեզ...

Օդիլ մի քայլ յետ քաշուեց։ Հայեացքի մէջ, մի տեսակ սոսկումով նա աշխատեց կարդալ Ժանի դէմքից թէ արդեօք ուղիղ էր ասում նա, թէ արդեօք ինքը չէ՞ր սխալուել։ Ժան նոյնպէս զննում էր նրան անձկութեամբ։ Նրանք կանգնել էին անշարժ, դողահար և այնքան մօտ ու միևնոյն ժամանակ այնքան հեռու միմեանցից, որ կարելի էր ասել թէ սպառնում էին միմեանց։ Եւ արդարև, նրանցից իւրաքանչիւրը զգում էր որ խաղում էր իր կեանքի հանգստութեան հետ։ Իրանք այլևս երեխաներ չէին, այլ մի մի տղամարդ և կին, ուժեղ և կրքոտ ցեղից։ Նրանց էութեան բոլոր կարողութիւնները խօսում էին և ընդհարուում հասարակ սովորութիւնների դէմ, որովհետև հեռաւեալ պարզ խօսքերի մէջ. «Պէտք է որ ձեզ խօսեմ» Օդիլ զգացել էր կողկողալը մի հոգու, որ անձնատուր էր լինում իրան և որը խնդրում էր փոխարէնը։

Ամայի ծառուղու վրայ վաղեմի կեռասենիները բարձրացնում էին իրանց սպիտակ ողեկատները և նրանց ծաղիկների իւրաքանչիւրի բաժակում հանդչել էր ամբողջովին գարնանային արեգակը։

—Վաղը չէ միւս ծը, հարցրեց նա։ Սէնտ-Օդիլ, զանդակների զօղանջումը լսելու համար։

Նա կրկնում էր այն՝ ինչ որ Ժան ասել էր. բայց մանաւանդ ժամանակ շահելու համար և լաւ թափանցելու համար, այն աչքերում, որ յառել էին իր վրայ և որոնք կանաչ էին, ինչպէս անտառի խորքը։

Խորը խաղաղութիւն տիրեց հովտում, ժօտակայ գիւղաքաղաքում քամին մի վարկեան դադարեց փչելուց։ Օդիլ շուռ տուեց դեմքը։

—Կը գնամ, ասաց։

Ո՛չ մէկը և ոչ էլ միւսը աւելի չխօսեցին, նոր բացատրութիւններ չտուին։ Նրանցից ոչ այնքան հեռու, մի փոքրիկ սայլ թաւալում էր ճանապարհի վրայ։ Մի տարդ, Բաստիանի ագարակի սայլերի դարպասն էր կողպում։ Բայց ասուել էր արդէն ինչ հարկաւոր էր ասել։ Այդ խորը հոգիներում, բառերը արձագանգում էին անվերջ։ Նրանք այլևս մենակ չէին։ Նրանցից իւրաքանչիւրը պահում էր իր հոգու մէջ իրանց հանդիպման նուիրական բոպէն և ծալուում էր ինքն իր վրայ, ինչպէս հոգի ակօսները, որոնք միանում են, երբ արդէն ցանուած է սերմը և կեանքը պէտք է կամաց կամաց ծիլ արձակէ։

Օդիլ հեռանում էր։ Ժան պաշտում էր այդ տողջ և ուժեղ դե-

ղեցկութեամբ արարածը, որը հետզհետէ աներևոյթանում էր ճանապարհի վրայ։ Նա քայլում էր լաւ, առանց հասակը շարժեցնելու։ Սպիտակ ծոծրակից վեր, Ժան պատկերացնում էր իր երևակայութեան մէջ այն մեծ, սև զարդահանդոյցը, որ գործ են ածում Ստրազբուրգից այն կողմ բնակուող ալզասուհիները։ Օդիլ էլ աչքերը չէր բարձրացնում դէպի կեռասենիները։ Նրա ձեռքերը թողել էին, որ քաշ գայ շրջազգեստը։ Գլանցքները պառկեցնում էին խոտը, բարձրացնում էին մի քիչ փոշի և թուչկոտել էին տալիս ծաղիկների թերթերունքը, որոնք մեռնելուց առաջ բաբախում էին մի ըոպէ օդի մէջ։

Ո՞րքան ուշ հասաւ երրորդ օրը։ Ժան ասել էր հօրը.

—Մի քանի ուխտաւորներ Աւագ Շաբաթ պիտի բարձրանան Սենտ-Օդիլ, Զատկի զանգակների զօղանջը լսելու համար... Տարուայ այս եղանակում ես երբէք չեմ բարձրացել այնտեղ... Եթէ դուք ոչ մի արգելք չէք գտնում, դա մի զբօսանք է որ հաճոյք պիտի պատճառէր ինձ։

Արգելք չկար։

Այդ օրը, զարթնելով, Ժան բաց արեց իր պատուհանը։ Թանձր մառախուղ էր պատել։ Տանից հարիւր մետր հեռու գտնուող դաշտերը անտեսանելի էին։

—Իհարկէ, այսպիսի եղանակում, դու չես գնայ, հարցրեց Լիւսիէնը, երբ եղբայրը ճաշարան մտաւ իր ամենօրեայ շոկոլան խմելու համար։

—Ի՞նչու չէ, գնում եմ։

—Ոչինչ չես տեսնի։

—Եթէ չեմ տեսնի, գոնէ կը լսեմ։

—Ուրեմն այդչափ հետաքրքիր է լսել զանգակների զօղանջը։

—Այո։

—Եթէ այդպէս է, ինձ էլ հետ տար։

Լիւսիէն ամենևին ցանկութիւն չունէր Սենտ-Օդիլ բարձրանալու։ Ժանեակներով զարդարուն առաւօտեայ բաց գոյն մի շրջազգեստ հագած՝ պուտ-պուտ խմելով իր շոկոլան, նա միայն մի գիտաւորութիւն ունէր, կանգնեցնել իր եղբօրը՝ անցնելու ժամանակ և համբուրել նրան։

—Լրջօրէն, դու գնո՞ւմ ես ուխտի։

—Այո, ուխտի...

Այդ ըոպէին խոնարհած լինելով իր բաժակի վրայ, Լիւսիէն չտեսաւ, այն արագ ժպիտը, որ ընկերանում էր այդ խօսքերին, ու պատասխանեց մի քիչ դառնութեամբ։

—Դու գիտես, որ ես ժոլեռանդ չեմ. ես շատ անփութօրէն կատարում եմ կաթոլիկի իմ պարտականութիւնները, ո-

ռովհետև բարեպաշտական գործողութիւնները ինձ չեն հրապուրում... բայց դու, որ աւելի հաւատք ունես, լսիր ինչ որ քեզ կ'ասեմ... Հաւատացնում եմ քեզ, սա էլ մի ուխտագնացութիւն արժէ...

Նա շեշտը փոխեց և իր ձայնով, որը յանկարծ դարձաւ խանդավառ, յօնքերը բարձրացած, աչքերը միևնոյն ժամանակ կամայական և գորովալից՝ շարունակեց.

Դու պէտք է Աստուծուց խնդրէիր այն հաղուագիւտ, անգնատանելի կինը, որը հարկաւոր է քեզ, մի այնպիսի կին որ կարողանար ապրել այս տնում... Երբ ես ամուսնացած կը հեռանամ այստեղից, կեանքը ձեզ մօտ սարսափելի կը լինի։ Դու մինակ պիտի կրես մեր ընտանեկան պառակտումների և գիւղացիների անվստահութեան դառնութիւնը։ Ոչ որ ցաւակից չպիտի ունենաս... Սա մի դժուար դեր է որ ստիպուած ես յանձն առնել... Ուրեմն խնդրիր մի բաւական ուժեղ, բաւական ուրախ, բաւական գեղեցիկ ու խղճամիտ կին, որ նեցուկ լինէր քեզ, քանի որ դու ցանկացար Ալշէյմում ապրել... Տեսնում ես, իմ խորհուրդը՝ բարեկամի խորհուրդ է։

—Պատուական բարեկամի։

Համբուրուեցին։

—Յտեսութիւն, ուխտաւոր։ Յաջողութիւն։

—Յտեսութիւն։

Ժան Թռաւ։ Իսկոյն իջաւ բուրաստանը, վանդակապատից անցնելով, բարձրացաւ հմուլի դաշտերի և խաղողի այգիների երկարութեամբ և մտաւ անտառ։

Անտառը նոյնպէս մառախլապատ էր։ Իրար մօտ սեղմուած եղևնիների խմբերը՝ որոնք գրոհ տալով բարձրանում էին դէպի զառիվայրերը, հեղեղահոս գետակի մի ափից միւս ափը գորշ էին երևում և որքան հեռաւորութիւնը աւելանում էր այնքան անհնմարելի էին դառնում, անարեգակ ու անստուեր ամպի—մշուշի մէջ։ Ժան չէր գնում գծուած ճանապարհով։ Բերկրալից, ոտոստելով բարձրանում էր սարն իվեր, երբեմն շունչ քաշելու համար կանգ էր առնում և մտիկ տալիս, արդեօք, վերևից կամ վարից, յամենայն դէպս անթափանցելի, խորհրդաւոր անտառի մի տեղից չէր լսի Օդիլի, կամ այլ ուխտաւորների ձայնը։

Բայց ոչ։ Նա լսում էր միայն ջրերի թաւալումը, կամ երբեմն մի անծանօթ ձայն, որը կանչում էր իր շանը, կամ, երկչոտ կոչը՝ մի խղճուկ Օրերնէցու, որ իր երեխայի հետ եկել էր չոր փայտ հաւաքելու, հակառակ օրէնքի, որը միայն

հինգշաբթի օրերն է թույլ տալիս փայտ ժողովելը։ Բայց ինչ արած.

Միթէ՞ կարելի էր Զատիկ օրով առանց կերակուրի մնալ, չեփած թողնել պտուկը։ Եւ այդ մառախուղն էլ մի երկնային պաշտպանութիւն չէր արդեօք, որ պահապանների աչքից ծածկում էր ամեն ինչ։ Ժան հաճոյք էր զգում այդ տաժանելի և մենաւոր վերելքից։ Եւ քանի բարձրանում էր, այնքան աճում էր նրա մէջ Օդիլի մասին մտածումը, ինչպէս նաև ուրախութիւնը՝ որ նրան տեսնելու համար ընտրել է Ալզասի այս սրբազան վայրը, և այս կրկնապէս յուզիչ օրը։ Նրա շուրջը ամեն կողմ տարածուած էր doradille-ը, այդ գեղեցիկ թուփը, որ զարդարում էր ապառաժուտ սարի կողերը. ելակենիները նոր էին ծաղկում ինչպէս և առաջին քօղահատները (muguet). կռնկենները՝ (geranium) որ Սէնտ-Օդիլում այնքան գեղեցիկ են, ցցում էին իրանց աղուամազոտ ցօղունները, և հացապաղինները, հապալասիները, հաղարջենները, այսինքն անտառային բոլոր թփիկները, դաշտային բոլոր ծաղիկները սկսում էին դեփիւռի մէջ խառնել իրանց շարժուն հիւթի բուրմունքը։ Մառախուղը՝ ինչպէս Վոժերի կողերի վրայ ձգուած մի հսկայ ցանց, ընում, պահում էր այդ բուրմունքները, թոյլ չէր տալիս, որ ցրուեն։

Ժան անցաւ Հէյդէնբրուխի մօտով, նայեց զէպի կանաչ լուսամփեղկերը և շարունակեց իր ճանապարհը։ «Ուլրիխ մօրեղբայր, շշնջաց նա, դուք անկասկած երջանիկ կը լինէիք եթէ տէսնէիք, եթէ իմանայիք թէ ո՞ւր եմ գնում, և շուտով ո՞ւմ հետ եմ լինելու։» Ֆիդելը հաջեց կիսաքուն դրութեան մէջ, բայց տեղից չշարժուեց։ Լեռը դեռ ևս ամայի էր։ Մի ուրուր կանչում էր մշուշից վերև։ Ժան, որ երեխայութիւնից իվեր չէր բարձրացել Սէնտ-Օդիլ հրճւում էր այս վայրենի և խաղաղ տեսարանով։ Բարձրացաւ սարի կատարը, որ սեփականութիւնն էր Ստրազբուրգի եպիսկոպոսութեան և երկար մաս եկաւ, աշակերտական հին տպաւորութիւնները վերանորոգելու համար, «հեթանոս պարսպի» շուրջը, որ տաս կիլոմետրաչափ տարածութեամբ պատում էր սարի գագաթը։

Կէս օրին, Մէնեելշտայնի ապառաժի առաջով անցնելիս, մտաւ մենաստանի բակը, որ կառուցուած էր սարի կատարին, և այնտեղ մեծ ամբոխի փոխարէն ուխտաւորների բազմաթիւ խմբեր դտաւ, ձիուց արձակուած կառքեր, վաղեմի ծառերի կոճղին կապուած ձիեր։ Ժան յիշեց ճանապարհը։ Ուղղուեց զէպի աջ դանուող մատուռները։ Առաջինի միջով անցաւ միայն, բայց երկրորդում, որի կամարները ցածր էին, կանգ առաւ նշխարատուփի առաջ, ուր պառկել էր Ալզասի պաշտպանուհու

մեղրամոմեայ արձանը, աբբայուհի սուրբ Օդիլի արձանը, անչափ քնքուշ՝ իր վարդագոյն դէմքով, իր քօղով, իր ոսկի մակնոցով, իր մանիշակագոյն վերարկուով։ Ժան ծնրադրեց. իր հաւատքի ամբողջ զօրութեամբ աղօթեց իր պառակտուած և տխուր տան համար, որտեղից հեռացած լինելու համար ուրախութիւն էր զգում. աղօթեց նոյնպէս որ Օդիլ Բաստիան գայ այս սիրային տեսակցութեան, որի ժամը մօտենում էր։ Եւ որովհետև անկեղծ հոգի ունէր, յարեց. « Թող յայտնուի մեր ճանապարհը։ Երանի թէ կարողանայինք միասին գնալ այդ ճանապարհովը։ Երանի թէ հեռացուէին նրա վրայ գտնուող արգելքները։» Միևնոյն տեղում դարերից իվեր ամբողջ Ալզասը ծնրադրել էր։

Յետոյ նա հեռացաւ մատուռից և գնաց մենաստանի սեղանատունը, ուր կրօնաւորուհիները սկսել էին արդէն սպասաւորել առաջին այցելուներին։ Օդիլ այնտեղ չէր։ Ճաշից յետոյ, որը նորանոր ուխտաւորների դալով դանդաղեցաւ և շատ երկար տևեց, Ժան շտապով դուրս եկաւ, ինչպէս ժայռի ստորոտը, որի կատարին հանգչում էր վանքը, և գտնելով այն ճանապարհը, որը գալիս է Սէն-Նաբորից և անցնում է Սէնտ-Օդիլի աղբիւրի մօտով, գնաց կանգնեց անտառի մթին մասերից մէկում, որ իջնում էր ճանապարհի դարձուածքներից մէկի վրայ, որով գալիս էին ուխտաւորները։ Իր ոտքերի տակ փռուում էր ճանապարհի գիծը՝ լերկ, կաղնու տերևներով ծածկուած, կարծես օդի մէջ կախ ընկած։ Որովհետև այդ դիրքից այն կողմ, լեռան լանջերը այն աստիճան ուղղաձիգ էին դառնում, որ չէին տեսնուում այլևս։ Պարզ օդով նկատելի էին լինում լեռան երկու անտառապատ հանդիպակաց շղթաներ, որոնք ձգուում էին դէպի աջ և դէպի ձախ։ Այժմ հայեացքը բաղխուում էր սպիտակաթոյր մշուշի վարագոյրին, որ ծածկում էր ամէն ինչ. անդունդը լեռնալանջերը, ծառերը։ Բայց հողմը փչում էր և ալեկոծում մառախուղը, որի խանձրութիւնը անդադար նուազում էր։

Ժամի երկուսն էր։ Մի ժամից Զատկուայ զանգակները պիտի հնչէին։ Այն անձինք որ հետաքրքրուում էին լսելու զանգակների զօղանջը, պէտք է որ դադաթից շատ հեռու չլինէին։

Եւ արդարև, խոր լռութեան մէջ, Ժան լսեց ցածրից եկող խառնիխուռն ձայնի պատառներ, որ թնդում էին անտառի կամարների տակ։ Յետոյ նրա ականջին հասաւ Marseillaise-ի հեռաւոր նախադասութիւնը. «Վազեցէք ձեր գնդերը»։ Ժան իսկոյն հասկացաւ, որ ալզասցի ուսանողներ էին։ Երկու երիտասարդներ՝ որոնցից մէկը արտասանել էր յիշեալ նախադա-

սուլթիւնը և որի ետևից խսկոյն հասաւ մի ուրիշը, հետզհետէ դուրս եկան մառախուղի միջից և գնացին դէպի վանքը։

Յետոյ մի երիտասարդ զոյգ բարձրացաւ. կինը հագել էր սև, աղեղնաձև կտրուած մի կոբսաժ, որի տակից երևում էր սպիտակ շապիկը. գլխին ծածկել էր ժապաւինազարդ, սաղաւարտանման մի գլխարկ։ Տղամարդը կրում էր ճեղանեայ թաւիշից մի բաճկոնակ, պղնձեայ կոճակներով մի վերնազգեստ և մուշտակեայ մի գդակ։

—Վիսեմբուրգցի գիւղացիներ են, ժտածեց Ժան։

Քիչ յետոյ, նա տեսաւ ալշէյմցի և հէլիգէնշտէյնցի կանանց, որ շաղակրատելով անցնում էին։ Նրանք կայտառ էին, բայց իրանց հագնուածքի մէջ ոչ մի հետք չէր երևում ալզասական տարազից։ Նրանց թւում գտնւում էր Միւնստէր հովիտից մի կին, որը ճանաչւում էր իր մուգ գոյն գլխանոցից՝ հարաւցի կանանց գլխի մետաքսեայ թաշկինակի նման ամրապնդուած կղակի տակ և ճակատը զարդարուած կարմիր, վարդաձև մի զարդով։

Երկու բոպէ էլ անցաւ։

Մշուշի միջից բարձրացաւ մի ոտնաձայն. մի քահանայ երևաց, տարիքոտ, ծանրաշարժ, որը քայլելիս անդադար սըրբում էր երեսը։ Երկու երեխայ, զուարթ դէմքերով, անշուշտ քիչ առաջ անցնող կանանցից մէկի երեխաները, որ ետ էին մնացել, քահանայից առաջ անցան, երկուսով միասին բարևեցին և ալզասերէն ասացին.

—Օրհնեալ լինի Յիսուս-Քրիստոս, Տէր-հայր։

—Թող օրհնեալ լինի դարուց դար, պատասխանեց քահանան։

Քահանան երեխաներին չէր ճանաչում, բայց նրանց հետ խօսեց միայն նրա համար, որ պատասխանէ նրանց հնաւանդ և գեղեցիկ բարևելու ձևին։ Ժան՝ կիսով չափ ծածկուած՝ նստել էր մի եղևնու մօտ. նա նորից լսեց, որ մի մարդ, մի ծերունի՝ քահանայից առաջ անցնելով ասաց նրան.

—Օրհնեալ լինի Յիսուս-Քրիստոս։

Քանի՞ քանի՞ անգամներ այս ողջոյնը հնչել էր արդեօք անտառի կամարների տակ։ Ժան հայեացքը գցեց դէպի առաջ, բայց այնքան խորասուզուած էր մտքերի մէջ, որ միայն անորոշ ձևեր էր տեսնում, առանց նրանց կապակցելու իր մտածմունքով։

Եւ մի քանի բոպէ մնաց այդ դրութեան մէջ։ Յետոյ հաղիւ լսելի մի շշունջ, այնքան թոյլ, որ ոչ մի թռչնի երգ չկայ, որ նրանից աւելի ուժեղ չլինի, բարձրացաւ մշուշի քուլաների վրայ. «Ողջոյն քեզ, Մարիամ, շնորհով լեցուն, ամենաօրհնեա-

լը բոլոր կանանց մէջ»... Մի երկրորդ շրջունջ յաջորդեց առաջինին և ամբողջացրեց Ողջոյնը. «Սուրբ Մարիամ, Աստուածածայր, բարեխօսիր մեզ համար...» Եւ ակամայ յուզում, մի խորհրդաւոր ստուգութիւն յաջորդեց այդ ողջոյնին, երբ տեսաւ երկու կանանց բարձրանալը

Նրանք երկուսն էլ բարձրահասակ էին։ Աւելի տարիքաւորը ալշէյմցի մի պառուած աղջիկ էրի, որ դէմքը մառախուղի գոյնն ունէր, և որ նա ապրում էր, մի փոքրիկ եկամուտով՝ եկեղեցու հովանու տակ, որ նա զարդարում էր տօն օրերին։ Նա յոգնած տեսք ունէր, բայց ժպտում էր աղօթելով և համարիչ քաշելով։ Երիտասարդ ընկերուհին քայլում էր աջակողմից, զառիվայրի ստորոտը գանուող արահետի եզերքից հպարտ գլուխը փոքրը ինչշոճու բարձր բռնած. նրա մազերը դժգոյն խարտեաշ էին, դեղեցիկ կեղևի նման. ամբողջ մարմինը բարեձև էր և կայտառ։

Ժան անշարժ մնաց, բայց երկու կանանցից երիտասարդը տեսաւ նրան և գլուխը շուռ տուեց։ Օդիլ ժպտաց և առանց աղօթքն ընդմիջելու, աչքերով լեռան գագաթը ցոյց տալով, պատասխանեց.

—Ձեզ կը սպասեմ այնտեղ։

Երկու կիները, չդանդաղեցրին իրանց քայլերը։ Ուղիղ, համաչափ քայլափոխելով, իրանց մարմնի թեթև շարժումով իրանց ձեռքի համարիչը ճօճելով, բարձրացան և հինաւուրց անտառը նրանց հիւրընկալեց իր շուաքի տակ։ Ժան մի քանի բոպէ ևս սպասեց և յետոյ յառաջացաւ նոյն ճանապարհով։ Ճանապարհի դարձուածքին, այնտեղ ուր նա ուղիղ դիրք ստանալով կտրում անցնում է սարի գագաթը և յանգում վանքին, Ժան կրկին տեսաւ երկու ճանապարհորդուհիներին։ Գոհ, որ հանում էին, նրանք գնում էին աւելի արագ, հովանոցները բացած, որովհետև մշուշը, որ չէր փարատւում, այժմ տաքացել էր, և ծառերի ստորոտներում շուքի ուրուագիծեր կային։ Արևը պէտք է խոնարհուէր դէպի Վոժերի գագաթները և դէպի Ֆրանսայի հովիտները, որոնք տարածւում էին Վոժերի միւս կողմը։

Ուխտաւորները Սէնտ-Օդիլի նշխարատուփի առաջ իրանց ուխտը կատարել էին արդէն և շտապում էին այցելել այն վայրերը, որոնք նուիրագործուել էին կրօնական կամ աշխարհական աւանդութեամբ. Սէնտ-Օդիլի աղբիւրը, սուրբ Յովհաննէսի աղբիւրը, կամ այն երկար շրջափակը, որից մի շատ նեղլիկ արահետով բարձրանում էին մինչև Մէնհէլշտէյնի ժայռերը, որտեղից տեսարանը առհասարակ չափազանց դեղեցիկ է դէպի հարևան լեռները, Բլոսսի և Էլսբերգի սարերը, կիսաւեր դը-

ղեակները, որոնք իրանց հին աշտարակները ցցում էին կաղինների շարքում, ինչպէս Անգլտու, Շրէսբուրգ, Լանդսբերգ և ուրիշներ։ Ժան տեսաւ, որ երկու ճանապարհորդ կանայք անցան բակից և ուղղուեցին դէպի մատուռը։ Այն ժամանակ ետ դարձաւ, եկաւ մինչև քամուց մաքրուած ծառուղու սկիզբը, այն մեծ կամարակապ շինութեան մօտ, որ նմանւում էր ամրոցի։ Տասը րոպէ յետոյ, Օդիլ մենակ դուրս էր գալիս մատուռից և գուշակելով որ Ժան Օբերլէ կարող էր նրան սպասել այլտեղ, քան այդ բազմամբոխ բակում, վերցրեց անտառի ճանապարհը։ Նա հագնուել էր այնպէս, ինչպէս Աւագ հինգշաբթի օրը. կրում էր մինոյն մուգ գոյն շրջազգեստը, բայց դրել էր գլխանոցի մի շատ պարզ և բոլորովին նոր գլխարկ, որը նրան աքանչելի օրէն սազում էր. դա յարդեայ լայնեզր մի գլխարկ էր, մի կողմից վերը բարձրացած և զարդարուած շղարշեայ հանգոյցով։

Թեւի վրայ կրում էր հովանոցը և ամառնային վերարկուն։ Օդիլ քայլում էր արագ, գլուխը մի քիչ խոնարհած, ինչպէս այն մարդիկ, որոնց ճանապարհը չի հետաքրքրում և որոնց հոգին դեռ ևս աղօթքի կամ մտածմունքի մէջ է։ Երբ հասաւ, Ժանի մօտ, որը կանգնել էր դարպասի աջակողմը, գլուխը բարձրացրեց և առանց կանգնելու ասաց։

—Այն կինը, որ ինձ հետ եկել էր, հանդստանում է։ Ահա ես եկայ...

—Ա՜հ որքան բարի էք, որ հաւատ ունեցաք, դէպի ինձ ասաց Ժան։ Եկէք, Օդիլ։

Ժան սկսեց քայլել, նրա կողքից այն ծառուղիով, ուր բարձրանում էին նիհար, ձմեռուայ փոթորիկներից ծռմռուած ծառեր։ Նա այնքան յուզուած էր իր երազը իրագործուած տեսնելով, որ խորհում էր միայն մի բանի մասին. յայտնել երախտագիտութիւն Օդիլի, որ լուռ ու մունջ քայլում էր նոյնքան յուզուած, որքան Ժանը։

Այնտեղ, ուր ճանապարհը սկսում էր իջնել, միմեանցից քիչ հեռացան, մտան հսկայ ու խիտ կաղնիներով անտառի մէջ, և վերցրին այն շաւիղը, որ պտտւում էր մենաստանի շուրջը։

Այլ ևս ոչ մի վկայ չկար, և Ժան նկատեց, որ Օդիլի ցորենագոյն աչքերը, խորունկ և լուրջ աչքերը, բարձրանում էին դէպի նա։ Անտառում՝ տերևների վրայից ընկնող մառախուղի շիթերի հանած աղմուկից բացի ոչ մի աղմուկ չկար։

Նրանք բոլորովին մօտեցել էին իրար։

—Ես ձեզ խնդրեցի գալ, ասաց Ժան, որպեսզի դուք ինքներդ վճռէիք իմ գոյութեան հարցը։ Դուք իմ առաջին երիտա-

սարդութեան բարեկամուհին էիք... Ես կուզէի որ լինէիք իմ մշտական բարեկամուհին։

Օդիլ, այժմ հայեացքը ընկղմած հեռաւոր տարածութեան մէջ, դողդոջուն պատասխանից.

—Մտածէ՞լ էք...

—Ամեն բանի մասին։

—Նոյնիսկ այն բանի որը կարող է մեզ բաժանել։

—Ի՞նչ էք ուզում ասել դրանով։ Ի՞նչից էք վախենում։ Գուցէ վախենում էք մտնել մի անմիաբան ընտանիք։

—Ո՛չ։

—Դուք միաբանութեան տարրը կը լինէիք, արդարև. ես դրան հաւատացած եմ։ Դուք կը լինէիք նրա ուրախութիւնն և խաղաղութիւնը։ Ուրեմն ի՞նչից էք վախենում։ Կարծում էք որ ձեր հայրը կամ իմը կը հակառակե՞ն, որովհետև թշնամիներ են։

—Դրան կարելի էր յաղթել, ասաց երիտասարդը աղջիկը։

Ուրեմն նրա համար, որ ձեր մայրը ինձ ատում է, վրայ բերեց Ժան թափով։ Նա ինձ ատում է այնպէս չէ՞։ Անցեալ օրը որքան կոշտ վարուեց նա ինձ հետ, որքան թշնամաբար...

Խարտեաշ գլուխը ժխտումի մի նշան արեց։

—Նա աւելի դժուարութեամբ հաւատ կը ընծայէ ձեզ, քան հայրս, աւելի դժուար քան ես։ Բայց եթէ նա մի անգամ տեսնէ, որ ձեր դաստիարակութիւնը չէ այլանդակել ձեր մէջ ալ-զասեցու հոգին, նա կը փոխի իր կանխակալ կարծիքները։

Մի բոպէ լռութիւնից յետոյ, Օդիլ աւելացրեց.

—Ձեզ կարծում , որ սխալուած լինեմ։ Այսօրուայ արգելքները կարելի է հեռացնել, ձեր, իմ, և կամ մեր երկուսի միջոցով։ Ես երկիւղ եմ կրում միայն անծանօթից, այն փոքրիկ դիպուածից, որ կարող էր դալ վաղը և աւելի ծանրացնել այն դրութիւնը, որը այնքան խառն, այնքան շփոթ է այսօր արդէն։

—Հասկանում եմ, պատասխանեց Ժան, դուք երկիւղ էք կրում իմ հօր փառասիրութիւնից։

—Գուցէ։

—Նրա այդ փառասիրութիւնը մեզ շատ է տանջել արդէն։ Բայց վերջապէս նա իմ հայրն է. ուզում է ինձ պահել Ալշէյմ, այդ նա ինձ ասում է ամեն օր. երբ նա իմանայ, որ ես ձեզ եմ ընտրել, Օդիլ, և եթէ մեր ամուսնութիւնը քանդող անձնական ծրագիրներ անգամ ունի, նա գոնէ յանձն կ'առնէ նրանց յետաձգել... այս մասին չարժէ երկիւղ կրել։ Մենք կը-յաղթենք։

—Մենք կը յաղթենք, կրկնեց Օդիլ։

—Ես դրան հաւատացած եմ, Օդիլ։ Դուք կը քաղցրացնէք իմ կեանքը, որ դժուար, դուցէ և անկարելի դառնար նոյնիսկ, եթէ դուք ինձ հետ չլինէիք։ Ես ձեզ համար միայն վերադարձայ հայրենիք... Եթէ ձեզ ասէի, որ շատ տեղեր եմ եղել, բայց չեմ գտել մի կին, որը ինձ համար ունենար այն հմայքը, որ դուք ունիք, իմ վրայ գործէր... ահ, ինչպէս ասել, լեռան մաքուր ու խոր ակի այն տպաւորութիւնը, որ դուք գործում էք...

Ամեն անգամ, երբ մտքովս էր անցնում ապագայ ամուսնութեան գաղափարը, իսկոյն ձեր դէմքն էր, որ պատկերանում էր իմ առաջ։ Ես ձեզ սիրում եմ Օդիլ։

Նա բռնեց Օդիլի ձեռքը. Օդիլ աչքերը յառած դիմացը, դէպի անտառի այն պատռուածքը, որից լոյսը մաղւում էր, պատասխանեց.

—Աստուած վկայ է, որ ես էլ ձեզ եմ սիրում։

Եւ ուրախութիւնից սարսռաց. Ժան զգաց այդ նրա ձեռքի դողդողալուց։

—Այո, ասաց Ժան, հայեացքը ուղղելով Օդիլի հայեացքին, որ սևեռել էր դէպի հեռուն. մենք յաղթող դուրս կը գանք ամեն բանից։ Մենք կը յաղթենք այն բաղմաթիւ արգելքները, որ ծնունդ են առել նոյն սոսկալի հարցից. միայն նա է կանգնել մեր երկուսի մէջ..,

—Անկասկած. միայն նա գոյութիւն ունի աշխարհի այս անկիւնում։

—Նա թունաւորում է ամեն ինչ։

Օդիլ դադար արաւ և Ժանի կողմը դարձրեց իր դէմքը՝ դողդոջուն՝ այն գեղեցիկ, հպարտ սիրով, որը Ժան ցանկանում էր ճանաչել և ներշնչել։

—Ասացէք, ընդհակառակը, որ նա մեծացնում է ամեն ինչ։ Մեր կսիները, այստեղ, գիւղական չնչին կսիներ չեն։ Մենք ի նպաստ կամ հակառակ ենք մի հայրենիքի։ Մենք պարտաւոր ենք ամեն օր արիութիւն ցոյց տալ, ամեն օր մեզ համար թշնամիներ ստեղծել, ամեն օր խզել մեր յարաբերութիւնները մեր հին բարեկամների հետ, որոնք յօժարութեամբ մեզ հաւատարիմ կը լինէին, բայց Ալզասում չեն կարողանում լինել այլևս։ Այստեղ մեր կեանքի ամենահասարակ գործողութիւններն անգամ նշանակալից են, հաստատում են մի միտք, մի որոշ գաղափար։ Հաւատացնում եմ ձեզ, Ժան, որ այս բոլորը ենթադրում են մի ազնուութիւն։

—Իրաւունք ունես, իմ պաշտելի Օդիլ։

Երկուսը միասին կանգ առան վայելելու համար այս քաղցր բառը։

Նրանց հոգիները ցոլանում էին ամբողջապէս նրանց աչքերի մէջ և զողդոջուն նայում էին միմեանց։ Եւ ցածր ձայնով, թէպէտև ոչ մի ուրիշ վկայ չկար, բայց միայն քամուց շարժուող կաղնիների կատարները, նրանք խօսեցին ապագայի մասին, ինչպէս մի արդէն սկսուած յաղթանակի մասին։

—Լիւսիէնը կարող է իմ կողմը լինել, ասում էր Ժան։ Ես նրան կը հաղորդեմ իմ գաղտնիքը, երբ յարմար առիթը ներկայանայ։ Նա ինձ կը պաշտպանէ և՛ շահից, և՛ սիրոց զբրդուած, և ես կատարելապէս վստահ եմ նրա մասին։

—Իսկ ես վստահ եմ իմ հօր մասին, պատասխանում էր Օդիլ, որովհետև նա լաւ տրամադրուած է արդէն դէպի ձեզ... Բայց զգուշացէք, որ նրան զայրացնելու բնաւորութիւն ունեցող որևէ անխոհեմութիւն չգործէք... Մի՛ աշխատէք ինձ տեսնել Ալշէյմում, մի՛ արագացնէք ժամը...

—Զմայլելի ժամը, ուր ձեզ պիտի խոստանան ինձ։

Առաջին անգամ միմեանց ժպտացին։

—Ձեզ սիրում եմ այնքան խորապէս, շարունակեց Ժան, որ չեմ ուզում ձեզանից խնդրել այն համբոյրը, որ անկասկած ինձ պիտի շնորհէիք... Այդ համբոյրին իրաւունք չունեմ եւ. մենք բոլորովի կախուած չենք մեզանից, Օդիլ... Եւ յետոյ ինձ հաճոյք է պատճառում ցոյց տալ ձեզ, որ դուք կատարելապէս նուիրական էք ինձ համար... գոնէ ասացէք որ ինձ, հետ պիտի տանեմ ձեր հոգուց մի պատառ, այնպէս չէ՞։

Օդիլի շրթունքները մրմնջացին. «Այո։» Եւ համարեա անմիջապէս.

—Լսում էք հեռուն։ Զատկական առաջին զանգահարութիւնն է։

Միասին կռացան դէպի այն կողմը, որտեղից թաւուտը ցածր էր իջնում։

—Ո՛չ, քամին է շարժում ծառերը։

—Եկէք, ասաց Օդիլ։ Զանգակները խկոյն կը հնչեն... Եւ եթէ ես այս բոպէիս այնտեղ, սարի կատարը չլինեմ զանգերի հնչած ժամանակ, իմ ընկերակից պառաւ Ռոզան կը պատմի...

Համարեա անխօս, քաշ տուեց նրան մինչև ժայռի ստորոտը։ Այդտեղ միմեանցից բաժանուեցին, որպէսզի տարբեր ճանապարհներով բարձրանան դէպի մենաստան։

—Ձեզ կը գտնեմ դերբոսի, վրայասաց երիտասարդ աղջիկը։

Զորակների խորքում օրը կապտին էր տալիս։ Այս այն ժամն

էր, երբ գիշերուայ գալուստը շատ երկար չի տևում, երբ երաշխող ժամի մէջ ծագում է յաջորդ օրը։

Մի քանի րոպէում ժամը անցաւ բակից, վանքի նրբանցքներից և բացաւ այն դուռը, որ հանում է սուր անկիւն կազմող մի պարտէզ, շինութիւնների արևելակողմում։ Այդտեղ է, որ հաւաքւում են Սէնտ-Օգիլի բոլոր ուխտաւորները, դիտելու համար Ալզասը, երբ օդը պարզ է։ Մի ցածր պատ երկարում է մինչև կատարը այն հսկայ ժայռուտ բլրի, որը ասպանդակաձև ձգւում է անտառի վերև։ Նա տիրապետում է ամեն կողմից զառիվայրերը ծածկող կաղնիների վրայ։ Նրա ամենաբարձր ծայրից, ինչպէս մի փարոսի կանթեղից, նշմարւում է աջակողմում լեռների մի ահագին զանգուած և Ալզասի դաշտը աջից և ձախից։ Նոյն րոպէում մառախուղը երկու մասերի էր բաժանուած, որովհետև արեգակը ընկել էր Վոժերի կատարից ցած։ Այն բոլոր ամպերը, որոնք Վոժերի կատարների ծփուն գծից վեր չէին բարձրանում, ազօտ էին և մոխրագոյն, և անմիջապէս նրանց վերև արեգակի համարեա հորիզոնական շառաւիղներ թափանցելով և երփներանգելով մառախուղը դաշտանկարի երկրորդ մասին ընծայում էին թեթևութեան, լուսաւոր փրփուրի տեսել։ Եւ արդէն այդ բաժանումն իսկ ցոյց էր տալիս այն արագութիւնը, որով բարձրանում էր ամպը Ալզասի հովտից դէպի խուսափուկ արեգակը։ Ամպի խոնիխուսն քուլաները մտնում էին շողշողուն տարածութեան մէջ, ծիրան եր փուում էին և այդպէս ցոյց էին տալիս նրանց անդադար փոփոխուող ձևերը, ինչպէս և այն ուժը, որ ձգում էր նրանց, որպէս թէ լոյսը հրաւիրելիս լինէր ամպի սիւները դէպի երկնքի բարձունքները։

Այնտեղ ապաստանարանում, որ յատկացրած էր ուխտաւորներին և հետաքրքիրներին, դրան առաջ կանգնել էր մի ծերունի, Ստրազբուրգի հիւսիսային մասի ծերունի ալզասեցիների տարազով հագնուած։ Նրա մօտ էր այն մոխրագոյն, գանգուր մազերով քահանան, որ Սէնտ-Օգիլի զառիվայրի վրայ ողջունել էին երեխաները առաւօտեան։ Երկու քայլ աւելի հեռու գտնուում էր վիսեմբուրգցի շինական ընտանիքի այր ու կին զոյգը, և, ամենասուր մասում, պատի վրայ, միմեանց կողքին սեղմուած նստել էին երկու ուսանողներ, որոնք կարծես թէ երկու եղբայրներ էին, մէկը խարտեաշ, մէջտեղից բաժանուած դեռաբոյս մօրուքով, միւսը շագանակագոյն նոյնատեսակ մօրուքով։ Դրանց բոլորն էլ ալզասեցիներ էին։ Իրար հետ փոխանակում էին երբեմն հասարակ խօսքեր, ինչպէս անծանօթներ։ Երբ Ժան Օբերլէի գալը տեսան, մեծ մասը երես

դարձրին, և յանկարծ այդ անծանօթները միմեանց աւելի կապուած զգացին ցեղային կապով, որը ամրապնդուում էր բոլորի անվստահութեան պատճառով դեպի նոր եկողը։

—Դա գերմանացի է, ասաց մէկը։

Այն ծերունին, որ քահանայի մօտ կանգնել էր, մի հայեացք գցեց պարտէզի կողմը և պատասխանեց.

—Ո՛չ, բեխերի ձևը ֆրանսիական է և կերպարանքը մեր երկրացի։

—Ես տեսայ, որ նա ման էր գալիս ալշէյմցի օրիորդ Օդիլ Բաստիանի հետ, ասաց երիտասարդ կինը։

Խումբը, վստահացած՝ աւելի վստահ դարձաւ, երբ Ժան քահանային բարևեց ալզասական բարբառով և հարցրեց.

—Ի՞նչ, մի՞թէ Ալզասի զանգակների հնչումը ուշ է մնացել։

Բոլորը ժպտացին, ոչ թէ Ժանի խօսքերի վրայ, այլ որովհետև զգում էին, որ իրանք իրանց մէջ են, իրանց երկրում, առանց նեղացուցիչ օտարականների, օտարացեղ վկաների։ Եկաւ և՛ Օդիլը, և, առաջին խմբի աջակողմում, յենուեց պատին։ Ժան խմբի միւս կողմում յենուել էր նոյնպէս պատին։ Նրանք երկուսն էլ տառապում էին, որ միմիանց այնքան կաթոգին սիրելով հանդերձ, իրանց սէրը միմեանց խոստովանելով հանդերձ ստիպուած էին ուրիշների առաջ իրանց զգացումները թագցնել։

Զանգահարութիւնը ուշ չէր մնացել։ Բարձրացող մառախուղի մէջ զանգակների զօղանջը հնչում էր խուլ և անընդհատ։ Նրանք՝ այդ զողանջները՝ յանկարծ դուրս ժայթեցին ամպից. ասես մառախուղի իւրաքանչիւր պայան՝ ընդհարուելով պատին, որպէս զզզջակ պայթելիս լինէր և նուիրական լեռան կատարի վրայ հեղուր զանգակների ներդաշնակութիւնը։ «Զատիկ, Զատիկ։ Քրիստոս յարեաւ։ Նա փոխեց աշխարհը և ազատեց մարդկանց։ Բացուել են երկնքի դռները։» Ալզասի զանգակները այդ էին երգում։ Զօղանջները գալիս էին լեռան ստորոտից և կարծես հեռուներից, շատ հեռուներից. զօղանջ՝ փոքր զանգակների, զօղանջ՝ մայր եկեղեցու հսկայ զանգակների, զօղանջներ, որ չէին ընդհատուում երբէք, և մի զանգակից միւսը ձգուում էին որոտալին. զօղանջներ՝ որ սահում էին, թեթև, ընդհատ և նուրբ լինչպէս կկոցը գործուածքի միջից. հրաշալի խմբերգներ, որոնց երգիչները միմեանց չէին տեսնում բնաւ. մի ամբողջ ջերմեռանդ ժողովուրդը ցնծութեան ճիչեր, յաւիտենական գարնան օրհներգութիւններ, որ դուրս էին թռչում մառախլապատ հովտի խորքից և բարձրանում էին Սէնտ-Օդիլի կատարի

վրայ միասին պայթելու համար։ Այդ համերգի մեծութիւնը, վսեմութիւնը լռեցրել, մտախոհ էր դարձրել այն մի քանի մարդկանց, որ հաւաքուել էին այդտեղ։ Օդը աղօթում էր։ Հոգիները խորհում էին յարութիւն առնող Քրիստոսի մասին։ Շատերը մտածում էին Ալզասի մասին։

—Կապոյտ է երևում, ասաց մի ձայն։

—Երկնքում կապոյտ է երևում, կրկնեց կանացի մի ձայն, որպէս երազանքի մէջ։

Հովտից բարձրացող զօրանշների մանչիւնի մէջ հազիւ լսուեց նրա ձայնը։ Այնուամենայնիւ բոլոր աչքերը բարձրացան դէպի երկինք։ Տեսան որ երկնքում, արևի վրայ արշաւող մառախուղի զանգուածների մէջ, կապոյտ անդունդներ էին փորւում և լցւում սարսափելի արագութեամբ։ Եւ երբ նրանք դարձեալ դէպի վար նայեցին, տեսան, որ ամպը պատառ պատառ էր լինում և զառիվայրերի վրայ։ Օդը պարզւում էր։ Անտառի մասերը հետզհետէ սկսեցին դուրս գալ շարժուն մառախուղի պատռուածքներից, յետոյ և ժայռերը։

Մէկ էլ յանկարծ մառախուղի վերջին պալանները նօսր, գալարուած, ողորմելի, մրրկաձև բարձրացան։ Եւ Ալզասի հովիտը երևաց կապոյտ և ոսկեզօծ։

Դիտողներից մէկը բացագանչեց.

—Ա՜հ, որքան գեղեցիկ է,

Բոլորը՝ դէպի առաջ, դէպի լեռան բացուածքը կռացան դիտելու համար հովիտը, որ ձգւում էր անհունօրէն։ Ալզասական այս բոլոր հոգիները յուզուեցին։ Իրանց հայրենիքի երեք հարիւր դիւղերը ներքևումն էին, դեղնած հասկերի կանաչութեան մէջ ցրիւ եկած։ Ննջում էին նրանք զանգակների օրօրի տակ։ Նրանցից իւրաքանչիւրը մի վարդագոյն կէտ էր։ Գետը, որ երկարւում էր մինչև հորիզոնը, իր գորշ արծաթեայ գիծն էր դնում նրանց մէջ։ Եւ աւելի հեռուն, դաշտեր ու դաշտեր, որոնք զարթնում էին և որոնց գծագրութիւնը արագ կորչում էր Հռենոսի վերև դեռևս աւկախ մառախուխների մէջ։ Մօտիկ կաղնեպատ զառիվայրերի գծով տեսնւում էին, ընդհակառակը Սէնտ-Օդիլի անտառի ամենափոքր մանրամասնութիւնները։ Նա դէպի հովիտը երկարում էր լաղմաթիւ մուգ-կանաչ գլուխներ և նրանց մէջ ընտրում էր առաջին մարգագետինների դժգոյն գալարիքը։ Այդ բոլորը լուսաւորուած էր միայն դեռևս ճաճանչներով լիքը երկնքի ցոլքով։ Լուսաւոր ոչ մի մաս չէր ձգում նայուածքը։ դաշտերի երանգները ձուլւում էին մի ընդհանուր ներդաշնակութեան մէջ, ինչպէս զանգակների զօրանջ-

ները։ Ֆահանայի մօտ կանգնած ծերունի ալզասեցին, բազուկ-ներն երկարելով ասաց.

—Մայր-եկեղեցու զանգակների ձայն եմ լսում։

Տափարակ հողերի հեռաւորութեան մէջ ցոյց էր տալիս Սարազբուրգի հռչակաւոր նեռը, որ հազիւ եղունգի չափ բարձր մեղեսիկի (améthyste) տեսքն ունէր։ Այժմ երբ տեսնում էին վարդագոյն գիւղերը, կարծում էին, որ ճանաչում էին նրանց զանգակների դողանջը։

—Ես, ասաց մի ձայն, ճանաչում եմ Մարմուտիէ վանքի զանգակների թնդիւնը։

—Ես, յարեց մի ուրիշը, Օբերնէի զանգակի ձայնը։

—Ես Հէյլիգէնշտայնինը։

Վիսսամբուրգի շրջակայքից եկող գիւղացին նոյնպէս ասաց.

—Մենք շատ հեռու ենք գտնւում, և հազիւ թէ կարողանք լսել Հագենոյի Սէն Ժորժ մենաստանի զանգակատան ձայնը։ Բայց լսէք... ա՛յ... այժմ հնչում է։

Ծերունի ալզասեցին հանդիսաւոր՝ կրկնեց.

—Ես լսում եմ Մայր-եկեղեցու զանգակները։

Բայց աւելացրեց.

—Տեսէք, դարձեալ տեսէք երկինքը։

Այն ժամանակ բոլորը միասին տեսան, որ ամպը բարձրացել էր շատ վեր, մինչև երկնքի այն մասերը, որ լուսաւորուած էին դեռևս արեգակի ճառագայթներով։ Ամպը լեռան լանջերի վրայ առանց որոշ ձևի, տարածուել էր երկնքում, կողմնակի կերպով և Վոժերի և Հովտի վերև դցուած թրաշուշանի փունջերի մի խուրձ էր կազմում։ Նրանց մէջ կային, որ արիւնի պէս կարմիր էին, ոմանք՝ աւելի դժգոյն, և ուրիշները՝ հալած ոսկու նման։ Եւ բոլոր հանդիսատեսները՝ հայեացքով հետևելով ճաճանչաքեղ երկար գծին, նկատեցին որ նա լուսաւորում էր իր ցոլացումով երկիրը, և որ գլխաւոր քաղաքի հեռաւոր տներն և Մայր-եկեղեցու նեռը, խտացող մթութեան միջից շիկագոյն պսպղում էին։

—Սա նմանում է այն տեսարանին, որ ես իմ առաջ ունէի, այս միևնոյն տեղից, 1870թ. օգոստոս 23-ի երեկոյեան...

Նոյնիսկ երիտասարդները, շատ անգամ լսել էին նոյն թուականի բաղմիցս արտասանուելը։ Հայեացքները աւելի գորովագին սևեռուեցին փոքրիկ նեռի վրայ, որից ցոլում էր դեռևս մի կաթիլ լոյս, և հառնում էր երդող զանգակների ձայնը։

Ես այստեղ էի գտնւում, ներքևի գիւղերի կանանց և աղջիկների հետ որոնք բաձրացել էին լեռը, որովհետև թնդանօթների որոտը կրկնաղատկւում էր։ Մենք լսում էինք թնդանօթը,

ինչպէս այժմ զանգակները։ Ռումբերը՝ հրթիռների նման պայթում էին։ Այդտեղ, ուր դուք կանգնել էք, մեր կանայք լաց էին լինում։ Ա՛յդ գիշերն էր որ այրուեց մեր գրադարանը, Տամպլ-նեօֆը (նոր-տաճարը) և նկարչական թանգարանը, և դը Բրոգլիների տասը տները։ Այն ժամանակ բարձրացաւ դեղին ու կարմիր ծուխ, և ամպերը նմանուեցին մեր այժմեան տեսած ամպերին։ Ստրազբուրգն այրուում էր։ Նրա վրայ արձակել էին հարիւր իննսուն և երեք ռումբ։

Ուսանողներից երիտասարդը բռունցքը սեղմեց։

—Կորչի, մռլտաց միւսը։

Գիւղացին վերցրեց գդակը. դրեց թեի տակ, և մնաց անխօս։

Հնչող զանգակների թիւը նուազել էր։ Ո՛չ Օրերնէի, ոչ Սէն-Նաբորի և ոչ էլ իրանց ճանաչել կարծած ուրիշ զանգակների ձայն էր լսւում։ Լոյսերը հեռվհեռվ մարւում էին։ Գիշերը մօտենում էր։

Ժան տեսաւ, որ իր մօտ կանգնած երկու կանայք լաց էին լինում և միւս բոլոր ներկայ եղողները լռում էին։

—Պարոն աբբա, ասաց, քանի զանգակները երգում են Յարութիւնը, աղօթեցէք Ալզասի համար։

—Շատ լաւ, իմ փոքրիկ, ասաց աբբայի հարևան գիւղացին. շատ լաւ, դու մեր երկրից ես։

Նոյն բոպէին քահանայի ծանր ու յոգնած դէմքը շողշողաց։ Նրա ձայնի դողդոջումի մէջ ինչ որ խորտակուած բան կար. մի շատ հին ցաւ, դեռ ևս թարմ, խօսեց նրա շրթունքներով, և մինչդեռ բոլորը նրա նման նայում էին դէպի Ստրազբուրգ քաղաքը որ անյայտանում էր գիշերուայ մէջ—ասաց.

—Տէր, ահա մենք տեսնում ենք ձեր Սէնտ-Օդիլից, հաստատեա ամբողջ պաշտելի երկիրը, մեր քաղաքները, գիւղերը, դաշտերը։ Բայց դա բոլորը չէ. լեռների միւս կողմում գտնուող երկիրն էլ մերն էր։ Դու թոյլ տուիր, որ մենք բաժանուենք։ Սիրտս պատառ պատառ է լինում այդ բանի մասին մտածելով, որովհետև, լեռների միւս կողմում, այն ազգը, որ մենք սիրում ենք, դու էլ ես սիրում դեռ ևս։ Քրիստոնեայ ազգերից ամենահինն է նա, ամենից մօտը աստուածային գթութեան։ Նա իր երկնքում աւելի շատ հրեշտակներ ունի, որովհետև աւելի շատ եկեղեցիներ և մատուռներ. պաշտպանութեան կարօտ աւելի շատ նուիրական գերեզմաններ ունի և աւելի շատ սրբազան փոշի է խառնուած նրա հողերին, խոտերին ու ջրերին։ Տէր, մենք տառապեցինք մեր մարմիններում, մեր ինչքերում։ Մենք տառապում ենք դեռևս մեր յիշողութիւնների

մէջ։ Այնուամենայնիւ այդ յիշողութիւնները երկարատև դարձրու, և թող Ֆրանսիան նոյնպէս չմոռանայ։ Դարձրու նրան ամենից արժանին առաջնորդելու համար ազգերը։ Դարձրու նրան կորած քոյրը, որը կարող է վերադառնալ նրան այնպէս...

—Ամէն։

—Ինչպէս Զատկական զանգակները։

—Ամէն, մրմնջեցին տղամարդու երկու ձայներ։ Ամէն, ամէն։

Միւս ներկայ եղողները լուռ լաց էին լինում։ Լսում էր միայն մի զանգակի բարակ ձայնը անդունդից բարձրացող ցուրտ օդի մէջ։ Զանգահարողները պէտք է որ զանգակատներից իջած լինէին, որոնք մթամած հովտում աներևոյթ էին եղել։

Աստղերը բացւում էին գիշերուայ խորութիւնների մէջ, ինչպէս դարնան առաջին ծաղիկները, այդ խոկ ժամում, կաղնիների տակ։

Շուտով տէրրասի վրայ միայն երեք հոգի մնացին։ Միւսները մեկնել էին, երբ նրանց ալզասական հոգիների դաղտնիքը պարզուել էր։

Ծերունի քահանան, տեսնելով իր առաջ իրար կողքի նստած երկու երիտասարդներին, և Օդիլի գլուխը՝ Ժանի ուսին համարեա յենուած, հարցրեց.

—Նշանածներ էք։

—Աւաղ, պատասխանեց Ժան, մաղթեցէք, որ դա իրականանայ։

—Մաղթում եմ։ Լաւ էր, ինչ ասացիք քիչ առաջ։ Թող Տէրը ձեզ բաղդաւորացնէ։ Մաղթում եմ, ձեզ երիտասարդներիդ, որ տեսնէք Ալզասը ֆրանսիական դարձած։

Հեռացաւ։

—Մնաք բարով, ասաց Օդիլ շտապագին, մնաք բարով, Ժան։

Մեկնեց ձեռքը և հեռացաւ առանց ետ դարձնելու գլուխը։ Ժան տէրրասի պատի մօտ կանգնած մնաց։

Գիշերային թռչուններից՝ բուն, չղջիկ և այլն, միախառնելով իրանց վայունը՝ ծառից ծառ իջնում էին։ Ամբողջ մի քառորդ ժամ նրանց կանչը տարածուեց լեռան լանջերի վրայ։ Յետոյ տիրեց խորը լռութիւն։ Վերջապէս բարձրացաւ խաղաղութիւնը, քնող անտառների բուրմունքների հետ։

VIII

Կարոլիսի մօտ

Ցիւրիխ փողոցի բերանում, վաղեմի Ստրազբուրգի մնացորդներից մէկի՝ Բատլիէ կոչուող քարափի վրայ նայող մի նեղլիկ տուն կայ, հարևան տներից շատ աւելի ցածր, չինական մեհեանների մեան երկյարկանի կտուրով ծածկուած։ Երբեմն նկարուն, մայց այժմ սպիտակ ծեփուած տան ճակատի վրայ կարդացւում է հետևեալ արձանագրութիւնը. «Ժան, մականունեալն Կարոլիս, Weinstube»։ Այս գինետունը, որը իր արտաքին տեսքով անցորդի հետաքրքրութիւնը չէ շարժում բնաւ, մի սովորական տեղ չէ սակայն, ոչ էլ մի հասարակ գինետուն։ Դա մի պատմական վայր է։ Ցիւրիխի ընակիչները՝ և կամ գոնէ նրանց լաւագոյն հրացանաձիգները 1576-ին այդտեղ իջևանեցին մասնակցելու համար նշանաւութեան այն մեծ մրցութեան, որին Ստրազբուրգը հրաւիրել էր Կայսրութիւնը և Դաշնակից-Պետութիւնները։ Ցիւրիխցիները բերել էին իրանց հետ մի պտուկ խաշած կորեկ։ Եւ, հավիւ նաւից դուրս էին եկել, որ նկատել տուին Ստրազբուրգցիներին թէ խաշած կորեկը դեռևս տաք էր։ «Դրացիներ, տեսնում էք, հեշտութեամբ մենք կարող են ձեզ օգնութեան հասնել, ասացին նրանք. Հոենոսից և Իլլից՝ մեր քաղաքների միջև գտնուող հեռաւորութիւնը կարճ է։» 1576-ին արուած խոստումը 1870-ին բռնուեց, ինչպէս վկայում է այդտեղից շատ մօտիկ, Ցիւրիխի աղբիւրի վրայ փորագրուած արձանագրութիւնը։ Այն րոպէին, երբ պաշարուած Ստրազբուրգը գտնուում էր ամենատաժանելի դրութեան մէջ, ցիւրիխցիները միջամտեցին և Վէրտեր զօրապետից թոյլտուութիւն ստացան քաղաքից դուրս հանելու կանանց, ծերունիներին և երեխաներին։ Մի այլ հոչակ ստացաւ այդ տունը, շնորհիւ այն հարաւացիին, որ 1860-ի մօտերքում այնտեղ հաստատեց Հարաւի գինիների մի վաճառատուն։ Ժան մականունեալն Կարոլիս զարմանալի կերպով նմանւում էր Գամբէտտայի։ Նա գիտէր այդ բանը և ընդօրինակում էր հեռատրի շարժումները, նրա արդուզարդի ձևերը. նրա մօրուք կարելու կերպը, և նրա ձայնի շեշտը։ Պատերազմից առաջ նրա առևտուրը բաւական ծաղկած դրութեան մէջ էր, բայց կռուի յաջորդ տարիներում աւելի բարգաւաճեցաւ, և բաւական թուով գերմանացի սպաներ սովորութիւն դարձրին գալ այդ տան մէջ խմել Նարբոննի, Սէտտի և Մոնպէլլիէի սև գինիները։

Ապրիլի վերջերում մի առաւօտ, Ժան Օրերլէ, որ գնում էր անտառների վարչութեան պաշտօնեայի մօտ, որին վաղուց իվեր խոստացել էր այցելել, Բատելիէների քարափով անցնելիս տեսաւ քառասնամեայ, սևեր հագած մի կնոջ, անկասկած ալ-զասուհի, որ սրճարանից դուրս եկաւ, կարեց անցաւ փողոցից և ներողութիւն խնդրելով.

—Ներեցէք... եթէ պարոնը բարեհաճէր գալ... Նրա ընկերներից մէկը ուզում է։

—Ո՞վ է ուզում, հարցրեց Ժան զարմացած։

—Սպան, ամենից երիտասարդը, այնտեղ։

Նա մատով ցոյց էր տալիս այն տարտամօրէն ոգևորուած ստուերը, որ իջած վարագուրի ետևից ներկայացնում էր սրահի ներսը իր յաճախորդների խմբերով։

Ժան մի րոպէ վարանելուց յետոյ հետևեց կնոջ և զարմացաւ—որովհետև Ստրազբուրգցի չլինելով նա չէր լսել այդ գինետան հռչակն և անտեղեակ էր նրա յաճախորդների մասին—այնտեղ հանդիպելով վեց սպայի, որոնցից երեքը հուսարների գնդից էին, կարմիր և կապոյտ քառակուսիներով նաշխուն սփռոցներով ծածկուած սեղանների առաջ նստել, բարձրաձայն խօսում էին, ծխում և Կարոլիսի գինի խմում։ Արձակ լոյսից այդ կիսաստուերի մէջ թափանցելով՝ Ժան առաջին հայեացքով նշմարեց, որ սրահը փոքր էր,—միայն չորս սեղան—գերմանական ճաշակի այլաբանական նկարներով՝ օրինակ մի կապիկով, մի կատուով, մի խաղատոմսով, սիգարէտների մի տուփով՝ զարդարուած, բայց մանաւանդ պճնուած մի կիսաբոլորակ հայելիով, որ բռնում էր ձախ պատի մի խորշը, և որի շուրջը կախուում էին գինետան հին և նոր հաւատարիմ յաճախորդների շրջանակած լուսանկարները։ Ժան փնտռում էր դեռևս թէ ով կարող է նրան կանչած լինել, երբ հեծելազօրքի մի երիտասարդ սպայ, որի մարմնական դեղեցկութիւնը աչքի խփեց նրա գործած հէնց առաջին պարզ շարժումից, նրբահասակ՝ իր երկնագոյն-կապոյտ թիկնոցի մէջ, որը զարդարուած էր կոճակի ոսկեղօծ օղակներով—վեր կացաւ սրահի խորքում, ձախակողմում։ Վեր կացող տեղակալի, (լէյտենանտի) կողքին, և նոյն սեղանի շուրջը նստել էին մի հարիւրապետ, և մի հրամանատար։ Երեք սպաներն ևս պէտք է, որ եկած լինէին մի երկար ճանապարհից, որովհետև փոշով ծածկուել էին, քրտնաթաթախ ճակատ, ձղուած դիմագծեր ունէին և նրանց քունքի երակները ուռել էին։ Ամենից երիտասարդը՝ դաշտային այդ արշաւանքից իր հետ բերել էր մինչև անգամ

սրափուշի (aubépihe) մի ճիւղ, որը սահեցրել էր իր տափակ ուսնոցի տակ, սրտի կողմում։

Ալզասեցին ճանաչեց Վիլհելմ ֆոն Ֆարնով տեղակալին, պրուսիացի, իրանից երեք տարով աւելի մեծ, որին տեսել էր իրաւարանութեան առաջին տարուայ ուսանող եղած ժամանակ, Մինիխում, ուր Ֆարնով բաւարական ուսանողների մի գնդում փոխ-տեղակալ էր։ Այնուհետև չէր տեսել նրան։ Գիտէր միայն որ զօրագնդի կազմնոյում բաւարացի և պրուսիացի սպաների միջև տեղի ունեցած մի կռուից յետոյ, կռուող սպաներից մի քանիսը տեղափոխուել էին և թէ իր նախկին ընկերը տեղափոխուողներից մէկն էր։

Ո՛չ անկարելի էր կասկածել։ Վերկայող սպան ինքը Ֆարնովն էր. ձեռք մեկնելու միշտ միևնոյն վայելուչ և խրոխտ ձևն ունէր, նոյն խարտեաշ, անմօրուս, կծկուած, տափակ դէմքը, թանձր շրթներով, փոքր, մի քիչ վեր դարձած ամբարդաւան քթով, և պողպատի գոյն կապոյտ, կարձր-կապոյտ հիանալի աչքերով, ուր ցոլանում էին երիտասարդութեան, հրամայող մարդու հպարտութիւնը, ռազմիկ և լուրջ տրամադրութիւն։ Նրա մարմինն այնպէս էր կազմուած, որ կարող էր ապագայում մի ուժեղ և վիթխարի զրահակիր (cuirassier) դառնալ։ Բայց դեռևս շատ նուրբ էր, և այնպէս համաչափ կազմուածք ունէր, այնքան գիւրաթեք, այնքան աչքի խփող կերպով ռազմընտել և նիրվային, և իր շարժումների մէջ վարժ էր, որ պ. դը Ֆարնով գեղեցիկ մարդու համբաւ էր վայելում արդէն, թէպէտև պէտք է ասել, որ դէմքը գեղեցիկ չէր և դրա համար էլ Մինիխում երբեմն «գեղեցիկ Ֆարնով» էին կոչում և երբեմն էլ «հակակրելի Ֆարնով»։ Եթէ ունենար կարմրին տուող շէկ բեխեր, թաւ յօնքեր և կրելիս լինէր իր աչքերի մուգութիւնը շեշտող մի սպաւարտով նա սարսափելի կը լինէր։ Բայց տակաւին հաղիւ քսան տարեկան, նա մի ռազմիկ, բուռն բնաւորութեան տէր, իր սեփական նկարագրին յաղթող, վերին աստիճանին կարգապահ ու քաղաքավարի մարդու տպաւորութիւն էր գործում։

Ժան Օրելէ տեսաւ, որ Ֆարնով վերկենալու ժամանակ խօսեց հրամանատարին, իր անմիջական հարևանին, որը մի հուժկու, հաստատակամ և դանդաղաշարժ զինուորական էր։ Նա մի բան էր բացատրում, և միւսը՝ գլխի շարժումով հաւանութիւն էր տալիս, այն ըսելէն, երբ տեղակալը ներկայացնում էր.

—Պարոն հրամանատարը ինձ թոյլ կը տայ արդեօք նը-

բան ծանօթացնել իմ ընկերը Ժան, Օբերլէն, Ալշէյմի գործարանատիրոջ որդին։

—Խնդրեմ, պարոն... մի խելացի ալզասեցի... ամէն կողմ ուստ գործող...

Երկրորդ ծանօթացման ժամանակ, հարիւրապետը—մի զեռուս երիտասարդ մարդ, կարծր դիմագծերով, նուրբ դաստիարակութեամբ և ոչ պակաս հպարտ ընաւորութեամբ—Ալշէյմի գործարանատիրոջ հասցէին ուղղեց այնպէս փաղաքշական խօսքեր. «Այո, իսկապէս, պ. Օբերլէն յայտնի հռչակ է վայելում... շատ լուսաւորուած մտքի տէր մարդ է... ես հաճոյք եմ ունեցել նրան տեսնելու, նրա հետ խօսելու... չմոռանաք յիշեցնել պ. Օբերլէին իմ մասին...»

Ժան իրան ստորացած զգաց երկու սպաների այդ շողոքորթութիւնից։ Նա այն տպաւորութիւն էր ունենում, որ ինքը բացառիկ ուշադրութեան առարկայ է դարձել, ինքը՝ բուրժուա, ինքը՝ ալզասեցի, ինքը՝ սրին, յաժենայն դէպս, այդ բարձրաստիճան անձնաւորութիւնները պէտք է նկատէին, իբրև իրանցից ստորադաս անձ։

«Ինչ որ արել է իմ հայրը, մեծ նշանակութիւն ունի ուրեմն, մտածում էր նա, որպէսզի նրան այդ կերպով վարձատրեն... Ո՛չ նրա հարստութիւնը, ոչ նրա տան կենցաղավարական եղանակը, ոչ նրա խօսակցութիւնը արժանի չեն Ստրասբուրգում չապրող և ոչ մի պարտականութիւն չկատարող մարդու հռչակին։»

Հրամանատարը մի շարժուով համարեա անմիջապէս վերջ դրեց այդ նեղացուցիչ դրութեան, և ազատեց երկու երիտասարդներին, որոնք գնացին, նստան պատուհանից ամենից հեռու գտնուող սեղանի առաջ, սրահի խորքում։

—Բացարձակապէս պատահմամբ է, որ հանդիպեցիք ինձ այստեղ, ասաց Ֆարնով մի այնպիսի հեգնութեամբ, ուր զգացւում էր պրուսիացի տեղակալի ամբարդաւանութիւնը... իմ զօրագունդի մարդիկը շատ քիչ անգամ են յաճախում այստեղ...

Գլխաւորաբար հետեւակ զօրքի սպաներն են գալիս... Ես սովորաբար յաճախում եմ Գերմանիա։ Բայց մենք, ինչպէս տեսնում էք վերադառնում ենք մի հետախուզութիւնից, և իմ հրամանատարը շատ էր շոքում... Ինձ կը ներէք, իմ սիրելի Օբերլէ, որ ձեր եռեից մարդ ուղարկեցի, ձեզ կանչելու համար...

—Ընդհակառակը դա ցոյց է տալիս ձեր բարեկամութիւնը։ Ձեզ համար շատ դժուար էր բաժանուել ձեր պետերից։

—Եւ ես յանկանում էի ձեր ծանօթութեան կապերը նորից ամրապնդել ձեզ հետ... Վաղուց իվեր, Մինիխից իվեր,

միմեանց չենք տեսել... Հազիւ դիմացի տան անկիւնից անցել էիք, որ ես ասացի սպասուհուն. «Իմ բարեկամներից մէկն անցնում է։ Շտապեցէք կանչել պ. Օբերլէին։»

—Իսկապէս շատ ուրախ եմ դրա համար, Ֆարնով։

Խօսակցելով հանդերձ՝ երկու երիտասարդները միմեանց ուսումնասիրում էին հետաքրքրութեամբը երկու անձերի, որոնք աշխատում են լցնելու տարիների անծանօթը. «Ի՞նչ տեսակ կեանք է անցկացրել։ Ի՞նչ է մտածում իմ մասին։ Որքան վստահութիւն կարող եմ ունենալ։»

—Ինձ թւում է, շարունակեց Ֆարնով, որ նոր էք եկել այս քաղաքը։

—Ուղիղ է, փետրուարի վերջերից եմ եկել։

—Բարձր շրջաններում ինձ հաւատացրին, որ հոկտեմբերի 1-ից սկսելու էք ձեր կամաւոր զինուորութիւնը հուսսարների դնդում։

—Ճիշտ է։

—Գիտէքի, Օբերլէ, որ ես պատիւն ունեցայ ձեր հօր հանդիպելու բարձր շրջաններում, անցեալ ձմեռ։ Ես խնդրեցի որ ինձ ծանօթացնեն նրա հետ...

—Ներողամիտ եղէք դէպի ինձ, դեռևս նոր մարդ, և շատ քիչ ծանօթ...

Խօսակցութիւնները գինետան մէջ, այդ րոպէում այնքան էլ տաք ու ոգևորուած չէին, և Ժան նկատեց, որ զինուորականները իրանց երեսը շուռ էին տալիս դէպի լինը, որ հրամանատարն և հարիւրապետը զննում էին ապագայ կամաւոր զինուորի դիմագծութիւնը։ Նրանք խմեցին, վերջացրին այն գինին, որ բերել էին նրանց առաջ խծուած շիշերով՝ ինչպէս Բորդոյի գինին։

—Ես ուրախ կը լինեմ ձեզ աւելի յաճախ տեսնելով, ասաց Ֆորնով ձայնը մեղմացնելով։ Յոյս ունեմ որ այսուհետև շատ անգամներ կը պատահենք միմեանց...

—Դուք ծանօթ էք Ալբէյմի հետ։

—Այո, մենք այնտեղով յաճախ ենք անցել, զինախաղի պատճառով...

Տեղակալը ակնայանի կերպով աշխատում էր իմանալ, թէ մինչև ո՞ր աստիճան կարող է բաց, համարձակ խօսել։ Նա զգնում էր բռնի իւրացրուած հողի վրայ, ամենօրեայ կեանքի բաղմաթիւ միջադէպեր նրան սովորեցրել էին զգոյշ լինել իր խօսքերում։ Նա չէր ուզում հին փորձերը կրկնել։ Նա պատրաստում էր հողը... Կարող էր արդեօք խոստանալ նրան մի այցելութիւն։ Զգիտէր դեռ ևս։ Եւ այդ անատուդութիւնը, բոլորովին

հակառակ էր կորովի նկարագրին, այդ վիրաւորական նախազգուշութիւնը իր հպարտութեան համար, դրդում էին նրան բարձրը պահել իր գլուխը, կարծես ստիպուած լինէր շուտով ընդունելու կռուի մի հրաւէր։ Ժանն մանաւանդ իրան զգում էր անհանգիստ։ Այն հասարակ բանը—ընդունել իր տանը մի վաղեմի ընկերոջ, այժմ նրան թւում էր դժուար լուծելի մի հարց։ Անձնապէս նա ընդունելու կողմն էր։ Բայց, ոչ տիկին Օբերլէն, և ոչ էլ պապը չէին հանդուրժելու, անշուշտ, մինչև այժմ խստութեամբ պահպանուած ընդհանուր կանոնի դէմ գործուող այդ բացառութեան.—բայց չանել գերմանացիների առաջ, գործի վերաբերեալ հասարակ ու վաղանցիկ յարաբերութիւններից դուրս, բողոքարկու ծերունի պատգամաւորի տան դռները։ Նրանք Ֆարնովի այցելութեան հաճութիւն չպիտի տային... Եւ սակայն Ժանի համար շատ ծանր էր, Ստրազբուրգում նուազ հաւերող ցոյց տալ իրան, քան Մինիխում, և ալզասական հողի վրայ հէնց առաջին հանդիպումից վիրաւորել այն երիտասարդ սպային, որ դալիս էր դէպի նրան և մեկնում էր նրան իր ձեռքը։ Նա աշխատեց գոնէ իր պատասխանի շեշտի մէջ մի քիչ բարեկամութիւն, սրտաբացութիւն մտցնել։

—Իմ սիրելի Ֆարնով, մեծ հաճութեամբ մի օր քեզ տեսութեան կը գամ։

Գերմանացին հասկացաւ, յօնքերը կիտեց և լռեց։ Անկասկած, ուրիշ ալզասցիներ նրանց այդ այցելութիւնն ինդամ մերժել էին։ Նա Օբերլէի մօտ այդ սիստեմատիկ և կատարեալ հակառակութիւնը չէր գտնում... Նրա բարկութիւնը երկար չտևեց, կամ գոնէ ցոյց չտուեց։ Մեկնեց իր նուրբ ձեռքը, որի դաստակը՝ մորթով ծածկուած պողպատի թելերի մի ծրարի երևոյթն ունէր, և մատների ծայրով իր սուրի գլուխը շոշափեց, որ իր կողքից չէր հեռացել ընում։

—Ես ինձ մեծապէս բաղդաւոր կը համարեմ, ասաց վերջապէս։

Հրաժայեց որ մի շիշ բուրգոնեի բերեն, և, Ժանի և բաժակը լցնելով.

—Խմում եմ ձեր վերադարձի համար, Ալզէյմ, ասաց։

Յետոյ մի ուժգով խմեց և բաժակը դրեց սեղանի վրայ։

Անկեղծօրէն ես շատ գոհ եմ ձեզ վերստին գտնելուս։ Ես համարեա մենակ եմ ապրում, և դուք ծանօթ էք իմ ճաշակին։ Իմ արհեստից դուրս, որին պաշտում եմ, և որից բարձր դասում եմ միմեայն Աստուած, որ նրա մեծ դատաւորն է ես սիրում եմ միայն որսորդութիւնը։ Ես այնպէս եմ կարծում, որ մարդ ստեղծուած է վաղ տալու համար արձակ բնութեան մէջ,

հաստատելու համար իր ոյժն ու տիրապետութիւնը գաղանների վրայ, երբ նա առիթը չունի նոյն անելու իր նմանների վերաբերմամբ։ Դա ինձ համար մի անփոխարինելի հաճոյք է... Ի դէպ ինձ թւում է, որ պ. Օբերլէ զրկուած է որսորդութեան իր իրաւունքից։

—Այո՛, յարեց Ժան, նա հրաժարուել է համարեա ամբողջովին...

—Եթէ ձեզ հաճելի լինի անցնել ինձ մօտ, ես Հագընոյի շրջակայքում որսալու մի տեղ եմ վարձել, որը մասամբ անտառային և մասամբ էլ դաշտային է. ես ունեմ այծեամներ, որ ծագում են անտառից, վաղեմի, նուիրական անտառից. ունեմ նապաստակներ և փասիաններ, ինչպէս և ջրակացորներ, երբ նրանք գաղթում են. և եթէ դուք սիրում էք լուսատատիկներին, ես նրանցից էլ ունեմ, նրանք թռչկոտում են կաղամախիների տակ և շողշողում են ինչպէս իմ հուսարների տէգերը։

Խօսակցութիւնը այս թէմայի վրայ տեւեց մի քանի րոպէ։ Յետոյ Ֆարնով դատարկեց Ժանի հետ Կարօլիսի բուրգօնեի շիշը, և վերցնելով ուսնոցը ծաղկեցնող սրափուշի ճիւղը դցեց գետին.

—Եթէ ինձ թոյլ կը տաք, Օբերլէ, ձեզ կը ընկերակցեմ մի քանի քայլ։ Ո՞ր կողմն էք գնում։

—Համալսարանի կողմը։

—Ես էլ այդ կողմն եմ գնալու։

Երկու երիտասարդները միասին վեր կացան։ Նրանք համարեա նոյն հասակն ունէին և երկուսի դէմքն էլ, թէպէտ և արտայայտութեամբ տարբեր, բայց ներշնչում էր կորով. Օբերլէ աշխատում էր միշտ մեղմացնել իր դիմագծութեան ծանրախոհութիւնը, երբ զրդռուած չէր, իսկ Ֆարնով ընդհակառակը խստացնում էր իր ամրողջ անցքի բրտութիւնը։ Երիտասարդ տեղակալը իր վերնաշապիկի ծայրերից քաշեց, անհետացնելու համար նրա վրայ դոյացած ծալքերը։ Վերցրեց իր տափակ գլդակը, որ զրուած էր մի աթոռի վրայ և որը զարդարուած էր, ճակատից, պլուսիական գոյներ կրող կօկարդով. և առաջ անցնելով, բնազրօսիկ, դիտաւորեալ կարծրութեամբ, կիսով չափ դէմքը շուռ տուած դէպի այն սեղանը, ուր դանուում էին հրամանատարը ու հարիւրապետը, նրանց բարևեց մարմնի հազիւ խոնարհումով և մի քանի անգամ։ Բիչ առաջուայ յարգալից ընկերականութիւնը այժմ անհետացել էր։ Երկու պետերը, իրանց սովորութեան համեմատ, ննջութեան էին ենթարկում Կարօլիսի դինետանից դուրս եկող տեղակալի շարժումներն ու ձևերը։ Ազնուական իրանք էլ, իրանց դասակարգի պատուին սաստիկ

նախանձախնդիր, աչքի առաջ ունենալով կատարեալ սպայի օրինագրքի բոլոր յօդուածները, հետաքրքրուում էին այն բոլորով՝ որ կարող էր նրա վարմունքի, շարժումների բարեձևութեան կամ, իբրև ստորադաս զինուորական, խօսքերի մէջ ընդհանուր քննադատութեան առարկայ լինել։ Ինքնութիւնը պէտք է որ ինչպէս Ֆարնովի լինէր։ Ձեռքի մի շարժումով, բարեկամական և հովանաւորող, հրամանատարը արձակուրդ տուեց նրան։

Հազիւ փողոց դուրս եկած։

—Հ՛ը, ինչպէ՞ս, հարցրեց Ֆարնով, նրանց վարմունքը անքննադատելի էր, չէ՞։

—Այո։

—Բայց շատ թոյլ է ձեր հաստատումը։ Ի՞նչպէս, ձեր կարծիքով նրանք բաւական փափկանկատ չէին։ Եթէ դուք նրանց տեսած լինէիք զինուորական ծառայութեան ընթացքում...

—Ընդհակառակը, նրանք չափազանց ազնիւ վարուեցին, ընդհատեց Ժան։ Ես օրից օր նշմարում եմ, որ իմ հայրը պէտք է շատ ստորացած լինի, որպէսզի այս ստոիճան յարգանք վայելէ բարձր շրջանակներից... Եւ այդ ինձ վիրաւորում է, Ֆարնով։

Այս վերջինը լրջութեամբ, հայեացքով վերից վար չափեց Ժանին և պատասխանեց։

—Franzosenkopf! Ֆրանսիական գլո՞ւխ։ Ինչ տարօրինակ նկարագիր ունի այս ժողովուրդը։ Չի կարողանում հաշտուել այն մտքի հետ թէ յաղթահարուել է և երբ գերմանացիները նրան ազատներ են անում, այդ դէպքում իրան հաժարում է վիրաւորուած։

—Որովհետև այդ ազատները ձրի չեն լինում, պատասխանեց Օբերլէ։

Բառը տհաճելի տպաւորութիւն չգործեց Ֆարնովի վրայ։ Նա այդ խօսքի մէջ մի յարգանք նշմարեց դէպի իր ցեղի կարծր ու օգտապաշտ խառնուածքը։ Երիտասարդ տեղակալը՝ պէտք է ասել նոյնպէս, որ չէր ցանկանում մտնել մի այնպիսի վիճաբանութեան մէջ, ուր գիտէր թէ իրանց բարեկամութիւնը կարող էր վտանգի ենթարկուել։ Բարևեց մի կնոջ, որ դալիս էր դէպի իրանց կողմ և աչքերով հետևեց նրան։

—Ֆոն Հոլցբէրգ հարիւրապետի կինն է։ Սիրուն է, չէ՞։

Յետոյ, ձախակողմում, կամուրջի միւս եղերքում, հին քաղաքի թաղերը ցոյց տալով, որ լուսաւորում էր գարնանային առաւօտի այդ խոնաւ լոյսը, աւելացրեց, որպէս թէ երկու

ժառանգությունները բնական կերպով զօդուած լինէին իր մտքում.

—Ես սիրում եմ այդ հինաւուրց Սարազբուրգը։ Ո՛րքան աւատական բնաւորութիւն է կրում։

Գործարաններից և կոյուղիներից կեղտոտուած ջրերով գետակի վերև, երկար կողերով և երկար լուսամուտներով կտուրները, ամեն երանգի կարմիր գոյներով կղմինտրների խոտորող ալիքը, Սարազբուրգի ծիրանի գոյն մեղրեվալը, կարկատուն, ծակծկուած, կեղտոտուած, տեղ տեղ համարեա դեղին, որոշ տեղերում վարդագոյն, տարածուած՝ ինչպէս խամրած և ճկուն մետաքսով, մի պարսկական դորգ, Մայր-եկեղեցու շուրջը։ Ինքը Մայր-եկեղեցին՝ կարմիր քարից շինուած՝ եղել էր և թւում էր թէ դեռևս էր. դիտելով այդ կողմից, այն ժողովը, որից կախուած էր մնացեալի գոյնը. նա ամեն բանի զարդը, փառքը և կենտրոն էր։ Մի արագիլ թևերը պարզած, լողալով օդի մէջ լայն թափահարումներով, հորիզոնական ընած թաթերը—ինչոր աւելի երկար էր ցոյց տալիս մարմինը—իբրև ղեկ գործածելով կտուցը մի քիչ բարձր պահած՝ ճախրում էր կապոյտի մէջ. նա Սարազբուրգին, հաւատարիմ էր, ինչպէս իր ամբողջ հին ցեղը, որ պաշտպանուած, նուիրական դարձած էր նրա նման և շինում էր նոյն ընները նոյն ծխնելոյզների կատարին։ Ժան և Ֆարնով տեսան արագիլ, որ հակւում էր դէպի Մայր-եկեղեցու ներսը, և կոնակից նայած՝ նմանւում էր մի որևէ թռչունի, որ իր աղեղնաձև թևերով օդը ծեծում և անհետանում էր։

—Անհաւասիկ ընակիչներ, ասաց Ֆարնով, որոնց՝ ոչ մեր գործարանների ծուխը, ոչ հանրակառքերը, ոչ երկաթուղիները, ոչ նորաշէն պալատները, ոչ նոր ռէժիմը չեն զարմացնում։

—Նրանք միշտ դերմանացի են եղել, ասաց Ժան մի ժպիտով։ Արագիլները կրել են միշտ ձեր դրօշակի գոյները. սպիտակ փոր, կարմիր կտուց, սև թևեր։

—Իսկապէս, ասաց սպան ծիծաղելով։

Բարավոնների երկարութեամբ նորից սկսեց քայլել և համարեա անմիջապէս, դադարեց ծիծաղելուց։

Մի գինուոր քաղաքի նոր թաղերի կողմից բերում էր երկու ձիեր, կամ աւելի ճիշտ ձիերը բերում էին նրան։ Գինուորը հարբած էր։ Երկու թուխ ձիերի մէջտեղում, վերամբարձ ձեռքերով սանձերը բռնած, գնում էր ճօճուելով ուսով ընդհարուելով երբեմն մէկ, երբեմն միւս կենդանուն, և, որպէզի չընկնի, մերթ ձգում էր մէկի սանձից. այն ժամանակ ձին դիմադրում, կանգ էր առնում և բաժանւում միւսից։

—Այս ի՞նչ բան է մուլտաց Ֆարնով մի հարբած զինուոր, և այս ժամի՞ն։

—Մի քիչ աւելի է կոնծել՝ կատակեց Օրերլէ։

Ֆարնով լռեց։ Յօնքերը կիտած՝ դիտում էր զինուորի վարմունքը. նա սպայից հազիւ տասը մետր հեռու լինէր։ Այդ չափ տարածութեան վրայ, զինուոր պարտաւոր էր, համաձայն կարգապահական օրէնքի, կանգ առնել և գլուխը դարձնել դէպի մեծաւորի կողմը։ Ո՛չ միայն մոռացել էր բոլոր կանոնները, և շարունակում էր տաժանելի կերպով թաւալուել երկու ձիերի մէջտեղ, այլ և, այն բոպէին՝ երբ պէտք է խաչաձև կտրէր, անցնէր Ֆարնովի առաջից, մի բան մրմռաց, անկասկած մի հայհոյանք։

Դա արդէն չափազանցութիւն էր։ Զայրոյթի մի սարսուռ ցնցեց սպայի ուսերը. նա ուղիղ դիմեց դէպի զինուորը, որի ձիերը քրտնած՝ յետ յետ էին գնում։ Սպայի մէջ անպատուել էր Գերմանիան։

—Կա՛ց, գոչեց։ Ուղի՛ղ կանգնի՛ր։

Զինուորը՝ սպուշ կտրած՝ նայեց նրան, մի ճիգ գործ դրեց, և կարողացաւ անշարժ, համարեա ուղղաձիգ կանգնել։

—Անո՛ւնդ։

Զինուորն ասաց անունը։

—Ի՞նչ հաշիւը զօրանոցում կը տեսնենք, անբան-անասուն։ Եւ առայժմ, ահա թէ ի՞նչի ես արժանի, համազգեստիդ պատիւը վայր գցած լինելուդ համար։

Բոլորովին ուղիղ ձգեց աջ բազուկը, և իր ձեռնոցապատ ձեռքով՝ պողպատի նման կարծր՝ մի ապտակ իջեցրեց զինուորի այտին։ Արիւնը ժայթքեց բերանի անկիւնից. ուսերը դէպի ետ փնացին և բազուկները ձգուեցին, կարծես կռվամարտ մղելու համար։ Զինուորը կատաղի փորձութիւնն ունեցաւ դիմադարձելու։ Ժան հարբածի աչքերը տեսաւ, որոնք ցաւից և ցասումից շուռ եկան իրանց ակնակապիճների մէջ։ Յետոյ դէպի գետինը խոնարհուեցին, սպայի զօրութեան սարսափեցուցիչ ու տարտամ յիշողութեամբը զսպուած։

—Օ՞ն, քայլիր, այժմ, գոչեց Ֆարնով։

Եւ ոչ մի բառ։

Նա կանգնել էր քարափի մէջտեղում, ուղղաձիգ, երկար կօշիկներ հագած, աւելի մեծ գլխով քան իր զոհը, արեգակով ողողուած, հրացայտ աչքերով, կոպերի ներքին և շրթունքների սնկիւնը զայրոյթից փոսացած և վերջապէս այնպիսի երևոյթով, որը պէտք է անպատճառ նշմարած լինէին նրանք՝ որ «հակակրելի» մակդիրը առել էին։

Այն բերանաբաց հեռաքրքիրները՝ որ վաղել եկել էին

հանդիսատես լինելու համար այդ տեսարանին, և շրջանակ էին կազմել, սպայի մի հրամանովը ցրուեցին, և ճանապարհ տուին զինուորին, որ աշխատում էր, առանց սանձերը այս կամ այն կողմ քաշելու հեռանալ։ Եւ յետոյ, որովհետև հետաքրքիրներից ոմանք չէին ցրուել, և յամառում էին կանգնել լուռ և կամ քթի տակից իրանց կարծիքը մրմռալով, Ֆարնով նրանց յաջորդաբար վերից վար չափչփեց հայեացքով, թեւերը կրծքին խաչաձևած և կրունկների վրայ շուռ գալով։ Ամենից առաջ կծիկը դրաւ բանկի փոքրահասակ ծառայողը, ակնոցը ուղղելով, յետոյ կախնավաճառ կինը պղնձեայ ամանը ձեռքին, յետոյ մօտակայ խանութից եկած մսագործը, յետոյ երկուսաւաւարները, որոնք աշխատում էին իրանց անտարբեր ցոյց տալ, թէպէտև երկուսի այտերն էլ արիւնակալել էին վրդովմունքից, յետոյ փողոցի չարաճճի երեխաները, որ ցանկութիւն էին ղղացել լաց լինելու, բայց այժմ բոթում էին միմեանց արմուկը և փախչում էին քահ քահ ծիծաղելով։ Սպան այն ժամանակ մօտեցաւ իր ուղեկցին, կանգնած ձախակողմում ջրանցքի մօտ։

—Ինձ թւում է, որ դուք մի փոքր չափազանցեցիք, ասաց Օրերլէ. ինչ որ արիք քիչ առաջ արգելուած է Կայսեր բացարձակ հրամանով։ Մի գուցէ ձեր գլխին պատմութիւններ ստեղծէք...

—Այդ անբան-անասունները զսպելու միակ միջոցը այդ է, պատասխանեց Ֆարնով աչքերը դեռևս շանթարձակ։ Եւ յետոյ հաւատացած եղէք, որ նա արդէն հատուցած կը լինի իմ ապտակը ձիերին, և վաղը, ամեն ինչ մոռացած։

Երկու երիտասարդները կողք կողքի քայլեցին մինչև համալսարանի պարտէզը, առանց միմեանց հետ խօսելու, քիչ առաջուայ դէպքի մասին խորհրդածելով։ Ֆարնով հանել էր իր ձեռնոցները և մի զոյգ նոր ձեռնոցներ էր դնում, և այդ հաւանականաբար նրա համար, որ միւսները արատաւորուել էին զինուորի այտի արիւնից։ Վերջապէս Ժանի կողմը ծռուեց և, շատ լրջօրէն, համոզմունքի ակնյայտ շեշտով՝ շարունակեց։

—Դուք շատ երիտասարդ էիք դեռևս, երբ ձեզ հանդիպեցի, սիրելիս։ Շատ հարցերի մասին մեր կարծիքները փոխադարձաբար իմանալու համար, մենք պէտք է որ միմեանց հետ մի քանի սրտագին խօսակցութիւններ ունենանք։ Բայց ես զարմանում եմ, որ դուք դեռևս չէք նշմարել, դուք, որ այնքան ժամանակ ապրել էք Գերմանիայի բոլոր գաւառներում, որ մենք ծնուած ենք աշխարհի տիրապետութեան համար և թէ

աշխարհակալները քաղցրաբարոյ մարդիկ չեն, երբէք, հասկանում էք, ոչ էլ կատարեալապէս արդար մարդիկ։

Մի քանի քայլ անելուց յետոյ աւելացրեց.

—Ես շատ կը վշտանայի. եթէ ձեզ անախորժ թուայի, Օրերլէ. բայց չեմ կարող ձեզանից թաքցնել, որ ես իմ արածի համար չեմ զղջում։ Իմացէք միայն, որ իմ բարկութեան խորը կարգապահութեան սէրը կայ, նուիրապետութեան սէրը, արժանապատուութիւնը՝ այն բանակին, որի մասն եմ կազմում... Դէպքը մի՛ պատմէք ձեր տանը, առանց արդարացուցիչ պատճառները թուելու... Դա դաւաճանութիւն կը լինի մի բարեկամի դէմ... Դէ, ճնաք բարով։

Մեկնեց ձեռքը։ Նրա կապոյտ աչքերը մի բոպէ կորցրին իրանց ամբարտաւան անտարբերութիւնը.

—Ցտեսութիւն, Օրերլէ։ Դու հասել ես արդէն անտառների վարչութեան պաշտօնատունը։

IX

Հանդիպումը

Ժան բաւական վաղ հասաւ Ստրազբուրգի կայարանը և նստաւ Օբերնէ տանող գնացքը. իր հեծելանիւը Օբերնէ էր թողել։ Օբերնէից Ալշէյմ գնալիս, ճանապարհին, Բերնհարդսվէյլէրի մօտ, այն մարգագետիններում, որ ոռոգում է Դակսը, մի երկրորդ արագիլ նշմարեց, որը անշարժ կանգնել էր մի ոտի վրայ։

Հէնց այդ էլ եղաւ այն առաջին խօսքը, որ ասաց Լիւսիէնի, որին պատահեց պարկի ծառերի շուաքի տակ։ Թթանէ մի մոխրագոյն շրջազգեստ հագած, նա կարդում էր։ Նրա իմաստուն աչքերը ժպտագին բարձրացան կարդացած էջից, երբ հեծելանուի խշրտոցը լսեց աւազի վրայ։ Ժան վայր ցատկեց. Լիւսիէն նրան համբուրեց և ասաց.

—Սիրելիս, քո բացակայութիւնը ինձ համար չափազանց զգալի է դառնում։ Ա՜յ, չար սատանայ, ինչ ես անում անդադար ճանապարհորդելով։

—Դիտե՛ր, սիրելի քոյրս։ Նախ երկու արագիլ տեսայ, որոնք նոտարների նման ճշտապահ՝ ճիշտ ժամանակին, ապրիլ 23-ին եկել էին։

Կարմիր շրթների պռստումը ցոյց տուեց, որ լուրը Լիւսիէնին այնքան էլ հետաքրքրելու բնաւորութիւն չունէր։

—Ցետոյ։

—Ես երեք ժամ հնացի անտառային վարչութեան գրասենեակում, և իմացայ...

—Այդ բոլորը կասես հետո, ընդհատեց Լիւսիէն։ Ես այնքան անտառ և փայտ եմ տեսնում, այստեղ, իմ շուրջը, որ բոլորովին ցանկութիւն չունեմ միտքս զբաղեցնելու այդ տեսակ հարցերով։ Պատմիր ինձ Ստրազբուրգի մասին, տեսած արդուզարդերից մէկի, և կամ բարձր դասակարգից մի որևէ անհատի հետ ունեցած խօսակցութեանդ մասին։

—Լաւ ասացիր, պատասխանեց Ժան. ես հանդիպեցի մէկին։

—Ո՞վ, հետաքրքիր անձ է։

—Այո, Միւնիխի իմ հին ծանօթներից մէկին. հուսսարական գնդի մի տեղակալի։

—Պ. դը Ֆարնովիին։

—Այո, Ֆարնովիին, Հռենոսի հուսսարական 9-րդ գնդի տեղակալ Վիլհելմ Ֆոն Ֆարնովիին։ Ի՞նչ պատահեց քեզ։

Հասել էին ծառուղու մէջտեղը. իրանց քամակում բարձրանում էր թփերի մի խիտ պուրակ։ Լիւսիէն՝ ինչպէս միշտ, համարձակ ու զրգռիչ, թևերը խաչաձևեց և, ձայնը մեղմացնելով ասաց.

—Ի՞նչ պատահեց ինձ. նա ինձ սիրում է։

—Նա։

—Ես էլ նրան։

Ժան քրտնից մի քայլ հեռացաւ նրան լաւ դիտելու համար։

—Այդ անկարելի է։

—Ի՞նչու համար։

—Բայց, Լիւսիէն, չէ՞ որ նա գերմանացի է, պրուսիացի՛, սպա՛։

Մի բոպէ լռութիւն տիրեց. հարուածը հասցրուած էր։ Ժան բոլորովին դունաթափուեց։ Շարունակեց.

—Դու լաւ գիտես, որ նա բողոքական է նոյնպէս։

Լիւսիէն գլուխը նետեց նստարանի վրայ, և գլուխը բարձը ընկած, եղբօրը հակաճառութեան պատճառով բոլորովին զրգռուած.

—Կարծում ես որ ես չեմ մտածել այդ բոլորի մասին։ Ես գիտեմ այն ամէն առարկութիւնները, որ կարելի է անել։ Ես գիտեմ, որ Ալզասի բնակիչները, մեզ շրջապատող անհներողամիտ և անձկամիտ ազգաբնակութիւնը իր բերանի կապանքները պիտի արձակէ։ Այո, դրանք պիտի աղաղակեն, ինձ պիտի դատապարտեն, իմ վրայ պիտի խղճան, պիտի աշխա-

տեն ինձ յետ կանգնեցնել իմ մտադրութիւնից, և դու ինքդ առաջինը՝ արդէն սկսում ես։ Բայց ես քեզ նախապէս ասեմ, որ աւելորդ են պատճառաբանութիւնները, բոլոր պատճառաբանութիւնները... Ես նրան սիրում եմ։ Այդ բանը նոր չէ լինելու. եղած կատարուած է արդէն։ Եւ ես մի ցանկութիւն միայն ունեմ. իմանալ թէ դու ինձ կողմը պիտի բռնես, թէ ինձ դէմ պիտի լինես։ Որովհետև իմ վճիռը, բարեկամս, անփոփոխելի է։

—Ա՜հ, Աստուած իմ, Աստո՜ւած իմ, բացագանչեց Ժան ձեռքերով դէմքը ծածկելով։

—Ես չէի կարծում, որ այդ քեզ մեծ վիշտ պիտի պատճառէր։ Ես չեմ հասկանում։ Արդեօք դու էլ նրանց նման անմիտ ատելութեամբ լեցուած ես դէպի դերմանացիները։ Ասա։ Ես զսպում եմ իմ յուզմունքը, որպէսզի քեզ հետ խօսեմ։ Զխօսմիս, ասա։ Օ՜հ խօսիր։ Դու ինձանից աւելի գունաթափ ես եղել, ինձանից, որ միակ խնդրի առարկան եմ այս գործում։

Նա բռնեց նրա ձեռքերից և բաց արեց դէմքը։ Եւ Ժանը նրան նայեց մի բոպէ տարօրինակ երևոյթով, երևոյթովը այն մարդկանց, որոնց հայեացքը մտածումից միանգամայն զուրկ է։

Յետոյ ասաց.

—Դու սխալւում ես. մենք երկուսս էլ խնդրի առարկայ ենք, Լիւսիէն։

—Ինչու՞ համար։

—Եւ մէկս միւսի դէմ։ Որովհետև ես էլ մէկին սիրում եմ. սիրում եմ Օդիլ Բաստիանին։

Լիւսիէն սարսափահար եղաւ Օդիլ անունի արտասանութիւնից, և միաժամանակ յուզուեց, որովհետև հարցը վերաբերում էր նոյնպէս սիրոյ և եղբայրը նրան արել էր պարզապէս մի գաղտնի խոստովանութիւն։ Նրա ամբողջ զայրոյթը յանկարծ անհետացաւ։ Լիւսիէն դլուխը դցեց եղբօր ուսի վրայ։ Նրա խարտեաշ, երբեմն կարմրին տուող մազերի հանգրվէնները ուռեցին և փքուեցին Ժանի պարանոցի վրայ։ Նա մրմնջեց.

—Իմ խեղճ Ժան... ճակատագիրը հալածում է մեզ... Օդիլ Բաստիան և դը Ֆարնով... ահա սէրեր, որոնք բացարձակապէս հակասում են միմեանց... Ա՜հ, իմ խեղճ, իմ սիրելի եղբայր, ընտանեկան դրաման մեր միջոցով մշանջենաւորւում է...

Ուղղուեց, կարծելով լսել քայլերի շշուկ, և մտնելով իր եղբօրը թեը, ջղայնօրէն շարունակեց.

—Մենք չենք կարող խօսակցել այստեղ... Պէտք է սա-

կայն որ մենք միմեանց յայտնէինք ոչ թէ անուններ, այլ շատ ուրիշ բաներ... Եթէ յանկարծ հայրս վրայ հասնէր, կամ թէ ոչ մայրիկը, որ աշխատում է սրահում, չեմ իմանում ի՞նչ անվերջ ու անվախճան գորգի վրայ... Ա՜հ, բարեկամս, երբ մտածում եմ, որ մի քանի քայլ միայն հեռու նրանից, մենք փոխանակում ենք այս կարգի գաղտնիքներ և նա ոչինչ չի՞ կասկածում... Բայց նախ մենք...

Մի բոպէ մտածեց վերադառնալ տուն, Ժանի հետ բարձրանալ իր սենեակը։ Բայց աւելի ապահով ապաստան գտնելով.

—Գնանք դաշտերը. այնտեղ ոչ ոք չի խանգարիլ մեզ։

Թև թևի տուած, շտապ քայլելով, մեղմաձայն և կարճ նախադասութիւններով վանդակապատ դռնից դուրս եկան, գնացին բաւական առաջ, և, ճանապարհի աջ կողմից, որ շրջակայ հողերից աւելի բարձր էր, իջան մի գաւիվայրից, որի ոլորոշ գիծը ձգւում էր, նորածիլ հասկերի միջից, որքան մարդկային աչքը կարող էր որոշել։ Նրանցից իւրաքանչիւրը, զարմանքի, ճնշումի, իսկական ցաւի առաջին բոպէից յետոյ, ինքնամփոփուել էր։

—Դուցէ սխալ ենք գործում միմեանց վրդովելով, ասաց Լիւսիէն մտնելով գաւիվայրի արահետը։ Ի՞նչից ենք իմանում, որ մեր ամուսնութեան երկու ծրագիրները անհաշտ են։

—Այո. Օգիլ Բաստիանի մայրը երբէք չպիտի համաձայնուի, որ իր աղջիկը մի գերմանացի սպայի հարսը դառնայ։

Ի՞նչից ես իմանում, որ այդ սպան նախամիտծար չպիտի համարէր մերինից նուազ յետադէմ մի ընտանիք մտնել, ասաց Լիւսէն վիրաւորուած։ Քո ծրագիրը կարող է վնասել և՛ իմին։

—Ներողութիւն, ես ճանաչում եմ Ֆարնովին. նա ոչ մի նկատողութեան առաջ կանգ չի առնի։

—Իսկապէս ես էլ այդպէս եմ հաւատացած, բացագանչեց երիտասարդ աղջիկը, որի դէմքը հպարտութիւնից կարմրեց։

—Նա այն մարդկանցից է, որոնք երբէք չեն սխալւում։

—Այո։

—Դու ժամ ես կազմում նրա փառասիրութիւններին։

—Շատ ուրախ եմ։

—Ուրեմն անհանգիստ մի՛ լինիլ. նա չի վարանիլ երբէք... խղճահարութիւնները պէտք է սպասել Բաստիանների, որոնք շատ նախանձախնդիր են պատուի հարցերում...

—Ա՜հ եթէ Ֆարնով լսէր, ասաց Լիւսիէն, իր եղբօր թևը բաց թողնելով, նա կը մենամարտէր քեզ հետ։

—Ի՞նչ կարող էր ապացուցանել դրանով։

—Այն՝ որ նա վիրաւորանք է զգացել այդ նախատինքից, ինչպէս ինքս եմ զգում, Ժան։ Որովհետև պ. դը Ֆարնովը իր պատուին նախանձախնդիր մարդ է։

—Այո. իր եղանակով, որը մերը չէ։

—Շատ ազնիւ, շատ արի եղանակով։

—Աւելի շատ աւատական ձևով, սիրելիս, այդ է նրանց ազնուականութեան հիմքը... Նրանք դեռևս ժամանակ չեն ունեցել իսկական ազնուականութիւնը ճանաչելու... բայց այնուամենայնիւ ինձ համար այդ բոլորը միևնոյն է։ Ես տրամադիր չեմ վիճելու... Ես չափազանց եմ տառապում... Ինչ որ կարող եմ ասել սակայն, այն է՝ որ պիտի մերժեն իմ խընդրանքը. ես այդ գուշակում եմ, դրա մասին վստահ եմ. ահա ինչ որ պ. դը Ֆարնով չպիտի հասկանայ, կամ թէ ոչ, եթէ նոյնիսկ հասկանար, նա յետ չէր կանգնի երբէք իր մտադրութիւնից, նա չէր մտածի երբէք իրան զոհել... Սրանով ես չեմ ուզում Ֆարնովին զրպարտել, վիրաւորել. ես պարզապէս բնորոշում եմ նրան։

Նրանք քայլում էին, ողողուած մի գաղջ լոյսով, որի քաղցրութիւնը չէին ճաշակում, քայլում էին դեռարոյս հունձքերի երկար թմբերի արանքից, որ իղուր ժպտում էին իրանց շուրջը։ Դաշտում աշխատում էին մի քանի մշակներ, որոնք՝ տեսնելով նրանց կողք կողքի անցնելն ու ման գալը, նախանձում էին նրանց դրութեան։ Լիւսիէն չէր կարող ուրանալ, որ իր եղբօր նախազգացումները իրաւացի, ճիշտ էին։ Այո, պէտք է որ այդպէս լինէր. նա ճանաչում էր անձամբ և պ. դը Ֆարնովին և Բաստիաններին։ Եթէ անձնական շահու հարցը չլինէր, նա ուրիշ դէպքում կը խղճար իր եղբօրը, բայց անձնական օգուտը աւելի բարձր էր խօսում նրա մէջ, քան կարեկցութեան զգացումը։ Նա ինչ որ շփոթ հրճուանք զգաց, երբ Ժանի երկիւղների խոստովանութիւնը լսեց։ Երբ նրա անհանգստութիւնը նշմարեց իրան քաջալերուած զգաց իր անվհանձնութեան մէջ։ Եւ անկարող լինելով նրան խղճալու, գոնէ աւելի մօտեցաւ նրան և խօսեց իր մասին։

—Եթէ մենք աւելի երկար ժամանակ միասին ապրած լինէինք, Ժան, դու ճանաչած կը լինէիր ամուսնութեան մասին ունեցած իմ գաղափարները, և այսօր ես քեզ նուազ զարմացում կը պատճառէի... Ես վճռել եմ ամուսնանալ միայն շատ հարուստ անձի հետ։ Ես չեմ ուզում մտահոգութիւններ ունենալ իմ յաջորդ օրուայ ապրուստի մասին։ Ես ուզում եմ վստահ լինել, և տիրապետել...

—Ձեր պահանջած պայմանը իրագործուած է, ասաց Ժան

գանութեամբ։ Ֆարնով ընդարձակ հողեր ունի Սիլեզիայում։ Եւ տեղակալ է նոյնպէս հռենոսեան հուսարների 9-րդ գնդի։

—Ի՞նչ ես ուզում ասել դրանով։

—Այն, որ նա սպայ է մի այնպիսի բանակի, որի դէմ քո հայրը պատերազմեց, քո ժողովրդը պատերազմեց, ինչպէս և քո բոլոր ազգականները պատերազմեցին, բոլոր նրանք՝ որ զէնք կրելու տարիք ունէին։

—Անկասկած... բայց, բարեկամս, ես ինքս կը ցանկանայի ամուսնանալ մի ալզասցու հետ։ Գուցէ և ես ցանկացել եմ, առանց ոչինչ յայտնելու... Բայց ես չգտայ իմ սրտի սիրածը։ Համարեա այն բոլոր երիտասարդները, որ անուան, հարստութեան, ազդեցութեան տէր էին, անցել էին Ֆրանսեայի կողմը... Այսինքն հեռացել էին Ալզասից պատերազմից յետոյ... Սա կոչուեց հայրենասիրութիւն... Բառերը, ուղիղն առած՝ ամեն տեսակ գործածութեան ծառայում են... Ո՞վքեր մնացին։ Դու կարող ես շատ հեշտութեամբ հաշուել ալզասական ծագում ունեցող, հարուստ ընտանիքից երիտասարդները, որոնք կարող էին յաւակնել ամուսնանալու Լիւսիէն Օբերլէի հետ...

Ողորուած շարունակեց.

Բայց նրանք իմ ձեռքը չխնդրեցին. և դրանք չպիտի էլ խնդրեն, սիրելիս։ Ահա ինչ որ դու չես հասկացել գուցէ։ Նրանք իրանց ազգականների հետ մեզանից հեռու վախան, որովհետև իմ հայրը ընդունում էր գերմանական տիրապետութիւնը։ Նրանք բոյկոտի ենթարկեցին մեր ընտանիքը։ Ես, յիշեալ պատճառներով՝ այնպիսի հարսնացու էի, որին չէր կարելի ամուսնութեան խնդրել։ Նրանց անհամբերողութիւնը, կեանքի մասին ունեցած անձուկ յղացումը ինձ դատապարտեց։ Ինձ անուանում են «գեղանի Լիւսիէն Օբերլէ», բայց բոլոր նրանք, որ ինձ դիտում են հաճոյքով և բարևում են կեղծուած յարգանքով, ոչ մէկը դրանցից չպիտի համարձակուէր արհամարհել իր շրջապատի կարծիքը և ինձ դարձնել իր կինը։ Ուրեմն դու իրաւունք չունես ինձ մեղադրելու, քանի որ ինձ ընտրութեան առաւելութիւնը չէ տրուած։ Դրութիւնն այնպէս է, որ կամայ ակամայ ես չպիտի կարողանամ մի ալզասեցու կինը լինել... Մի թէ՞ ես եմ մեղաւոր... Հաւատացնում եմ քեզ, ես շատ լաւ դիտէի թէ ինչ էի անում, երբ ընդունեցի պ. դը Ֆարնովին։

(Կը շարունակուի)

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

М. А. Миронiевъ, „О положенiи русскихъ инородцевъ“, С. Петербургъ 1901 г., цѣна 2 руб.

Ընթել երևոյթները առանց կանխակալ կարծիքների, առանց դոկտրինեօրական կուրութեան, առանց ճոճման ֆրազների, այլ հաւատարիմ մնալով ճիշտ ֆակտերին և առողջ լոգիկային—դա մի յատկութիւն է, որից զուրկ են մանաւանդ արևելցի գրողները և նրանք, որոնք ամեն ինչ որոշ մուսային տեսութիւնների ակնոցներով են դիտում, այդ կերպ բռնաբարելով բազմակողմանի և ազատ բացատրութիւն սիրող ճշմարտութիւնը։

Ամենաալաւ ապացոյցն է մեր ասածների՝ իսլամի մասին գրականութիւնը. ոչ միայն ամեն բան կեղծող թունդ իսլամականներն են աշխատում վերագրել մահմեդականութեան և դուրանին բաներ որ դրանց էութեան հակառակ է, այլ նոյնը պատրաստ են անել զանազան դոկտրինեօրներ, որոնք ընաւ ծանօթ չլինելով աստարկայի հետ, լոկ իրանց սերտած «տեսութիւնների» հիման վրայ, վճիռներ և եզրակացութիւններ են անում, գրչի մի հարուածով ջախջախելով Ռենանին էլ, Միւլլերին էլ... Ով ուզում է թող այդպէս թեթևաբար վերաբերուի իսլամի էութեան քննադատութեան, բայց մենք, հայերս, որոնց ճակատագրած է խառն ապրել մահմեդականների հետ, պէտք է առանց կեղծ ազատամտութիւնների աշխատենք ճանաչել իսլամը այնպէս, ինչպէս նա կայ։ Կրակի յատկութեան պէտք է տեղեակ լինել նրանից չվնասուելու համար. կրակը իր յատկութիւնները չի փոխում անգէտ մանուկի դիմաց, ինչպէս և ամեն մի տարերային զօրութիւն. իսկ իսլամը իր էութեամբ մի տարերային կործանիչ ոյժ է, ուստի պէտք է նրան ճանաչել—նրա աղէտաբեր գործունէութեան առաջն առնելու համար։ Միրոպիևվի գիրքը այդ կողմից մի նշանաւոր դրուածք է, որի մէջ մեծ հմտութեամբ և

գիտնականօրէն բացատրած է իսլամի էութիւնը, ինչպէս և ու համիսլամական շարժման նպատակները Ռուսաստանում։

Լ. Ս.

Կլարա Ցետկին՝—«Կինը եւ նրա տնտեսական դրութիւնը» թարգմ. ռուսերէնից Յարութիւն Եսայեան. Թիֆլիս 1905. գ. 15 կ.

Կլարա Ցետկինի գրքոյկը կանանց հարցի վերաբերեալ լաւագոյն հեղինակութիւններից մէկն է։

Յարգելի հեղինակուհին լուսաբանում է կանանց հարցը տնտեսական մատերիալիզմի տեսակէտից, բայց այնպիսի եզրակացութիւնների է գալիս, որոնց համաձայն կը լինեն նաև այն անձինք, որոնք սխալ են համարում այդ փիլիսոփայական տեսութիւնը։

Այդ փոքրիկ գրքոյկում այնքան առողջ դատողութիւն կայ, տրամաբանութեան այնպիսի ոյժ, միտքը ամփոփ և պարզ արտայայտելու այնպիսի ձիրք, որ կարելի է հազուագիւտ համարել։

Դժբաղդաբար հայերէն թարգմանութիւնը, որ արած է ռուսերէն թարգմանութիւնից, շատ անաջող է։

Մի գիրք լաւ թարգմանելու համար պէտք է հասկանալ այդ գրքում գրուածը, իսկ պ. Եսայեան չի հասկացել իր թարգմանածը՝ մասամբ ռուսերէն լաւ չիմանալու, մասամբ էլ քաղաքատնտեսութեան մասին գաղափար չունենալու պատճառով։

Պ. Եսայեանի բոլոր սխալները յիշելու համար պէտք կը լինէր այստեղ արտատպել գրեթէ ամբողջ գրքոյկը, ուստի մենք ընտրում ենք մի քանի երեսներ և այդ երեսների մէջ միմեայն խոշոր սխալներ։

Թարգմանութեան 10-րդ երեսում։

Работа женщины перестала носить характеръ дѣятельности, сохраняющей блага, а направилась къ ихъ добыванію, թարգմ.—Կնոջ աշխատանքը դադարեց ընտանիքի փառքը պահպանող գործունէութեան բնաւորութիւն կրելուց։

Правовыя нормы и идеи не успѣвали примѣниться къ новымъ явленіямъ экономической жизни—իրաւասնական կանոններն ու գաղափարները գործադրուելու միջոցներ չէին գտնում տնտեսական կեանքի նոր պայմանների մէջ։

14-րդ երես՝ женскій вопросъ разрѣшится только съ об-

обществленіемъ орудій производства—*կանանց հարցը կը վճռուի միայն ընդհանրացնելով արդիւնագործութեան միջոցները։*

Сокращать до возможнаго минимума—*ծայրայեղ մինիմումով կրճատել։*

18 երես՝ эфемерныя права—*առօրեայ իրաւունքներ։*

Женщина перестала собственными средствами производить предметы потребленія—*կինը դարձեալ սկսեց արտադրել գործադրութեան նիւթերը։*

23-րդ երես՝ нищенская клюка—*խղճուկ մնացորդ։*

Продуктивный производитель—*պտղաբեր արդիւնաբերող։*

Политическая экономія доказала равноцѣнность всѣхъ родовъ общественно-полезнаго и необходимаго труда—*բաղաքակրթութիւնը ապացուցեց ընդհանրական ամեն տեսակ և անհրաժեշտ աշխատանքի համարժէքը։*

Շատ չերկարացնելու համար մի քանի նմուշներ էլ բերենք ու վերջացնենք։

Соображенія нравственнаго свойства—*բարոյական յատկութեան կշռադատութիւն։*

Интернаціональный—*համազգային։*

Ставится на карту жизнь—*կեանքը շօշափւում է։*

Добродѣтель—*բարերարութիւն, բարիք։*

Желѣзная необходимость—*չօրեղ կարիք։*

Экономическая необходимость—*տնտեսական պահանջ։*

Общественно-необходимый трудъ—*ընդհանուր անհրաժեշտ աշխատանք։*

Подъ предлогомъ—*նպատակով։*

Աւելացրէք դրա վրայ այնպիսի բարբարոսաբանութիւններ, ինչպէս՝ «պրոլետարիատ կին, պրոլետարիատ տղամարդ, բուրժուազիա խաւերի կանայք,—կնոջ մօտ դեռ նոր է սկսուել բարոյական հայեացքների վերամշակման պրոցեսը,—երեխաներին ուսուցանել արհեստաւորապէս» և այլն և կը համոզուէք, որ Կլարա Ցետկինի գիրքը արժանի էր աւելի լաւ թարգմանութեան։

Տ. Ց.

Մ. Տէր-Սարգսեան. «**Իմ արկածներ**» *(զուարճալի իրողութիւն). արդիւնքը յատկացուած է Նախիջևանի կոտորածներից վնասուածներին. 36 եր., գ. 20 կ. Երևան 1905*

«Իմ արկածները» շնորհքով գրուած դատարկաբանութիւն

է և պատկանում է այն գրուածքներին, որոնց միակ նպատակն է հաճելի կերպով խուտուտ ածել ընթերցողների նեարդերը։

Մի քիչ տարօրինակ է այդպիսի դատարկաբանութիւններով զբաղուել մեր արիւնոտ վիճակում ու ընթերցողների յիմար ծիծաղից կոպէկներ մղել սոսկալի դաղանութիւնների զոհերի օգտին։ Բայց այդ, ցաւալի է, որ ընթերցողներին խուտուտ ածելու դերը վերցրել է իր վրայ մի հեղինակ, որ ինչպէս հէնց այդ գրուածից կարելի է եզրակացնել, օժտուած է իւմորիստի ձիրքով,—մի ձիրք, որ այնքան հազուադիւտ է ծիծաղը մոռացած հայրիս մէջ։

Գրուածքի արժանաւորութիւններից առանձին յիշատակութեան արժանի է այրարատեան բարբառի հարուստ հիւթերով սնուած ոճը, իսկ պակասութիւններից՝ գրական ճաշակի բացակայութիւնը (այլապէս չենք կարող բացատրել՝ օրինակ՝ այն հանդամանքը, որ հեղինակը հնարաւոր է համարում պատմել ընթերցողներին, թէ ինչպէս գիշերը, հիւր տեղում, իր մարմնի չիբանները փուլ եկան և թարախը կեղտոտացրեց տակի սաւանը)։

Տ. Ե.

Պրոֆ. Վերներ Զոմբարտ. «Թէ ինչու մեր օրերում ամենքին հետաքրքրում են տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր». Գերմ. թարգմ. Արտաշէս Աբեղեան, 40 եր., Թիֆլիս, 1905, գինը 10 կ.

Գրքոյկի բովանդակութիւնը պարզ է վերնագրից։

Հեղինակը, որի գրածները կարօտ չեն յանձնարարութեան, ապացուցանում է այդ գրքոյկում, որ «տնտեսագիտութիւնը հանդիսանում է մեր օրերում իբրև մի տեսակ կենտրոնական գիտութիւն, ինչպէս էր ընագիտութիւնը վերջին տասնեամեակներում և փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնը աւելի առաջ» և որ ներկայումս ամեն մարդ, լինի նա հոգևորական, բժիշկ, իրաւաբան, բանուոր թէ վաճառական, կին թէ այր մարդ, պարտաւոր է «ըստ կարողութեան ձգտել ընդարձակելու իր ունեցած տնտեսական և սոցիալ-քաղաքական ծանօթութիւնները»։

Թարգմանութիւնը յաջող է։ Պ. Արտաշէս Աբեղեան, ինչպէս երևում է, թարգմանչական ձիրք ունի։ Բնագիրը հայերէնացրած է, իսկ հայերէնը՝ կանոնաւոր։ Ցանկալի կը լինէր միայն, որ թարգմանիչը մի քիչ ժողովրդական շունչ մտցնէր իր հայերէնի մէջ, ոճը աւելի մօտեցնէր խօսակցականին և

խուսափէր այնպիսի գրաբարաբանութիւններից, ինչպէս է. «խորհել պարտենք», «այդունակ», և այլն։

Ս. Ց.

Յարութիւն Եսայեան. «**Միւնոյն դագաղում**» պատկեր, 16 երես. Թիֆլիս, 1905, գ. 4 կ.։

«Միւնոյն դագաղում»-ը՝ մի յաջողուած պատկեր է կովկասեան վերջին դառն իրականութիւնից։

Ինձ առանձնապէս դուր է գալիս պատկերի մտայղացումը (замыселъ), որ իրաւունք է տալիս ասելու, թէ պ. Եսայեանի մէջ սկսում է արտայայտուել բելլետրիստի ձիրը։

Կատարումը նոյնպէս վատ չէ, բայց այդ կողմից՝ պատկերի արժանաւորութիւնները աւելի բացասական, արժանաւորութիւններ են։ Պատկերը ազատ է խոշոր պակասութիւններից։ Աչքի է ընկնում մանաւանդ այն պակասութիւնների բացակայութիւնը, որոնք մատնանիշ արուեցին պ. Եսայեանի առաջին պատկերները քննադատողների կողմից։

Պատկերի ոճը ամփոփ է և լեզուն՝ իսկական հայերէն, որ ամենևին չի յիշեցնում պ. Եսայեանի թարգմանական հայերէնը Կլարա Յետկինի գրքում։

Ս. Ց.

Փառնակէս. «**Զուտոդի մալը ուտոդին հալալ ա**» կամ «**Ճարպիկ փասատարան**» վոդեվիլ մէկ արարուածով. Երևան 1905 թ. 58 եր. գ. 40 կ.

Բագուեցի երիտասարդ Սարգիս Օձխուզոդեանը շանտաժի միջոց է դարձնում Սինոդի վերջին կարգադրութիւնը. նրա նշանածի, օրիորդ Զարուհու հայրը, Թորոս Ասլանեանը, տասը հազար բուբլու օժիտ է խոստացել։ Այդ քիչ է թւում յարդելի երիտասարդին։ Նա այնպէս է ձևացնում, թէ մտադիր է հրաժարուել օրիորդ Զարուհուց, որովհետև, ինչպէս լսել է, օրիորդի հայրը բարակացաւ ունի, իսկ մայրը՝ լուսնոտ է։ Կասկածները փարատելու համար՝ պահանջում է բժշկական քննութեան ենթարկել օրիորդին և նրա ծնողներին։ Ասլանեանները զայրացած են։ Երիտասարդը յայտնում է, որ կարելի է բանը բժշկական քննութեան չհասցնել, սակայն այն պայմանով, որ Ասլանեանները օրիորդի օժիտի վրայ մի հինգ հազար էլ աւելացնեն, օրիորդի ապագայ բժշկութեան համար։

Միջամտում է Փիլիպպոս Կիկերոնեանը, ճարպիկ փաստաբանը։ Նա հաւատացնում է ագահ փեսացուին, թէ նրա նշանածի ծնողները արդէն բժշկից վկայական են ստացել, թէ բոլորովին առողջ են, և իրան, փաստաբանին, յանձնել են դատ սկսել փեսացուի դէմ և մեղադրել նրան իբրև զրպարտչի։ Փեսացուն թակարդ ընկած է զգում իրան և սկսում է բանակցութիւններ հաշտութեան մասին, բայց, Վիտտէի տաղանդից զուրկ լինելով, յաջողութիւն չի ունենում, մերժումն է ստանում, ստիպում է հազար ռուբլու փոխանակագիր ստորագրել յօգուտ մի անօժիտ օրիորդի, որպէսզի իր դէմ զրպարտութեան դատ չսկսեն և վերջիվերջոյ վռնդուում է, մօտիկ ծանօթութիւն կապելով տանտիրոջ ծառայի բռունցքների հետ։ Իսկ օրիորդ Զարուհին նշանուում է փաստաբանի հետ։

Վոդեվիլը թեթև է կարդացուում և թեթև կը նայուի ու թերեւս բաւականութիւն պատճառի դաւառական սակաւապահանջ հանդիսատեսներին։

Մի քանի թեթև նկատողութիւններ։

Ինչքան էլ մեծ լինի վոդեվիլ գրողների աղատութեան ասպարէզը, այնուամենայնիւ հաւանականութեան օրէնքը և ճշտութիւնը գոնէ նուազագոյն չափով պարտադիրներ են նրանց համար։

Ոչ մի փաստաբան մէկի մասին բերանացի անպատուաբեր լուր տարածելը դիֆֆամացիա չի անուանիլ և լուր տարածողին 5555-րդ յօդուածով չի սպառնալ, որովհետև ուսուցց օրէնքով դիֆֆամացիա կարող է տեղի ունենալ միմիայն տպագրական խօսքի միջոցով իսկ 5555-րդ յօդուածը գոյութիւն չունի։

Բայց այդ նկատողութիւնը մանրամասնութեան է վերաբերում։ Աւելի էական է այն, որ երբ փաստաբանի սպառնալիքից յետոյ փեսացուն խնդրում է մոռացութեան տալ եղածը, փաստաբանը յայտնում է, որ այդ անկարելի է, որովհետև օրիորդ Զարուհու նշանածը այժմ ինքն է, և այդպէս էլ լինում է։ Կարծէք թէ նշանած ընտրելը և փեսացուին փոխելը այնպիսի գործողութիւն է, ինչպէս ձեռնոցներ ընտրելն ու փոխելը։

Սակայն այդ պակասութիւնը հեշտ է վերացնել։ Բաւական է մտցնել վոդեվիլի մէջ մի տեսարան, որի բովանդակութիւնը կարող էր մօտաւորապէս այս լինել,—օրիորդ Զարուհին հիասթափուել է փեսացուից և զղջում է, որ մերժել է իր մանկութեան բարեկամ և իրան սիրող Կեկերոնեանի առաջարկութիւնը. տեղի է ունենում բացատրութիւն, որի մէջ կարող էր դեր խաղալ մոլիէրեան մի աղախին, և նրանք վճռում

են խաղալ Օձխուլղիանի գլխին այն խաղը, ինչ որ խաղում է վոլբվիրում Կիկերոնեանը։

Տ. Ե.

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Կոմս Լ. Ն. Տոլստոյի «Երկերի ժողովածու. № 1. Կրէյցերի Սոնատը, վերջաբանը, Կանապց և Սէր». թարմանեց Ե. Ծ. վ. Մուրադեան, Վաղարշապատ, 1905 թ., գ. 60 կ.։
2) Ճամբորդ՝ «Գեղեցիկը», Թիֆլիս, 1905 թ., գ. 10 կ.։
3) Ժ. Մասոն՝ «Նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ ինքզ քեզ օգնիր», զրոյց, պատկերազարդ, ֆրանս. փոխ. Լ. Մ.-Ադամեան, Թիֆլիս, 1905 թ., գ. 75 կ.։
4. Կոտ-Մուռլիկա՝ «Փոքրիկ Ցոլակն ու խլըշիկ նապաստակը, զրոյց պատկերազարդ. փոխադրեց Լ. Մ.-Ադամեան, Թիֆլիս 1905 թ., գ. 1 ր.։
5) Մ. Սեմենկա՝ «Առաջին վաստակ», զրոյց պատկերազարդ, փոխադրեց Լ. Մ.-Ադամեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 60կ.։
6) Վիկտորիա՝ Սարդու, «Ոգեհարցութիւն» (Spiritisme), թատերգ. երեք արարուածով, թարգմ. Լ. Մ.-Ադամեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 50 կ.։
7) Բժ. Վ. Արծրունի՝ «Մանկիկ», առաջին մաս, նկարներով, 1905, թ., Թիֆլիս, գ. 40 կ.։
8) Բելօկոնսկի՝ «Ինքնավարութիւն և զէմստվո», թարգմ. Յ. Թադէոսեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 10 կ.։
9) Ե. Ֆրանգեան՝ «Ատրպատական», պատկերազարդ, Թիֆլիս, 1905 թ., գ. 1 ր. 50 կ.։
10) Մ. Տ. Շուտ՝ «Բրդերը Տաճկաց-Հայաստանում (ազգագրական նիւթեր), հատոր Ա., Ս.-Պետ. 1905 թ., գ. 75 կ.։
11) Մ. Տ. Շուտ՝ «Հնչակ», Ս.-Պետ. 1905 թ. գ. 10 կ.։
12) Մ. Տ. Շուտ՝ «Արամը», Ս.-Պ. 1905 թ., գ. 25 կ.։
13) Կ. Ցետկին՝ «Կինը և նրա տնտեսական դրութիւնը, թ. ո. Յ. Ես., Թիֆ., 1905 թ., գ. 15 կ.։

14) Ա. ա. բ. Բագրատունի՝ «Մի պտոյտ հայ մամուլի, հոգևորականների և ժողովրդի շուրջը» I գ., Թիֆ., 1905 թ., գ. 40 կ.։

15) Յար. Եսայեան՝ «Միևնոյն դագաղում...» (պատկեր), Թիֆլիս, 1905 թ., գ. 4 կ.։

16) Պրոֆ. Վ. Զոմբարտ՝ «Տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր», թարգ. Ա. Աբեղեանի, Թիֆլիս, 1905 թ., գ. 10 կ.։

17) Մ. Մանուէլեան՝ «Էսքիզներ», Ս. Պ. 1905. գ. 40 կ.։

18) Է. Տ.-Գրիգորեանցի՝ «Վայրենի, կատակերգութիւն 1 արար., 2-րդ տպ., Երևան, 1905 թ.։

19) Փառնակէս՝ «Կը կակղես կ'ուտես», վոդեվիլ 1 արար., Երևան, 1905 թ., գ. 40 կ.։

20) Մ. Լըմերսիէ՝ «Մարդ» թարգմ. Մ. Վ. Բաղու., 1905 թ., գ. 5 կ.։

21) Մ. Ղահրամանեան՝ «Մեր ատաՀները և նրանց առողջապահութիւնը», Թիֆլիս, 1905 թ. գ. 7 կ.։

22) Ի. Բելոկոնսկի՝ «Ինքնավարութիւն և դեմոսով», թարգմ. Կ. Զալալեան, հրատ. «Գուտտենբերգ» Թիֆլիս, 1905 թ. գ. 15 կ.։

23) Кн. Г. М. Тумановъ «Къ введенію на Кавказѣ земскаго самоуправленія, изд. «Гуттенбергъ», Тифлисъ, 1905 г., ц. 20 коп.

24) Դոկտ. Կ. Փաշայեան—խան՝ «Ընդարձակ Դպրոցական առողջապահութիւն»։ Ալէքսանդրիա, 1901 թ.; ստացել ենք 11 թերթ (176 երես) և շարունակւում է տպագրութիւնը անընդհատ։

25) Գ. Սունդուկեանց՝ «Ամուսիններ», կատակերգութիւն չորս արարուածով, երրորդ տպագրութիւն, ուղղած։ Թիֆլիզ, 1905 թ., գ. 1 ր.։

ՆՐԵՓԻՆ ՏԵՍՈԹԻՒՆ

Վրացիների վերաբերմունքը թուրք-հայկական ընդհարումների ժամանակ.—Ազգային եւ դասակարգային երեւոյթներ.—Նացիօնալ եւ նացիօնալիոտական զգացմունք.—Հայ «կոմիտեցիների» մասին.—Պանիսլամիզմը եւ պանթիւրքիզմը.—Ընդհանուր տեսարաններ, Անդրկովկասեան ներկայացուցչական ժողով եւ հայավրացա-թիւրքական համագումարում.—† Իշխ. Ս. Ն. Տրուբեցկոյ:—Բազուի արդիւնագործների ներկայացուցիչները Պետերբուրգում.—Բազուի բանուորների գեկոյցագիրը։

Հայ-թուրքական ընդհարումների ողբերգական կողմերից մէկն էլ այն է, որ այդ դժբաղդ օրերում երեւաց և հայի դարևոր միւս հարևանի՝ վրացու իսկական զգացմունքները հայ ազգի նկատմամբ. դուրս եկաւ, որ ոչ միայն ռուս բիւրոկրատիան և պոլիցիան, այլև վրաց ազնուականութիւնը, բուրժուազիան և ինտելիգենցիան իրանց համակրանքով թուրքերի կողմն են. զանազան Մախարաձէների հետ նոյնիսկ պրոֆեսոր Մաուի նման անձնաւորութիւն չզգուշացաւ այս ծանր օրերում քար նետելու հայերիս վրայ «Розсвѣтъ» լրագրում... Ո՞ղջ աշխարհում որբ մի ազգ, իսկ որբին, ինչպէս հայ առածն է ասում, «խրատ տուող շատ կը լինի, իսկ հաց տուող՝ ոչ ոք»... Այդպիսի պարագաներում, երբ հայի շուրջը կանգնել են միմիայն ատելութեամբ լի դատախազներ, որոնք իրանց ականջներն են խցում հայ լկած կանանց, մորթոտուող երեխաների ու ծերերի ճիչերն չլսելու նպատակով, երբ մարդիկ աչքեր են փակում՝ օր ցերեկով թուրք զինուած վոհմակների թալանն, հրկիզութիւնը և սպանութիւնները չտեսնելու համար, իհարկէ չարագործութեան և ատութեան մէջ հանճարեղ Աղասիներին և Թոփչիբաշիներին դժուար չէ աջողութիւն դտնել... Ռուս հասարակական կարծիքն էլ, ամբողջապէս կուլ գնացած ներքին ցաւերով, ժամանակ չունի մեղանով զբաղուելու... Եւ նա, միանգամայն անտեղեակ օտար ցեղերի կեանքին, տարիներից ի վեր միայն մոլորեցնում է։ Միրոպլիև ռուս հետազօտողը «О положеніи русскихъ инородцевъ» գրքում բերում է անթիւ փաստեր ապացուցելու համար թէ ինչ անցքերեմն, տգեղ, ոճրագործ միջոցների են դիմել

տասնեակ տարիներ շարունակ թուրք «ինտելիգենտ» գրող Գասպրինսկիները, Դեվլէթ-Կիլդէեվները, Մուրզա-Ալիմները, ախունդ Բայազիդովները, Թոփչիբաշեվները և Աղաեվները՝ ժողովրդացնելու և քնացնելու համար ռուսի կատարեալ անծանօթությունը մահմեդական ձգտումների և զորանի ոգու հետ. ստել, կեղծել, ծածկել, յեղաթիւրել—ամենասովորական բաներ են այդ թուրք «իդէօլոգների» համար։ Կարդացէք այժմ էլ մայրաքաղաքի թերթերում թուրքերի գրածները, կարդացէք, օրինակ «Слово»-ում (№ 270) Աղաեվի վերջին յօդուածները, «Русь»-ում (№ 234) «երիտասարդ թուրք ինտելիգենտների» բարբաջանքները, համոզուելու համար որ շանտաժի մէջ այդ պարոնները ուղղակի վիրաւորներ են։ Սակայն այն ինչ անյայտ է ռուսին, պէտք է որ յամենայն դէպս յանցանք ճանաչուէր մեր երկրում, մեր կողքին ապրող վրացիների համար. ձևացնել, որ նրանք մոռացել են թրքական լծի տակ իրանց մօտիկ անցեալը և չեն կարող այժմ տարբերել յարձակողին պաշտպանողից, նշանակում բռնել այն դիրքը, որ գրաւել էին «Новое Время», «Свѣтъ» և «Моск. Вѣд.» հայկական ջարդերի ժամանակ, Թիւրքիայում, երբ դրանք հնարաւոր էին գտնում գրել «հայկական գաղանութիւնների» մասին թուրքերի և քրդերի նկատմամբ...

Այդ տմարդի վերաբերմունքին ինչ որ գաղափարական հիմք տալու համար այդ մինչև ոսկորների ծուծը իրանք նացիօնալիստ վրացիները, որոնք պատրաստ են Թիֆլիսի գումայի ամենաչնչին մի ընտրողութեան առիթով հարայ հրոցներ բարձրացներ, որոնք կաշուից դուրս են գալիս վրացախօս հայերին վրացի ճանաչել տալու համար, այժմ, երևակայեցէք, հայի դժբաղդութեան բոլոր պատճառները այն են համարում որ «հայ բուրժուազիան և հոգևորականութիւնը միացած՝ կաշկանդել են հայ բանուորին և թոյլ չեն տալիս նրան իր դասակարգային շահերը պաշտպանելու, և հայ բանուոր դասը քնած է լետարգիական քնով»... Չգիտենք ինչ կաղ կայ դասակարգային կռիւների և այն ողբերգական կացութեան մէջ, երբ հայը սպանուում է միմիայն այնպատճառով որ նա հայ է, երբ ոչ մի տարբերութիւն չի գտնում Ուլիա-Նորաշէնի, Մինքևանդի գիւղացու, հայ քահանայի, հայ բուրժուայի, ինտելիգենտի և բանուորի մէջ։ Ասել թէ «հայ բանուորութիւնը լետարդիական քնով էր քնած, կաշկանդուել է հայ բուրժուազիայից և կղերից» նշանակում է մի նոր սուտ հրապարակ նետել հասարակական կարծիքը պղտորելու դիտաւորութեամբ։ Թէ հայերը շատ խոշոր դեր են կատարել Բաքուի բանուորական շարժումների մէջ —այդ գիտեն նոյնիսկ թուրքերը։ Իսկ թէ օտար բանուորութիւ-

նը անկարող էր պաշտպանել հայ բանուորին ջարդերի ժամանակ —դա ապացուցուեց առաջին անգամ փետրուարեան անցքերի ժամանակ և, աւելի ևս սոսկալի չափով, օգոստոսի սարսափելի օրերում, երբ մի քանի հարիւր օտարազգի բանուորների միջից զինուած թուրք մարդասպանները մէկիկ մէկիկ դուրս էին հանում մի քանի հոգի հայ բանուորներին, ինչպէս հօտից դուրս է հանում մսագործը իր ուզած ոչխարին, և մորթում միւս բանուորների աչքերի առաջ... Այդ միւս ազգութիւնների բանուորները ի՞նչ արան պաշտպանելու համար իրանց պրոլետար եղբայրներին։

Պարզ էր որ կռիւը դասակարգային կամ տնտեսական չէր, այլ զուտ ազգայնական հողի վրայ դրած։ Երևոյթների կատեգորիաները չպէտք է շփոթել։ Դոկտրինեօրութիւնը մի կողմ թողէք, պարոններ, և հաշիշ ընդունածների նման մի բարբաջէք չմարսուած տեսութիւններից. կեանքի երևոյթները հասկանալու համար բաւական չէ թութակի ընդունակութիւնը կամ նմանութիւնը այն էակին, որ յուղարկաւորութեան մէջ անալոգիա է գտնում հարսանիքի հետ և սկըսում պարել երբ ուրիշները լալիս են... Իսկ թէ առհասարակ դեռ բանուորութեան տակտիկայի մէջ մեզանում վարանումներ և հակասութիւններ են երևում, կազմակերպութեան մէջ՝ խոշոր թերութիւններ —այդ ևս պէտք է պարզ լինի այն բոլոր անաչառ դիտողների համար, որոնք աշխատաւոր դասակարգերի անկեղծ բարեկամներն են։ «Երբ բանուորական շուկան մաքրուել է հայ բանուորներից, գրում է պ. Դ. Տէր-Դանիէլեանը «Արշալոյս»-ի № 30-ում, ռուս «ընկերները» շտապել են թանգ ծախել իրանց ոյժը, օգտուել նպաստաւոր պայմաններից և այսօր երկու շաբաթից աւելի է ինչ բանում են հանքերում՝ չսպասելով նոյնիսկ իրանց Պետերբուրգ ուղարկուած ընկերների վերադարձին։ —Բարեկամներ, վերջացնում է յօդուածագիրը, մի՞թէ լոկ դատարկանչիւն ֆրազներ էին ձեր ճառերը։ Գործով ցոյց տուէք, որ թանգ էք գնահատում ընկերական վեհ զաղափարը։ Գործ և ոչ խօսք»... Այդպէս է Բագում։

Իսկ ի՞նչ ասել դաւառների մասին, ուր բանուորական կազմակերպութիւնների նշոյլ անգամ չկայ...

Ահա մի դիծ մեր իրականութիւնից։

Ոչ վրացի և ոչ ռուս բանուորը չեն մտածում իրանց մայրենի լեզուն փոխարինել «վոլապիւկով» կամ այլ լեզուով. և շատ էլ լաւ են անում. վրացի բանուորներն, ինչպէս և գիւղացիները, պահանջում են իրանց զպրոցներում մայրենի լեզուով դասաւանդում. և միանգամայն արդարացի մի պա-

հանջ է, որի դէմ կարող են լինել միայն Սուվորինի նման նացիոնալիստները։ Բայց հէնց որ նոյն բանը պահանջում է և՛ հայը—պատկերը փոխւում է.—թէ ռուս և թէ վրացի quasi—արմատա կանները սկսում են բղաւել «հայ բանուորութեան կղերական—նացիոնալիստական» ուղղութեան մասին... Պարզ է որ մենք գործ ունենք մասամբ գաղափարների տհասութեան, խառնափնթորութեան, մասամբ էլ, սխալած չենք լինի եթէ պնդենք, նենգամտութեան, անմիտ ատելութեան...

Պէտք է տարբերել նացիոնալ և նացիոնալիստական զգացմունքները. առաջինը մի ալտրուիստական զգացմունք է, որ ընդարձակուելով դառնում է բարեացակամութիւն դէպի համայն մարդկութիւնը. նացիոնալ զգացմունքը երբէք չի պահանջում խորշում, կղզիացում միւս ազգութիւններից, թշնամական, յարձակողական վերաբերմունքը դէպի միւս ազգութիւնները չի մտնում նրա տենչանքների մէջ, որոնք տոգորուած են եղբայրասիրական ձգտումներով. ինչպէս առողջ է սէրը դէպի իր ծնողները, զաւակները, ընտանիքը, ծննդավայրը, այնպէս և առողջ, ազնիւ զգացմունք է հայրենասիրութիւնը. սիրելով իմ լեզուն, իմ ժողովուրդը, ցանկանալով որ դրանք ազատ զարգանալու պայմանների մէջ դտնուեն, ես դեռևս հեռու եմ ցանկանալու որ նոյն պայմանների մէջ չգտնուեն իմ դրացիները, ես հեռու եմ ճնշելուց դրանց ինքնորոշման իրաւունքը։ Դանտէ, Շիլլէր, Թորեաս, Բեբել այդ կողմից, այդ տեսակ հայրենասէր գոլով, չեն դադարում ընդարձակ մտքով կոսմոպոլիտ լինելուց։ Այլ է նացիոնալիստի ոգին, որ հիւանդ դերաճման ենթարկուած ազգասիրութիւն է. դա ազգային նեղ եսասիրութիւն է և ինչպէս այդպիսին ուղղուած է միւս ազգութիւնների ազատ զարգացման դէմ.—թող թշուառանան, կորչեն, ընաջինջ լինեն բոլորը, միայն թէ ապրի իմը. ես պէտք է կուլ տամ միւսներին, որ ինքս աւելի ես հղօրանամ, ահա նացիոնալիստի ցանկութիւնը։

Այդպիսով, առաջինը՝ նացիոնալ զգացմունքը՝ ազատութիւն կրող է, առաջադիմական մի երևոյթ է, իսկ երկրորդը՝ նացիոնալիստական զգացմունքը, բռնութեան և անարդարութեան արտայայտիչ է, ուրեմն մի յետադիմական երևոյթ հասարակական կեանքում։ Առաջինը ստեղծեց ազատ Յունաստանը, Ռումանիան, Չերնոգորիան, Սերբիան, Բուլղարիան, որոնք եթէ մնային սուլթանների լծի տակ և երազէին մի անմիտ բան.—«Թուրք պրոլետարների հետ միացած, ոտնակոխ անելով իսլամական խոչնդոտները, Թուրքիայի բոլոր ազգերի պրոլետարների միահամուռ ոյժերով, վերանորոգել Օսմանեան եր-

կրնեբի բեժիմը»—այսօրուայ օրս աւելի լաւ կացութեան մէջ չէին գտնուիլ, քան ներկայ Մակեդոնիան և Հայաստանը... Արդ, մարդկային առաջադիմութեան տեսակէտից պրոգրեսսիւ մի երևոյթ էր յիշեալ երկնեբի նացիոնալ շարժումը,թէ բեգրեսսիւ: Ինձ թւում է թէ պէտք է ապշութեան հասած դոկտրինեօր լինել ժխտելու համար մի այդպիսի պարզ ճշմարտութիւն: Դժբաղդաբար կան այդպիսի էկզեմպլեարներ...

Մենք գիտենք, որ չափազանց շուտ նացիոնալ զգացմունքը կերպարանափոխւում է նացիոնալիստականի. նոյն Յունաստանը, որ դարերով հերոսական կռիւ էր մղում թրքական խայտառակ բռնութեան դէմ և իր կողմը գրաւում քաղաքակիրթ մարդկութեան այնպիսի ըմբոստ ոգիներ, որպիսին ունէր Բայրընը, այսօր, կուրացած արդէն նացիոնալիստական տենչով, դիմում է նոյն բռնակալ Թուրք բեժիմի օգնութեան, ճնշելու համար Մակեդոնիայում մրցակից ազգութիւնները... Բայց միթէ դա ապացոյց է, որ նրա նախկին, նացիոնալ, ձգտումը անհամակրելի մի բան էր. ով չգիտէ, որ կրակը բարիք է, սակայն դառնում է չարիք, երբ նա հրդեհում է, կործանում—շինելու, ստեղծելու փոխարէն...

Արդ, հայերի ձգտումների մէջ ով է կարող նացիոնալիստական և ոչ նացիոնալ ուղղութիւն գտնել, եթէ լաւ հասկացած փակտերից դէնը չգնայ: Ոչ միայն օտար հայակերները, այլև շատ ազնիւ հայ պարոններ, ոգևորուած առաջադէմ տեսութիւններով, որոնք դժբաղդաբար դեռ հող չունեն մեր իրականութեան մէջ՝ ծլելու և պտուղներ տալու համար, սիրում են հայկական շարժման մէջ նացիոնալիստական ուղղութիւն գտնել և, սովորաբար, մատնանիշ են անում «Դաշնակցութիւն» կոչուած ընկերութեան գործունէութեան վրայ, թէ Թիւրքիայում և թէ Կովկասում: Ռուս, Թուրք, վրացի ամեն չարիքի պատճառը «կոմիտեանները» են համարում, դրանց իբր թէ նացիոնալիստական ուղղութիւնը... Այդպիսի մեղադրանք անում են և այն հայ տարրերը, որոնք կարծում են; որ ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն պայմաններում կարելի է գործածել, «սոցիալական», ամեն տեսակ ցաւերի համար նոյն դեղը—«դասակարգային կռիւը». կուլտուրա, տնտեսական զարգացման աստիճան, պատմութիւն, բասա, կրօն, և այլն և այլն ոչ մի նշանակութիւն չունեն այդ տեսակի «սոցիոլոգների» համար: Կարճ և ազդու. «բոլոր երկրների պրոլետարներ միացէք!» կոչը բաւական է անել և դիւթական գաւազանի մի շարժումով քիւրդն էլ, Թուրքն էլ կը մոռանան ամեն ինչ և հային կը

տան այն, ինչ նա ցանկանում է. կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն։ Ամենաբարդ հասարակական հանգոյցները այդպէս հեշտ եթէ լուծուէին՝ որքան զոհերից, արեան ի՞նչ ճապաղիներից և արտասուքի ի՞նչ ծովերից մարդկութիւնը ազատուած կը լինէր։ Բայց, դժբաղդաբար, լոկ «դասակարգային կռուի» նշանաբանով չէն լուծուում մարդկային բարդ հոգու բարդ պահանջների համապատասխան բարդութիւն ունեցող հասարակական և միջազգային շատ և շատ խճճուած հարցեր։ Կան շատ դէպքեր, երբ հարկաւոր է այդ նշանաբանին հետևել, սակայն նա պանացէա չէ բոլոր դէպքերում և բոլոր հանգամանքներում...

Չգիտեմ ով է ընդունակ այժմ ուրանալ, որ դժուար է երևակայել աւելի թշուառ, աւելի խայտառակ մարդկային կացութիւն, քան հայինը Թիւրքիայում։ Մենք գիտենք, որ վատ է նոյն երկրում և թուրք ժողովրդի դրութիւնը. սակայն ի՞նչ համեմատութիւն կարող է լինել այդ երկուսի կացութիւնների մէջ. կեանքի, գոյքի և պատուի ամենատարրական ապահովութիւնից զուրկ, օրէնքի առաջ մահմեդականի նկատմամբ ոչինչ հայը մի այնպիսի դրութեան մէջ է, որ տեսնողի հաւատը չի գալիս թէ հնարաւոր է այդ պայմաններում մի բոպէ ապրել։ «Եթէ դուք միայն տեսնէիք, ասում է մի բժիշկ Մուշից գրած մի մասնաւոր նամակում, [1]) որչափ դժբաղդ է այդ ժողովուրդը և ինչպէս անտրտունջ տանում է իր խաչը։ Եթէ դուք տեսնէիք նրանց աղքատութիւնը, կիսաքաղց գոյութիւնը, նրանց սարսափելի հիւանդութիւնները, դուք կ'ապշէիք մարդկանց համբերատարութեան վրայ։ Նրանց թալանում են, այրում են, տնտեսապէս ջրբկում, բայց նրանք չեն կորցնում լաւագոյն օրերի յոյսը և ջերմագին աղօթում են Աստծուն։ Օ, ես նրանց տեղ, գուցէ, վաղուց երես դարձնէի Նրանից... Այստեղ կատարեալ աւերուածութիւն է։ Քրիստոնեան գլուխ դնելու տեղ չունի»...

Մթթէ զզուանքի արժանի չէը լինի մի ազգ որ իր մէջ չունենար մարդիկ, որոնք զգայուում են այդ դրութիւնից և անձնուիրաբար ջանքեր գործ դնում ազատելու համար իրանց թշուառ հարազատներին այդ դժոխային դրութիւնից։ Թէ պէտք է գոկտրինեօրական քարոզնե՞ր կարդային խեղճերի գլխին և դայլի աւետարաններ դրանց նեղիչների գլխին... Եւրոպան չգիտե՞ր այդ կացութեան մասին։ Ի՞նչ արաւ նա։ Նա ցոյց տուեց հայերին, թէ միայն մի ճանապարհ կայ փրկութեան. արեան

1) «Ս. Օր.» № 193.

ճանապարհը։ Եւ հաւատացին շէյլոկների խօսքերին, անհաւասար, ահեղ, տիտանական կռիւ մղեցին իրանց ազնիւ ոգևորութեան մէջ շատ սքանչելի խիզախներ։ Եթէ մարդկային զգացմունքի նշոյլ լինէր Եւրոպայի սրտում, նա կը գոչէր. «բաւական է, դահիճ, այդ աղդը արժանի է տեղ ունենալ արեգակի տակ և հանգիստ նուիրուել իր խաղաղ կուլտուրական աշխատանքին»։ Բայց նա այդ չարաւ և գերադասեց մի ամբողջ երկիր աւերակների և արեան ծով դարձնել։ Թող ասեն հայկական շարժման անաչառ դատախազները. նացիոնալիստակա՞ն էր, թէ մարդասիրական—աշխարհիս ամենավատթար բռնութեան դէմ այդ պայքարը։ Գործունէթեան սխալների, անհեռատես քայլերի, անտակտութիւնների մասին չէ մեր խօսքը, իհարկէ, այլ շարժման էութեան, նրա նպատակների մասին։ Ամբողջ աշխարհից վկայուած սուլթանական անտանելի բեժիմի դէմ էր այդ պայքարը. և որը աղդի միակ պաշտպանների ցանկութիւնը՝ մարդկային տարրական իրաւունքներ ձեռք բերելուց դէնը չէր անցնում։ Ա՞ւօթ չէ՞ «կղերական-նացիոնալիստական» ինչ որ անմիտ միտու�մներ վերագրել այդ նահատակներին։ Այդ միայն Սուվորինները ու Վելիչկոները սիրտ ունէին գրելու «թիւրքերի և քրդերի դէմ հայերի կողմից գործադրուած զանուութիւնների մասին»։ Ջարդուող, թալանուող, սպանուող, հրկիզուող, բռնաբարուող անդէն հայը յանցաւո՞ր էր յայտարարուում։ Այն հայը, որ մէն մէնակ ուզում էր բարեկարգել նեխած բեժիմը, և իր իդէալականութեան մէջ այնտեղ էր հասնում, որ եղբայրութիւն, հաւասարութիւն էր քարոզում իրան նեղող թուրքին էլ, քրդին էլ։. Նացիոնալիստութիւն էր այդ, թէ աղգերի յարաբերութիւնների չնաշխարհիկ իդէալականացում?

Նոյն՝ իբր թէ «կղերական նացիոնալիստական» ուղղութիւնը ունէին հայ «կոմիտեները», գործելով Կովկասի նախկին բեժիմի դէմ, որի ամբողջ ընթացքը հայերի նկատմամբ նոյնիսկ ռուս իշխանութիւնը գտաւ սխալ և անարդար։ Հայի ձգտումը—պահպանել իր լեզուն, դրականութիւնը, հետևաբար և իր ժողովրդի լուսաւորութիւնը բիրտ ձեռների աւերիչ հարուածներից, ինչպէս և այդ կրթութեան նիւթական միջոցներ հայթայթող կալուածների և գոյքերի (որոնք ամբողջ հայ ժողովրդի սեփականութիւնն են) դրաւման առիթով յուզումները մի՞թէ շօշափում էին որևէ դրացի աղգի շահեր, մի՞թէ դէմ էին հայ մասսայի առաջադիմութեան։ Հայ բուրժուան վաղուց ի վեր խորթացել է իր լեզուից էլ, իր դպրոցներից էլ. նա օգտակար չէր գտնում, որ իր զաւակներն իմանան հայերէն կամ յաճախեն հայոց վար-

ժարանները։ Տուժում էր հայ գիւղացին կամ բանուորը, որոնց զաւակներին կամ ոչ մի ուսում չէր տրւում կամ մատակարարւում էր այնպիսի «լուսաւորութիւն», որից խորշում է ռուսն էլ, վրացին էլ, լեհն էլ, թուրքն էլ հաւասար կերպով։ Արդ, դըպրոցների և կալուածների վերադարձումը նպաստում էր թէ խանդարում հայ ժողովրդի, ուրեմն և Կովկասի ու համայն պետութեան առաջադիմութեան։ Ֆրանսիացի, գերմանացի, ռուս բանուորն ու գիւղացին իրանց մայրենի լեզուին հաւատարիմ մնալով մի՞թէ դաւաճանում են աշխատաւոր դասակարգերի ձգտումներին։ Եւ մի՞թէ առանց քաղաքական իրաւունքների կարելի է երևակայել տնտեսական արդար կարգերի իրագործումը։ Կամ հայը պէտք է կուլ տար բոլոր անարդարութիւնները, իր յոյսը դնելով վոլապուկային էպոխաների վրայ?..

Այդպիսով, հայի ամենաբնական՝ նացիոնալ ձգտումը թէ Թիւրքիայում և թէ Կովկասում դուր չէր գալիս ոչ միայն այդ երկրների բեժիմներին, այլ և դրացի այն ազգութիւններին, որոնք իրանք վարակուած են նեղ նացիոնալիստական զգացմունքներով։ Կովկասում հայի նացիոնալ վերածնութիւնը փուշ էր ոչ միայն Գոլիցինեան բեժիմի աչքում, այլ և «բուն ռուսների» և վրացի ու թուրք ազգասէրների։

Այս վերջինների, Թուրքերի, նացիոնալիզմը նոր երևոյթ է և շատերը, նոյնիսկ մասնաւոր (ռուս) ներկայացուցիչներից, այնքան դժուարանում են հասկանալ, որ գործ են ածում «մուսուլման ազգութիւն» խօսքերը—էթնոգրաֆիապէս անմիտ մի դարձուածք։

Մենք մեր տեսութիւններից մէկում (մայիս) ցոյց տուինք որ իսլամը, ինչպէս մի զօրեղ շաղախ, միացրել է իրար հետ զանազան ցեղեր և դրանցից կազմել մի խայտաբղէտ կոնգլոմերատ։ Նոյնպիսի շաղախի դեր էր կատարում միջին դարերում կաթոլիկութիւնը եւրոպական ազգութիւնների նկատմամբ։ Կաթոլիկ եկեղեցու դէմ բողոքական շարժումները իսկապէս եկեղեցիների ազգայնացման ձգտումներ էին (Հուս, գալլիկանիզմը, Լիւթեր)։ Սակայն ազգայնական շարժումը սկսաւ առանձին թափով զարգանալ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ (Իտալիայի ազատութիւնը, Գերմանիայի միացումը, Բալկանեան ազգերի ազատութիւնը)։ Ուրիշ ազգերի արանքում ազգայնապէս ճնշուած ցեղակից զանազան ազգերի մէջ ևս ծագեց միանալու ձգտում. այդպէս, օրինակ, գերմանացումից և մաջարացումից ազատուելու համար սլաւոն ցեղերի մէջ առաջ եկաւ համասլաւոնականութիւն կամ պանսլաւիզմ։

Ազգային ինքնաճանաչութիւնը վաղ թէ ուշ պէտք է զարգանար և մահմեդական աշխարհում, թէկուզ իսլամը իր կրօնական ֆանատիկոսութեամբ ամենից քիչ նպաստէր ժողովուրդների կեանքի մէջ այդ անխուսափելի պրոցեսին։ Մասսան, ամբոխը, ինչպէս ամեն տեղ, աւելի ուշ է ըմբռնում ազգային դաղափարները, քան կրօնականը. և այսօր էլ զանազան ազգութիւնների մահմեդականներ միայն կրօնով են տարբերուում մարդկանց, «դինը, մասսաբն» է հասկանալի նրանց։ Այդ պատճառով՝ բոլոր մուսուլմանների միութիւնը կամ պանիսլամիզմը շատ աւելի ժողովրդական դաղափար է, քան նացիօնալիզմը։ Մեր երկրում քուրդը, լեզդին, չերքէզը, պարսիկը և այլն իրանց դեռ հաշիւ չեն տալիս ազգային հարցերի մասին և միայն Թուրք-Թաթար ինտելիգենցիայի մէջ է սկսել այդ պրոցեսը. «Каспій», «Հէյաթ» օրգանների շուրջ է սկսել զարդանալ թիւրքական նացիօնալիզմը։

Լաւ ճանաչելով Թուրք-Թաթարական ցեղերի մեծաւոր ստոր վիճակը, այդ նացիօնալիստները աւելի մատչելի համիսլամականութեան տակ են կամաց-կամաց ժողովրդի գիտակցութեան մէջ զարթեցնում պանթիւրքիզմը։ Մենք դիտմամբ թարգմանել տուինք և տպեցինք «Մուրճ»-ի № 8 և այս համարներում Հուսէյն-Զադէի «Ո՞վքեր են Թուրքերը և ո՞վքերից են բաղկացած» յօդուածները, որոնք ոչ մի կասկած չեն թողնում մեր ասածների մասին՝ Թուրքերի մէջ զարթնող նացիօնալիզմի նկատմամբ, «մենք պէտք է գիտնանք, ասում է յիշեալ Թուրք դործիչը, թէ ո՞վքեր են Թուրքերը, ո՞վքերից են բաղկացած, ո՞րտեղից են ծագած, ի՞նչ ճիւղերի են բաժանուած, այսօր ո՞ր տեղերում են ընակութիւն հաստատել և ի՞նչ անունների տակ են ապրում։ Այս հարցով ոչ թէ այսօր, այլ մի քանի դար առաջ զբաղուած պէտք է լինէինք»։ Այդպիսով հիմք է դնում Թուրք-Թաթարական ազգային ինքնաճանաչութեան, բոլոր Թուրք ցեղերի միութեան կամ համաթիւրքականութեան—պանթիւրքիզմի դաղափարին։ Եւ մենք այդ բանի մէջ հակակուլտուրական ոչինչ չենք դտնում, առողջ նացիօնալ զգացմունքը համարելով էվոլիւցիայի ընական, անխուսափելի մի օրէնք. սակայն հէնց սկզբից նացիօնալը Թուրք ինտելիդենտի մէջ դառաւ նացիօնալիստական։ Ցաւը հէնց նրանումն է, որ պ. պ. Աղաեվները, Թոփչիբաշևները և Հուսէյն Զադէները հէնց սկզբից նեղսրտութիւն, թշնամանք ցոյց տուին դէպի հայ տարրը, դրան համարելով արդելք իրանց համաթիւրքական քաղաքական հեռաւոր նպատակների, և ամենամեծ խոչնդոտ, որ պէտք էր մէջտեղից

վերացնել։ Հայը իր խաղաղ ձգտումներով երբէք չէր կարող արդելք լինել թուրք-թաթարների ազգային կուլտուրական զարգացման, սակայն հայը հէնց ինքնապաշտպանութեան տեսակէտով դէմ կը լինէր պանթիւրքիզմի քաղաքական նպատակին, որովհետև անցեալի և ներկայի դառն փորձերը ցոյց տուին, որ այդ ցեղի ստեղծած քաղաքական-հասարակական կարգերը եղել են ամենասոսկալի բռնապետութեան արտայայտիչներ. «սուլթանութիւն», «խանութիւն», «փաշայութիւն» խօսքերը դառել են ամենավայրենի կամայականութեան հոմանիշներ։ Թուրքը այլ տեսակ տիրապետող չի կարող լինել։ Եւ ամեն մի ազգ, որ դժբաղդութիւն է ունեցել երբև իցէ ենթարկուել թուրք-թաթարական իշխանութիւններին—պէտք է խելազուրկ լինի նորից նոյն դրութեան վերադառնալու ցանկութիւն ունենալու համար։ Մթթէ հայը կամ վրացին կը ժառանգեն դրա մասին երբ և իցէ։ Այո, վրացիների աշխարհագրական դիրքը այնպէս նպաստաւոր է, նրանք այնպիսի, ըստ ազգութեան, միապաղաղ զանգուած են կազմում իրանց հայրենիքում, որ թուրք-վրացական ընդհարումների հարցը—ոչ մի հող չի ունենալ իրականութեան մէջ։ Այլ է ցիր ու ցան եղած հայի վիճակը։ Դարերի ընթացքում թուրք-թաթարական ցեղերին աջողուել է դրաւել ամբողջ Հայաստանը և նրա ընդարձակ հայ ազգաբնակութեան միապաղաղութիւնը հիմնաւորապէս խախտել։ Անտանելի կացութեան երեսից հայի գաղթումը մի կողմից և ներքուստ պատակուած ոյժերի ջարդերը միւս կողմից—դադարկեցրին հայկական դաւառները, և այսօր Արաբսի հովիտը և հին Արցախն ու Սիւնիքը «Թաթարստան» են դառել, Վասպուրականը, Բարձր Հայքը և Տուրուբերանը «Քիւրդիստան»։ Այդ «Թաթարստանի», Թիւրքիայի և Ատրպատականի ընդարձակ տարածութիւնները բռնել են թուրք-թաթարական ցեղերը, որոնք բնազդմամբ ձգտում են միանալ։ Եւ բաւական է ֆիզիկապէս և տնտեսապէս ուժասպառ անել այդ երկրներում հայ տարրը, որ de facto իրականանար այդ միութիւնը։ Թուրք նացիոնալիստների տակտիկայի տեսակէտից, ուրեմն, հասկանալի է հայերի բնաջնջման վայրենի վճիռը։ Դրա մասին խօսել ենք անցեալ անգամ և կրկին վերադառնալ նոյն խնդրին աւելորդ կը լինէր։

Սկզբից և եթ մենք թուրք-հայկական ընդհարումների ասիթով կողմնակից ենք եղել այն տեսակէտին, որ այդ երևոյթը պայմանաւորուում է մի շարք պատճառներով. եթէ տեղական բիւրոկրատիան ու պոլիցիան տարուելով հայատելութեամբ չմոռանար իր պետական ֆունկցիան և չէղոք, թուրքերի համար

նոյնիսկ բարեկամական դիրք չբռնէր, այլ իսկոյն և եթ, փեւորուարի դէպքերի ժամանակ, կտրուկ միջոցներ առնուէր, իհարկէ ոչ պանիսլամիզմը, ոչ պանթիւրքիզմը, ոչ էլ Թուրք խուժանի թալանելու և սպանելու ընազդները այնպէս կը բռնկուէին և այնպիսի սոսկալի ծաւալ կը ստանային։ Բարեացակամ մեղմութիւնը Թրքերի նկատմամբ նոյն ազդեցութիւնը գործեց, ինչ որ քամին հրդեհի ժամանակ։ Անպատիժ ոճրագործութիւնները մի ամբողջ ազգի նկատմամբ և իշխանութեան ցոյց տուած անտարբերութիւնը առաջ բերան երկու կուսակցութիւնների մէջ այն համոզմունքը, որ իւրաքանչիւրի փրկութիւնը Թողուած է իր զէնքի ոյժին։ Այդ անորմալ դրութիւնը մի՞թէ չէին կարող բացատրել նրանով, որ իբր Թէ կառավարութեան դեվիզն է «բաժանիր, որ տիրես»... Այդ պայմաններում Թուրք նացիոնալիստները իհարկէ պէտք է փորձէին իրագործել իրանց նպատակները։ Բայց Թուրք ազգ, ֆանատիկոս, անկուլտուրական ամբոխը պատրաստ չէր ըմբռնելու շարժման ազգային կողմը, և զեկավարները միայն զարթեցին նրա մէջ ֆանատիկոսութիւնը, դազանային ընազդները... Ով ճանաչում է Թուրք ամբոխը՝ նրան հարկաւոր չէ բացատրել, որ իւրաքանչիւր խան, բէգ, սէիդ, հաջի վայելում է իր շրջանում ցեղապետի հեղինակութիւն. դրանց մի խօսքը բաւական է կուսացնելու և խաղաղացնելու Թուրք խուժանը։ Եւ եթէ ութ ամսուայ ընթացքում չխաղաղուեց երկիրը այդ այն պատճառով, որ Թուրք զեկավարներից ոչ ոք չէր ուզում, ոչ ոք չէր ստիպւում այդպէս անել... Նախկին բեժիմի ներկայացուցիչները կարծես ամեն ինչ արին՝ վայր գցելու համար ռուսական պրեստիժը Թէ ներքին և Թէ արտաքին աշխարհում։ Եւ երբ անաչառ պատմութիւնը իր դատավճիռը կարդաց հին, նեխած բեժիմին Ցուսմի մօտ, մերկացան պետական օրգանիզմի այն բոլոր ցաւագար կողմերը, որ աշխատում էր ամեն միջոցներով ծածկել շահագրգռուած բիւրոկրատիան։ Ծայրերի քաղաքականութեան մէջ ևս տարիներով ցանած անարդարութիւնները, ճնշումները, ատելութիւնները աճեցին և առատ հունձ տուին, սակայն Թունաւոր հունձ...

Այժմ ի՞նչ անել, ինչ հակաթոյն տալ բռնկած կրքերն հանգստացնելու համար, երկիրն կործանումից ազատելու համար։ Անցեալ անդամ մենք ժամանակ արինք շուտափոյտ, հէնց այժմ ձեռք առնելու միջոցներ, հրդեհը հանգցնելու համար. այժմ առաջ բերենք այն, ինչ պէտք է ծառայի ապագայի համար։

Նախ և առաջ՝ մաքուր օդ, առողջ սնունդ, որոնք սոցիա-

լական կեանքում այլ կերպ չեն հասկացուում, քան ազատ, արդար կարդեր...

Երկրորդ՝ Կովկասը պէտք է ունենայ տեղական կեանքին ուժ կանգնած առանձին ներկայացուցչական ժողով ընտրուած ազգաբնակութիւնից այնպէս որ դէմոկրատիական տարրերի ցանկութիւնները ազատ արտայայտութիւն գտնեն նրանով և ոչ թէ նա լինի բուրժուազիայի և ազնուականութեան կամ մագնատների մի սէյմ։ Այդ անելու համար ռուս իշխանութիւնը պէտք է մի անգամ ընդ միշտ հասկանայ և համոզուի որ ոչ վրաց և ոչ էլ հայ ժողովուրդը այնքան տըհաս չեն քաղաքականապէս, որ ձգտեն սեպարատիզմի, թուրքթաթարական բիրտ գերիշխման վտանգի դիմաց։ Պէտք է մի կողմ նետել խանդոտ կասկածամտութիւնը և բռնի ռուսիֆիկացիայի քաղաքականութիւնը, հաւատացած լինելով որ իւրաքանչիւր ազգի առողջ նացիոնալ—կուլտուրական ձգտումը ոչ մի վտանգ չի կարող սպառնալ ընդհանուր հայրենիքի ամբողջութեան, այլ նոյնիսկ աւելի բնական և զօրեղ կը դարձնի նրանց կապը ռուս ժողովրդի ստեղծած լաւագոյն պետական կազմի հետ։

Երրորդ՝ ոչ միայն պետութիւնը, այլև իւրաքանչիւր ազգութիւն պէտք է դէմ լինի օտարացնող, կղզիացնող, թշնամութիւն սերմանող նացիոնալիստական արտայայտութիւններին. սակայն երբէք չպէտք է շփոթել նացիոնալը—նացիոնալիստական ձգտումների հետ։ Պէտք է խոստովանուել որ իրար կողքի ապրող հայը, վրացին, թուրքը, ռուսը իսկապէս իրար ճանաչելու, իրար հասկանալու ոչ մի լուրջ ջանք չեն գործ դրել. իրար կասկածումեն, իրար մեղադրումեն մեծ մասամբ ասէկոսէների, սխալ հասկացած շարժառիթների հիման վրայ։ Այդ տգիտութիւնն, այդ անբարեխիղճ մակերեսայթաստիրութեան վերջ պէտք է դնել։ Այդ կորստաբեր հին ուղղութիւնը փոխելու համար այժմ անհրաժեշտ է, որ թոյլ տրուի գումարել հայ, վրացի, թուրք ընտրեալ ներկայացուցիչների մի համագումար Կովկասում։ Անհրաժեշտ է, որ մարդիկ տեսնեն իրար, բացատրուեն, պարզեն թիւրիմացութիւնները, հասկանան իրար, փարատեն անմիտ կասկածներն ու մեղադրանքները և ծրագրեն համերաշխ համակենցաղի պահանջները, պարզելով իւրաքանչիւրի նացիոնալ, սակայն ոչ նացիոնալիստական ձգտումները։ Առանց այդ երեք պայմանների մանր-մունը բեռնորմներով և բիւրոկրատիական-պոլիցիական կարգադրութիւններով չի կարելի բուժել Կովկասի վէրքերը, որոնցից ամենածանրը նրա ազգերի երկպառակութիւնն է։

 Լ. Ս.

—Սեպտեմբերի 30-ին վախճանուեց Ռուսաստանի պրոֆեսսիւ բոլոր ոյժերից պաշտուած Սերգէյ Նիկոլաեվիչ Տրուբեցկոյ՝ նշանաւոր գիտնականը, ազնիւ և քաջարի քաղաքացին։ Դա համալսարանների ձեռք բերած ինքնավարութեան առաջին խոշոր զոհն էր։ Ռուսաստանի ամենահին և ամենապատկառելի համալսարանի առաջին ընտրած ռեկտորն էր նա և իրան յանձնուած կրթական մեծ հաստատութեան աղատութիւնը պաշտպանելու համար էր գնացել Պետերբուրգ։ Մահը յանկարծակի էր. մի քանի բոպէ մահից առաջ նա իր տաք և խելացի ատենաբանութեամբ պաշտպանում էր լուսաւորութեան մինիստրի առաջ ազատ կարդերի անհրաժեշտութիւնը՝ վերանորոգելու բուռն տենչով բռնուած Նոր-Ռուսաստանի համար, որովհետև առանց խօսքի և գումարումների ազատութեան ոչ մի բեֆորմ չի հասնիլ իր նպատակին...

Իշխան Տրուբեցկոյը իսկական հայրենասէր էր, որի սիրտը բաբախելով ռուս ժողովրդի, ռուս հայրենիքի բարգաւաճման համար՝ խտրութիւն չէր դնում նոյն երկրում ապրող միւս ազգերի նկատմամբ։ Մենք ժամանակին առաջ էինք բերել, սոյն այս էջերում, յունիսի 6-ին Կայսեր ասած նրա ճառից այն խօսքերը, որոնց մէջ արտայայտուած էր նրա լայն հոգին. «պէտք է այնպէս անել, ասել էր նա, որ բոլոր հպատակները հաւասարապէս և առանց խտրութեան զգան իրանց ռուս քաղաքացիներ, պէտք է չլինեն իրաւազուրկներ և տարբախտացածներ»։ Ահա մի հայրենասիրութիւն, որ նոյնքան հեռու է նացիոնալիզմից, որքան առողջութիւնը՝ ցաւագարութիւնից...

Հանգուցեալը ռուս յայտնի տոհմից էր, ծնուել է 1962 թուականին, աւարտել է Մոսկուայի համալսարանի պատմականլեզուագիտական ֆակուլտէն։ 1889 թ. նա փայլուն կերպով պաշտպանեց «Մետաֆիզիկան հին Յունաստանում» մագիստրական դիսսերտացիան. 1900 թուականին «Բանի մասին վարդապետութիւնը» անունով դոկտորական դիսսերտացիան պաշտպանեց և դառաւ փիլոսոփայութեան պրոֆեսսոր նոյն համալսարանում։ Փայլուն հռետոր, հրաշալի դասախօս, նշանաւոր գիտնական իշխան Տրուբեցկոյը միաժամանակ խմբագիր էր «Вопросы Философіи и Психологіи» ամսագրի, հրապարակախօսական յօդուածներ էր գրում առաջադէմ թերթերում և սերտ մասնակցում էր ռուս հասարակութեան ազատագրական շարժումներին։ Այս տարուայ սկզբում նա փորձեց հրատարակել սեփական օրգան, շաբաթաթերթ «Московская Недѣля», որի հէնց առաջին համարը լոյս չտեսաւ «իրանից անկախ պատճառներով»։ Ցանձին Տրուբեցկոյի դեռ չկազմակերպուած լի-

բերալ կուսակցութիւնը Ռուսաստանում կորցրեց իր տաղանդաւոր և շիտակ պարագլխին, իր լիդերին։

—Բագուի զարհուրելի ջարդերից, հրդեհներից և թալաններից յետոյ Պետերբուրգում գումարուեց նաւթագործների համաժողովը։ Կարելի է ասած ամբողջ աշխարհը նայում էր թէ ի՞նչ կ՚ասեն, ի՞նչպէս իրանց կը պահեն այդ ժողովում ամենից շատ տուժած հայ նաւթագործների ներկայացուցիչները։ Դժբաղդաբար դրանց մեծամտութեան բռնած ընթացքը այնքան մերկանտիլ էր, վեհերոտ, որ հազիւ թէ հասարակութեան լաւագոյն մասի համակրանքը գրաւէին։ Պէտք է ասել, որ այդ ժողովներում բացի ինժիներ Եակովլեվից շատ քչերն էին կանգնած իրանց կոչման բարձրութեան վրայ...

Հետաքրքիր էին և ընորոշ սեպտեմբերի 28-ի և 30-ի նիստերի վիճաբանութիւնները, երբ հերթական հարց էր դրուած բանուորական գիւղեր կամ գաղութներ շինելու մասին։ Մի հարց, որ ինչպէս ասում են, 8 տարի է դնում է և չի վճռուում... Փետրուարեան անցքերից յետոյ կրկին յարուցուել է այդ հարցը. սակայն չեն ուզում աւազակների բուն դառած թրքական Բալախանի, Ռոմանի, Սարունչի ու Զարբատ «գիւղերից» յարքունիս դրաւել 300 դեսեատին հող... Ահա տեղի ունեցած խօսակցութիւնները ժողովում, քաղաքՊետերբուրգի թերթերից.

Աղանով.—Հողի օտարացումը ազգաբնակութեան մէջ նոյնպիսի զգացմունք կը յարուցի, ինչպէս կը յարուցէր իւրաքանչիւր ուրիշ սեփականատէրի մէջ, չմօսելով նոյնիսկ այն մասին որ այդպիսի օտարացում կը քանդի նրանց։ Գիւղացիները պարապում են իսկզբանէ անտի երկրագործութեամբ, և ջանասիրութեամբ «գիշեր ու ցերեկ»մշակում են անբերրի հողը։ Անարդար կը լինէր խլել նրանցից հողը...

Խատիսեան.—Մատնացոյց է անում դրանից առաջ պատահած դէպքերը, երբ իշխան Գոլիցինի ժամանակ հայ գիւղացիներից խլուած էր ոչ 300, այլ 30,000 դեսեատին։ Հայերը դուցէ «գիշերները» չեն էլ պարապում երկրագործութեամբ, սակայն «ցերեկները» պարապում են...

Թոփչիբաշեւ.—Եթէ գիւղացիներից սկսեն խլել հողերը՝ Անդրկովկասի գիւղացիները շուտով բոլորովին կը զրկուեն հողից։ Գիւղացիները առհասարակ սակաւահող են և իւրաքանչիւր շունչին գալիս է 2—3 դեսեատին։ Հողի օտարացումը կոլոսաբեր ազդեցութիւն կ՚ունենայ ազգաբնակութեան բարոյութեան վրայ, որովհետև նա համարեա բացառապէս զբաղւում է երկրագործութեամբ և այգեպանութեամբ։

Նորել.—Սաբունչի, Բալախանի, Բոժանիում ոչ մի երկրագործութիւն չկայ։

Եակովլեվ.—Այստեղ նկարագրեցին (ակնարկ Ազաեվի և Թոփչիբաշևի ասածների վրայ) Բալախանում ապրող «մշտական երկրագործի» տիպարը։ Այդ տիպարի հետ ես ծանօթացայ դեռ 9 տարի սրանից առաջ, երբ առաջին անգամ եկայ Բագու։ Ինչ ուզում էք ասէք, ինչ ուզում էք սկսէք այդ գիւղերում, ամենուրեք և ամեն ժամանակ հանդէս է գալիս «մշտական երկրագործի» այդ տիպարը, սակայն ոչ երկրագործական գործիքներով, այլ բերդանով, ատրճանակով, վարձատրութեան պահանջով։ Եւ վճարում ենք։ «Մշտական երկրագործը» շինութիւններ է վերցնում կապալով և նաւթագործները ստիպուած են յանձնել նրան և անվերջ վճարել ու վճարել նրան։ Լինում է և այսպէս. ժառանգում է «մշտական այդ երկրագործը» նաւթանց խողովակին և հանգիստ սրտով գնդակ է արձակում և ծակում խողովակը. նաւթը շատրուանի նման խփում է և «երկրագործը» հաւաքում է այն առանձին ամբարում. սակայն հաւաքած նաւթը հոսում է գետնի վրայով և փչացնում նրան, և իսկոյն «երկրագործը» գալիս է նաւթագործի մօտ և պահանջում վարձ փչացած հողի համար։ Եթէ նոյն հողարաժնի վրայով անցուած են 10 խողովակ և բոլոր 10 խողովակները մէկը միւսի յետևից կոտրուած՝ կը լինեն, «երկրագործները» կը վերցնեն 10 անգամ փրկանք միևնոյն փչացած հողի համար։ Արդարև Բագուի «երկրագործները գիշեր և ցերեկ աշխատում են». ցերեկը տուզանք են ժողովում, իսկ գիշերը հաւաքում են ուրիշի կայքը։ Հողերը այդ «մշտական երկրագործների» համար միայն թալանի գործիք է և նրանց ձեռքում եղած հողի քանակութիւնը պակասացնելով միայն կը պակասեցնուի թալանը։ Լինում են դէպքեր երբ մի կտոր հողի համար, որ բռնուած է մաֆիուզների երկու սիւներով, վերցնում են միանուագ 15,000 բուբլի և իւրաքանչիւր տարի 150 բուբլի... Այդ բոլորը վաղուց է որ կատարւում է, սակայն այդ բոլորի մասին յաժօթ և ի խայտառակութիւն մեր մինչև այժմ մենք լռել էինք, և այժմ ենք ձայն բարձրացնում։ Ձայն ենք բարձրացնում նախ այն պատճառով որ օգոստոսեան կատաստրոֆը պատահեց մասնակցութեամբ և մասամբ զեկավարութեամբ «մշտական երկրագործների»։ Եթէ նրանք կը ճնան—նման կատաստրոֆ նորից կը կրկնուի։ Այդ պատճառով անհրաժեշտ է նրանց գաղթեցնել։

Ազաեվ։—Հակառաքելով Եակովլեվին, խօսում է երկու տարրերի ընդհարման մասին. մի կողմից վայրենի, նախնական—միւս կողմից՝ բարոյական սկզբունքներից զուրկ կուլտուրաև-

գերական։ Այս վերջինները կողոպտեցին գիւղացիներին, փոխարէնը ոչինչ չտալով, այլ միայն լքցնում են իրանց գրպանները։ Կուլտուրտրեգերները բաց չարին ոչ մի վարժարան և այլն։

—Սեպտեմբերի 30-ի նիստում մասնակցում էին նաև Բագուի բանուորների հինգ պատգամաւորները։

Ահա ինչ խօսքերով է բնորոշում դրանց թողած տպաւորութիւնը «Наша Жизнь» թերթը.

«Սեպտեմբերի 30-ի նիստում ներկայ էին Բագուի բանուորների պատգամաւորները։ Եւ առաջին անգամ համագումարի 10 օրուայ ընթացքում լսուեցին արժանապատուութեամբ լի անկախ խօսքեր։ Զկային ոչ շնորհակալութիւններ, ոչ հաճոյախօսութիւնների փոխանակութիւն, ինչ որ մենք սովոր ենք լսել ամեն մի նիստի ժամանակ, ամեն առիթով և առանց որևէ առիթի... Պատգամաւորները իրանց ասելիքը յայտնում էին հանգիստ, դիտակցաբար և վստահ. ոչ ճառերի, ոչ դիմումների մէջ նրանք ոչ մի անգամ չդիմեցին նաւթագործների և ինժեներների կողմից այնքան յաճախ կրկնուող մինիստրի պատուանունի յիշեցումը. «Ձերդ բարձր գերազանցութիւն». իրանց հայեացակէտը նրանք պարզում էին կտրուկ, համարձակ և որոշակի, առանց մի բան թաքցնելու կամ կիսատ թողնելու»։

Մուսուլման բանուորները Բագուից յայտնել էին մինիստր Կոկովցեվին թէ իրանք իրանց շահերի պաշտպանութիւնը յանձնում են Թոփչիբաշևին...

Բագուի բանուորների զեկուցագիրը, որ նրանք ներկայացրին ֆինանսների մինիստրին, շօշափում էր հետևեալ կէտերը.

I *Իրաւական ընաւորութիւն կրող միջոցները.*

1. Տալ բանուորներին իրաւունք. ազատօրէն միութիւններ կազմակերպել, կազմել ամեն տեսակ դրամարկղեր, բանալ վարժարաններ, գրադարաններ, ընթերցարաններ, երեկոյեան դասընթացներ, ընդհանուր զարգացուցիչ առարկաների դասախօսութիւններ, համաբանուորական սպառող և արդիւնագործական ընկերութիւններ, իրաւունք՝ նաւթագործների հետ միասին կազմակերպել համաձայնութեան և աշխատանք գտնելու գրասենեակներ։

2. Իրաւունք ազատ գումարումների, խօսքի, աշխատադադարի և ոուս և թուրք լեզուներով բանուորական լրագիր հրատարակելու իրաւունք։

3. Հիւանդութեան, հաշմանդամութեան և գործ չգտնելու դէպքերի համար պետական ապահովագրութիւն։

4. Բանուորների ներկայացուցիչների մասնակցութիւնը

Բաղուի և նրա շրջակայ բնակիչների հետ հաւասար իրաւունքներով։

5. Բանուորների ներկայացուցիչների մասնակցութիւն համապետական օրէնսդրական հիմնարկութիւնների մէջ Ռուսական կայսրութեան բոլոր ազգաբնակութեան հետ հաւասարապէս։

6. Վտարանդում նաւթահանքերի և գործարանների բայօններից մարդասպան թաթարների։

7. Նաւթահանքերի և գործարանների բայօնների բանուորների համար զէնք կրելու իրաւունք։

II Տնտեսական ընաւորութիւն ունեցող միջոցներ.

1. Հող տալ այդ բայօններում բանուորների համար գաղութներ հիմնելու։

2. Այդ բանուորական գաղութների յատակագիծները քննելու, ինչպէս և շինութիւններ կառուցանելու գործում իրաւունք տալ մասնակցել բանուորների ներկայացուցիչներին։

3. Վարձատրել բանուորներին այրուած կայքի համար։

4. Որոշ գործերում կապալառուների միջոցով պատուէրներ տալը վերացնել։

5. Որևէ ֆիրմայում ոչ պակաս քան մի տարի ծառայելուց յետոյ իրաւունք տալ ունենալ մի ամսուայ արձակուրդ։

6. Որոշ տոկոս ձեռնարկութեան ընդհանուր օգտից պահել և տալ իբրև պարգև այն վարպետներին և բանուորներին, որոնք 6 ամսից պակաս չեն ծառայել։

7. Ութժամեայ օրական աշխատանք։

Ինչպէս տեսնում էք միանգամայն արդար պահանջներ, որոնց իրագործումը բանուորական շարժումները կը մտցնեն արտայայտութեան օրինական հունի մէջ, ինչպէս այդ կատարուել է Արևմտեան Եւրոպայում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլօ-ճապոնական նոր դաշնագիրը.—Ռուսաստանի ընդարձակման ուղղութիւնը ասպագայում.—Թիւրքիայի խաղերը.—Բուլղար տարրը Մակեդոնիայում.—Թիւրքահայերի դժուար դրութիւնը։

Անցեալ անգամ մենք յիշեցինք անգլօ-ճապոնական նոր դաշնագրի մասին, երբ դեռ մանրամասնութիւնները յայտնի չէին։ Սեպտեմբերի 13-ին Լոնդոնում և Տոկիօում հրատարակուեց այդ դաշնագիրը ամբողջապէս և այն, ինչ կնքուած էր դեռ պատերազմի ժամանակ, յուլիսի 30-ին, յայտնի դառաւ Պորտսմուտի ռուս-ճապոնական պայմանագրից յետոյ։ Անգլօ-ճապոնական նոր դաշնագրի զօրութեամբ այդ երկու պետութիւնները պարտաւորուում են իրար օգնել ոչ միայն այն ժամանակ, երբ դրանցից մէկը պատերազմի է բռնուում երկու կամ աւելի պետութիւնների հետ, այլ իւրաքանչիւր դէպքում, երբ Անգլիան կամ Ճապոնիան ստիպուած կը լինեն պատերազմ սկսել իրանց հողային կամ յատուկ շահերը պահպանելու համար։ Այդ դաշնագրի զօրութեամբ Կորէան դառնում է ճապոնական մի գաւառ, իսկ Անգլիայի համար մշտական երկիւղը Հնդկաստանի մասին վերանում է։ Անգլիան աշխատել է ոչ միայն Հնդկաստանը ընդ միշտ ազատել պատահարներից, այլ և որ այդ հարուստ երկրի շուրջ գտնուող սահմանակից երկրներում իր յատուկ շահերի պաշտպանութիւնը ապահովուի զինուած ձեռքով։ Ի նկատի է առնուած և «Երկնային կայսրութեան (Չինաստանի) անկախութեան և ամբողջութեան» անխախտելիութիւնը։ Հիմա եթէ ինկատի ունենանք թէ ինչ անխորտակելի ոյժ են ներկայացնում անգլիական հզօր նաւատորմիղը, միացած ճապոնական քաջայաղթ նաւատորմի և գերազանց բանակի հետ, պէտք է տեսնենք որ Ռուսաստանի առաջխաղացութեան դէմ թէ Հեռաւոր և թէ Մի՛ջին Ասիայում համարեա անյաղթելի պատնէշներ են բարձրացրուած։ Ռուսաստանի տերրիտորեալ կամ հողային ընդարձակման դէպի Արևելք և Հարաւ ամուր խոչընդոտներ են դրուած։ Մնում է աւելի մատչելի ընդարձակումը դէպի Արևմուտք. սակայն այդ կողմից էլ ոչ բոլոր սահմանները հաւասար թուլութիւն են

ներկայացնում. Գերմանիայի և Աւստրիայի սահմանները եռապետեան զինակցութեամբ են պաշտպանուած. մնում է Շվեդիա, Նորվեգիա, Ռումանիա և Ասիական Թիւրքիա, որոնց սահմանները ռուսական զօրութեան առաջ հեշտ խորտակելի են։ Շվեդ-Նորվեգիայի քաքաքական անջատումը վերև յիշած կողմից աւելի վտանգաւոր դարձրեց դրանց միջազգային դրութիւնը։ Թոյլ Ռումանիան պաշտպանուած է Բալկանեան թերակղզում գոյութիւն ունեցող միւս պետութիւնների բազմաթիւ շահերի հաւասարակշռութեամբ որ խախտուած կը լինէր Ռուսաստանի ագրեսիւ քաղաքականութեան պատճառով։ Մնում են Ասիական Թիւրքիայի սահմանները, որոնց պաշտպանութիւնը Ռուսիայի դէմ, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, հազիւ թէ տեղի ունենայ հէնց այն պատճառով, որ Գերմանիայի բռնած ներկայ դիրքով միւս եւրոպական պետութիւնները այնքան էլ չեն շահագրգռուած Թիւրքիայի վատթար բեժիմի պահպանութեամբ, և նոյնիսկ որոշ չափով իրանց պրեստիժը բարձրացրած կը լինէին մարդկութեան առաջադէմ հասարակական կարծիքի առաջ, եթէ Ռուսաստանի առաջխաղացումը հիմք դառնար Թիւրքիայի բաժանութեան։ Գործերի այդ ընդհանուր դրութիւնը շատ հաւանական է դարձնում, որ շուտով Մերձաւոր Արևելքում են կենտրոնանալու մեծ պետութիւնների քաղաքական ջանքերը։ Արդ, ինչ է սպասում հայութեան, աշխարհիս այդ մասում։ Հայութիւնը իր թուով և տնտեսական-բայոյական ոյժով, վերջին թուրք-ռուսական պատերազմից յետոյ, չափազանց թուլացաւ սուլթանի ձեռք առած տմարդի միջոցների շնորհիւ։ Եթէ առաջ թուրք և քիւրդ մասսաները հային միայն արհամարհում էին, իբրև ամեն մի քրիստոնեայի, այժմ իւրաքանչիւր չնչին առիթից օգտուում են՝ սրի անցկացնելու համար միայն հայերին, թալանելու, հրկիզելու ընդանց ունեցածը։ Թուրք «պրոգրեսսիւ» տարրը այնքան չնչին է և այնքան կտրուած ժուսուլման մասսայից, որ նրա ազդեցութիւնը թիւրքական կեանքում կարելի է բոլորովին հաշուի չառնել։ Այդ, ինչ է սպասում հայութեան, եթէ Թիւրքիայի գոյութեան վըտանգ սպառնայ որևէ քրիստոնէայ պետութեան յարձակման շնորհիւ. դժուար չէ գուշակել թէ նախ և առաջ որ տարրի վրայ պէտք է իր վրէժը հանի թէ սուլթանական բեժիմը և թէ ֆանատիկոս թուրք ամբոխը։

Թիւրք և քիւրդ մասսաների գազանային բնազդները վերջին քառորդ դարի ընթացքում չափազանց շատ են յաղուրդ տալ անպատիժ կերպով հայի արիւնը ծծելիս, նրա ունեցածը յափշտակելիս. այդ մասսաները չափազանց վար-

ժուել են ոճիրների մէջ և եւրոպական անկարողութիւնից լըկտիացել, որպէսզի հնարաւոր լինէր նրանց զսպել անզէն ձեռքով. իսկ մինչև դրսի զինուած ձեռքը կարողանայ ներս մտնել Թիւրքաց Հայաստան—հայի արևը մարած կը լինի։ Ինչ կարող է անել մի բուռն անզէն, թշուառացած ժողովուրդ մինչև ատամները զինուած գազանների անդին բազմութեան մէջ, եթէ նոյնիսկ քրիստոնեայ զօրքերի ներկայութեամբ, քրիստոնեայ պետութեան մէջ, ինքնապաշտպանութեան համար փոքրիշատէ զինուած հայը 9 ամիս շարունակ անկարող է վերջ դընել թրքական խժդժութիւններին։ Հայի կացութիւնը Թիւրքիայում չափազանց վտանգաւոր է դարձել և բողոքելու հին տակտիկան կորցրել է իր իմաստը... Միւս կողմից երաղել թէ Թիւրքիայում յաղթող կը հանդիսանայ «պրոգրեսսիւ տարրը», առաջ կը գայ, չգիտենք որ դարում, «միջազգային ուժեղ պրոլետարական կազմակերպութիւն», նշանակում է զօր տալ երևակայութեան և ուտոպիաներին, առանց հաշուի առնելու սոսկ իրականութիւնը իր ահռելի փաքտերով...

Մակեդոնական հարցը, որի լուծումը բազմաթիւ պատճառներով, համեմատաբար, աւելի դիւրին է, քան հայկականը, դեռ մնում է համարեա նոյն դրութեան մէջ, ինչ էր առաջ։ Եւրոպական կոմիսարների ներկայութիւնը չարգելեց որ Թիւրքիան յունական հրոսակների աջակցութեամբ անդին հարուած հասցնի բուլղար տարրին այդ երկրում. Թիւրքիան, աւելի վտանգաւոր համարելով բուլղար յեղափոխական տարրի գործունէութիւնը, de facto օրէնքից դուրս է յայտարարել բուլղար ժողովուրդը Մակեդոնիայում և ենթարկելէ նրան անվերջ հալածանքների։ Վերջին հինգ տարիների ընթացքում բուլղարական վարժարանների երրեմն ծաղկած ցանցը սոսկալի կըրճատումների ենթարկուեց։ Բուլղարները անտեսապէս բայքայուեցան այդ երկրում և կորցրին իրանց առաջուայ ազդեցութիւնը. ծայրայեղ ազգայնական ատելութեան հասան Մակեդոնիայում ապրող յոյն, ռուման, սերբ և բուլղար տարրերը, չընայած որ բոլորն էլ քրիստոնեայ են, բաղդակից և կանգնած միևնոյն կուլտուրական աստիճանի վրայ։ Թէ ազգայնական կրքերի և թէ մեծ պետութիւնների փոխադարձ նախանձի վրայ հիմնելով իր խաղերը՝ սուլթանը աջողութեամբ վարում է իր նենգ քաղաքականութիւնը, ձգձելով ռեֆորմների հարցը Մակեդոնիայում և միաժամանակ ամրացնելով Բոսֆորի ափերը նոր սիստեմի ուժեղ թնդանօթներով։ Անգլիայի դայրոյթին առանձին նշանակութիւն չտալու չափ շօշափելի փաստերով է ամրացնում նա իր սերտ բարեկամութիւնը Գերմանիայի հետ. վերջերս

բրիտանական դեսպանը միջնորդում էր, որ Բարձր Դուռը անգլիացիներին տար կոնցեսիա, շարունակելու իրանց կառուցած երկաթուղին Զմիւռնիայի վիլայէթում (Այդին—Էգդիր), բայց սուլթանի կառավարութիւնը մերժեց այդ, մինչդեռ աւելի մեծ կոնցեսիաներ էր նա սիրով տալիս Անգլիայի հակառակորդ Գերմանիային, որին վերջերումս զիջեց Բոսֆորից ոչ հեռու գտնուող կղզիներից մէկը...

Եւ Թիւրքիայի յանդգնութիւնը այնտեղ է հասնում, որ նա դուրս է վռնդում Մակեդոնիայից աշխարհահռչակ անգլիացի քաղաքական գրող և գործիչ Զէյմս Բրէյսին, որ գնացել էր Մակեդոնիա գիտական նպատակներով. նա մտադիր է եղել այցելել Տաոր գիւղը, Յուստինիանոս կայսեր ծննդավայրը։ Պոլսից կարգադրում են հեռացնել նրան Մակեդոնիայից։ Եւ, գերմանական լրագրները չարախնդութեամբ արձանագրելով այդ եղելութիւնը յայտնում են իրանց դժգոհութիւնը Անգլիայի դէմ «որ դիմակաւորուած իր քիթն է կոխում թրքական գործերի մէջ»...

Այո, դրութիւնը չափազանց փափուկ է և խճճուած ու վտանգաւոր, ուստի հայից պահանջւում է այս հանգամանքներում բազմակողմանի ուսումնասիրուած, հեռատես ու շրջանկատ տակտիկա։

Լ. Ս.

8 Հոկտ.

ՊԱԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Արարատ, Սեպտեմբեր: — Մայր Աթոռի պաշտօնական օրգանը իր արտաքինով և բովանդակութեամբ չափազանց յաճախ է մետամորփոզների ենթարկուում. իւրաքանչիւր նոր խմբագիր կարծես իր ճաշակի համեմատ է ընտրում բաժիններ, շապկի նախշեր... սակայն մի բան անփոփոխ է մնում. չկարուող, թափթփուող երեսների հետ և անփոյթ, ոչ-սոլիդ հրատարակութիւնը: Թըւում է թէ մի ամբողջ «տպարանական կոմիտետ» և միաբանութիւն կարող էին հաստատուն և իր կոչման համապատասխան արտաքին ձև տալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրգանին... Ինչ բաժիններ ուզումեն թող մտցնեն, սակայն 3 բաժնի վրայ անհրաժեշտ է առանձին խնամք տանել և ամեն կերպ աշխատել այդ 3 բաժինները ճոխ և լուրջ դարձնել. առաջինը—«Պաշտօնական» բաժինը. երկրորդ — «Հայոց եկեղեցին», որի համար Մայր Աթոռը կարող էր պահանջել բոլոր աշխարհի հայ առաջնորդներից և պատրիարքներից պարբերաբար լիակատար տեղեկութիւններ հայ դանազան հատուածների մասին. այդպիսով «Արարատը» կը դառնար մի կենտրոն, ուր հաւաքւում են հայ եկեղեցու և ժողովրդի կեանքի մասին ընթացիկ հետաքրքիր նիւթեր: Այդ բաժինը եթէ լաւ տանուի կը դարձնի «Արարատը» հայութեան անջատ մասերը շաղկապող մտաւոր կապերից մէկը: Այժմ այդ բաժինը մատնուած է պատահականութեան: Երրորդ բաժինը, որի վերայ առանձին հոգ պիտի տանուի—դա, լայն մտքով հասկացած, «հայագիտութիւնն» է: Մի օրգան, որ լոյս է տեսնում հայոց միակ բարձրագոյն դպրոցի՝ Ճեմարանի՝ վայրում, ամենահարուստ ձեռագրներ ունեցող մի վանքում—կարող էր այդ բաժինը տանել այնպէս, որ թէ ինքնուրոյն հետազօտութիւններ դուռեղուէին և թէ համառօտ տեղեկութիւններ տրուէին այն բոլոր աշխատութիւնների մասին որ կատարւում են դրսում հայագիտութեան հիւղի մէջ: Էջմիածնի դիտանականները պէտք է իրանց պատուի խնդիր համարէին այդ բաժնի լուրջ և լիակատար խմբագրումը: Դժբաղդաբար այդ երեք գլխաւոր բաժինները բաւական ողորմելի ձեւով են տանուում: Արժէր լուրջ ուշադրութիւն դարձնել Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրգան «Արարատ»-ի աւելի խնամքով հրատարակութեան վրայ. նա պէտք է ունենայ թէ արտաքին և թէ ներքին պատկառելիութիւն...

—

Ցիրակ, օգոստոս:—Եղիպտոսում լոյս տեսնող այս ամսագիրը, խօսելով Կովկասի վերջին դէպքերի մասին, արտայայտում է մտքեր որոնք բնորոշ են ժամանակակից տրամադրութիւնների տեսակէտով. «Թէ Ռուսիոյ և թէ Թիւրքիոյ ուարտասահմանի հայերը համոզուեցան որ՝ Կովկասի Հայութիւնը մէկ քանի օրուան մէջ ընաջինջ պիտի անհե-

տանայ այն օրը որ ռուսական բանակը իսլամները չզապէ։ Բագու ու Նոր (?!)—Նախճաւանի դէպքերը ցոյց տուին վայրենի թաթարներու վայրագ զօրութեան անհեղութիւնը ու քաղաքակիրթ Հայոց ուսումնասիրդ մտաւորականութեան տկարութիւնը։ Իրաւ է թէ Հայերը յանկարծակի եկան ու անզէն գտնուեցան, բայց եթէ նախապատրաստութեամբ սպառազինուեն իսկ, ուրիշ յաջողութիւն չեն կրնար ակնկալել բայց եթէ փառացի մահ յետ քաջամարտիկ ընդդիմադրութեան։ Զինեալ մէկ հայ ի՞նչ կրնայ ընել զինեալ տաս իսլամի դէմ։ Կովկասի հայերը վերջին ամիսներու աղէտաւոր դէպքերէն ցնցուելով չէ որ կ՚ըմբռնեն թէ իրենց կեանքը, հարստութիւնը, ամբողջ գոյութիւնը ռուսական բանակին պտրտական են։ Ոչ. ութսուն տարիէ ի վեր Կովկասեան հայերը գիտեն, թէ՝ առանց Ռուսիոյ տիրապետութեան իրենք ոչնչանան լմնան պիտի։ Դժբաղդաբար, վերջի տարիներս Զուիցերական ներշնչմամբ մոլորած հայ երիտասարդութիւն մը քաղաքական նշանաբան հուչակեց՝ «Կովկասը Կովկասցիներուն» դաւանանքը, ականջ չկոխելով անոնց որոնք՝ երկրին պայմաններուն քաջատեղեակ՝ ըմբռնած էին, թէ առանց ռուս բանակին ներկայութեանը, Կովկասի իսլամները Հայերը կը ջարդեն կը լմնցնեն։ Վերջին աղէտաւոր պատահարները հաւանօրէն ամենուն աչ քերը բացին։

Մենք թրքահպատակ հայերս ալ մեր կարգին մտքերնուս ընդել հանելու ենք այն տխմար ենթադրութիւնը թէ ինքնավար Հայաստան մը իբր ամբարտակ պիտի բարձրանայ հանդէպ Ռուսիոյ, արգելելու համար անոր յառաջդացումը դէպի Արևելք։ Զենք գիտեր, թէ այս յիմարաբանութիւնը էն առաջ հրապարակ նետողը ո՞ր ապուշը եղաւ, իբր քաղաքագիտական խորունկ մտածմունք մը. բայց այս գիւտը, որովհետև շատ տխմարաբանական էր, ուստի և մեր մտքերուն մէջ լայնածաւալ տարածուեցաւ.. Ապա, մեծ յոյսեր ունենալով, որ Հայաստանի հարցը կը լուծեն «Անգլիոյ ազատական կուսակցութիւնը, Ֆրանսիայի և Ռուսիայի հետ համաձայնութեամբ» յիշեցնում է թէ «ժամանակը հասած է որ արտասահմանի Հայերը ազգային քաղաքականութեան մը մեծ գծերուն վրայ խորհին, և զանոնք գծեն»։

Այն ինչ Ալիքսանդրիայում առաջարկում է պ. Ա. Արփիարեան ահա մի քանի ամիս է, որ լուրջ մտածողութեան առարկայ է և ռուսահայ ինտելիգենցիայի բազմաթիւ շրջաններում, ինչպէս և Եւրոպայի և Ամերիկայի հայերի։ Պէտք է հնարաւոր դարձընել, որ ամբողջ հայութեան ներկայացուցիչները ի մի ժողովուին և երեսուն ձիգ տարիների դառն փորձերից յետոյ, մշակեն ընդհանուր ազգային քաղաքականութիւն, գործունէութեան նպատակայարմար տակտիկա։ Թող այդ համազգային համագումարում արտայայտութիւն գտնի հայ ժողովրդի ազատ կամքը։

Դիտարիւն, թ. № 7, յունիս։—Բացի ընագիտական յօդուածներից այս ամսաթերթի մէջ տպւում են նաև մանկավարժական և գիւղատնտեսական դրուածքներ, ինչպէս և օգտակար գիտելիքներ։ «Լուցկիին պատրաստութիւնը» յօդուածը զարդարուած է 5 գեղեցիկ պատկերներով, որոնք դիւրացնում են հասկանալ այդ ամենատարածուած իրի պատրաստութեան գործողութիւնները։ Մանկավարժական բաժնում այս անգամ տպուած է «Գծագրութեան ուսումը մեր մէջ»։ Գիւղատնտեսական բաժնում. «Կաթէն կրած խմորումները, անոր հիւանդութիւնները և անոնցմէ ազատ պահելու միջոցները»։

Լոյս, թ. 11, սեպտեմբեր։—Բոս-

տանում 4-րդ տարին է հրատարակուում է մի «գիտական և բարոյական և իմաստասիրական հանդէս», մեր «Առողջապահիկ»-ի ծաւալովը, մեծ մասամբ թարգմանական կամ կոմպիլիատիւ յօդուածներից կազմած։ Ցիշած համարի բովանդակութիւնն է. «հոգեբանութիւն», «երկինք ու երկիրը», «Սբենսր», «Շիլլեր», «Օձ գինին քարի օղին» (հարբեցողութեան դէմ), «գիտական նորութիւններ» (ելեկտրականութեամբ դեղ առնել, ողեհարութիւն և վատասերում)։

—

«Արշալոյս»։ — Թիւրքահայերը վաղուց ունեն մեծածաւալ և պատկերազարդ օրաթերթեր։ Ռուսահայերիս մէջ «Արշալոյսն» էր որ ապացուցեց թէ սկզբնական որոշ դրամական ոյժով մեր պայմաններում ևս հնարաւոր է հրատարակել մեծ ծաւալով օրաթերթ։ Միաժամանակ վերսկսուած «Նոր-Դար»-ն ևս իր ծաւալը մեծացրեց. նոյնը խոստացել է անել նաև «Մշակը»։ «Արշալոյս»-ի ցարդ լոյս տեսած № №-երը բաւականաչափ նիւթ են տալիս գաղափար կազմելու այդ նոր օրգանի մասին, որ իր ուղղութեամբ պատկանում է առաջադիմական բանակին, առանց որոշ մասնաւորման։ Էժանութիւնը, (տարեկան 7 ր., հատով Թիֆլիսում 3 կ.), մեծ ծաւալը և բաղմակողմանի բովանդակութիւնը անշուշտ կը նպաստեն նոր թերթի տարածման։ Այդ տարածման միայն կարելի է ուրախանալ, որովհետև բազմացնելով հայ ընթերցողների թիւը՝ ազգային-հասարակական կեանքին կապում են նորանոր, մինչ այդ անտարբեր խաւեր և ինքը այդ կեանքը սկսում է զարգանալ աւելի մեծ թափով, աւելի դիտակցական ձևով։ Ռուսաստանի հայերի թիւը՝ մօտ 1½ միլիոն է. միակ հայոց օրաթերթը՝ վերջին տարուայ ընթացքում, «Մշակ»-ը, ամենաշատը տարածուում էր 6000 օրինակ։ Ցանկալի է որ հայոց օրաթերթերն կարողանային գրաւել ընթերցողների նորանոր շրջաններ. և իսկապէս, մի՞թէ 1½ միլիոն մի ազգաբնակութիւն, որ կուլտուրական տարբ է կոչուում, պէտք է մի քանի հարիւր հազար ընթերցողներ չունենար... Այն էլ պէտք է ասել, որ մի քանի տարի առաջ ևս կովկասահայերս ունէինք երեք օրաթերթեր. «Մշակ», «Արձագանք» և «Նոր-Դար». ուրեմն, օրաթերթերի թիւը չի աւելացել, այլ աւելացել է հանդէսների թիւը. մի մանկական - մանկավարժական ամսագիր («Հասկեր»), մի «Առողջապահիկ Թերթ» և կիսամեայ «Լուման» դառել է ամենամսեայ։ Այժմ, ուրեմն, ունենք պարբ. հրատարակութիւնների մի պատկառելի թիւ. 3 լրագիր, 3 ամսագիր, 1 շաբաթաթերթ, երկու մանկական ամսագիր, և մէկ առողջապահական կիսամսեայ հանդէս։ Իսկ որքան հրատարակութիւններ արտասահմանում, «Ազգերնիս կ'առաջադիմի կոր»... բայց միակողմանի. ընթերցողների թիւը շատ դանդաղ է աճում։

—

«Առողջապահիկ Թերթ», Հոկտեմբ.—Դպրոցների վերաբացումը ընականաբար պէտք է ստիպէր այդ մասնագիտական թերթին առանձին ուշադրութիւն դարձնել դպրոցական առողջապահական զանազան հարցերի վրայ։ «Այսօր եւրոպական երկրներում, ասում է «Ա. Թ.» հանգամանքին բժշկի մասնակցութեան անհրաժեշտութիւնը ոչ միայն երեխաներին բժշկելու գործում, այլև մանկավարժական բոլոր խնդիրների մէջ։ Եւ շատ տեղերում իրագործուած է Նեստերովի յայտնած բաղձանքը, որ 1) կրթական խնդիրների յաջող լուծումն անխղելի կերպով կապուած լինի բժշկի ներդործական մասնակցութեան հետ ուսումնական կրթական գործում. 2) բժշկի, իբրև ուսանողների առողջութեան պաշտպա-

նի, իրաւասութեան ներքոյ (և ոչ ներքո) *) պիտի, լինեն բացի ուսումնարանական հիմնարկութիւնների ֆիզիքական մասից, նաև մանկավարժական խնդիրները այն չափով ինչ չափով նրանք կապուած են ուղեղային—ներվային գործունէութեան հետ»։ Սակայն մեր բազմաթիւ դպրոցները գաւառներում որտեղից վերցնեն բժիշկներ. այդ պակասը պէտք է լրացնեն դպրոցական առողջապահութեան նուիրած յօդուածները և գրքերը։ Մի այդպիսի լուրջ հրատարակութեան մասին—դոկտ.-Փաշայեանի—մենք անցեալ անգամ խօսեցինք։ Նոյն հարցերի շարքին է պատկանում և «Ա. Թ.» այս համարում «Դասատուների մասին» յօդուածը։

—

«Հասկեր», № 1 - Սեպտեմբեր։— Այդ նոր մանկական պատկերազարդ ամսագրի առաջին տետրակից դժուար է հասկանալ թէ որ հասակի ընթերցողներին են դիմաւորապէս ի նկատի ունեցել այդ հրատարակութեան դեկավարները։ Օրինակ, «Հայրենի առասպելներից և վէպերից» յօդուածը հազիւ թէ մատչելի լինի 6—10 տարեկան մանուկներին։ Մեղ թւում է, որ «մանկական» թերթը գլխաւորապէս պէտք է ի նկատի ունենայ այդ հասակը, որովհետև աւելի բարձր տարիներ ունեցող երեխաների համար աւելի հեշտ կարելի է ընթերցանութեան նիւթ գտնել։

*) Թող ներուի մեզ նկատել, որ ուղղագրութեան հարցերում մենք գտնում ենք բժ. Վ. Արծրունուն անկոմպետան. նա չպէտք է իրան թոյլ տար քմահաճ նորմուծութիւններ անել հայոց լեզուի ուղղագրութեան մէջ. այդպիսի հարցերի լուծումը պէտք է դիլլետանտ բեֆորմատորների անձնական ճաշակից դուրս լինի, եթէ չենք ուզում բաբելոնեան խառնակութիւն և քաոս ստեղծել մեր ուղղագրութեան մէջ...

Ցամենայն դէպս, պէտք էր նիւթերը դասաւորել դէթ երեք բաժիններում. մի բաժնում գտնել այնպիսի նիւթեր որոնք մատչելի են 6 - 8 տարեկան մանուկներին, երկրորդում՝ 8—10 և երրորդում՝ 10—13։ Նիւթերը չպէտք է ձգձգած լինեն, մինչդեռ, բացի պ. Բաշինջաղեանի «Իմ հասկերը», միւսները կամ շարունակելի են կամ բաւական արուեստակեալ։ Փոքրիկ, զուտը բանաստեղծութիւնները չկան։ Անշուշտ մանկական զբաղմունքներ համարեա չունենք. բայց ինչու չօգտուել համաշխարհային հարուստ գրականութիւնից, երբ սեփականը բաւական անտաշ է և զուրկ մանկական հոգին շարժելու յատկութիւններից։ Բոլոր գրուածքներն էլ, բացի Ց. Թումանեանի «Գառնիկ ախպէրից» և Բաշինջաղեանի յիշուած գրուածքից, լեզուի կողմից բարդ են և վերացական բառերով ու դարձուածքներով խճողած. այդպիսի գրուածքներ կարող են հասկանալի լինել գրական լեզուն լաւ հասկացող 12—14 տարեկան դպրոցականներին. մինչդեռ մեզ թւում էր, որ ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել 6—10 տարեկան երեխաների վրայ, չմոռանալով և այն, որ թէ գաւառացի, գիւղական երեխաներին և թէ մեծ քաղաքներում մեծացողների համար բարդ գրական սճերն ու դարձուածները առանց կողմնակի օգնութեան անմատչելի կը լինեն։ Պէտք է լաւ պատկերացնել թէ իւրաքանչիւր գրուածք որ հասակի հասկացողութեան է յարմարեցրուած։

«Հասկերի մանկավարժական բաժնում չափազանց մեծ տեղ է տուած խորհրդածութիւններին և շատ քիչ գործնականին։ Իւրաքանչիւր ծնող, որ հնարաւորութիւն չունի իր երեխաներին «մանկական պարտէզ» ուղարկել (և ուր են այդ հաստատութիւնները մեր գաւառներում, քանի որ մեծ քաղաքներում էլ համարեա գոյութիւն չունեն) կամ ինքը դաղա-

փար չունի թէ ինչպէս պէտք է կազմակերպել մանկապարտիզական խաղերն ու զբաղմունքները, շատ աւելի շնորհակալ կը լինէր, եթէ տրուէին ամսագրի այդ բաժնում սիստեմատիկական դասեր նկարներով, քան վերացական դատողութիւններ։ Օտարները ունեն բազմաթիւ ձեռնարկներ մանկապարտէզներ կառավարելու համար. աւելի լաւ չէր այդ պակասը լրացնելու մասին մտածել հէնց սկզբից։ Հաւատացէք, որ կըթուած ծնողների համար գուցէ քիչ նորութիւն կայ այդ բոլոր դատողութիւնների մէջ, իսկ նա պատրաստներին ոչինչ չեն ասում զրանք. առաջ գործնականի, առարկայական, կոնկրետ, պրակտիկական նպատակները աչքի առաջ ունեցէք. մեզ այդ է անհրաժեշտ։ Ինչ խօսք, որ բոլոր սրտանց ցանկանում ենք աջողութիւն և կատարելագործութիւն այդ օգտակար ձեռնարկութեան։

—

Նոր-Դար. —Ինչպէս ասացինք վերանորոգուած այդ օրաթերթը մեծացրել է իր ծաւալը։ Թուրք-հայկական ընդհարումներին նուիրուած են մի շարք առաջնորդողներ «Հայութիւնը վտանգուած է», «Մեր կացութիւնը» և այլն, որոնց մէջ պախարակում են հայի բնաւորութեան հրող և կործանիչ պակասութիւնները։ Այդ «մտրակողական» ուղղութեամբ գրուած յօդուածները առանձին ուշադրութեան են արժանի։ Եթէ հայը իր զլխին թափած անօրինակ պատահարներից յետոյ էլ ամենալուրջ կերպով չի աշխատիլ իր բնաւորութեան և խակ հակացողութեան կործանիչ պակասութիւններն վերացնելու մասին— նրան կը վիճակուի մի չարաբաղդ վախճան հէնց իր նախնիքների հողի վրայ...

—

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս համարից բանում ենք «Մուրճ» ամսագրի 1906 թուականի բաժանորդագրութիւնը, ուր կոխելով նոր շրջանի վեցերորդ տարին։ 1906 թուականի այն բաժանորդները, որոնք կը գրուեն մինչև այս տարուայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ռուբլի) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, մեր աշխատակից պ. Առանձարի՝ «Երկերի ժողովածուն»[1]), որի մէջ երիտասարդ բելետրիստ—իւմորիստը դուրս է բերում թիւրք բեժիմի բնորոշ դծերը։ Նոր զրուող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն կարող են ստանալ այս նոյեմբերը եւ դեկտեմբերը ամիսների «Մուրճ»-ի համարները ձրիաբար։

*Մեր բոլոր այս տարուայ բաժանորդներին ներկայ համարի հետ ուղարկում ենք տպուած փոխադրական բլանկեր (*переводъ*)։*

Թիֆլիսի պահեստներում «Մուրճ»-ի սովորական թուղթը սպառուած լինելով, այս համարը տպուած էինք այլ տեսակ թղթի վրայ տպելու։ Գալ համարից կրկին կը տպուի նախկին տեսակի թղթի վրայ։

Ժամ. խմբագիր՝ Լ. Սարգսեան Հրատ. Վ. Բանանեանցի Լ. Սարգսեան։

Երեսներ

ժողով եւ հայա-վրացա-թուրքական համագումարի անհրաժեշտութիւն—† Իշխ. Ա. Ն. Տրուբեցկոյ.—Բազուի արդիւնաբերներն ներկայացուցիչները Պետերբուրգում.—Բազուի բանուորները ղեկուցագիրը . . . 159
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— 176
17. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 180
18. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ 184
19. ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մ՚որիէր՝ «ՀԱՋԻ ԲԱԲԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի. . . . . 129—143

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մանուանդ բուերը, յատուկ անունները ու օտար բառերը, եւ թերթի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ուշ դաչնել կէտադրութեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ։ Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը։

2. Ընդունուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնւում են։ Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը։ Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնւում։

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը։ Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի։

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը։

5. «Մուրճի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը։

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ։ Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով։ Նոր հասցէի հետ պէտք է յայտնել նաեւ հին հասցէն։

ԲԵՅՈՒՐԱԾ Լ. ԲՐԾՆԱՐԴԵԳՐԱՒԹԻՒՆ

1906 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՅՈՒԹԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԱԱԳՐԻ

(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Թուականն և

Պատուական տարեկան	10 ր.	**Արտասահման՝**	12 ր.	(32 ֆ.)
կէս տարին	6 »	»	7 »	(18 ֆ.)
1 ամիսան	1 »	»	1 » 20 կ.	(3,2 ֆ.)

Ծանօթութիւն. Բաժանորդագիրը կարելի է վճարել նաև մաս-մաս. բաղկացած 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց գրագ. վարժուհիների և ուսուցչների, գիւղական քահանաների, միջնակարգ. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 ռուբլի Թուականանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագիրը (10 ր.) վճարել մաս-մաս. բաժանելով այնպէս, ինչպէս լրմանդ յարմար է։

ԲԱՐԵԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՒՄ Է

Թիֆլիսում խմբագրատանը (Ճամբամաճեան փողոց, տ. № 12)

Դաւարութեան այլ տեղերից պէտք է գրել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la revue «MOURTCH».

«Մուրճ»-ի գործակալներ.

Աստրախան—Գ. ր. Մկրտումեան։
Բաքու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морская. д. № 26) և պ. Յ. Քոչարեան։
Պիպի-Էյբատ—պ. Գ. Տ.-Դանիէլեան։
Վեներան—«Վերածնունդ» դրատուն։
Գանձակ—պ. Հռոմոսիսոյ Ս.-Պաչատրեան։
Մոսկուա—պ. Սա. Թումանեան։
Սոչի—Աբրամ Յակոբեան (Սոչի-Ռեզերվայ ՀՊՀան)։
Սամարկանդ—Ռ. Ք. Բէկզիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Թիֆլիզ—«Գուտենբերգ» և «Կենտրոնական» դրատներ.
Թաւրիզ—պ. Յ. Տէր-Սահակեան։
Եգիպտոս—դոկտոր Պ. Փաշայեան-Խան։
Էնզելի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան։
Նոր-Զուղա—պ. Տիգրան Աբրահամեան։
Թէհրան—պ. պ. Ալիքսան Թումանոյ և Ա. Բարայեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ընդունուում է ամէն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում ենք,—1 երես քանդ յայտարարութեան 15 ր., 1/2 եր.—8 ր., 1/4 եր.—4 ր., տողատեղ (կորպ.)—40 կ։